

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ
ՎՐԱՍՏԱՆԸ**

(Նյութերի ժողովածու)

**ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2019**

ՀՏԴ 82.0
ԳՄԴ 83.3
Թ 950

*Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի
գիտական խորհուրդը:*

**Նվիրվում է
Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակին**

*Կազմեց, վրացերենից թարգմանեց և առաջաբանը գրեց
բ. գ. ք., դոցենտը Հրաչիկ Բայրամյանը*

Խմբագիր՝ պ. գ. դ. Վարուժան Պողոսյան

Թ 950 Թումանյանը և Վրաստանը (Նյութերի ժողովածու) / Կազմող՝ Հր. Բայրամյան: -Եր., ԵՊՀ հրատ., 2019, 258 էջ:

Ժողովածուն ամփոփում է վրաց գործիչների տպավորությունները, ովքեր հաճախակի հավաքվել են Հովհաննես Թումանյանի հյուրընկալ հարկի տակ, խորհրդածել գրականության ու արվեստի, հայ և վրաց ժողովուրդների անցյալի, ներկայի ու ապագայի մասին և անկեղծ զգացմունքներ արտահայտել իրենց բազմաբնույթ երկերում, որոնցում հայ մեծ բանաստեղծը ներկայացված է որպես երևելի գրող, լուսեղեն հանճար, համակրվկասյան փարոս, աստվածային պատգամախոս, ժողովուրդներին հաշտեցնող մարգարե, բարեկամության ռահվիրա և այլն:

Գիրքը նախատեսված է թումանյանագետների, հանրության լայն շրջանակների, ինչպես նաև հայ-վրացական հարաբերությունների պատմությամբ հետաքրքրվողների համար:

ՀՏԴ 82.0
ԳՄԴ 83.3

ISBN 978-5-8084-2398-5

© ԵՊՀ հրատ., 2019
© Կազմողի համար, 2019

ԱՌԱՋԱԲԱՆ

Համաշխարհային գրականության պատմության մեջ բացառիկ են այն գրողները, ովքեր իրենց ստեղծագործություններով և հասարակական գործունեությամբ անմնացորդ նվիրվել են հարևան երկրների ու ժողովուրդների միջև համերաշխություն, խաղաղություն, սեր ու բարեկամություն հաստատելու սրբազան գործին: Այդ բացառիկ գրողներից է հայ ազգային հանճար Հովհաննես Թումանյանը:

Հովհաննես Թումանյանը ծնվել է 1869 թ. փետրվարի 7 (19)-ին Լոռու մարզի Դսեղ գյուղում՝ քահանայի ընտանիքում: Մանկությունն ու պատանեկությունն անցկացրել է հայրենի գեղատեսիլ բնության գրկում, գրել-կարդալ սովորել է տանը՝ հոր մոտ, այնուհետև՝ հայրենի գյուղում: 1878 թ. տեղափոխվել է Ջալալօղլիի (այժմ՝ Ստեփանավան) ծխական դպրոց, որտեղ ուսմանը զուգահեռ կատարել է գրական առաջին քայլերը, հեղինակել սիրային, հայրենասիրական, երգիծական ոտանավորներ:

1883 թ. ցարական կառավարության հրամանով փակվում են հայկական դպրոցները, և նույն թվականի օգոստոսին պատանի Հովհաննեսի հայրը նրան տանում է Թիֆլիս՝ զինվորական կրթության տալու: Բայց զորանոցային միջավայրը խորթ էր նրա համար, և մի քանի օր անց նա հեռանում է՝ ուսումը Ներսիսյան դպրոցում շարունակելու նպատակով: Այստեղ երկու տարի ուսանելուց հետո նյութական պայմանների պատճառով ստիպված թողնում է նաև այդ դպրոցը: 1887 թ. որպես արտահաստիքային գրագիր աշխատում է տեղի հայոց հոգևոր կոնսիստորիայում, սպա՝ Կովկասի հայոց հրատարակչական ընկերությունում: Աշխատանքը հոգեմաշ էր, միջավայրը՝ ճանճարալի և խորթ: Չնայած կաշկանդող պայմաններին՝ նա տարվում է ընթերցանությամբ, կարդում հայ, ռուս, եվրոպական դասականներին և շարունակում ստեղծագործել: 1890 և 1892 թթ. Թումանյանը Մոսկվայում լույս է ընծայում բանաստեղծական երկու ժողովածու, որոնք հանրության կողմից ընդունվում են դրվատանքով: Գովեստի խոսք է ասում նաև ակնանավոր մանկավարժ, վիպասան Ղազարոս Աղայանը

(1840-1911): Նա մասնավորապես գրում է. «Վերջին ժամանակներս մեր գրականության նորատունկ բուրաստանի մեջ մի՞նը մյուսի ետևից դուրս եկան նոր-նոր ծաղիկներ: Նորերումս փթթեց մի նոր ծաղիկ ևս, անուշահոտ և համեստ, ինչպես վճիտ աղբյուրների ավերում բուսած մանուշակը Գուգարաց աշխարհում»¹:

1893 թվականից Հովհ. Թումանյանը նվիրվում է գրական-ստեղծագործական և հասարակական գործունեության: Նա բարձրագույն, նույնիսկ միջնակարգ կրթություն չստացավ, բայց ինքնակրթությամբ հաղորդակից դարձավ համաշխարհային գրականությանը, գիտությանը, փիլիսոփայությանը և իր տաղանդի ու գեղարվեստական վարպետության շնորհիվ հասավ կատարելության՝ հավերժությանը հանձնելով քնարերգության փայլուն նմուշներ, քնարական և էպիկական անգերազանցելի պոեմներ՝ «Անուշը», «Հառաչանքը», «Մարոն», «Ախթամարը», «Թմկաբերդի առումը», «Սասունցի Դավիթը», «Փարվանան», «Մի կաթիլ մեղրը», թախծալուր նորավեպեր և պատմվածքներ՝ «Գիբորը», «Իմ ընկեր Նետն», «Քաջ Նազարը», լուսաշող քառյակներ, որոնք հազեցած են խոր ու իմաստալից բովանդակությամբ: Բանաստեղծ մտածողն ազդել է ազգային գեղագիտական ճաշակի, ժողովրդի ըմբռնումների վրա, հսկայական լիցք հաղորդել ազգային արվեստի ու գրականության գրեթե բոլոր ճյուղերին:

Բնակություն հաստատելով Թիֆլիսում՝ Հովհ. Թումանյանը պատանեկան տարիներից ջրուլացող հետաքրքրություն է ցուցաբերել Վրաստանի և վրաց ժողովրդի հանդեպ, հանգամանորեն ուսումնասիրել նրա նիստուկացը, ջերմ զգացմունքներով շփվել «արի, բարի» ընկերների հետ և կարճ ժամանակ անց մեծ հեղինակություն ու ժողովրդականություն ձեռք բերել վրաց հանրության շրջանում:

Հենց առաջին հրապարակային ելույթով նրա անունն ընդմիջտ մտավ վրաց մշակույթի պատմության մեջ: Դա տեղի ունեցավ 1893 թ. ապրիլի 25-ին, երբ վաղամեռիկ հանճարեղ բանաստեղծ Նիկոլոզ Բարաթաշվիլիի (1817-1845) դին Գանձակից տեղափոխում էին Թիֆլիս՝ հայրենի հողին հանձնելու: Սգո արարողության ժամանակ չափածո խոսք ասաց նաև 24-ամյա հայ բանաստեղծը՝ այն ժամանակ «դեռևս շատ քիչ հայտնի ընթերցող լայն հասարակայնությանը,

¹ Գ. Աղայան, Երկերի ժողովածու, երեք հատորով, Երևան, 1974, հ. 3, էջ 243:

հետագայում մեծագույն գրողներից մեկը, հայ գրականության դասականը, գրչի երախտավոր ասպետը, մեծ քաղաքացին, մարդասերը և սոցիալական արդարության համար մարտնչողը»²:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ



Սայաթ-Նովայի մանրամանի բացման արարողությունը Թիֆլիսի Հայոց Սուրբ Գևորգ եկեղեցու բակում, մայիս, 1914
The opening ceremony of the Monument to Sayat-Nova in the yard of the Armenian St. George Church in Tiflis, May 1914



«Գերեզմաններ կան, որ պայծառ են, ժպտում են մարդկանց սրտերին մի խոր
հավիտենական ժպիտով ու ասես թե կյանքը հաշտեցնում են մահի հետ:
Էս տեսակ մի պայծառ գերեզման է Սայաթ-Նովայի գերեզմանը:
Ամբողջովին հաշտություն ու սեր է բուրում...»:

Հովհ. Թումանյան

«Մի պայծառ շիրիմ», 1914 (հատված հոդվածից)

'There are tombs that are bright, they smile at people's hearts with an eternal smile; and it seems they appease life with death.

Such a bright tomb is Sayat-Nova's. It spreads around fragrance of peace and love.'

H. Toumanian

'A Bright Tomb', 1914 (excerpt from the article)



² «Լուսինի Գրականություն», 1948, 11 օգոստոս.

Թումանյանն անձնական, բարեկամական կապեր ուներ տեղի ավագ և կրտսեր սերնդի գրողների (Վասիլ Բարնով, Գրիգոր Ռոբաքիձե, Դավիթ Կողիաշվիլի, Իոսեփ Գրիշաշվիլի, Վալերիան Գավրիլինդաշվիլի, Տիցիան Տաբիձե, Պատրո Իաշվիլի, Գիորգի Լեոնիձե և այլք), մշակույթի, առհասարակ տարբեր բնագավառների մտավորականների լայն շրջանակների (Իսկոբ Նիկողաձե, Կոնստանտինե Ավիսագ, Կոտե Մաղաշվիլի, Լևան Դիփիանի, Սանդրո Ղանչելի), ինչպես նաև պետական այրերի հետ, որոնց թվում էին Անդրկովկասյան կոմիսարիատի նախագահ Եվգենի Գեգեճկորին, Վրաստանի Հանրապետության նախագահ Նոյ Շորդանիան, լուսավորության նախարար Գիորգի Լասխիշվիլին, ներքին գործերի նախարար Նոյ Ռամիշվիլին, վրացական համալսարանի վարչության նախագահ Գրիգոր Դիասամիձեն, Բորչալուի գավառապետ Դավիթ Բաքրաձեն:

«Ն. Բարաքաշվիլու դամբանի վերա», «Վրաստանի ոգին», «Վրաստանի համար», «Նվեր Վրաստանի բանաստեղծներին» և այլ երկերում Հովի. Թումանյանը բարեկամության ու եղբայրության վեհ գաղափարներ է առաջադրում, ամեն առիթ օգտագործում և մասսայականացնում իր համար երկրորդ հայրենիք դարձած երկրի ու ժողովրդի մասին կուտակած իր հսկայական գիտելիքները:

Ելնե՛նք՝ տեսով ու ճանանչով,
Ընկեր, ախպեր, մեր ու քուր՝
Մեր քյանանչով, ուրախ կանչով
Գընանք դեպ կյանքն ընդհանուր³:

Ի դեպ, այս կոչը ոչ թե 1917 թ. Հոկտեմբերյան հեղաշրջման արձագանքն է, այլ Անդրկովկասյան սեյմի կազմալուծումից հետո Հաստատանում և Վրաստանում անկախ հանրապետությունների կազմավորման արդյունքը:

Հովի. Թումանյանը ճիշտ ժամանակին է ընկալում եղբայրությունը խորհրդանշող այն գեղեցիկ լեգենդի խորհուրդը, ըստ որի՝ պատմությունը Հայոսին և Քարթլոսին խոստովանել է, որ վաղ անցյալում մի ընդհանուր նախահայր են ունեցել: Նա վկայում է, որ ժողովուրդների հիշողությունը ոչ միայն պատմական վկայությունների, այլև սրտի ու

³ Հովի. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, 10 հատորով, Երևան, 1988, հ. 1, էջ 305 (Հովի. Թումանյանի տասհատորյակից բերված մյուս մեջբերումների հղումները կտրվեն տեղում՝ փակկազմերում նշելով միայն հատորը և էջը):

արյան հիշողություն է, որը փոխանցվում է սերնդեսերունդ, դարեդար, և պատգամում ամեն ինչին նայել բարեկամական սիրո բարձունքից, սեր, որ վեհացնում է, սեր, որ միաբանում և ջերմացնում է, քանզի «սիրո կապն է ապահովել մեր ժողովուրդների պատմական կյանքի հաշողությունները»:

Հովհ. Թումանյանն ուշի-ուշով հետևում էր թե՛ իր պատգամներին և թե՛ Վրաստանի գրական, պատմամշակութային նշանակալից անցուդարձերին: Նա հայ և վրաց մտավորականների հետ հաճախ սեփական հարկի տակ հավաքներ էր կազմակերպում և բարեկամությունն ամրապնդելու նորանոր գաղափարներ առաջադրում: Ողջ գիտակցական կյանքի ընթացքում հայ բանաստեղծը Վրաստանի և վրաց ժողովրդի նկատմամբ առանձնահատուկ համակրանք էր տաժում. մաքուր, անկեղծ և բաց սրտով սիրում էր իր երկրորդ հայրենիքը. «Ես, իբրև բանաստեղծ մարդ, անհունորեն սեր տաժելով առհասարակ դեպի ժողովուրդները- առանձնապես ուժեղ սիրել եմ մեր եղբայրակից վրացի ժողովուրդը, որի մեջ անց եմ կացրել իմ կյանքի մեծագույն մասը և որի հետ կապված եմ շատ խոր ու ամուր կապերով (10, 404)»:

Իսկ վրաց բանաստեղծ և հասարակական գործիչ Սիկո Փաշալիշվիլին (1894-1970) 1921 թ. հուլիսի 14-ին գրում է. «Սեղմուն եմ Ձեր ձեռքը և հավաստիացնում, որ որքան ինձ համար քանկ են Վրաստանն ու վրացական սքանչելի հոգին, այդքան էլ քանկ են և այն մարդիկ, որոնք հանդիսանում են կրողներն ու մեկնաբանները էլ հոգու: ... Ինքը՝ վրացին, պոետ է, իսկ վրացի պոետը՝ կրկնակի պոետ» (10, 700):

Հովհ. Թումանյանի կրտսեր բարեկամներից ականավոր վիպասան, դրամատուրգ, բանաստեղծ, գրականագետ, փիլիսոփա Գրիգոր Ռոբաքիձեն (1880-1962), որի անունը 1910-1920-ական թվականներին որպես առաջին մեծության աստղ փայլում էր համայն Վրաստանում, հավաստում է. «Հովհաննեսը խորապես զգում է Վրաստանը: Վրաստանի ծնունդ վրացու հազվադեպ եմ հանդիպել, որ նրա չափ ճանաչեր ու ընկալեր Վրաստանի էությունը»⁴: Թումանյանի մասին նրա «Հովհաննես Լուսեղեն» հուշը լույս է տեսել համավրացական նոր գրականության օրգան «Ռուբիկոնի»⁵ շաբաթաթերթի 1923 թ. ապրիլի

⁴ Գ. Ռոբաքիձե, ՌՅՆԵՆ ՆՏԵՂԸ // «ՐԷՅԻՅՈՒՆ», 1923, 8 մարտի.

⁵ «Ռուբիկոնի» թերթի զգալի մասը նվիրված է հայ մեծ բանաստեղծի հիշատակին՝

8-ի համարում և սկսվում է հետևյալ տողերով. «Բանաստեղծի մահը բանաստեղծի համար իր մահն է, առավել ևս Հովհաննես Թումանյանի մահը: Շատ մեծ է մեր վիշտը, որովհետև Հովհաննեսը մարդ էր: Հովհաննեսը բանաստեղծ էր: Հովհաննեսը բարեկամ էր: Եվ ամեն ինչում կատարելապես լուսեղեն... Հոգին՝ ամենատես, բարի, Բարձրյալի պես միշտ խանդավառ: Սիրտը՝ պարզ, բաց, կրակված, մանկական, անապական»⁶:

Հովհ. Թումանյանն իր բարեկամին՝ ի դեմս «սգավոր եղբոր», մվիրել է մեկ քառատող, որը պետք է գրված լինի 1918 թ. դեկտեմբերին՝ ազգամիջյան ընդհարումների օրերին: «Սգավոր եղբայրը»՝ Ռոբաքիձեն, այցելում է իր «վշտահար եղբորը»՝ Թումանյանին, որը համակված է նույն հոգսով և նույն ցավով.

Ինչ դարուկ ես քու երկրի պես ու սրգավոր դու էսօր,

Բայց ողջ ու վեհ քան երբևէ, թովիչ ու խոր դու էսօր.

Եղբորդդ մոտ եկած վըշտոտ՝ տանջում ես նոր դու էսօր,

Տանջանք անվերջ իմ սրբոտի մեջ ու սեր հըգոր, դու էսօր:

Եղբայրները սգի մեջ էին, վշտահար, որովհետև աղետաբեր ամպեր էին կուտակվել իրենց երկրների երկնակամարում: Թումանյանը պարզապես համօրյա ջանքեր էր գործադրում խաղաղությունը վերահաստատելու համար: Այդ բախտորոշ պահին նրան է դիմում նաև բանաստեղծ Տիգիան Տաբիձեն (1895-1937): Նա ևս Թումանյանի ազնիվ բարեկամներից էր, մտերմական ջերմ կապեր ուներ նրա հետ և լիովին համոզված էր, որ այդ ճակատագրական պահին «մեկ ուրիշի ձայնը չի հնչի և չի լինի այնպես ճշմարիտ ու հասկանալի, ինչպես լուսավորյալ բանաստեղծինն ու հայրենասերինն» է: Տաբիձեն, նկատի ունենալով Թումանյանի վիթխարի հեղինակությունը և ժողովրդակամությունը անդրկովկասյան ազգաբնակչության մեջ, բաց նամակով դիմում է նրան՝ հաղորդակից դարձնելով իր մտորումներին ու անհանգստությանը⁷:

Երկու կառավարությունների միջև հաշտության բանակցություն-

գծանկար, հուշագրություններ, երկու բանաստեղծություն, մահախոսական, ցավակցական հեռագրեր ընտանիքին և հայ ժողովրդին:

⁶ Գ. Րոբաքիձե, Օջանես Նաթելի // «Րեբուկոն», 1923, 8 օրվա.

⁷ Տե՛ս Գ. Թաբիձե, Լուս Ֆրեզիլի Օջանես Թումանյան // «Սաթարձեղ», 1919, N 1:

ների ավարտից հետո՝ 1918 թ. դեկտեմբերի վերջերին, «լուսավորյալ բանաստեղծը» «եղբայրական գրույց է սկսում իր ազնիվ բարեկամի հետ»՝ հղելով ընդարձակ մի նամակ, որտեղ վերլուծում է հայ-վրացական պատերազմը, դատապարտում ուժի կիրառումը հարևան ժողովուրդների միջև (7, 374):

Նույն խնդրին լուծում տալու համար այդ օրերին իր բնակարանում վրաց մտավորականների հետ հանդիպման ժամանակ, որոնց թվում էին նաև Տաբիձեն ու Ռոբաքիձեն, Թումանյանն ասում է. «Վերջապես, մենք՝ բանաստեղծներս, ավելի իրավունք ունենք մեր հաշտության ճայնը բարձրացնելու, երբ ժողովրդի արյունն է հոսում, քան իշխանությունները, որովհետև մենք ենք ժողովրդի կոչված ներկայացուցիչները, մենք ենք, որ վշտանում ենք նրա տառապանքով և խնդում նրա ուրախությամբ»⁸:

Թումանյանը ելքը տեսնում էր հայ և վրաց ժողովուրդների բարեկամության ու համագործակցության ամրապնդման մեջ, որի իրականացմանը նվիրվում է իր ողջ էությանը՝ համոզված, որ «մոտիկ հարևանը լավ է, քան հեռու բարեկամը»: Նա, ի դեպ, Հայաստանի և Վրաստանի ղեկավարներին հորդորում էր առաջնորդվել ժողովուրդների մեջ սեր ու բարեկամություն հաստատելու գաղափարով և գործում իրեն բնորոշ դիվանագիտական հավասարակշռությամբ՝ ջանք թափելով դադարեցնելու անիմաստ արյունահեղությունը:

Հաշտեցման խնդրում Թումանյանին աջակցել են վրաց մի քանի առաջադեմ մտավորականներ: Տ. Տաբիձեի և Լ. Դիվիանիի՝ նրա հետ ունեցած նամակագրությունները վաղուց ի վեր հայտնի են հայ և վրաց հանրությանը, ուստի վկայենք մեկ այլ գործչի՝ Սամսոն Փիրցխավալային, ով «գեղեցիկն ըմբռնող և գեղեցիկն արարող հայ մեծատաղանդ բանաստեղծի» մասին հենց այդ օրերին գրել է. «Հայտնի է բոլորիս, թե խաղաղությունը վերականգնելու համար Թումանյանը որքան մեծ ջանքեր է թափում, ինչպես է արիաբար մարտնչում գրչով ու գործով, հաճախ՝ վտանգում կյանքը, որովհետև հայ ժողովրդի ազնվագույն գավակը և վրաց ժողովրդի ամենասիրելի բարեկամը առավել, քան որևէ մեկը, քաջ գիտակցում է երկու ժողովուրդների համերաշխության և ի վերուստ նրանց տրված պատմական առաքելու-

⁸ Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Երևան, 1969, էջ 628:

թյան գինը»⁹:

Վրաց մտավորականը ևս հայ և վրաց ժողովուրդների մերձեցման, կապերի վերականգնման ու խորացման գաղափարի ջատագովն էր, որը համարում էր երկու երկրների քաղաքական ու մշակութային վերածննդի կարևորագույն գործոնը: Այդ քայլերի անհապաղ իրականացումը նա անհրաժեշտ, պարզապես երանելի էր համարում, որովհետև Հայաստանն ու Վրաստանն ապրում էին անկախ կյանքով, մինչդեռ շրջապատված էին բազմաթիվ թշնամիներով, որոնք, բացահայտ կամ քողարկված, որոգայթներ էին հյուսում, ջանքեր գործադրում՝ այդ երկրներին գրկելու ձեռք բերած ազատությունից: «Ահա թե ինչու,- ամփոփում է մտահոգ գործիչը,- այսպիսի ժամանակ մեկնելու ձեռք մեկնելը հույժ կարևոր է»¹⁰:

Այդուհանդերձ, Թումանյանն այդ ճակատում մենակ էր: Ահա թե ինչ է գրում նշանավոր դրամատուրգ Շալվա Դադիանին (1874-1959). «Երբ Վրաստանում և Հայաստանում իրար դեմ թշնամական ժամիքներ էին սրում, մտավորականության շրջանում Թումանյանի նման քչերը կային: Մենակ էր Հովհաննեսը, որը էր մնացել այդ անվեհեր մարդն այն տխուր ու մռայլ օրերին ժողովուրդների եղբայրության քարոզով... Սրտանց ցանկանում էիր, որ շատերն այդ որբի նման լինեին, նրա կողքին, բազմանային թե՛ մեզանում, թե՛ նրա յուրայինների մեջ, բայց այդ տխուր օրերին դա միայն երազել կարելի էր»¹¹:

1919 թ. փետրվարի 20-ին Տ. Տաբիձեն «Սաքարթվելո» թերթում շնորհավորում է Թումանյանի ծննդյան 50-ամյակը՝ այդ հոբելյանը համարելով «Կովկասի գրականության տոն և ժողովուրդների համերաշխության գաղափարների ամրակայում»: Թումանյանի մասին իր հուշերում նա վերստին անդրադառնում է իրենց ծանոթության, մտերմության հանգամանքներին, վրաց մտավորականների վրա Թումանյանի ունեցած ազդեցությանը և Անդրկովկասի ժողովուրդների հարաբերություններին նոր բովանդակություն հաղորդելու նրա գործուն ջանքերին: Նա հուշերի էջը եզրափակում է աստվածաշնչյան գեղեցիկ պատկերով. «Չեմ կարող պատկերացնել Հովհաննեսի կյանքի

⁹ Ե. Գորցեալաձե, Օձնջե տշմանիանի // «Նախալեռ Նաթթե», 1919, N 467.

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Ուղեցույց աստղը, Երևան, 1999, էջ 93-94:

վերջին օրերը, բայց համոզված եմ, որ նա՝ բարձրահասակ, ճերմակահեր և լուսեղեն դեմքով այդ մարդը, ով իր ողջ կյանքն անցկացրեց սիրո քարոզով, իբրև աստվածային պատգամախոս, կյանքն ավարտել է հավերժ հավատարմության մասին խոսքերով, ինչպես Հովհաննես առաքյալը, որին վերջին անգամ աշակերտները դուրս բերեցին ժողովրդի առաջ, և նա արցունքն աչքերին ասաց. «Միրեցէ՛ք զմիմեանս»¹²:

Տարիձե՛ն վրաց գրողների պատվիրակության կազմում 1929 թ. հունիսին ժամանում է Հայաստան, շրջագայում երկրում և բանաստեղծությունների շարք գրում, որոնցից մեկը՝ «Իրականացավ երագանքը պոետների», նվիրված է Հովհ. Թումանյանին: Նա նշում է խորհրդային տարիներին հայոց աշխարհում առաջընթացի մասին և պարտավորվում գրչակից ընկերների հետ նորովի շարունակելու բարեկամության, համերաշխության ու եղբայրության այն երգը, որ մեծ հաջողությամբ սկսել էր ինքը՝ Թումանյանը:

Եղբայրներիս հետ եկել եմ ես էլ՝
Այս եղբայրությանն ասելու նոր խոսք,
Այն երգը, որ դու էիր սկսել,
Կշարունակենք այսօր սհա մենք¹³:

Հովհ. Թումանյանի մասին ուսանելի խոսք է ասում նաև գրող, հրապարակախոս Սամսոն Փիրցխալավան (1872-1952): Անվանի գործիչը «գեղեցիկն ըմբռնող և գեղեցիկն արարող հզոր արվեստագետի» Թումանյանի երկերում տեսնում է Հայաստանը, նրա պատմական դառն ճակատագիրը, ժամանակի ողբերգությունը, բնաշխարհը և հույսը լուսավոր ապագայի նկատմամբ: Նա վրացի ընթերցողին հավատացնում է. «Հովհ. Թումանյանը մեր ժամանակի խոշորագույն բանաստեղծներից է, հայ ժողովրդի երդվյալ հավատարմատարը, նրա հոգևոր հարստության, նվիրական զգացումների ու իղձերի լավագույն արտահայտողը: Ահա թե ինչու է նա արժանացել համաժողովրդական սիրո, իսկ այդպես ամեն մի ժողովուրդ սիրում է իր ազգային կերպարը, իր անհատականությունը, իր ազնվությունը»¹⁴:

¹² «Րաբոկոն», 1923, 8 աՅրիլո.

¹³ Թ. Լաժձե, Նոմբեթոմ, Թժիլոնո, 1934, զՅ. 9-10.

¹⁴ Ն. Յորցեալաճա, Օճաճեճ Եղմեճնոն // «Նաճալոճ Նաճմե», 1919, N 467.

Ժամանակակիցների վկայությամբ՝ Թիֆլիսում ամենուր Թումանյանին դիմավորում, ընդունում էին սիրով ու ակնածանքով: Վկայենք մեկական օրինակ հայկական և վրացական մամուլից: «Հատկապես հիշում եմ,- գրում է Տ. Տաբիձեն,- Հովհաննես Թումանյանի հոբելյանական հանդեսը «Տարտո» թատրոնի դահլիճում (1919 թ. – Հ. Բ.): Հանդիսասրահը լեփ-լեցուն էր: Խոսք ասաց Պաղոտ Իաշվիլին... Նրա խոսքից հետո դահլիճը երկար ժամանակ դղրդում էր ծափողջույններից»¹⁵:

Արտակարգ ջերմ էր 1919 թ. մարտի 24-ին Ի. Գրիշաշվիլիի կազմակերպած երեկոն, որտեղ բանախոսը «ողջույնի խոսք է հղում Թումանյանին, որից հետո հասարակությունը հոտմկայս, որոտընդոտ ու երկարատև ծափերով է դիմավորում օրյակում երևացած Հովհաննես Թումանյանին»¹⁶:

Բանաստեղծի հետմահու կյանքում հետաքրքրությունը նրան կատմամբ ավելի է մեծանում վրաց իրականության մեջ: Դա տեղի է ունենում Թումանյանի ևս մեկ լուսավոր բարեկամի՝ բանաստեղծ Ի. Գրիշաշվիլիի կախարդանքով: Թումանյանի մահվան տարեկիցը չլրացած՝ նա թարգմանում և ընդարձակ առաջաբանով լույս է ընծայում հայ բանաստեղծի երկերի ընտրանին¹⁷, որով խորախորհուրդ աշխարհի է բացում վրաց գրասերի առջև: Այդ թարգմանությունը գնահատվում է բնագրին համարժեք. «Բանաստեղծ Իոսեթ Գրիշաշվիլին Հովհաննես Թումանյանի հարագատ կրկնակն է,- գրում է բժիշկ, գրող, հասարակական-քաղաքական գործիչ Իվանե Գոմարթելին (1889-1938):- Նրա թարգմանությունը թարգմանություն չէ. նույն բնագիրն է: Երբ դուք կարդում եք Գրիշաշվիլիի թարգմանությունը, ձեր առջև Հովհաննես Թումանյան վրացերեն երգիչն է, և համոզվում եք, որ այստեղ ոչ մի թարգմանություն էլ չկա. ինքը՝ Հովհաննես Թումանյանն է գրում վրացերեն»¹⁸:

Նույն առիթով բանաստեղծ Ռևազ Մարգիանին (1916-1984) վկա-

¹⁵ Ե. Թաբիձե, Օջանես Թումանյան // «Րեպուբլիկ», 1923, 8 ապրիլի.

¹⁶ «Աշխատավոր», 1919, 26 մարտի:

¹⁷ Օ. Թումանյան, Րեպուբլիկ նախըրբեթ. տարգմ. Ե. Մինասիսիցյան Ե. Գրիշաշվիլի, 1924, 135 թ.

¹⁸ Գ. Գոմարթելի, Օջանես Թումանյան // «Երգերի Ե. Գրիշաշվիլի», 1924, N 17, թ. 2-4.

յում է, որ ունեն սքանչելի թարգմանությունների հատորյակ, որի շնորհիվ վրաց ժողովուրդը սիրեց Հովհ. Թումանյանին, և որի մասին շատերն են գրել և ապագայում ևս կգրեն, որովհետև, «ըստ հայ և վրացի լավագույն մասնագետների, այդ թարգմանությունը համարվում է նվաճում»¹⁹:

Թումանյանի երկերի վրացերեն թարգմանությունը սեղանի գիրք է դառնում: Բանաստեղծությունների, պատմվածքների, հեքիաթների ու քառյակների մի շարք գոհարներ ներառվում են վրաց դպրոցական և բուհական դասագրքերում:

Խոսում փաստ է, որ հայ բանաստեղծի մասին ծանրակշիռ խոսք են ասել տարբեր բնագավառների շուրջ հարյուր հեղինակավոր գործիչներ, իսկ ներբողագիրների թիվը հասնում է երկու տասնյակի: Վրացի մտերիմների վկայությամբ՝ Հովհ. Թումանյանի ուշադրության կենտրոնում էր նաև պատերազմի ու հաշտության խնդիրը: Եվ, իսկապես, այս ասպարեզում ծավալվող բանավեճերի հիմնական ծանրությունը վերցնելով իր վրա, նա ծառանում էր կռիվ հրահրողների ու արյուն հեղողների, կողմերին թշնամացնող բանասրկուների, կրքեր բորբոքող գանազան բախտախնդիրների դեմ: Մանավանդ 1900-1910-ական թվականներին Անդրկովկասում ծավալվում էին հակաազգային քարոզներ, հրահրվում ազգամիջյան ընդհարումներ, ստեղծվում պատերազմական իրավիճակներ. խեղվել էր մարդկային հոգեբանությունը:

Այդ փոթորկուն, խառը և քաղաքական ողբերգություններով լի ժամանակներում Թումանյանը մեծ հույսով ժողովուրդների իսկական բարեկամություն էր քարոզում: Իրար դեմ ելած կողմերին հաշտեցնելու համար, խաղաղության խորհրդանիշ սպիտակ դրոշ պարզած, մեծ բանաստեղծը մտնում էր կենաց և մահու կռվի դաշտ, համոզում հակառակորդ ուժերին պատյան դնել ներկացրած սրերը: Գրչով, գործով ու խոսքով նրան հաջողվեց կանխել հայ-թաթարական արյունահեղությունը: Այդ թեժ կռիվների ժամանակ Թումանյանի ջանքերի մասին ահա թե ինչ է ասել նրա հետ զավառներում շրջագայած և նրա թղթակից Արտեմ Չիլյանը «Թեստրի դա ցխովբեբա» («Թատրոն և կյանք») ամսագրի խմբագիր Սիկո Փաշալիշվիլիի հետ ունեցած հար-

¹⁹ Բ. Մարգոն, Գեմի Նալբուսի Դոլոմ Թեգոնարո // «Լեդերադուրուլու Նախարոջեղո», 1969, 19 Նեյթեմբերո.

ցազրույցում. «...Հա՛, կասե՛իր Մագուրի ճակատամարտն է. մեկմեկու չէին զիջում, հարևանը հարևանի վրա էր կրակում: Եղբայրների պես մեծացած՝ հիմա կոտորում էին իրար, ինչ է թե տարբեր ազգության էին պատկանում: ...Պարզապես ոսկե խոսքեր ասաց Թումանյանը. «Կայենը հարազատ եղբորն սպանեց, ձեր մեջ ո՞վ կայենություն գցեց, ո՞վ է ձեզ կործանողը...»: Այսպես էր խոսում նրանց պարագլուխների հետ: Հետո գավառապետին և փոխարքա Վորոնցովին մեծ պետիցիա ուղարկեց: Տեսնո՞ւմ ես՝ ինչ է ստացվում: Է՛ն, ինչ չկարողացան անել կառավարությունները, արեց մեն մի մարդ...»²⁰:

Նույն առիթով խոսելով անասելի դժվարությունների մասին, բայց գոհ իր հաջողություններից՝ Ֆիլիպ Վարդապարյանին Թումանյանը գրում է. «Ես ...ամեն ջանք շարունակ գործ եմ դրել մեր գավառներում խաղաղությունը պահելու և կոտորածների առաջն առնելու: Եվ այսօր ես այնքան գոհ չեմ, որ գրականության մեջ մի որևէ բան եմ արել, որքան գոհ եմ, որ ակներև կարողացա իրար դեմ կանգնած ժողովուրդների սրերը պատյան դնել տալ և շատ ու շատ անմեղների ազատել այս գազանական կոտորածից...» (10, 14-15):

Այդ հակամարտությունը ավելի սրվեց 1910-ական թվականների վերջերին՝ Անդրկովկասյան սեյմի կազմալուծումից հետո: Սահմանային վեճեր բորբոքվեցին Հայաստանի և Վրաստանի նորանկախ հանրապետությունների միջև և հանգեցին ռազմական բախումների: Թումանյանը ելքը տեսնում էր հայ և վրաց ժողովուրդների բարեկամությունն ու համագործակցությունը ամրապնդելու մեջ և իր ողջ էությունը նվիրվեց այդ նպատակի իրագործմանը, որովհետև «մեզնից ամեն մեկս պիտի սիրենք մեր հարևանի ազատությունը ու աշխատենք նրա համար, պարզ զիտակցելով էն հավիտենական ճշմարտությունը, որ մեկի երջանկությունը պայմանավորվում է մյուսի երջանկությունով...» (7, 374):

Թումանյանը կան խիստ չէր մեղադրում կառավարություններին, կան մեղադրում էր երկուսին: Ամեն դեպքում մեծ բանաստեղծը ոչ թե մեղավոր կամ անմեղ էր փնտրում, այլ գործում էր իրեն բնորոշ դիվանագիտական հավասարակշռությամբ: Նա ջանք էր թափում՝ հնարավորինս շուտ վերջ տալու եղբայրական արյունահեղությանը:

²⁰ Ուղեցույց աստղը, էջ 131-132:

Եվ վատահ կարող ենք ասել, որ, թեկուզ մենագույն ճիգերով, դա նրան հաջողվեց: Վկայենք վրացի բարեկամներին:

«Առաջին մարդը, որն ավելի շատ էր մտատանջվում Հայաստանի և Վրաստանի եղբայրության հարցով, Հովհաննես Թումանյանն էր: Վրաստանում բոլորը հավատում էին նրա անկեղծությանը: Դա հավաստեց Թիֆլիսը նրա 50-ամյակին», - գրում է Տ. Տաքիճեն²¹: Իսկ Ռոբաքիճեն ավելի հստակ է. «Բոլորիս համար պարզ էր, թե ինչ ողբերգություն էր ապրում Հովհաննեսը հայ-վրացական անհամաձայնության և ապա նրանց միջև ծագած պատերազմի ժամանակ... Կարելի է վճռականորեն ասել, հայերին և վրացիներին համաձայնեցնող-հաշտեցնողը, բառիս լավագույն իմաստով, եղավ Հովհաննեսը՝ քաղցր ու սապետական...»²²:

Հավելենք նաև հայտնի հասարակական գործիչ Իսսեթ Իմեդաշվիլի (1876-1952) խոսքը: Նրա համար Հովհ. Թումանյան բանաստեղծը «արևի առաջին ճառագայթ է, վաղորդյան թարմաշունչ սյուք, վաղ գարնանն արթնացած ձնծաղիկ, մանուշակի ժպիտ»:

Դասական գրող Վասիլի Բարնովը (1856-1934)՝ «Իսանիի արշալույսը» վեպի հեղինակը, գրում է. «Թումանյանը միշտ հավատարիմ է իր դավանած սկզբունքներին ու գաղափարներին: Ավելին՝ սիրո, գեղեցիկի, բարու և ճշմարիտի արարումով ու քարոզով խավարի դեմ լույսն առատ դարձնելու պայքարում Հովհաննես Թումանյանը՝ քերթողների մեջ ամենակատարյալը, կապող օղակ է ժողովուրդների միջև»:

Համառոտ անդրադարձանք վրաց գրողներից ու գործիչներից նրանց, ովքեր հաճախակի հավաքվել են բանաստեղծի հյուրընկալ հարկի տակ, խորհրդածել գրականության ու արվեստի, հայ և վրաց ժողովուրդների անցած ճանապարհի, բարիոլրացիական հարաբերությունների, ներկայի ու ապագայի մասին և Թումանյանի հանդեպ անկեղծ ու գորովալի զգացմունքներ արտահայտել իրենց հողվածներում, հուշերում, նամակներում ու բանաստեղծություններում:

Այդքանով կարևորել ենք վրաց հեղինակների գնահատականներն ի մի բերելու և հայ հանրությանը դրանց հաղորդակից դարձնելու իրո-

²¹ «Րաբոժոճոն», 1923, 8 աճրոլլո.

²² Նույն տեղում:

դուքյունը:

Հարկ է նշել, որ սույն ժողովածուում գետեղված վրացերեն գրեթե բոլոր նյութերը հայերեն ամբողջությամբ ներկայացվում են առաջին անգամ, նոր թարգմանությամբ՝ կատարված միայն բնագրերից: Բացառություն են «Նամակներ, հեռագրեր, երկտողեր» քաժնից մի քանի նյութեր, որոնք ռուսերեն են: Այստեղ ամփոփված են ոչ միայն մեծ բանաստեղծի ժամանակակիցների և մտերիմների հուշերը, էսենները, բանաստեղծություններն ու հեռագրերը, այլև հետագա տարիներին նրա մահվան տարելիցների և 100-ամյա հորելյանի առիթով վրաց գրական և գիտական հասարակության առաջադեմ ներկայացուցիչների գրած աշխատությունների մի մասը: Մեծ բանաստեղծի և անգուգական մարդ-քաղաքացու վաղաժամ մահը խոր վիշտ պատճառեց իր վրացի բարեկամներին, հատկապես՝ վրացերեն լույս տեսնող «Ռուբիկոնի» լրագրի շուրջ համախմբված ընկերներին ու բարեկամներին, որոնք 1923 թ. ապրիլի 5-ի համարում („Րշձօձօձ“, 5 ձձօձօ, 1923 թձօ) տպագրեցին մահախոսականներ, հուշեր, բանաստեղծություններ, նամակներ, հեռագրեր և այլ նյութեր:

Հաճախակի ծանոթագրությունների և տողատակի հղումների չլիմելու համար որոշ տարեթվերի, տպագրական և հեղինակային վրիպակների ուղղումները կատարել ենք տեքստում:

Ձեռք բերած շուրջ հարյուր բազմաբնույթ նյութերից ընտրել ենք երկու տասնյակը, իսկ շուրջ քսան բանաստեղծություններից՝ տասնմեկը:

Հեղինակներին ներկայացրել ենք այբբենական կարգով: Ձեռք ներառել այն նյութերը, որոնք կրկնվում են կամ գրվել են երկրորդ անձի պատմածի համաձայն:

Ցավոք, մեզ չհաջողվեց լրացնել որոշ հեղինակների կենսագրական տվյալները և պարզել ոճանց ինքնությունը, ինչի համար հայցում ենք ընթերցողների ներողամտությունը:

Հրահիկ ԲԱՅՐԱՄՅԱՆ

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ
ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՎՐԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԱՍԻՆ**

ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆ¹

Կովկասի ամպած երկինքը պարզվեց
Հեռու հարավում, շողակի նման,
Հսկա Մասիսի գագաթը փայլեց
Վիթխարի Կազբեկ սարի հանդիման:

«Ողջո՛ւյն, բարեկամ»,– Մասիսն որոտաց՝
Թունդ կայծակների ձայնով ահաբեր,
Եվ մեծ Կովկասի լեռները հանկարծ
Խուլ դողդացին. «Ողջո՛ւյն քեզ, ընկեր:

Մենք հին փառքերով ու նոր ցավերով
Ազգականներ ենք՝ իրար խորթացած,
Մտաբերո՞ւմ ես՝ որքան ենք սիրով
Միասին կանգնել փոթորկի դիմաց...

Բայց ի՛նչ փոխվել ես մի քանի դարում,
Էլ չես շողշողում ամպերից վերև.
Ինչո՞ւ ես այդպես թխպոտ վերևում,
Դու էլ իմ ցավիցն ունես ակներև»:

Կովկասի երկինքն ամպեց վերստին,
Ճայթեցի՛ն անթիվ կայծակներ ահեղ,
Այն սեզ լեռները համբուրվում էին,
Եվ ուրախության արցունքն էր հեղել:

Ն. ԲԱՐԱԹԱՇՎԻՆՈՒ ԴԱՄԲԱՆԻ ՎԵՐԱՉ

Մխիթարությո՛ւն, սգավոր Վրաստան,
Ինչո՞ւ է տխրել դեմքըդ այրական.
Շարժված աճյունը հանգած պոետի
Շարժե՞ց վերստին ցավը քո սրտի,
Թե՞ նորա մըթին գերեզմանը խոր
Որք հոգուդ համար շատ է ահավոր...

Կրթադես, այո՛, դարձյալ քո երգչին,
Բայց նորա վառած զգացմունքներին
Չըլկա գերեզման և ոչ էլ վախճան.
Նրանք կենդանի կըմնան հավիտյան,
Եվ դու նրանցով պիտի մի այլ օր
Թաղես քեզ մաշող ցավերը բոլոր:

Եվ քե՛զ, անցավոր շիրիմից շիրիմ,
Հեզ ժողովրդի երգիչ մտերիմ,
Քե՛զ, որ տանջվել ես անհանգիստ սրտով,
Հավիտենական հանգիստ անվրդով:

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ³ (հողվածի փոխարեն)

Երբ խոսում են Վրաստանի
Թըշնամանքից արյունոտ,
Չարմանք է ինձ պատում հայտնի,
Ե՛վ խորին ցավ, և՛ ամոք:

Ո՛չ ապաքեն գիտեն նրրա
Ոսոխները մինչ անգամ,
Աղ ու հացն է սիրել միշտ նա,
Միշտ աշխարհքին բարեկամ:
Թեև պատած հազար վերքով՝
Շատ ցավեր է նա տարել,
Բայց խաչակիր իրեն ձեռքով
Դեռ ոճիր չի կատարել:

Եվ իր ձեռքը, եթե համառ
Տարածում է հին վրկան,
Ոչ թե դաժան գործի համար,
Այլ դեպ պայծառ ապագան:

Եվ ինչպե՞ս չեն տեսնում ոմանք
Նրրա ընթացքն աննրկուն,
Ո՞նց են ասում.– իր բախտի տակ
Նա ընկել է անկանգուն:

Ո՞չ ապաքեն Կովկասն անաստ
Պատ է կանգնած մինչ երկին,
Որ չըհաղթի բուքը նրբան
Ինչքան սուրա մոլեգին:

Ո՞չ ապաքեն Պոնտոսը հար
Շունչ է հոսում հով ու գով,
Որ նա հավետ մընա դալար,
Խորշակներից ապահով:

ԵՎ չեն լսե՞լ դեռ վըրացու
Երգը զըվարթ ու անհոգ,
Ոնց է ծաղրում նա մահացու
Ամեն հարված անողորք:

Երբ խոսում են իր անկումից,
Թըշնամանքից արյունոտ,
Չարմանք է ինձ պատում անվերջ,
Ե՛վ խորին ցավ, և՛ անոթ:

Ս. ՆՈՒՆԵԻ ՊԱՏԿԵՐԻ ԱՌԱՋՎ

Խունկի բուրյան մըշուշներում,
Մըրմունջներով պատած երգի՝
Կանգնած է նա կապույտ հեռվում
Վարդը կյանքի, հարսն երկընքի,
Եվ չըզիտեմ՝ ադո՞քք անեմ,
Թե՞ ըզմայլեմ իր գեղի դեմ:

Համակ շընորիք ու սըրբություն,
Նայում է լուռ՝ լուռ սըրտիս մեջ,
Լուս հայացքի խորքում անհուն
Վառված սիրո կըրակն անշեջ...
Եվ ո՞վ կասի՝ կըրա՞կն է շատ,
Թե՞ սըրբությունն իր անարատ:

Խաչ է բըռնած իր կույս ձեռին,
Որ նըման չի ոչ մի խաչի,
Ու որթն, ասես, աստվածային,
Պիտի շընչի ու կանաչի.
Մի նըշանում կապված հանդարտ՝
Տանջանքը վեհ, կյանքը զըվարթ.

Մութի թեթև քող է իջել
Պայծառությանն իր երկնային,
Վշտի ամպից լույս ճաճանչել,
Լույսն ըսքողվել վշտովն իր հին.
Ու չարիքն էլ, ասես, անկար,
Զարդ է դարձել իրեն համար:

Ա՛խ, ամենի եղբոր ձեռով
Բախտի ճըզած քողը տըրտում,
Որ նա հառնեի իր ողջ գեղով,
Ապրեի անփույթ էն ճոխ հովտում,
Վերին Պոետն ուր որ նըրան
Կերտեց, դարձավ ապշեց վըրան:

ՆՎԵՐ ՎՐԱՍՏԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԻՆՆԵՐՆԵՐ⁵

Չէ՛, չի լռել մեծ Շոթայի
Երգի ձենը կաթոգին,
Ու դարավոր ցավն ամեհի
Չի խորտակել էն հոգին:

Թընդում է դեռ նոր ձեռքերում
Էն քընարը գովանի,
Խընդում է դեռ նոր երգերում
Վըրաստանը գեղանի:

– Ողջո՛ւյն, ողջո՛ւյն ձեզ հին ու նոր
Արի, բարի ընկերներ,
Արարատի կողմից էսօր–
Եղբայրական երգ ու սեր:

Հին օրերի վերջալույսին,
Արշալույսին նոր կյանքի
Երգենք սրբտանց ու միասին
Երգը հանուր բերկրանքի:

Բարձրը հընչի մեր երգը թող,
Չարի ձենը խըլլացնի,
Հընչյուններովն իր կախարդող
Երկրե երկիր թող անցնի:

Ամեն կողմից թող ամենին
Հըրապուրի ու բերի
Բազմալեզու խրախճանին
Մեր Կովկասի ազգերի:

Ելնե՛նք՝ տեսով ու ճանանչով,
Ընկեր, ախպեր, մեր ու քուր՝
Մեր քյամանչով, ուրախ կանչով
Գընանք դեպ կյանքն ընդհանուր:

Շատ, շատ արցունք թափվեց մեզնում
Ամեն մի կաթիլն– մի խրատ,
Անլուռ, անդուլ էն է ասում–
Ճամփա չունի գործը վատ:

Թող՝ ով կուզի՝ երկար-բարակ
Չոռ տա խեղճին մինչև մահ,
Մենք իմաստուն– սիրենք, խնդանք,
Կյանքը էս է, ինչ որ կա:

Չարկե՛ք, ուժգին մեծ Շոթայի
Էն քընարը ոսկելար,-
Մարդը ինչ տա– էն կըշահի,
Թող իմանա ողջ աշխարհ.–

Տեսնի քանի նոր ձենով է
Խոսում մուսան էս երկրում,
Պատգամներով պայծառ ու վեհ,
Հազար ու մի երգերում:

Ողջո՛ւյն, ողջո՛ւյն ձեզ հին ու նոր
Արի, բարի ընկերներ,
Արարատի կողմից էսօր–
Եղբայրական երգ ու սեր:

ԻՆՉ ԳԱՆՈՒԿ ԵՍ...⁶

Գրիգոր Ռոբարթիձեին

Ինչ դալուկ ես քու երկրի պես ու սրգավոր դու էսօր,
Բայց ողջ ու վեհ քան երբևէ, թովիչ ու խոր դու էսօր.
Եղբորդ մոտ եկած վըշտոտ՝ տանջում ես նոր դու էսօր,
Տանջանք անվերջ իմ սրտի մեջ ու սեր հրգոր, դու էսօր:

ԱՆՔԻՏԱԿԻՑ ԹՇՆԱՄԻՆԵՐ⁷

Վրացական «ЗАКАВК<АЗСКАЯ> РЕЧЬ» թերթը նեղացել է, թե ինչու Հայ գրողների ընկերությունը դիմել է, ուր հարկն է, որ Թիֆլիսի մեծ երգչի արձանի բացման առիթով Ալրի կամ Թուրքի մեյդան կոչված հրապարակը, որի կողքին թաղված է Սայաթ-Նովան, կոչվի Սայաթ-Նովայի հրապարակ: Սրա մեջ նկատում է հայերի կողմից Թիֆլիսը զավթելու դիտավորություն և վատ կրքեր է հուզում:

Նույն տեսակ աղմուկ է բարձրացրել ռուսական «Голос Кавказа» թերթը Խ. Աբովյանի արձանի համար, որ կանգնելու է Երևանում, և հորդորում է իշխանությանը՝ ետ առնել իր տված իրավունքը:

Սրանով, իհարկե, իբրև թե ամեն մեկն իր հայրենիքի ու ազգի շահն է պաշտպանում հայերի դեմ: Մի կողմ թողնելով ավելի լայն հայացքը, ես ուզում եմ նկատել, թե էս մարդիկ լավ էլ չեն հասկանում, թե ինչի դեմ են խոսում, և հենց թեկուզ իրենց նեղ տեսակետից էլ եթե առնենք խնդիրը, դեմ չպետք է լինեին ո՛չ մեկը և ո՛չ մյուսը:

Ահա թե ինչու:

Խ. Աբովյանը մի մոլեռանդ ռուսասեր էր, նրա «Վերք Հայաստանին», հայ ժողովրդի տանջանքի ու տենչանքի արտահայտությունը լինելով հանդերձ, միաժամանակ մի ոգևորված ջատագովություն է ռուս ազգին ու նրա պետական ուժին, և առաջ քաշել Խ. Աբովյանին, կնշանակի հայերի մեջ արժարժեղ մաս սեր ու համակրանք դեպի ռուս ազգն ու ռուս պետությունը:

Եվ հանկարծ... էս մարդու հիշատակին դեմ է մի ռուս թերթ:

Ի՞նչ խոսք, որ սա չի հասկանում, թե ո՛րտեղ և ո՛ւմ դեմ է խոսում, և եթե չար է, նեղսիրտ ու փոքրոգի, ապա նաև անգիտակից է և անգիտակից թշնամի ամենից առաջ իր ազգին ու հայրենիքին, որովհետև ուզում է ետ մղել իր ազգի ու հայրենիքի մեծ բարեկամներին և նրանց տեղը ստեղծել թշնամիներ:

Նույնը պետք է ասեմ և վրացական «ЗАКАВК<АЗСКАЯ> РЕЧЬ»-ին»:

Ո՞վ է Սայաթ-Նովան: Մի երգիչ, որ համազոր ուժով ու սիրով երգել է թե՛ հայերեն, թե՛ վրացերեն և թե՛ թուրքերեն: Մի համակովկասյան երգիչ, որ ամենից քիչ երգել է հայերեն, մի երգիչ, որին վրաց գրականության պատմությունը անվանում է Վրաստանի երգիչ: Բաց արեք վրացի պրոֆ. Ա. Խախանովի վրաց գրականության պատմության եր-

րորդ գիրքը, էջ 218, կտեսնեք Սայաթ-Նովա վերնագրով մի առանձին գլուխ, որ սկսում է հետևյալ տողերով.

«Աղա-Մահմեդ խանի՝ Թիֆլիսն առնելու ժամանակ սպանվեց Վրաստանի նշանավոր երգիչ Սայաթ-Նովան: Նա Հերակլ II թագավորի պալատական աշուղն էր (трыбадур): Հարյուր տարի սրանից առաջ Սայաթ-Նովայի անունը հին Թիֆլիսում հռչակված էր ամենուրեք, թագավորական պալատից սկսած մինչև արհեստավորի խրճիթը»:

Եվ վերջանում է հետևյալ խոսքերով.

«Սայաթ Նովան միայն վրացերեն չի գրել, այլ նաև հայերեն ու բուրբերեն, որ դեռ մնում են անտիպ»:

Սրա մեջ ասված է միայն, որ նա ծնունդով հայ էր և գրել է նաև հայերեն:

Եվ էս տեսակ մի երգիչ, որին հենց իրենց՝ վրացիների ասելով ամենից շատ իրենք են երախտապարտ, մի երգիչ, որ հավասար թանկ է կովկասյան բոլոր ազգությունների համար, մի երգիչ, որ միայն սեր է արծարծել դեպի վրացին, վրացական լեզուն ու Վրաստանը, մի երգիչ, որ Թիֆլիս քաղաքի ամենամեծ պարծանքներից միսն է, հանկարծ իր հիշատակով, իր անվանը տված հարգանքով շարժում է վրացիներից ոմանց մաղձն ու զայրույթը:

Եվ էդ ոմանք, թեկուզ և ազգով վրացի, հայերին նեղսիրտ, չարական լինելուց առաջ Վրաստանի թշնամիներն են, որովհետև վեր են կենում ու խոսում նրա հոյակապ ու սիրելի երգիչներից մեկի՝ Սայաթ-Նովայի անվան ու հիշատակի դեմ:

Այո՛, սրանք անգիտակից թշնամիներ են ամենից առաջ հենց իրենց հայրենիքին ու ազգին, ռուս թերթը՝ ռուսին ու Ռուսաստանին, վրացական թերթը՝ վրացուն ու Վրաստանին:

Եվ սրանց համար է ասված, թե՛ պետք է ներել, որովհետև չեն հասկանում, թե ինչ են անում:

ՀԵՌԱԳԻՐ ՎԱԺԱ ՓՇԱՎԵԼԱՅԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ⁸

<1915, հունիսի 29 կամ 30, Թիֆլիս>

Այս ողբերգական ժամանակում էլ աշխատավոր ժողովուրդը խորապես զգաց լավագույն մարդու, ամենատաղանդավոր և հավասարը չունեցող բանաստեղծի՝ Վաժա Փշավելայի կորուստը: Սրտանց ցավակցում են եղբայրական վրաց ժողովրդին:

Ի. Պ. ՆԱԿԱՇԻՉԵՆՆ⁹

Թանկագին Իլյա Պետրովիչ.

Թույլ տվեք ողջունել Ձեզ Հայ գրողների ընկերության անունից և ի դեմս Ձեզ ողջունել վրաց գրականության եղբայրական գերդաստանը և ընկերության կողմից նվիրաբերել այս գիրքը՝ «Поэзия Армении», իսկ այս գրքի մեջ ամփոփված են մեր ժողովրդի հոգին և մեր ամենաթանկ զգացմունքները:

Թող փարթամորեն բարգավաճի մեր եղբայր վրացի ժողովրդի գեղեցիկ գրականությունը, թող միշտ ապրեն մեր ընկեր վրացի գրողները:

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ ՎՐԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ¹⁰

Վրացի եղբայրներ, մեր վաղեմի եղբայրներ, տանջված եղբայրներ, բայց միշտ ազատ և բարձր հոգու տեր եղբայրներ:

Եթե ժողովրդի գրականությունը նրա ոգու իսկական արտացոլումն է, և այդ ոգու կրողը բանաստեղծն է, ապա ես հայության ոգին եմ բերում Ձեզ, ամենավեհը, որ կարող է ունենալ ժողովուրդն ու մարդը:

Հայության ոգին ցնծում է իմ մեջ՝ ողջունելով ազատ Վրաստանի զավակների առաջին ազգային համագումարը:

Հիացմունքով վկայում եմ, որ վրացին երբեք չի ընկճվել և կովկասյան ժողովուրդների մեջ միշտ առաջինն է եղել իբրև քաղաքացի իր քաղաքական պահանջներով և հասարակական պայքարով:

Եթե մի հայացք ձգենք հարևանների փոխհարաբերությունների

վրա ամբողջ աշխարհում, չենք կարող չխոստովանել, որ վրացին, իբրև հարևան, ամենալավերից մեկն է եղել: Այն բախումները, որ մերք ընդ մերք առաջ էին գալիս հայ և վրացի առանձին շրջանների միջև, ազատ կյանքի պայմաններում պիտի անհետանան, հատկապես այն օրվանից, երբ իր հին հայրենիքից հալածված հայությունը հնարավորություն կստանա նոր, ազատ կյանքի համար վերադառնալ օջախ և կթողնի Վրաստանի հողը, որտեղ հայերը փրկություն են գտել պատմության ծանր հարվածներից: Եվ մեր մեջ կստեղծվի ավելի սերտ, մեծ հոգեկան ու կուլտուրական կապ, մենք՝ կովկասյան ժողովուրդներս, դեռ շատ գործեր ունենք միասին կատարելու, և մենք՝ կովկասյան ժողովուրդներս, եղբայրներ կլինենք հավերժ կողք կողքի, ինչպես մեր հայրենի լեռները, ամեն մեկս մեր տեղում մեր շողշողուն գազաթներով միշտ կանգնած միմյանց թիկունքին և մեր հիմքերով միացած:

Կեցցե՛ կովկասյան ժողովուրդների եղբայրությունը:

Կեցցե՛ ազատ Վրաստանը ազատ Ռուսաստանի ազատ ժողովուրդների միության մեջ:

Ի՞ՆՉ ԿԱՐՈՂ Է ԱՆԵԼ ՎՐԱՍՏԱՆԸ¹¹

Որպեսզի կարողանանք պատասխանել այն հարցին, թե մեր երկրի այսօրվա տագնապալից դրության պայմաններում ինչ կարող է անել Վրաստանը, հարկավոր է առհասարակ մի հայացք գցել այն բանի վրա, թե ինչ վիճակում էին Անդրկովկասի երեք գլխավոր ժողովուրդները՝ վրացիները, հայերը և մուսուլմանները ռուսական հեղափոխության ժամանակ:

Ասում եմ՝ վրացիները, հայերը և մուսուլմանները, քանի որ այս հերթականությամբ են տեղ գտել նրանք ռուսական հեղափոխական շարժման մեջ:

Վրացին, ապրելով իր հարազատ հողում և վաղուց դավանելով սոցիալիստական գաղափարներ, կարողացել է ստեղծել իր սոցիալ-դեմոկրատական գորաբանակը, տվել է նշանավոր սոցիալիստ գործիչներ և ակտիվ դեր է խաղացել ռուսական հեղափոխության մեջ:

Թուրքերը՝ թաթարական տարրերը, միջնադարյան ժողովուրդ էին, որոնք դեռևս գտնվում էին կրոնի ազդեցության տակ և իրենց բոլոր ցեղերին տալիս էին մեկ անուն՝ մուսուլմաններ: Դիշտ այնպես, ինչպես

մի ժամանակ մեր պատմաբանները «քրիստոնյա ժողովուրդ»՝ ասորիներին և ուրիշներին:

Այսպիսով՝ վրացիներն ու մուսուլմաններն Անդրկովկասում կազմում էին երկու թևերը, իսկ հայերը գտնվում էին նրանց միջև:

Մի կողմից հայը սոցիալ-հեղափոխական կապեր է հաստատել վրացու հետ, մյուս կողմից ունեցել է ազգային-ցեղական բախումներ մուսուլմանական տարրերի հետ:

Այսպիսով՝ հայը եղել է մի տեսակ «գաղափարական միջանցուկ հոսանքի» մեջ: Գաղափարապես թույլ հայերից շատերը այդ միջանցուկ հոսանքից հարբուխ են ստացել, շփոթվել են, իրար են խառնվել և կազմել մի անորոշ, խառնիճաղանջ ամբոխ, որը փոշտում է մերթ ցեղ ազգային, մերթ՝ սոցիալիստական ձևով: Այդ փոշտոցը միշտ էլ պատճառ է դառնում թյուրիմացությունների և վեճերի այն մասին, թե ով է նա՝ այդ փոշտացողը, սոցիալիստ է, թե՞ ազգայնական, իսկ առողջ տարրը՝ սոցիալիստական թե՛ ազգային, ծանր դրամա է ապրում:

Եվ այն ժամանակ, երբ վրացիների մեջ շարժմանը տոն տվողը սոցիալիզմն է, թաթարների մեջ՝ մուսուլմանականությունը, հայերի մեջ հայկական արյունոտ հարցն է՝ Հայաստանի մասին, որը, խառնվելով սոցիալիզմի հետ, արդեն դարձել է ազգային-ողբերգական դրամա:

Այսպիսով՝ այս պատմական ծանր պահին կովկասյան երեք ժողովուրդներից գլխավորը վրաց ժողովուրդն է, որն իր վրա առավել մեծ ուշադրություն է քեռում, և նրան ու նրա երևելի գործիչներին վիճակվել է խաղալ կովկասյան Համլետի դժբախտ դերը, դերը մի ուժի, որ կոչված է կովկասյան կյանքը գցել իր շավղի մեջ:

Վրաստանը, թեև ջարդված ու քայքայված, բայց իր ինքնատիպ ազգային ոգով XIX դարի սկզբին մտավ ռուսական պետության կազմի մեջ: Նա անմիջապես սկսեց ամրանալ, զարգանալ, թեև ոչ ազգային հողի վրա, և ապրել, եթե ոչ ազատ քաղաքական կյանքով, ապա գոնե իր քաղաքացիական պայքարով և հիշողությամբ իր քաղաքական պայմանագրի, որով միացվել էր Ռուսաստանին:

Ազգային-կուլտուրական ասպարեզում եղած հալածանքները նույնպես ծառայեցին նրա պայքարի ոգու հզորացմանը: Այդ պայքարը, որի շուրջ համախմբվեցին վրաց բոլոր շրջանները, զարգանալով և խորանալով, աստիճանաբար հասավ ռուսական հեղափոխությանը:

Այսպիսով՝ քաղաքական կյանքի հոսանքը, որքան էլ աշխատե-

ցին այն ծանծաղեցնել, Վրաստանում չէր կարող բոլորովին ցամաքել, ընդհակառակը, ռուսական տիրակալության առաջին իսկ օրերից Վրաստանում քաղաքական կյանքն աստիճանաբար զարգացավ և ժամանակ առ ժամանակ ունեցավ այնպիսի ուժեղ պահեր, որ շճմեցրեց հին կառավարությանը:

Վերցրեք 1802 և 1804 թթ. շարժումը, երբ Վրաստանը դեռ նոր էր դուրս եկել Աղա-Մահմեդ խանի լծի տակից, և լեզգիների ավազակային բանդաները դեռևս ավերում էին նրա մարզերը:

Վերցրեք և 1813 թվականի ավելի ուժեղ շարժումները և կտեսնեք, որ Վրաստանը միշտ է եղել կենդանի քաղաքացի՝ բողոքող և պահանջող և համարձակ իր պահանջների մեջ:

Իսկ 1857-58 թթ. շարժումների մեջ ուշադրության արժանի, գնահատելի շատ բան կարելի է գտնել ուզածդ և հատկապես կովկասյան սոցիալիստների համար:

Այդ շարժումներն իսկական ժողովրդական բնույթ ունեին: Ոտքի էր ելել գյուղացիությունը, իսկ շարժման ղեկավարը՝ դարբինը, հռչակեց նշանաբաններ, թե իշխանական և ազնվական դասերը չպետք է գոյություն ունենան, քանի որ բոլոր մարդիկ եղբայրներ են:

Թե պերճությունը հանցանք է, և այդ պատճառով պետք է արգելվի գործարանային մահուղից կամ տրեզներով զարդարված չոխ հագնելը, թե առհասարակ սակագին պիտի սահմանվի բոլոր ապրանքների համար: Եվ երդվեցին իրենց հայտարարած պայքարում «միմյանց հավատարիմ լինել և բոլոր հանգամանքներում՝ մեկ նպատակի համար»:

Նման երևույթ դիտվեց նաև 1905-06 թթ. հեղափոխական շարժումների ժամանակ: Եվ այն ժամանակ դարձյալ Վրաստանն էր կովկասյան հեղափոխական շարժումներին տոն տվողը իր սոցիալ-դեմոկրատիայով: Նա էր, որ այնպիսի ուժով հայտնվեց Առաջին Պետական դումայում՝ իր սոցիալ-դեմոկրատական ներկայացուցիչներով: Նա էր, որ իր գավառներում ապստամբեց ու պայքարի մեջ մտավ, նույնիսկ գորքի դեմ: Եվ ցարական կառավարության զայրույթը ճայթեց ու ամենամեծ ուժով փլվեց Վրաստանի վրա էկզեկուցիաներով և արսորներով:

Ռուսական մեծ հեղափոխության սկզբից 12 տարի անց Վրաստանն այդ հեղափոխության մեջ այնպիսի կենդանի մասնակցություն

ունեցավ, որ նրա ձայնը, գրեթե Ռուսաստանի ձայնին հավասար, համաժողովրդական հնչեղություն ունեցավ, և տվեց այնպիսի հեղափոխական գործիչներ, ինչպիսիք են Չխեիձեն, Գեգեճկոբին, Ծերեթելին, Չխենկելին, Ժողովանիան և ուրիշներ, որոնց փառքն ու ազդեցությունը տարածվեցին շատ հեռու՝ հայրենիքի սահմաններից դուրս: Նրանք առաջնակարգ հեղափոխական-պետական գործիչներ հանդիսացան:

Վրաստանը, որն իր ազնվականներով և իշխաններով երկրի կառավարիչների աչքում մի ժամանակ առաջին տեղն էր բռնում կովկասյան ժողովուրդների մեջ, այժմ՝ հեղափոխության օրերին՝ նոր կյանքի շեմին, երբ ազնվականությունն ու իշխանները այլևս հարգի չեն, դարձյալ հայտնվել է առաջավոր դիրքերում՝ իր սոցիալ-դեմոկրատական կազմակերպությամբ և նոր ժամանակների իշխաններով՝ հեղափոխական մտքի ու գործի իշխաններով...

Այս բոլորը պարզ ցույց են տալիս, թե ինչ լուսավոր դեր է վիճակված կովկասյան Ֆրանսիային՝ Վրաստանին, ինչ պայծառ հույսեր պիտի կապել նրա հետ, և ինչ մեծ պարտականություններ են դրված նրա գործիչների վրա:

Եվ նրանք ինքնագոհաբար լծվել են իրագործելու այդ ծանր պարտականությունները և հերոսական ջանքեր են գործադրում մեր բարդ հարցերը լուծելու, մեր երկիրը ընդհանուր քաոսից փրկելու համար: Եվ մեր բոլոր ժողովուրդների կենսական շահերը պահանջում են բոլոր կողմերից ի սրտե մերձենալ և անկեղծ կերպով օժանդակել նրան այս ընդհանուր վիճակից երկիրը փրկելու և խաղաղություն հաստատելու գործում:

Այո՛, այժմ խաղաղություն, միայն խաղաղություն է հարկավոր բոլոր ժողովուրդներին, և մեր երկրում խաղաղության հաստատման գործում դեմոկրատական Վրաստանը կատարում է մեծ և լուսավոր դեր: Վրաստանը, որ ընդհանուր գործի շուրջ միավորում է կովկասյան ժողովուրդներին, ազատ է նեղ ազգայնական միտումներից, գործին մոտենալով լայն պետական մասշտաբով, նա ժողովուրդների, նրանց ազգային ինքնորոշման ջերմ պաշտպանն է, որ ձգտում է խաղաղության, քանի որ ամեն ինչ ունի, բացի խաղաղությունից, կամ ավելի ճիշտ, նա ամեն ինչ կունենա, եթե ունենա խաղաղություն:

ՎԵՐՁԻՆ ՏԵՂԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ¹²

Ազգերի հարևանությունների մեջ դժար կարելի է գտնել ավելի լավ հարևաններ, քան եղել են հայն ու վրացին:

Վերցրեք որ հարևան ազգերը կուզեք. Անգլիան ու Ֆրանսիան, Ֆրանսիան ու Գերմանիան, Իտալիան ու Ավստրիան, ռուսն ու լեհը, սերբն ու բուլղարը, թուրքն ու պարսիկը և այլն, և այլն: Ամենքն էլ իրար դեմ պատերազմ են մղել և հաճախ անհաշտ ու երկար ժամանակ: Բայց պատմության մեջ հայտնի չի հայ-վրացական պատերազմ:

Էս երկու ժողովրդի իրար դեմ հանած անախորժություններն էլ, որ առաջներում կղերականների կողմից է եղած դավանաբանական վեճերի պատճառով, վերջերս էլ ինտելիգենցիայի պոլիտիկոսության - էս անախորժություններն էլ, ասում են, մինիմումն են, ինչ որ երբևէ հանդես է բերել հարևանը հարևանի դեմ, եղբայրը՝ եղբոր դեմ:

Եվ հանկարծ այժմ, երբ երկար դարերի միասին քաշած լծից ու տառապանքից հետո սրանց առջև լայն բացվում են վաղուց ըղձացած ազատության դռները, երբ աշխարհքի բոլոր լեզուներով պատերազմ են դատապարտում, ու մշտական խաղաղության և Ազգերի լիզայի մասին է խոսում լավագույն մարդկությունը:

Վիլսոնի բերանով, էս սրբազան վայրկյանին էս երկու ժողովուրդների դեմոկրատիկ սոցիալիստական կառավարությունները ժամանակ ու հարմարություն են գտել իրենց փոքրիկ սրերը իրար դեմ ճոճելու և երկու բազմատանջ եղբայրակից ժողովուրդների մեջ շփոթ հարուցանելու:

– Ինչո՞ւ:

– Իրենց դեռ չկազմակերպված ու չհաստատված պետությունների սահմանների և հայ գաղթականության խնդիրների պատճառով:

Նայենք: Տեսնենք՝ ինչ շրջաններ են դրանք և ինչպես են դարձել վիճելի, կամ ինչ գաղթականություն է դա (հինը թե նորը), և ինչպես են լուծվելու էս խնդիրները:

Սրա համար պետք է ետ նայել և մի շատ կարճ պատմական տեսություն անել:

Դա անհրաժեշտ է գործը պարզ հասկանալու և վճիռը գտնելու համար:

Նայեցեք առաջավոր Ասիայի և Կովկասի ազգագրական գունա-

վոր քարտեզին:

Հարավն ու արևելքը մահմեդական միապաղատ ծով է:

Նրանից վերև՝ Էստեղ-Էնտեղ, կղզիացած է հայ ժողովուրդը:

Սրանից էլ վերև՝ մի մեծ կղզի, որ Վրաստանն է:

Հիմի տեսնենք՝ ինչպես է առաջ եկել էս պատկերը:

VII դարից սկսած՝ արաբական, ապա թե սելջուկ, մոնղոլ, տաճիկ, թուրք-թաթար մահմեդական բանակները անդադար իրար ետևից արշավել են դեպի հյուսիս-արևմուտք գտնվող քաղաքակիրթ ու ծաղկած քրիստոնյա երկիրներն ավերելու, տիրելու և իսլամը տարածելու:

Առաջին քրիստոնյա երկիրը, որին նրանք հանդիպել են իրենց ճանապարհին, Հայաստանն է եղել: Եվ հենց Հայաստանն էլ միշտ ենթարկվել է նրանց առաջին թավի սաստկությանը, դարերի ընթացքում խորտակվել ու թաղվել էդ հեղեղի տակ: Սիայն բարձրերում, դժարամատչելի լեռնաստաններում է մնացել հայությունը, Էստեղ-Էնտեղ իբրև կղզիներ դուրս ցցված մահմեդական ծովի մեջ:

Վրաստանը համեմատաբար ավելի պակաս է ենթարկվել էդ հեղեղին և Հայաստանից էլ ավելի պակաս է տուժել:

Էս հսկայական ճնշումի տակ, որ գալիս էր հարավից ու արևելքից, հայությունը միշտ տեղահան է եղել ու հորձանք է տվել դեպի թշնամուց ազատ ու ապահով կողմը՝ դեպի հյուսիս, և իր հերթին հեղեղել է իր հյուսիսային հարևան երկիրը՝ Վրաստանը:

Վրաստանն էլ, թե՛ եկող թշնամու ճնշումի տակ և թե՛ եկվոր գաղթական բազմության, սեղմվել է դեպի վեր, դեպի Կովկասի լեռները, իր հարավային ու հարավարևելյան սահմանային մասերը թողնելով մահմեդական ցեղերին կամ փախստական հայ ժողովրդին:

Հենց որ դադարել է թշնամու ճնշումը, դադարել է և էս շարժումը, ու ժողովուրդը, գեթ մասամբ, ետ է դարձել իր նախկին տեղը, մինչև որ վրա է հասել նոր ալիքը, նոր հարձակումը և առաջ է բերել նոր տեղահանություն ու փախուստ:

Էսպետով՝ կանոնավոր կերպով ստեղծվել է հայ ժողովրդի պարբերական մակընթացությունը և տեղատվությունը դեպի Վրաստան և Վրաստանից ետ:

Եվ էս երևույթը շարունակվում է մինչև էսօր, մինչև Բակուրիանիի լեռների ու Ալազանիի հովիտի գաղթականությունը:

Երկու քրիստոնյա կուլտուրական ժողովուրդների համար էլ, հայի

համար էլ, վրացու համար էլ սա եղել է մի ընդհանուր աղետ:

Եվ երկու ժողովուրդն էլ եղբայրորեն կարեկցել են իրար, իրար օգնել ու միասին կանգնել դիմագրավել են ընդհանուր թշնամուն, լավ հասկանալով, թե իրենց ճակատագրերը ինչպես սերտ կապված են իրար հետ:

Երկու ժողովրդի պատմությունն էլ անվերջ վկայություններ ունեն էս մասին:

XI դարում, մահմեդական հեղեղի էն ամենաթունդ ժամանակը, էնպես պատահեց, որ մի ուրիշ մեծ հեղեղ վեր կացավ դրա դեմ արևմուտքից, որ պատմության մեջ հայտնի է Խաչակրաց արշավանք անունով: Ու բռնկեց էսօրվա համաշխարհային պատերազմի նման մի մեծ պատերազմ, նա էլ՝ մահմեդական վտանգի դեմ, ս. Երկիրն ու Փրկչի գերեզմանն ազատելու համար: Էն ժամանակ էլ, ճիշտ էսօրվա նման, երբ եվրոպական խաչակիր բանակները հայտնվեցին Պաղեստինում, մահմեդական հեղեղը, որ արդեն խեղդում էր Հայաստանն ու Վրաստանը, ետ դարձավ դեպի խաչակիր բանակը, և Հայաստանն ու Վրաստանը ազատ շունչ քաշեցին:

Հայաստանում՝ Էստեղ-Էնտեղ, ամուր վայրերն ապավինած իշխանական տների մնացորդները գլուխ բարձրացրին և զանազան տեղեր ստեղծեցին տասնից ավելի թագավորություններ. էդ թագավորություններից մեկն էր և Լոռու Կյուրիկյան թագավորությունը, որի պատմությունը, դժբախտաբար, մինչև էսօր մութն է մնում:

Էդ միևնույն ժամանակ Վրաստանը, որ ավելի ամբողջ էր մնում, ավելի էլ գորանալով, Դավիթ վերաշինողի և նրա նշանավոր թռան՝ Թամար թագուհու օրով մի շարք հաջող կռիվներ մղելով մահմեդական մնացած իշխանների դեմ, իր սահմաններն ընդարձակեց:

Ահա էդ շրջանումն է, որ Վրաստանի ազդեցությունը տարածվում է և Լոռու վրա: Ասում են՝ ազդեցությունը, որովհետև Լոռին էդ ժամանակ ուներ իր թագավորներն ու իշխանները և իր հայկական գորքը, որ արձանագրված են և վրաց պատմության մեջ:

Եվ էդ շրջանում Լոռին հանդիսանում էր շրջակա և հեռավոր հայ գավառների համար մի տեսակ լուսավորության կենտրոն իր Հաղպատ ու Սանահին վանքերով, ուր հավաքված էին ժամանակի նշանավոր գիտնականները, կային հարուստ գրադարաններ, որոնցից և դուրս են եկել շատ նշանավոր գիտնականներ, պատմիչներ ու հռե-

տորներ:

Բայց էս ժամանակից, XIII դարում, Խաչակրաց արշավանքները վերջացան, եվրոպական գորքերը ետ դարձան դեպի իրենց երկիրները, ու նորից մահմեդական հեղեղն սկսվեց դեպի Հայաստան ու Վրաստան:

Իրար ետևից ջարդվեցին ու չքացան մանր-մունր հայ թագավորություններն ու իշխանությունները, ժողովուրդը մեծ քանակությամբ փախավ զանազան կողմեր և ամենից առաջ դեպի Վրաստան: Բայց հզոր թշնամին Հայաստանը վերջացնելուց հետո ընկավ Վրաստանի վրա, ու Վրաստանը, շարունակ ավերվելով մերթ իր թագավորների հավատարացության գնով, մերթ ամեն տեսակ անպատմելի հարկեր վճարելով, մերթ ըմբոստանալով և նորից ու նորից ջարդվելով, մի կերպ քարշ տվեց իր իշխանությունը, մինչև որ, վերջապես, ճարահատված միացավ Ռուսաստանին:

Ռուսաստանը մի դարից ավելի տիրելուց և մահմեդական պետությունների դեմ կռվելուց հետո հանկարծ բոլշևիզմի հոսանքով ետ հոսեց դեպի իր ներսերը, և մի կարճ ժամանակ կրկնվեց հին պատմությունը՝ Հայաստանն ու Վրաստանը բաց մնացին մահմեդական գորքերի առաջին:

Դարձյալ սկսվեցին կոտորածներն ու հին ծանոթ բարբարոսությունները, դարձյալ հայ ժողովուրդը բռնեց հին պատմական փախուստի ճանապարհը – և ամենից առաջ դեպի Վրաստան:

Եվ ահա, ինչպես մոտ տասը դար առաջ, հենց էլ ամենատագնապալի ժամանակ եվրոպական խաչակիր գորքը նույն Պաղեստինում մի հսկայական զարկով միանգամից էնպես է զարկում տաճկական վիշապի թիկունքին, որ նա ստիպված է լինում իր արյունոտ ճանկերը ետ քաշել Բաքվից ու Անդրկովկասի հայկական շրջաններից ու Վրաստանի սահմաններից և կծկվել դեպի իր հին որջը: Եվ միանգամից թեթևանում է հայի ու վրացու ծանր վիճակը, ազատ շունչ են քաշում, դեմոկրատական սոցիալիստական հանրապետություններ են կազմում և... սահմանային շրջանների կռվի են վեր կենում և գաղթականների շուրջ են աղմկում:

Վրաստանի սոցիալիստական հանրապետությունը, իր սահմաններն ապահովելու համար, իրենն է հայտարարում Ախալքալաքի, Բորչալուի, Դազախի, Լոռու և Փամբակի շրջանները:

Հայաստանի Հանրապետությունը իր զինվորներն է դրկում՝ բռնելու նույն շրջանները:

Վրաստանի պահանջը, անշուշտ, պատմական-քաղաքական պահանջ է, ոչ թե պատմական-կուլտուրական կամ ազգագրական, որովհետև էդ շրջանները կան ամբողջովին, կան մեծ մասամբ բռնված են հայերով կամ թուրքերով, և, անկասկած, խախտու պահանջ է, հատկապես սոցիալիստ մարդկանց համար: Բայց ես կարծում եմ՝ էս խնդիրը լուրջ պետք է նայվի վրացի ժողովրդի իրական կարիքի տեսակետից, հողի ու տեղի պակասության տեսակետից:

Եթե էսօր պատմության բերմունքով դրությունը փոխվել է, և հայն ու թուրքը շատ հող ունեն, վրացին՝ քիչ, թող վերադարձնեն վրացուն նույն հողերը, ինչ որ նա երեկ նույն պատմության բերմունքով ստիպված է եղել թողնելու իրենց:

Պատմական-քաղաքական տեսակետը ինչքան էլ խախտու լինի, այսուամենայնիվ, նա մի բան է ազգերի հոգեբանության մեջ, իսկ եթե դրան միանում է և իրական կարիքը, խնդիրը դառնում է լուրջ:

Այլապես, էսօրվա հողապակաս ժողովուրդը, վաղը ավելի ևս նեղվելով, ուզի-չուզի, ստիպված կլինի գենքի դիմելու:

Բայց, իհարկե, պետք է էն տեսակ շրջանների խոսք չանել, ինչպես, օրինակ, Լոռին ու Փամբակն են, որոնք ո՛չ վրացական են եղած, ո՛չ էլ կարող են լինել և միայն խնդիրը խճճում են և առանց էն էլ խախտու պատը փչացնում:

Ինչ վերաբերում է գաղթականությանը, տաճկական գործերի հեռանալուց հետո նա արդեն վերադառնում է իր տեղը:

Բայց էդ հերիք չի:

Ավելի մեծը կա:

Երկար դարերի դժոխային բռնակալությունից հետո Տաճկաստանն ինքն է հեռանում Հայաստանից, և կատարվել է հայության վերջին մեծ տեղատվությունը ամեն տեղից, նույնպես և Վրաստանից, հայության Մեծ Վերադարձը դեպի Հայաստան:

Վերադառնալու են ոչ միայն երեկվան գաղթականները, այլև նրանք, որ դարեր առաջ եկել հաստատվել են Վրաստան:

Եվ ամենից առաջ Հայաստանի ու իրեն՝ հայ ժողովրդի շահն է էսպես պահանջում:

Այո՛, և՛ տեղ շատ կլինի ամենքի համար, և՛ ազատ ու երջանիկ ապ-

րելու և ամեն կերպ զարգանալու հնարավորություն:

Մի՞թե չեք լսում Վիլսոնի հոյակապ հայտարարությունները, որի ձայնի մեջ միացած են աշխարհքի բոլոր մեծ ազգերի ձայները:

Տգեղ ու ապարդյուն աղմուկներով դիտմանս մի՛ մտցնեք համա-մարդկային կյանքի էս վեհ ու նվիրական վայրկյանին:

ԵՎԳԵՆԻ ԳԵԳԵՃԿՈՐՈՒՆ¹³

Մեծարգո Եվգենի Պետրովիչ.

Այսօր իմացա, որ դաշնակիցների ներկայացուցիչները վրաց կառավարության համար հաշտության անընդունելի առաջարկ են արել: Արդյոք նպատակահարմար չե՞ք գտնում հայ-վրացական ինտելիգենցիայի ներկայացուցիչներից հրավիրել արտակարգ խորհրդակցություն՝ կազմելու հաշտության մոր նախագիծ այն պայմանների հիման վրա, որ Դուք առաջարկեցիք, երբ և ես Ձեզ մոտ էի:

Միասին կազմված այդ նախագիծը հաղորդել դաշնակիցների ներկայացուցիչներին՝ խնդրելով գործադրել այն:

Այսպես, խիստ անհրաժեշտ է երկու կողմի համար էլ կործանարար այդ արյունահեղությունը դադարեցնել, որը մենք պետք է գլուխ բերենք բոլոր ուժերով, ինչ էլ լինի:

Սպասում եմ Ձեր պատասխանին:

Հովհ. Թումանյան

ՏԻՑԻԱՆ ՏԱԲԻՉԵՒՆ

Իմ ազնիվ բարեկամ, կարդացի հայ-վրացական կոնֆլիկտի առիթով Ձեր հրապարակական նամակը, որ ուղղել էիք ինձ: Ձեր նամակից անմիջապես հետո սկսվեցին հաշտության բանակցությունները: Էդ պատճառով ես հետաձգեցի իմ պատասխանը, որովհետև բանակցությունների էս կամ էն ելքը մեծապես ազդելու էին իմ պատասխանի բնավորության վրա: Այժմ, բարեբախտաբար, հաշտությունն արդեն կայացած է, և էլ չի ուշանալ Ձեր պատասխանը:

ՊԱՏԱՍԽԱՆ ՏԻՑԻԱՆ ՏԱՔԻՉԵՒՆ¹⁴

Իմ ազնիվ բարեկամ և ընկեր, ներողություն եմ խնդրում, որ ուշացրի Ձեր հրապարակական մամակի պատասխանը:

Ուշացնելու պատճառը, ինչպես հայտնել էի «Ժողովրդի ձայն»-ի 18-ում, էն եղավ, որ հենց էդ ժամանակ մեր երկու կառավարությունները սկսեցին հաշտության բանակցություն, և ես սպասեցի դրա ելքին, իսկ դրա էս կամ էն ելքը մեծապես ազդելու էր իմ պատասխանի վրա: Բարեբախտաբար գործը հաշտությամբ վերջացավ, և երկու կողմից էլ պատրաստակամություն հայտնեցին հրապարակավ պարզելու, թե ով է մեղավոր պատերազմի համար: Ուրեմն մենք մի որևէ առողջ խոսք ասելու համար պիտի սպասենք նրանց խոստացած բացատրություններին:

Իհարկե, առանց դրան սպասելու և առանց պատերազմի մասին ըստ էության խոսելու, ես արդեն պետք է էդ ժամանակ պատասխան գրեի Ձեզ, բայց էդ ժամանակ էլ հիվանդացա և միայն այժմ եմ կարողանում գալ Ձեզ հետ եղբայրական գրույցի:

Դուք Ձեր մամակում ազնիվ ու բարի ցանկություններ եք հայտնում մեր ժողովուրդների ու մեր հայրենիքների վերաբերությամբ և ասում եք՝ Ձեզ նման եմ մտածում և Ձեր մյուս ընկերները, որոնց ճանաչելու և սիրելու հաճույքն ունեմ:

Ուրիշ կերպ լինել չէր էլ կարող: Չէ՞ որ դուք ձեր ժողովրդի ներկայացուցիչներն եք, ոչ թե էն ներկայացուցիչները, որոնք ընտրական քվեատուփերից են ծնվել, այլ էն ներկայացուցիչները, որոնք ծնվել են իրենց ժողովրդի ազգային ոգուց ու հանճարից:

Իսկ էս երկու տեսակի ներկայացուցիչների մեջը հսկայական տարբերություն կա: Էն տեսակ տարբերություն, ինչ տարբերություն որ կա Կախեթի այգու խաղողի ողկույզի մաքուր հյութի մեջ և խանութում ի ցույց դրված շշի միջի հեղուկի մեջ, որի վրա գրված է «Kaxetckoe вино»: Խանութում վաճառվող շշի գինիներից հազարից մեկն է իսկականը լինում և սովորաբար կեղծ է լինում, իսկ այգու ողկույզի հյութը ո՛չ կեղծ կարող է լինել և ո՛չ էլ հնար կա կեղծելու: Դրանցից մեկը գինեվաճառն է լցնում, մյուսը՝ բնությունն ինքը:

Անբնական էլ կլիներ, որ Դուք լավ զգացմունքներ ու բարի ցանկություններ չունենայիք և նույնիսկ Ձեր հոգու պայծառությունը չտարա-

ծելիք իրականության կոշտության վրա և չկանչելիք ժողովուրդներին դեպի խաղաղ կյանքը, արդար աշխատանքն ու ընդհանուր եղբայրությունը:

Էսպես Բարի և ազնիվ է մտածում և ինքը՝ հասարակ աշխատավոր ժողովուրդը, նրա ամեն մի մարդը՝ մուրճը ձեռքին արհեստանոցում աշխատելիս, թե արդի մաճը բռնած՝ դաշտում վար անելիս. մի խոսքով, արդար աշխատանքի ամեն մի ճանապարհին և կամ երբ իրիկունը հանգստանում է իր խաղաղ հարկի տակ՝ նստած իր օջախի առջև, իր ընտանիքի ու իր ազատ խղճմտանքի հետ:

Բայց աշխարհքում կառավարություններ կան, իշխողներ կան, որոնք էսպես չեն մտածում:

Մինչդեռ բանաստեղծն ասում է. «Мир - это Бог. Мир - кормилица народов» (В. Гюго), իշխողը ընդհակառակն է ասում. «Мир есть мечта и мечта некрасивая» (Гр. Молтыке):

Եվ գրեթե բոլոր իշխողներն էլ էսպես են մտածում, հարկավ մեկը՝ շատ, մյուսը՝ քիչ: Մրանց իշխողի, տիրողի հաստատուն դիրք է հարկավոր, էդ դիրքի համար փառք ու հաղթանակ է հարկավոր, փառքի ու հաղթանակի համար կոտորած ու պատերազմ է հարկավոր, իսկ կոտորածի ու պատերազմի համար հարկավոր է ոչ թե ազատ խղճմտանքով, ինքնուրույն մտածող ու առողջ դատող մարդ ու ժողովուրդ, այլ միապաղաղ մի զանգված՝ անկամք և հնազանդ ու հլու ամեն մի հրամանի, նույնիսկ կոտորածի:

Եվ երբ հարկավոր են համարում, հարայ են գցում, աղաղակով ու աղմուկով հավաքում են մարդկանց, հարբեցնում մի որևէ սուտով, մի որևէ լոզունգով, ժողովրդից ստեղծում են ամբոխ, ստիպում են գոռալ իրենց թելադրությունով ու տանում են էն տեսակ գործերի, որոնց նա՝ ժողովուրդը, արդար աշխատանքով ապրող մարդը, չէր գնալ երբեք իր ազատ կամքով ու խղճմտանքով...

Մրանից հետո իբրև արքիման ասում են. «Ամեն մի ժողովուրդ արժանի է իր կառավարությանը»: Մինչդեռ, ինչպես տեսնում եք, սա միանգամայն սխալ է, և ճշմարիտն էն է, որ ոչ մի կառավարություն արժանի չի իր ժողովրդին, եթե միայն ընդունեք էն տարբերությունները, որ ես են ընդունում ժողովրդի և ամբոխի մեջ:

Առեք, նույնիսկ, ամենաամխուսափելի պատերազմը: Դարձյալ ժողովուրդն ընդունում է մեծ վշտով, ցավով է լցվում ամեն մի տուն,

գրեթե ոչ մի զինվոր չի ուզում գնա պատերազմի դաշտը, իսկ նրանց ծնողների ու հարազատների աչքերից արտասուք է հոսում:

Էսպես է ընդունում ժողովուրդը, նույնիսկ, անխուսափելի պատերազմը: Իսկ ամբոխը մի հարբած ու սարսափելի բազմություն է, որը ո՛չ ծնող է ճանաչում, ո՛չ զավակ և պատրաստ է ոչ միայն գնալու ամեն մի կոտորածի, այլև ստեղծելու և կատարել[ու] էն տեսակ ոճիրներ, որ դուրս են բանական մարդու երևակայությունից:

Խորապես ցավելով պետք է խոստովանել, որ ոչ թե միայն ժողովուրդն է ամբոխանում ու գնում վատ գործերի, այլև մենք, նույնիսկ գրողներս էլ հաճախ ենթարկվում ենք նույն փորձություններին, տարվում ենք միևնույն հոսանքներից: Մենք էլ հաճախ էդ տեսակ մոմենտներին բռնվում ենք ազգասիրական կամ ռազմական մոլի տենչով ու տենդով, հարբում ենք ընդհանուրի հարբեցությամբ, աստվածային ոգևորությամբ փոխարինում է բարբարոսի կատաղությունը, և փառաբանում ենք պատերազմն ու կոտորածը և թշնամության ու ատելության թույնով թունավորում մեր ընթերցողների հոգիները:

Սակայն ինչքան գարշելի է էն կրոնավորը, էն ինկվիզիտորը, որ քրիստոնեության խաչը ձեռքին և քրիստոնեության անունով աուտոդաֆեններ էր սարքում: Ինչքան գարշելի է էն սոցիալիստը, որ սուրը ձեռքին վեր է կացել և սոցիալիզմի անունով, աշխատավոր ժողովրդի անունով կոտորած է անում, իշխանություն ու երկիր է հավիշտակում, նույնքան էլ գարշելի է, երբ գեղարվեստի մարդը, աստվածային սիրո և եղբայրական զգացմունքի փոխարեն, ատելության ու շովինիզմի կիրքն է բորբոքում մարդկանց սրտերում:

Ես կարծում եմ՝ հասել է ժամանակը, երբ գեղեցիկ գրականությունը պիտի հրաժարվի էս տգեղ դերից, որ երբեմն առնում է իր վրա, պիտի դադարի սպանիչներին ու սպանությունները փառաբանելուց: Դուք, իմ երիտասարդ բարեկամ, զգացված եք, որ ես թե՛ առաջ, թե՛ վերջերս Վրաստանի մասին բարձր կարծիք եմ հայտնել և բարի ցանկություններ:

Այո՛: Եվ ավելին կասեմ՝ էդ սերն ու բաղձանքը անասան էդպես էլ կմնան, առաջինը՝ որովհետև ես միայն սեր ու բարի ցանկություններ ունեմ ամենքի համար, երկրորդն էլ՝ էդ լավ զգացմունքները հիմնված են մեր հին եղբայրակից ու բախտակից վրացի ժողովրդի բարի, պայծառ ու ազատասեր ոգու վրա: Ջարտուղի դեպքերն ու անցողակի

դժբախտ երևույթները և կամ էս ու էն պակասությունները անկարող են խախտել էդ խոր հավատն ու սերը:

Եվ ինչ խոսք, որ ազատ է լինելու Վրաստանը, ինչպես ազատ են լինելու և՛ Հայաստանը, և՛ Ադրբեջանը, և՛ Դաղստանը, և՛ մյուս բոլոր ժողովուրդները առհասարակ:

Եվ մեզնից ամեն մեկս պիտի սիրենք մեր հարևանի ազատությունն ու աշխատենք նրա համար, պարզ գիտակցելով էն հավիտենական ճշմարտությունը, որ մեկի երջանկությունը պայմանավորվում է մյուսի երջանկությունով: Դժբախտի հարևանի բախտավորությունը հաստատուն լինել չի կարող երբեք:

Եվ չէ՞ որ էս ազատությունը, որի համար էսքան տառապում ենք ու երազում, մի շատ հասարակ բան է, ինչպես անհատի շնչելու կամ ձեռքն ու ոտքը շարժելու իրավունքը:

Եվ չէ՞ որ էս շատ հասարակ բանը վերջապես խոստացել են բոլոր փոքր ազգերին հաղթող մեծ պետությունները, որոնք երբեք հանգստություն չեն ունենալու, մինչև իրենց խոստացածը չտան և չհանգստացնեն իրենցից փոքրերին:

Եվ չէ՞ որ ազգերի համերաշխության ու եղբայրության խնդիրը բանաստեղծությունից անցել է քաղաքականությանը և Ազգերի լիգայի օրվան հերթական հարց է արդեն, և աշխարհքը գնում է դեպի միացյալ շտատները:

Բայց մինչև էդ լավ կարգերի հաստատվելը ո՞վ գիտի՝ ինչեր ենք քաշելու:

Նայեցեք, տեսեք, թե ինչպես է ալեկոծվում աշխարհքը մի ծերից մինչև մյուսը: Նայեցեք մեր շուրջը և մեզ՝ ամենքիս, տեսեք, թե ինչպես գազան ենք դարձել մեկս մյուսիս համար:

Դարձյալ մի լայն ալեկոծություն, դարձյալ մի խոշոր ցնցում, և միանգամից գահավեժ կրնկներք մի նոր միջին դարերի բարբարոսության ու խավարի մեջ, իսկ փոքր, ուժասպառ ազգերը կերթան ոտի տակ:

Դաշնակից պետությունները դեռ պատերազմը չեն վերջացրել, դեռ մեծ գործ ունեն կատարելու: Դեռ աշխարհքի օվկիանոսը ծփում է և սպառնում է նոր ալեկոծություններով: Դեռ նրանք պիտի խաղաղեցնեն և նախքան անկախությունն ու ազատությունը կյանքի սպառնալիություն պիտի տան փոքր ազգերին:

Նայեցեք Հայաստանին, որի համար էդպես գեղեցիկ բարեմադ-
թություն եք անում: Էս համատարած ահռելի թշվառության մեջ ո՛չ մեր
ապիկարությունը սահման ունի, ո՛չ թշնամիների անգթությունը, և նա
գրեթե մահվան դուռն է հասել: Գոնե ինձ այլևս չեն ուրախացնում ո՛չ
հանրապետություն և ո՛չ անկախություն խոսքերը: Կորցրել եմ ուրա-
խանալու ընդունակությունս: Կարծեք թե արտասուքի տակից այլևս
չեմ նկատում նրա նոր ծագող արշալույսը: Ընդհակառակը, մռայլ
կասկածները սարսափ են ազդում դեռ մոտակա օրերի վերաբերու-
թյամբ, և ես այժմ միայն մի բան եմ ցանկանում նրան՝ մի հաստա-
տուն, հզոր ու լուսավոր հովանավորություն, որ նա փրկվեր էս դրու-
թյունից և կազդուրվեր ժամանակի ընթացքում:

Մեծ ակեղծությունների ու ցնցումների հետ միասին եթե ի նկա-
տի ունենանք մեր ժողովուրդներից ամեն մեկի ներքին քայքայումը,
երկպառակություններն ու դրացիական անվերջ վեճերը, պատկերը
կատարյալ կլինի: Ահա հենց, օրինակ, սահմանային վեճը, որ հենց
նորերս առաջ բերեց հայ-վրացական ոճրային ընդհարումը, էնքան
դժբախտություն պատճառեց երկու կողմի ժողովուրդին էլ, էնքան թու-
նավորեց ու տակավին չի էլ վճռվել: Մի հարց, որի վճռելն ու որոշելը
շատ ու շատ ավելի հեշտ գործ է, քան թե կարծում են մեր սոցիալիս-
տական ու դեմոկրատիկ հանրապետությունները:

Բայց ինչ որ հեշտ է բանաստեղծի համար, դժվար է, հաճախ ան-
կարելի է դիպլոմատի համար, որովհետև սրանք երկու տարբեր արա-
րածներ են, երկու տարբեր աշխարհայացքներ ու հոգեբանություններ:

Բանաստեղծը կամ փիլիսոփան ասում են՝ լեզուն նրա համար է,
որ մարդ իր միտքը պարզ հայտնի աշխարհիքի առաջ, իսկ դիպլոմա-
տը կամ իշխողը ասում է՝ լեզուն նրա համար է, որ մարդ իր միտքը
թաքցնի: Բանաստեղծը կամ փիլիսոփան իրենց շնորհքն ու ազդեցու-
թյունը գործ են դնում՝ ժողովուրդներին տանելու խաղաղ, շինարար
աշխատանքի, դեպի սեր ու եղբայրություն: Դիպլոմատը կամ իշխողը
իրենց ուժն ու ճարպկությունը գործ են դնում՝ հարևանին խաբելու,
խեղդելու և կողոպտելու, այսինքն՝ հաղթություն տանելու:

Մի Լ. Տոլստոյն ասում է. «Պետությունների սահմանները պիտի
որոշվեն ոչ թե սրով ու արյունով, այլ ազգերի իմաստուն համաձայ-
նություններով»: Կամ մի Կիկերոն ասում է. «Աշխարհիքի բոլոր վեճե-
րը վճռվում են կա՛ն բանականությունով, կա՛ն ուժով: Առաջին միջոցը

հատուկ է մարդուն, երկրորդը՝ անասունին, կենդանուն»:

Իսկ մի Բիսմարկի հայտարարում է, թե «Մեծ խնդիրները կարող են վճռվել ոչ թե ճառերով ու ձայնատվությամբ, այլ սրով ու արյունով»:

Եվ աշխարհքը կառավարում են դիպլոմատներն ու իշխողները, ոչ թե փիլիսոփաներն ու բանաստեղծները:

Այո՛, իմ բանկազին բարեկամ. շատ չնչին բացառությամբ աշխարհքների կառավարիչները կյանքի խնդիրները վճռելիս գերադասում են էն միջոցը, որ հատուկ է անասունին, այսինքն՝ ուժը: Կառավարելու ուրիշ եղանակ դեռ չեն գտել ու չեն հասկանում և դեռ հպարտանում ու պարծենում են դրանով:

Վերջին մեծ հեղափոխությունից հետո մեզանից շատ միամիտներ կարծեցին, թե միանգամից արդեն ազատվեցինք հին դիպլոմատիայից ու կառավարության հին ռեժիմից, բայց անողորք ու իմաստուն ժամանակը, որ ամեն բան դրսևորել գիտի, ձեռաց ցույց տվեց երևույթների ներքին բովանդակությունը և միանգամ ընդմիշտ համոզեց ամենքիս, որ էնքան էլ հեշտ չի հին մեղքից ազատվելը:

Էս բոլոր դեպքերը, որոնց վերահասու կամ ականատես եղանք մենք, մի ավելորդ անգամ էլ պարզ ցույց տվին, թե ինչքան դժվար են կատարվում մեծ ժողովուրդների հաղթանակները, և ինչքան շատ են նրանցով դիմակավորվում մարդիկ:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈՅԻ» ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ¹⁵

Սրտագին շնորհակալ եմ «Սաքարթվելոյի» շնորհավորությունների և բարեմաղթությունների համար, որ արել է իմ ընկեր Տիցիան Տաբիձեի միջոցով:

Ես հավատում եմ՝ գալու է օրը, երբ, բոլոր շովինիստների ջանքերին հակառակ, հաղթանակելու է ժողովուրդների միության ու եղբայրության գաղափարը, ազատության մեջ ավելի ու ավելի են ամրանալու մեր դարավոր եղբայրական կապերը, և մեր ինքնուրույնությունը շքեղ ու ինքնատիպ ծաղկելու է մեր գեղարվեստի ու գրականության մեջ:

Եվ Վրաստանը, որ չքնաղ է եղել նույնիսկ իր դժբախտության օրերում, ազատ Կովկասի ազատ ժողովուրդների եղբայրության մեջ պետք է դառնա ավելի չքնաղ ու ավելի սիրելի:

ԳՐԻԳՈԼ ԴԻԱՍԱՍԻՉԵՒՆ¹⁶

Իմ թանկագին Գրիգոր Նիկողոսիչ:

Սրտանց շնորհակալ եմ, որ դու հիշում ես մեր գրականությունն ու գրողներին էն ժամանակ, երբ մենք գրեթե մոռացել ենք մեր ազգային ամբողջությունն ու ամեն մեկիս հասած ծանր հարվածների տակ:

Այո՛, մեզ հասած դժբախտությունը վեր եղավ մեր ուժից ու կարողությունից: Սակայն էս էլ կանցնի: Առաջին անգամը չէ, որ հայ ժողովուրդը էս տեսակ աղետ է տեսնում: Էլ է տեսել և նորից ոտի կանգնել նորից վերաշինելու և ստեղծագործելու համար:

Էս համատարած աղետների ծովի մեջ Վրաստանը միակ անկյունն է, որ ազատ է մնացել սովից, սրածությունից ու համաճարակից և խանդով զբաղվում է յուր ներքին վերաշինության աշխատանքով:

...Ես երբեք չեմ կասկածել, որ հայն ու վրացին, Վրաստանն ու Հայաստանը ամենալավ հարևանները պիտի լինեն, ավելի լավ, քան երբևիցե, և նրանց գրականություններն էլ՝ իրենց միջի ամենավսեմ կապը:

Հենց էսօր էլ շատ է սերտ ու անկեղծ էդ կապը մեր մեջ:

Եվ դեռ ավելի կամրացնենք: Դրան ապացույց քեզ լավ հայտնի հայ ու վրացի գործիչների ձեռնարկած «Կովկասյան ազգերի կուլտուրական միության» գործը և հայ ու վրացի բանաստեղծների սկսած «Բանաստեղծների եղբայրությունը», որոնցով էնքան ոգևորվում ենք էսօր, իսկ վաղը պիտի ստեղծենք մեր երազած մթնոլորտը:

Հոգով նվիրված քեզ և ամբողջ վրացի ժողովրդին

Հովհ. Թումանյան

ԻՄ ՊԱՏԱՍԻՆԱՆԸ ԼԵՎԱՆ ԳԻՓԻԱՆՈՒՆ¹⁷

Իմ թանկագին ընկեր, իմ հոգու ընկեր, Լևան Դավիդովիչ: Չեր հրապարակական նամակներում Դուք ինձ առաջարկներ եք անում ու հարցեր տալիս, և ինձ ինչքան հետաքրքրում ու զբաղեցնում են Չեր արած առաջարկներն ու հարցերը, ևս առավել զմայլեցնում է էն պարզ, անկեղծ ու բարի սիրտը, որ երևում է Չեր տողերում, էն ազնիվ, բանաստեղծական հոգին, որով համակված են Չեր հողվածները: Լավ վրացու, իսկական վրացու սիրտն ու հոգին:

Եվ էդ տեսակ մարդը դեռ հարց է տալիս, թե ինչ պետք է անենք, որ մոտենանք իրար:

Ես Ձեզ կասեմ, էդ տեսակ սիրտ պետք է ունենանք:

Եվ տեսնո՞ւմ եք, որ ունենք: Եվ դեռ էդպես շատ սրտերի տեղ գիտեմ ես: Բայց, իհարկե, Դուք Ձեր սիրտը չեք տեսնում և ոչ էլ հաշվի եք առնում, ինչպես և Ձեզ նմանները, ճիշտ էնպես, ինչպես երեխաները տեղեկություն չունեն իրենց անմեղության մասին և առանձին նշանակություն էլ չեն տալիս:

Դուք էլ երկյուղով եք նայում էն անդունդին, որ փորել են մեր ժողովուրդների մեջ մեր կառավարող շրջանները: Սակայն չէ՞ որ ժամանակն աշխարհքին նոր լոգունգ է տվել՝ էդ տեսակ դեպքերում երես դարձնել կառավարող շրջաններից և նայել հասարակ ժողովրդին ու ամեն մի ազգի ընդհանրությանը, և իսկույն Ձեր երկյուղը կանցնի:

Դուք հատկապես խոսում եք հայ և վրաց ժողովուրդների մասին: Նայեցեք հասարակ ժողովրդին: Ես Ձեզ մի կոնկրետ օրինակ բերեմ նորանցյալ հայ-վրացական դժբախտ ընդհարումից: Ականատեսներն են պատմում:

Լոռու ձորում մի կամուրջ կա: Էդ կամուրջի մի ծերին կանգնեցրել են հայ պահակ զինվորին, մյուս ծերին՝ վրացի: Նրանք երկուսն էլ, հրացաններն ուսներին բռնած, համառ նայում են իրար: Բանից դուրս է գալիս, որ ընկերներ են, կովի դաշտում տարիներ շարունակ կովել են միասին, միասին տառապել, միասին ուրախացել, միասին կերել ու միասին քնել: Այժմ բերել են իրար դեմ ու դեմ կանգնեցրել իբրև երկու թշնամու, և հրացաններն ուսներին բռնած՝ նրանք համառ նայում են իրար:

Մեկ էլ դիմում են իրենց կողքին գտնվող գյուղացիներին և խնդրում են տեսնել ու իրենց հայտնել, թե արդյոք իրենց մեծավորներից մոտիկ կա՞ն, թե՞ չէ, հսկու՞մ են իրենց, թե՞ չէ: Երբ իմանում են, որ չկան, վազում են, գալիս կամուրջի մեջտեղը, գրկվում, համբուրվում, նորից հետ վազում իրենց տեղերը կանգնում ու դարձյալ հրացաններն ուսներին համառ նայում են իրար:

Էսպես է, իմ անգին Լևան Դավիդովիչ, թշնամությունը, որ ստեղծված է մեր ժողովուրդների մեջ, արհեստական է, իսկ սերն ու եղբայրության զգացմունքը բնական և շատ ավելի ուժեղ է, քան թե կարծում են մեզանում:

Ժողովուրդներին խորթ է կաթինետում նստած պոլիտիկոսի նեղսրտությունը և վայրկյաններով ապրող կառավարիչների հիվանդ նյարդայնությունը: Նրանք բնության մեջ ու բնության հետ ձուլված են ապրում, և դարերով ապրած կյանքն ու փորձն է նրանց առաջնորդում: Դրա շնորհիվ է, որ նրանք էսքան էլ կարողանում են դիմանալ էն բոլոր թույններին, որ ներարկում են նրանց տանջված մարմնի մեջ հազար ու մի տեսակ կառավարիչներ ու ղեկավարներ, ամեն տեսակ բարձր գաղափարի անունով և կամ ուղղակի բարբարոսաբար:

Ես Ձեզ ավելին կասեմ, ոչ միայն մեր երկու ժողովրդի մեջ է ուժեղ ու կենդանի էդ փրկարար շունչն ու զգացմունքը, այլև առհասարակ ժողովուրդների մեջ: Առեք հենց թուրքերին ու հայերին: Ես Ձեզ էն տեսակ սրտառույզ ղեպքեր կպատմեմ և շատ ու շատ ղեպքեր թուրքերի ու հայերի հարաբերություններից, էն տեսակ սրտալի եղբայրական վերաբերմունք թե՛ թուրքի, թե՛ հայի կողմից, որ կգարմանաք: Եվ էդ էն ժամանակ, երբ վատությունն ու կոտորածն ամեն կողմից քաջալերվում է ու բորբոքվում, իսկ լավություն անելն արգելվում, նույնիսկ մահվան սպառնալիքով արգելվում:

Այո՛, ժամանակն է, թանկագին ընկեր, որ հայտնվեն ու ավելի թափով գործի անցնեն և էդ լավ զգացմունքների պաշտպաններն ու արծարծողները:

Դուք ճիշտ եք նկատում, որ էդ ժողովուրդների բանաստեղծները պետք է լինեն: Ես համաձայն եմ: Եվ նրանք արդեն սկսել են. նրանք արդեն եկել են կամուրջի մեջտեղը, գրկվում ու համբուրվում են ի տես բոլոր ժողովուրդների, և նրանց գրկախառնությունն ու համբույրը պիտի ընդհանրանա:

Դուք առանձնապես ինձ վրա մեծ պարտականություն եք դնում: Ես շատ երջանիկ կլինեի և իմ բանաստեղծություններից ավելի բարձր կդնեի, եթե կարողանայի գործ տեսնել էս ասպարեզում: Եվ ինձ թվում է, որ մեզ կհաջողվի: Կհաջողվի, որովհետև մի կողմից կատարյալ է մեր բոլոր ժողովուրդների բանաստեղծների ոգևորությունն ու լուսավոր միաբանությունը էս գործի մեջ, մյուս կողմից շատ է մեծ մեր ժողովուրդների մեջ փափագը՝ թողնել սուրն ու թշնամությունը և իրար մոտենալ, կապվել համերաշխության ու եղբայրության կապերով:

Վերջերս իմ ծննդյան հիսնամյակի առիթով եղած շնորհավորանքների ժամանակ ես հանդգնեցի, որ գործն արդեն շատ է հասունացած:

Տեսա, որ մեր հարևան ժողովուրդների ներկայացուցիչները ինչ-
քան իրենց հարևան ժողովրդի գրականությունը հարգելու համար
են գալիս, բայց շատ ավելի նրանց շարժել է էն հանգամանքը, որ ես
կողմնակից եմ եղած ժողովուրդների համերաշխությանը:

Մեր հայ հասարակությունն էլ երբեք էնքան բուռն չծափահարեց
յն բանաստեղծությունը, որքան իմ էդ զգացմունքը և ազգերի եղբայ-
րության խոսքը: Մեր նոր երիտասարդությունը ոգևորված ծափերով
ընդունեց, երբ իմ՝ իրեն ուղղված խոսքի մեջ իբրև կտակ խնդրում
էի թողնել հին ճանապարհը, խրատ առնել հին սերնդի փորձերից և
փոխադարձ երջանկության համար համերաշխության կապեր հաս-
տատել հարևան ժողովուրդների հետ: Եվ պետք է տեսնել, թե ամեն
անգամ ինչ ոգևորություն է տիրում մեր հասարակությանը, երբ իր
բանաստեղծների հետ միասին նրա առջև հայտնվում են հարևան ժո-
ղովուրդների և առհասարակ օտար ժողովուրդների բանաստեղծները:
Սրանով մեր ժողովուրդներն իրենց արդեն ցույց են տալիս ճանա-
պարհը և հրամայում են գնալ էդ ճանապարհով:

Ժամանակն է, որ մեր կառավարող շրջաններն էլ հասկանան ժա-
մանակի ու ժողովուրդների պահանջները, իրենք էլ մի քիչ բանաս-
տեղծ դառնան, իրենք էլ բանաստեղծների ու հասարակ ժողովուրդնե-
րի հետ միասին գան եղբայրության կամուրջի մեջտեղը՝ եղբայրորեն
համբուրվելու: Այլապես նրանց էլ կհասնի էն վատ կառավարիչների
ճակատագիրը, որոնք խորտակվում ու անեծքով են կորչում իրենց
վատ ճանապարհին՝ եղբայրության, խաղաղության և արդար աշխա-
տանքի դրոշը տանող ժողովուրդների ոտների տակ:

Էս համոզմունքով ու էս զգացմունքով մենք իրար եկանք, և մեզ
հետ՝ բոլոր նրանք, ովքեր բանաստեղծ են հոգով:

Ավելի թափով ու միաբան կանցնենք գործի, մեր լուսավոր ու
փրկարար գործի:

ԴԱՎԻԹ ԿԼԳԻԱՇՎԻԼՈՒՆ¹⁸

1920 թ., փետրվարի 15, Թիֆլիս

Իմ տաղանդավոր եղբայր Դավիթ.

Ժողովուրդների մեծությունը հայտնվում է իրենց հոգևոր կուլտու-
րայի մեջ: Եվ ամեն մի ժողովրդի մեծության առաջին նշանը իր գրա-

կանությունն է:

Վրաստանը թե՛ հնում, թե՛ նոր ժամանակներում իր գրականությունով միշտ եղել է հառաջադեմ ժողովուրդների շարքում:

Դուք, իմ պսակավոր եղբայր, եղել եք էն ընտրյալներից մինը, որոնք նույնիսկ մայրենի լեզվի ու գրականության հալածանքի օրերում բարձր են պահել վրաց ժողովրդի հոգևոր կարողության դրոշակը:

Մեծ երջանկություն է Ձեզ համար, երբ էսօր ազատ Վրաստանն է համբուրում Ձեր բարձր, վաստակավոր ճակատն ու օրհնում իր արժանավոր որդու աշխատանքը:

Վրաստանի ամեն մի ուրախ տոնը կենդանի արձագանք է տալիս եղբայրակից հայ ժողովրդի սրտում, և վրացի գրողի հաղթանակի տոնը ուրախության օր է հայ գրողի համար:

Էս զգացմունքով համակված՝ էսօր՝ Ձեր գրական գործունեության երեսնամյակի հոբելյանին, ես՝ որպես Հայ գրողների ընկերության նախագահ, թե՛ ընկերության կողմից և թե՛ իմ կողմից ցնծագին ողջունում եմ և լիասիրտ մաղթում եմ, որ ավելի երկար ու ավելի բարձր թնդացնեք վրաց ազնիվ ցեղի սրտի խոսքը Ձեր մայրենի ժողովրդի մեծության և ընդհանուր լուսավորության ու եղբայրության համար:

Կեցցե՛ գեղեցիկ Վրաստանի գրականությունը:

Կեցցե՛ մեր եղբայրը՝ Դավիթ Կրիստիանի:

Ձեզ խորապես հարգող Հովհ. Թումանյան

ԳՆԱՆՔ¹⁹

Վրացի գրողների համագումարը որոշել է մայիսի 7-ը դարձնել վրաց բանաստեղծության և գրականության ազգային տոնի օր:

Մի վսեմ տոն, երբ մի ժողովուրդ տոնում է իր սիրտն ու հոգին, իր ցեղի հանճարը:

Եվ վրացի ժողովրդին շատ է սագում էդ տեսակ ազգային տոն ունենալը: Նա մի բանաստեղծական ժողովուրդ է, համակված գեղեցիկ բնածին զգացումներով:

Ինձ ծանոթ ժողովուրդներից և ոչ մեկի մեջ ես չեմ նկատել էն երևույթը, ինչ որ տեսել եմ վրացիների մեջ: Նրանց գործիչներից շատերը հանկարծ կհանեն իրենց որևէ բանաստեղծի ոտանավորը, որ պահում են իրենց գրպանում և կամ կպատասխանեն անգիր: Նրանք

մինչև վերջին ժամանակներս իրենց աղջիկների բաժինքում Ռուսթավելու պոեմն էին տալիս:

Էսպես է գեղեցկուհիների ու քեֆ անողների հայրենիքը: Էսքան բանաստեղծական ու կենսուրախ, ինչպես միշտ հայտնի էր, և միաժամանակ էսքան լուրջ ու խիզախ, ինչպես երևաց այժմ, երբ հնար ունեցավ:

Ես ամեն անգամ հրճվանքով եմ վերադառնում հայ և վրացի ժողովուրդների դարավոր անօրինակ լավ հարևանությանը, և խորին վիշտ է պատճառում ինձ մեջտեղի եղած թյուրիմացությունը:

Այո՛, թյուրիմացություն եմ ասում ես, որովհետև շատ եմ խորն ու խորհրդավոր էս հին եղբայր ժողովուրդների կապերը, որ չկարողացան կտրել նույնիսկ կառավարությունները իրենց արյունոտ սխալով:

Եվ ահա, երբ վրացին մայիսի 7-ին տոնում է իր ոգու տոնը, իր Ազգային բանաստեղծության օրը, անկարելի է, որ հայը էնտեղ չլինի: Եվ էնտեղ կլինի հայը ու կլինի ամենից առաջ:

Արդեն որոշել է հայոց գրական, կրթական ու կուլտուրական հիմնարկությունների ներկայացուցիչների ժողովը:

Եվ շատ լավ է արել: Ժողովուրդների որոշումներն ու քայլերն ավելի արժեք ունեն, քան նրանց կառավարությունները:

Կառավարությունները ժամանակավոր են ու փոփոխելի, ժողովուրդները՝ անփոփոխ ու մշտական:

Գմանք էդ գեղեցիկ օրը մեր եղբայր ժողովրդին այցելելու և նրա պայծառ հանճարը հարգելու:

ՎՐԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆԸ²⁰

Վրացու անմիջական և սրտաբաց բնավորությունը, նրա սրտի ազնվությունը, բնական մաքրությունն ու անարատությունը, ազատության և գեղեցկության սերը, այս բոլորը ամեն կողմից, լուսավորված կյանքի սիրով և նուրբ վշտով, առհավատչյան են այն ամենի, որ վրաց բանաստեղծությանն սպասում է մեծ ապագա:

Այս հատկությունները զարմանալիորեն երևան են եկել Շոթա Ռուսթավելու մեջ, և նա իր ամբողջ էությանը վրացի բանաստեղծ է:

Հին Թիֆլիսը, Սայաթ-Նովայի նման, թեև սինթեզ է արևելյան շատ ժողովուրդների կյանքի և հոգևոր հզորության, այնուամենայնիվ, գե-

րագանցորեն կրում է վրացական ոգի:

Այս ոգին ամբողջ էությամբ երևաց վրացի ժողովրդի սրբի՝ Նունեի խաչի մեջ, որ շրջապատված է խաղողի որթով և աղջկա մազերով: Սրանով նա ներդաշնակորեն միացնում է երկնային վեհությունը և կյանքի ուրախությունը:

Բանաստեղծական բնավորությունն այնքան է հատկանշական վրացուն, որ ամեն վրացի ինձ թվում է բանաստեղծ: Սա վրացուն դարձնում է գրավիչ նույնիսկ իր թշնամիների համար:

Այս աստվածային շնորհքը, որ ավելի կանի ազատ և անկախ Վրաստանում, աստիճանաբար Վրաստանը կդարձնի բանաստեղծության երկիր:

ՊԱՅՏԱՌ ԷԶԵՐ²¹

1

ՀԱՅԵՐԸ, ՎՐԱՅԻՆԵՐԸ ԵՎ ԹՈՒՐԲԵՐԸ

1904 թվականին, անհաջող պատերազմի հետևանքով, Ռուսաստանը ծայրից ծայր սկսել էր արեկոծվել:

Հեղափոխության ուրվականից սարսափած՝ ռուսական բյուրոկրատիան ժողովուրդների համար մի չար խաղ հնարեց՝ ցանկանալով բաժանել նրանց և դրանով զբաղեցնել նրանց ուշադրությունը:

Այդ ուղղությամբ նա սկսեց գործել նաև Անդրկովկասում:

Այստեղ գլխավորապես հարկավոր էր գրավել հայերի, վրացիների և թուրքերի ուշադրությունը, նրանց հանել իրար դեմ:

Բայց հայերն ու վրացիները, համեմատաբար ավելի կուլտուրական լինելով, բարձր էին կանգնած պրովոկացիայից: Հատկապես դրան չենթարկվեցին վրացիները, ինչպես իրենց քաղաքական կյանքի և ազգային փոխհարաբերությունների պայմանների շնորհիվ, այնպես էլ իրենց բավականաչափ հզոր սոցիալ-դեմոկրատական կազմակերպության շնորհիվ: Պրովոկացիոն բնույթի փորձեր առաջ էլ են արվել, բայց հենց անցյալի փորձը ցույց է տվել, որ անկարելի է իրար դեմ հանել հայերին ու վրացիներին: Ճիշտ է՝ տխուր միջադեպեր եղել են, բայց դրանք միայն ժամանակավորապես են պաղեցրել, պղտորել և թունավորել այդ ժողովուրդների հարաբերությունները, այն էլ միայն վերին խավերում, և թույլը շատ-շատ հասել է միայն մինչև հասարակական գործիչների և հրապարակախոսների լեզուն: Բայց այդ թույլը հասցնել մինչև երկու ժողովուրդների հոգու խորքը՝ երբեք չի հաջողվել:

Եվ այդ երկու ժողովուրդները, որոնք իրենց պատմությունն սկսում են այն բանից, որ Հայկոսը (Հայկը) և Քարթլոսը եղբայրներ են եղել, մնացել ու մնում են անասան՝ կապված իրենց փոթորկալից պատմական ճակատագրով և իրենց մեծագույն հիշատակներով:

Նրանք միասին են հնարել իրենց գրերը, միասին են ստեղծել իրենց հոգևոր և աշխարհիկ գրականությունն ու գիտությունը: Նրանք միասին են ընդունել քրիստոնեությունը և դարերով միասին են տառապել հանուն դրա: Նրանք միասին են հաղորդակից եղել հունա-հռո-

մեական կուլտուրային և միշտ միասին են պաշտպանել արևմտյան կուլտուրան: Նրանք միասին տանջվել, միասին պայքարել են իրենց ապագայի համար և միասին են ռուսներին կանչել մեր երկիրը: Մինչև այսօր նրանք միասին են եղել:

Այն հայ գործիչը, որ պաշտպան չի կանգնել Վրաստանին, չի հասկացել իր ժողովրդին և իր պատմությունը, և այն վրացին, որ չի պաշտպանել հայերին և Հայաստանը, չի հասկացել վրաց ժողովրդին և Վրաստանի պատմական ուղիները:

Նույն հայը կամ վրացին, որ լավ է իմացել և հասկացել իր ժողովրդի ճակատագիրն ու բնավորությունը և նրա գերագույն շահերը, միշտ պաշտպանել է իր հարևանին, ինչպես ինքն իրեն: Հենց այդ է պատճառը, որ հայոց պատմության մեջ կարելի է կարդալ, օրինակ, մի այսպիսի վկայություն վրաց թագավորի մասին.

«Եվ էր Դավիթ արքայ այր սուրբ և առաքինի, զարդարեալ ամենայն աստուածապաշտութեամբ և բարի արդարութեամբ, և սա երևեցաւ ընդունող և սիրող ազգին հայոց: Առ սա ժողովեցան մնացեալ զօրքն հայոց. և սա շինեաց քաղաք հայոց ի յաշխարհն վրաց, և հաստատեաց եկեղեցիս և վանորայս բազումս և անուանեաց զանուն քաղաքին Գատայ, և ունէր մեծաւ ուրախութեամբ և ցնծութեամբ զամենայն ազնւ Հայոց» (*«Պատմութիւն Մարթնոսի Ուռհայեցոյ», 1869, Երուսաղեմ, էջ 447*):

Կամ պատմությունն այն մասին, թե վրաց թագավորն ինչպես ազատագրեց հայոց մայրաքաղաքը թշնամիների ձեռքից, և թե ինչքան նեղություններ քաշեցին հայերը թշնամիներից վրաց թագավորի մահից հետո (նույն տեղում, էջ 451, 459):

Այդպիսի վկայություններ է տալիս նաև վրաց պատմությունը հայերի մասին:

«Օգտվելով մահից հայոց Աշոտ թագավորի, որն այդ ժամանակ Վրաստանի խաղաղության միակ հետևողն էր, Դոնատրի Գարբիել քորեպիսկոպոսի հաջորդ Պաղլան գրավեց Գարդաբանի մի մասը, Քարթալինային պատկանող շրջանները, իսկ արխագական թագավոր Բագրատը մտավ բուն Քարթալինա» (*«Վրաստանի պատմություն», իշխ. Ս. Բարաթովի, Պք. 1871, III, էջ 18*):

Մրանք, իհարկե, եզակի դեպքեր չեն, որ կարելի է բերել հայոց կամ վրաց պատմությունից: Եվ դա դեռ կառավարողների՝ իշխանների և

թագավորների կյանքից է: Իսկ ժողովուրդը... Սովորաբար ասում են, թե ժողովուրդը քիչ է երևում անցյալում, պատմության մեջ:

Ո՛չ, ես կարծում եմ, նա երևում է, նա հայտնվում է հազար ձևերով ու արտահայտություններով, հարկավոր է միայն կարողանալ գտնել նրան, նկատել ու տեսնել:

Ահա հայ ժողովուրդը, խտացած իր ազգային էպոսի՝ «Սասունցի Դավթի» մեջ:

Այդ էպոսում ևս հատկապես ուժեղ են ընդգծված հայ ժողովրդական հերոսի՝ հսկա Սասունցի Դավթի և վրաց հսկա Գեորգիի (ուրիշ տարբերակում՝ Համդոյ) բարի հարաբերություններն ու բարեկամությունը: Գեորգին է Դավթին զգուշացնում նրան սպառնացող վտանգի մասին, և Դավթիքը նրան է հավատում անվերապահ: Նրանց սրերը երբեք չեն խաչաձևվում, և բացառապես սիրո և բարեկամության համար է Դավթիքը Գեորգիի երկիրը գալիս:

Ահա ձեզ ողջ ժողովրդի արտահայտած կարծիքը, սերնդեսերունդ ամրապնդված կապը, հավերժորեն գծված ճանապարհը: Հայ լինի թե վրացի, եթե շեղվում է այս ճանապարհից, դավաճանում է իր ցեղի ոգուն:

Դժբախտաբար այդպես չի եղել բանը հայերի և թուրքերի միջև: Նույն հայ ժողովրդական էպոսից երևում է, որ Հայաստանի վրա վտանգը միշտ եկել է հարավից և արևելքից, և միշտ այդ կողմն է ուղղված եղել Սասունցի Դավթի թուրը՝ ինքնապաշտպանության համար:

Այդ էպոսից երևում է, որ հայերն ու թուրքերը խորթ եղբայրներ են, հավատով և կուլտուրայով տարբեր, լի մշտական ընդհարումների և թշնամության մռայլ հիշողություններով: Իրենց իսկ սեփական ազնիվ ու անսպառ հետազոտությունների վկայությամբ, հետամնաց ու խավար՝ թուրք-թաթարական ցեղերը միշտ եղել են խոնարհ ծառաներն իրենց առաջնորդների, որոնք նրանց տարել ու շարունակում են տանել երկրներ նվաճելու ու թալանելու: Հենց այդպես էլ նրանք եկան հայոց երկիրը, զավթեցին ու նստեցին դրա վրա և, տիրելով Սասունցի Դավթի հոր կարողությանը, ծանր լուծ դրին ժողովրդի վրա ու նրան ամոթալի վիճակի մեջ գցեցին:

Սակայն հենց նույն էպոսը այստեղ ևս հրաշալի կերպով ցույց է տալիս փրկության ճանապարհը և բացում է երջանիկ ապագայի հեռանկարները:

Կռվի ամենադաժան պահին թշնամու զորքերի միջից առաջ է գալիս մի ծերունի և մոտենալով Դավթին՝ ասում է. «Դավիթ, դու ինչո՞ւ ես մեզ կոտորում: Մենք աղքատ, անօգնական մարդիկ ենք: Թագավորը գոռով է մեզ հավաքել, բերել կռիվ: Մենք քո դեմ ոչինչ չունենք: Քո թշնամին թագավորն է: Կռիվ ունե՞ս՝ նրա հետ արա. քո Թուր կայծակիով ինչո՞ւ ես կոտորում այս բնավեր մարդկանց»: Եվ հսկայի Թուր կայծակին կախվում է օդում:

– Լավ ես ասում, ծերունի՛,- պատասխանում է Սասունցի Դավիթը ու, թողնելով հասարակ ժողովրդին, շուռ է տալիս ձիու գլուխը և ուղղվում դեպի թագավորի վրանը:

Այսպես:

Այն հեռավոր ժամանակներից մինչև մեր օրերը, սկսած հնագույն բռնապետներից մինչև մեր դեմոկրատական հանրապետությունները, ինչ պատերազմներ ու արյունահեղություններ էլ որ տեղի են ունեցել, միշտ եղել են այս կամ այն կառավարող շրջանների ու ղեկավարների ձեռքի գործը: Եվ միշտ էլ դա արվել է հասարակ ժողովրդի, աշխատավոր մարդկության կամքին ու ցանկությանը հակառակ:

Եվ, գուցե, հենց դրա մեջ է այն մեծ ու հաստատ մխիթարանքը, որ ոչ թե ժողովուրդներն են մեղավոր այդ ասիավոր աղետների համար, այլ նրանց իշխանավորները, և որ ինչքան շատ թուլանան այդ վերջինները, իսկ իրենք՝ ժողովուրդները, դառնան ավելի գիտակից ու ավելի մերձեման միմյանց, ինչքան ավելի բարձր հնչի նրանց ձայնը, այնքան ավելի կնվազեն այդ աղետները և ի վերջո կվերանան:

Այս անասաան հավատով ես նպատակ եմ դրել մեր կյանքի ամենասևեռ ու մռայլ էջերից քերել պայծառ փաստեր, որոնք վկայում են, թե ժողովուրդներն ու ժողովրդից ելած մարդիկ ինչպես են կարողանում միմյանց պաշտպանել հակառակ իրենց ընդհանուր տերերի: Եվ իմ այս հողվածների ընդհանուր վերնագիրը ես դնում եմ «Պայծառ էջեր», որովհետև պայծառ եմ նայում մեր ժողովուրդների ապագային:

ՄՈՏԻԿ ՀԱՐԵՎԱՆԸ ԵՎ ՀԵՌՈՒ ԲԱՐԵԿԱՍՏԸ²²

Կարդացի վրաց թերթերի երկյուղը, թե Դրոն, նշանակվելով հայ զորքերի հրամանատար, կարող է նորից մի կռիվ առաջ բերել Վրաստանի հետ:

Էս երկյուղը սոսկալի ծանր եկավ ինձ:

Խնդիրը Դրոն չի բնավ: Մինչև էդ հողվածների տավելն ու կարդացվելը Դրոն իսկի հրամանատար էլ չլինի թերևս: Խնդիրը էդ կռվի կասկածն է, որ կա, և կռվի հնարավորությունը:

Եվ էդ հողվածների տպավորության տակ երկար մտածում էի պետությունների և ժողովուրդների հարևանության մասին: Ասում եմ՝ կառավարությունների և ժողովուրդների, որովհետև դրանք ջոկ-ջոկ բաներ են իմ կարծիքով:

Իմ կարծիքով սուտ է, որ ասում են՝ ամեն մի կառավարություն արժանի է իր ժողովրդին: Ընդհակառակը՝ առհասարակ կառավարությունները արժանի չեն իրենց ժողովուրդներին, և շատ քիչ կառավարություն կարող է լինել, որ արժանի լինի իր ժողովրդին և լինի իր ժողովրդի հետ: Օրինակ՝ Էնպես, ինչպես բանաստեղծը:

Բանաստեղծը կարող է Էնքան մեծ չլինիլ, որ կարենա ընդգրկել իր ժողովրդի ամբողջությունը կամ արժանի լինի իր ժողովրդին, բայց նա միշտ իր ժողովրդի հետ է: (Ես սրանով եմ բացատրում էն մշտական գժտությունը, որ միշտ եղած է իմ և առհասարակ կառավարիչների միջև):

Ասում եմ՝ ժողովրդի, ոչ թե ամբոխի: Որովհետև շատերը ժողովուրդն ու ամբոխը շփոթում են իրար հետ: Սրանք իրար հակառակ բաներ են: Ժողովուրդն իմաստուն է, ամբոխը՝ հիմար: Ժողովուրդը ծանր է, ամբոխը՝ թեթև: Ժողովուրդը մեծահոգի ու բարի է, ամբոխը՝ դյուրագրգիռ, վտանգավոր ու չար: (Ժողովուրդը աշխատանք է սիրում, ամբոխը՝ թալան):

Ժողովուրդը խաղաղասեր է, ամբոխը՝ կռվարար: Եվ ամբոխամիտ ու ամբոխավար մարդիկ, երբեմն ամբոխի գլուխն անցնելով, որ մի շատ հեշտ բան է, տիրում են ժողովրդին ու նրան զգում զանազան կրակների ու կռիվների մեջ, որ նա չի էլ երագել:

Եվ, իհարկե, միշտ հարևանի հետ:

Կռիվը՝ հարևանի հետ, բարեկամությունը՝ հեռուների:

Մինչդեռ սրան բոլորովին հակառակ ժողովրդական իմաստությունն ասում է.

– Մոտիկ հարևանը լավ է, քան հեռու բարեկամը:

ՎՐԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆԸ²³ **(Իմ եղբայր վրացի գրողները)**

Ես, իբրև մի բանաստեղծ մարդ, անհունորեն սեր տածելով առ-
հասարակ դեպի ժողովուրդները – առանձնապես ուժեղ սիրել եմ մեր
եղբայրակից վրացի ժողովուրդը, որի մեջ անց եմ կացրել իմ կյանքի
մեծագույն մասը և որի հետ կապված եմ շատ խոր ու ամուր կապե-
րով: Եվ վերջապես կա նաև մի հանգամանք, որ վրացուն պատահելն
ու ծանոթանալն է բանը – իսկ նրան սիրելուց հեշտ բան ես գրեթե
չգիտեմ: Եվ հանկարծ էդքան բնական ու հեշտ մի բանի համար իմ
եղբայր վրացի գրողները, ինձ անվանելով «ընդհանուր» կամ երկու
ժողովուրդները միացնող մի կապ, բացառիկ մի պատիվ եմ արել,
չնայելով Հայաստանի կառավարության նշանակած կենսաթոշակին
– իրենք էլ առաջարկել են իրենց հետ Վրաստանի կառավարական
կենսաթոշակին:

Իմ արածի հանդեպ իմ եղբայր վրացի գրողների արածը ես գտնում
եմ էնքան շռայլ մի պատասխան, ինչքան շռայլ մի պատասխանի ըն-
դունակ է միայն վրացին:

Խոստովանում եմ, որ ինչքան էլ անսահման սիրել եմ վրացուն ու
Վրաստանը, բայց ես էնպես մի ծառայություն չեմ արել, որ արժանա-
ցած լինեմ էդքան մեծ մի պատվի: Բայց Վրաստանի գրողների վե-
րաբերմունքը առատաձեռն վրացու պայծառ ու ազնիվ շունչն է փչում
ինձ վրա և ինձ ներշնչում է տրամադրություն գոնե առաջիկայում աշ-
խատել արժանանալու էդ պատվին: Եվ էն սերը, որ միշտ տածել եմ
դեպի Վրաստանը – որ և եղել է ինձ համար երջանիկ մի առատ աղ-
բյուր – նա թերևս ինձ ուժ տա պատասխանելու էդ մեծ պատվին:

ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ²⁴

Իմ ընկեր Գ. Ռոբաքիձեն Հայ գրչի մշակների միության վարչու-
թյան խնդիրքով Հայարտանը մի դասախոսություն կարդաց վրաց
գրականության մասին: Էդ դասախոսությունը թյուրիմացություննե-
րի տեղիք է տվել վրաց մամուլի և հասարակության մեջ: Հոդված է
լույս տեսել «Սոց. ֆեդ.» մեջ, որտեղ դուրս է բերած, իբրև Ռոբաքիձեն
ասած լինի, թե «Только в настоящее время появилась настоящая

грузинская поэзия в лице группы «Голубые роги». Эта группа уже победила Руставели».

Եվ կամ թե մի ուրիշ տեղ. «Восточная Грузия выродилась, лучшей иллюстрацией чего является Тифлис своим «мокалаке», этим этническим сумбуром, где есть все, кроме Грузии. Тифлис не есть грузинский город. После монголов Восточная Грузия умирает и умерла уже».

Եվ ահա ես էս հողվածը բերում եմ ճշմարտությունը վերականգնելու էմ մարդկանց համար, որոնք ներկա չեն եղել ընկ. Ռոբաքիձեի դասախոսությանը, և կամ որոնք թյուրիմացության մեջ են ընկած:

Ես հիմնվում եմ ոչ միայն իմ, այլև շատ գրական մարդկանց թարմ հիշողության վրա, որոնք լսել են Ռոբաքիձեին: Եվ բարեբախտաբար ձեռքիս տակ ունեմ հիշողություններից ավելի կարևոր մի փաստաթուղթ: Դա մեր ընկ. բանաստեղծ Դեմիրճյանի հիշատակարանն է, որի մեջ նա արձանագրել է դասախոսության որոշ տեղերը:

Ռոբաքիձեն, վրաց գրականության սկզբից սկսած շրջան-շրջան խոսելով և միջնադարում առանձնապես վեր հանելով Ռուսթավելու հանճարը, հասավ նոր գրականությանը:

Նոր գրականության մի քանի խոշոր դեմքերի վրա կանգ առնելուց և նոր գրականության զարգացումը շեշտելուց հետո ասաց. «Հետո վրաց գրական խոսքը արվեստի վարպետության և ձևի կատարելության կողմից երբեք չէ հասած էն բարձրությանը, ինչ բարձրության հասավ նոր գրականության մեջ: Էդ կողմից Ռուսթավելին մինչև անգամ մրցորդներ ունի»:

Ոմանք պնդում են, թե ասավ՝ մինչև անգամ գերազանցողներ ունի: «Голубые роги» խմբակի մասին նա խոսեց անկախ ու առանձին և Ռուսթավելու անունը չի տվել էս խմբակի մասին խոսելիս: Բայց որովհետև էս նոր ուղղության մասին կամ նոր խմբակի մասին խոսում էր առանձին ոգևորությամբ, ոմանց վրա էն տպավորությունն է արել, թե հենց սրանց ի նկատի ունի Ռուսթավելու մրցորդներ ասելով, խոսքի վարպետության և ձևի կատարելության տեսակետից:

Էսպետով՝ Ռուսթավելուն հաղթելու մասին խոսք չի եղել:

Չուր են կարծում մեր վրացի ընկերները, թե եթե էդ տեսակ խոսք լիներ, հայ գրական մարդկանց կողմից կմնար առանց նկատողության:

Ճշմարիտ է՝ մենք էնքան լավ չենք ճանաչում վրաց գրականությունը:

նը, ինչքան վայել էր, որ ճանաչեինք, բայց էնքան էլ անտեղյակ չենք, ինչքան կարծել են մեր վրացի ընկերները, թե արդեն Ռուսթավելուն գերազանցողներ լինեին մեր կողքին, ու մենք գոնե իմացած չլինեինք...

Ինչ վերաբերում է ասածին, թե արվեստի վարպետության ու ձևի կատարելության կողմից Ռուսթավելին արդեն մրցողներ ունի, գոնե ես լսեցի շատ հանգիստ, գրեթե էնքան հանգիստ, ինչքան հանգիստ կլսեի, եթե ասեր էսօրվան բանաստեղծների զգեստները մինչև անգամ ավելի լավն են, քան Ռուսթավելու զգեստն է եղած:

Արվեստի վարպետությունը կամ ձևի կատարելությունը՝ դա փեշակ է, տեխնիկան է, արտաքինն է, հին լեզվով ասենք՝ մարդկայինն է: Էականը ստեղծագործական ներքին կարողությունն է, կենդանի ու հոգր շունչն է, դարձյալ հին լեզվով ասենք՝ աստվածայինն է:

Էս աստվածային կոչված բովանդակությունը եթե կա, անպատճառ կա և նրա ձևը: Նա կգտնի իր ձևը և գտնում է իր ձևը: Բայց եթե միայն ձևը կա, էդ չի նշանակիլ, թե նա անպատճառ բովանդակություն էլ կունենա: Չևր կարող է և դատարկ ձև մնալ:

Ճիշտ էնպես, ինչպես երբ ձեզ ասեն՝ էստեղ մի հոգի կա, դուք անպատճառ մարմինն էլ անբաժան հետն եք հասկանում: Բայց երբ ասում են՝ մի մարմին կա, էդ չի նշանակիլ, թե անպատճառ հոգի էլ ունի: Կարող է և անհոգի, մեռած մարմին լինել, այսինքն՝ լոկ ձև:

Կամ ավելի հասարակ մի օրինակ: Երբ ասում են էստեղ գինի կա, դուք ամանն էլ հետն եք հասկանում: Բայց եթե ասեն՝ էստեղ աման կա, էդ հո չի նշանակիլ, թե անպատճառ մեջն էլ գինի կա: Էսպեսով՝ Ռուսթավելուն հաղթելու մասին խոսք անգամ չի եղել:

Ինչ վերաբերում է երկրորդ խնդրին՝ Արևելյան Վրաստանին ու Թիֆլիսին, դարձյալ թյուրիմացություն է:

Նա ասավ. «Պատմական աղետներից Արևելյան Վրաստանն ավելի է տուժել, քան Արևմտյան Վրաստանը: Էդ պատճառով էլ Արևմտյան Վրաստանում ցեղային տիպն ու լեզուն ավելի անաղարտ են մնացել, քան Արևելյան Վրաստանում: Եվ Արևելյան Վրաստանը զրկվել է զուտ վրացական, այսինքն՝ մեսիսթական կամ ռուսթավյան ոճի մաքրությունից»:

Մի երևույթ, որ եթե ճշմարիտ է Վրաստանի միայն մի մասի վերաբերությամբ, ճշմարիտ է գրեթե ամբողջ Հայաստանի վերաբերմամբ: Եվ ես հենց նորերս խոսել եմ էս մասին:

Թիֆլիսին գալով՝ ասավ. «Պատմության պարադոքսներով Թիֆլիսում ստեղծվել է մոքալաքի տիպը, որի մեջ կա և՛ վրացականը, և՛ հայկականը, և՛ պարսկականը, և՛ ադրբեջանականը: Մի էթնիկական սումբուր: Եվ էս տիպը, առաջ բերելով իր գրականությունն ու արվեստը, ազդել է Արևելյան Վրաստանի գրականության վրա»:

Եվ խոսք չի եղել Արևելյան Վրաստանի մեռնելու կամ Թիֆլիսի ոչ վրացական քաղաք լինելու մասին: Էս ամենին վկա է մի ամբողջ ինտելիգենտ աուդիտորիա, որոնց մեջ եղել են և մի քանի վրացի ու ռուս գրական գործիչներ:

Եվ իմ առաջարկությամբ ու խնդրանքով էդ գիշեր գրույցին նախագահել է թե՛ վրացի, թե՛ հայ հասարակությանը քաջ հայտնի ընկ. Ն. Դ. Սոկոլովը:

Խոսքիս վերջում պետք է վկայեմ, որ ունկնդիր հայ հասարակությունը էդ գիշեր հեռացավ դասախոսության խոր տպավորության տակ: Եվ Ռոբաքիձեն իր հռետորական տաղանդով ու գրական հմտությամբ առատ նյութ տվեց և մեծ հետաքրքրություն ու պատկանանք առաջ բերավ դեպի վրաց գրականությունը:

Եվ հայ գրական շրջանները անհամբեր սպասում են հաջորդ դասախոսություններին:

Ռոբաքիձեի դասախոսությունների մեջ թե վրացիների համար վիճելի խնդիրներ կարող են լինել, ես գտնում եմ շատ հասկանալի: Մանավանդ նոր գրականության մեջ: Օրինակ՝ Ռոբաքիձեի լուսաբանությամբ Վաժա Փշավելան շատ ավելի խոշոր ու ինքնատիպ է երևում, քան Ակակի Ծերեթելին: Մի բան, որի հետ, ինչքան գիտեմ, համաձայն չեն շատ վրացիներ:

Ինչպես «Голубые роги» խմբակի և ուրիշ կետերի վերաբերությամբ շատերը տարակարծիք են:

Եվ արդեն դասախոսության ներկա եղողներից ընկ. Լ. Կոտետիշվիլին, որին խնդրել ենք կարդալու հետևյալ դասախոսությունը վրաց գրականության մասին, հենց էմտեղ հայտնեց, թե Ռոբաքիձեի դասախոսության մեջ կետեր կան, որոնց վերաբերությամբ ինքը միանգամայն հակառակ կարծիք ունի և կհայտնի իր դասախոսության մեջ:

*Հայաստան և հայ գրչի մշակների միության
նախագահ Հովհ. Թամանյան*

ՍԻԿՈ ՓԱՇԱԼԻՇՎԻԼՈՒՆ²⁵

Թանկագին ընկեր

Ս. Փաշալիշվիլի.

Շատ ցավում եմ, որ ինձնից անկախ պատճառներով էսօր չեմ կարող ներկա լինել Ձեր երեկույթին:

Մեղմում եմ Ձեր ձեռքը և հավաստիացնում, որ որքան ինձ համար թանկ են Վրաստանն ու վրացական սքանչելի հոգին, այդքան էլ թանկ են այն մարդիկ, որոնք հանդիսանում են կրողներն ու մեկնաբանները էդ հոգու:

Ինքը՝ վրացին, պոետ է, վրացի պոետը՝ կրկնակի պոետ:

Ամբողջ հոգով ցանկանում եմ, որ ողջ լինեք միշտ՝ երգելու համար Վրաստանի երջանկությունն ու նրա լուսապայծառ օրերը:

Ձեր Հովհաննես Թումանյան

ԻԱԿՈՔ ՆԻԿՈԼԱՉԵՒՆ²⁶

Սիրելի Իակոբ.

Քեզ, արժանավոր գավակիդ Վրաստանի, հոգով քնքույշ ու վեհ Վրաստանի, որ իր համար ընտրել է «չքնաղ» մակդիրը և այդ չքնաղության մեջ դրել ողջ համամարդկայինը և աստվածայինը, Քեզ, որ լցված մոր ոգով, ընտրելով գեղեցկին ծառայելը՝ զարմանալիորեն կենդանի ձևեր տվիր անձնին և անկյանք քարերի մեջ անմահություն դրիր, Վրաստանի համար այս հանդիսավոր օրը հղում եմ իմ սրտագին ողջույնը և եղբայրական համբույրը:

Արդեն մի տարուց ավելի գամված լինելով անկողնին և հնարավորությունից զրկված լինելով ուրախությունն ու բարեկամությունը Ձեզ հետ կիսելու՝ խնդրում եմ այսօրվա հանդիսավոր բացականչությունների մեջ լսել նաև ձայնը

Քեզ ընդմիշտ նվիրված

Հովհաննես Թումանյանի:

**ՎՐԱՑ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԸ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ**



ԱԼԵՔՍԱՆԳՐԵԱՐԱՇԵԼԻ [իսկական անուն-ազգանունը՝ Իսահակ Չոչիա (1884-1954)], բանաստեղծ: Ծնվել է Քութայիսի նահանգի Աբաշիի շրջանի Սաչաչի գյուղում (այժմ՝ Աբաշիսի)՝ աղքատ գյուղացու ընտանիքում: Մովորել է Աբաշիի երկամյա դպրոցում, պաշտոնավարել տեղի փոստում: 1906 թ. հեղափոխական շարժումներին մասնակցելու պատճառով արտրվել է Մովսիսյան: 1908 թ. արքայից վերադառնալուց հետո աշխատել է Թիֆլիսում՝ «Կավկասիա» և «Նովայա ռեչ» լրագրերի խմբագրություններում, որտեղ ռուսերեն տպագրել է իր առաջին բանաստեղծությունները: Իսկ վրացերեն առաջին՝ «Սև ստվեր» բանաստեղծությունը հրատարակել է «Թեատրի դա ցխովրերա» ամսագրում: Հայրենական պատերազմի ընթացքում երգել է խորհրդային ժողովրդի հերոսությունը: Գրել է նաև վեպեր («Կինը հայելու առաջ», «Դեղձի ծաղիկը» և այլն), պատմվածքներ և քննադատական հոդվածներ:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ՝²⁷

Քաղցր Հովհաննես: Անունը քո սուրբ
Վրաց սրնգին գրվել է հավետ:
Դու մեր հույզերի թարգմանը խոսում,
Երգերդ մենք էլ երգել ենք քեզ հետ:

Երնե՛կ տեսնելիք, թե ոնց ամեն տեղ
Ծլել են ցանած հունդերդ մաքուր,
Ծաղկել-փթթել են մտքերդ բյուրեղ,
Իրականացել տենչերդ քո բյուր:

Երբ խեղդվում էինք աշխարհում այն հին,
Ու կյանքն էր դարձել խարույկ հրկիզման,
Դու երգում էիր եղբայրության հիմն
Քո վրաց եղբայր գուսանի նման:

Դու՝ միշտ լավատես, դեմքդ հուսալի
Երազներով էր մեզ լուսավորում,
Միսած սրտերին ջերմություն տալիս
Մեր անցած ահեղ ճանապարհներում:

Այսօր էլ, ինչպես լույսն արեգական,
Ցրում է երկրի խավարը միգոտ,
Դեմքիդ ժպիտն է շողում հավիտյան
Մեր սրտին այնքա՛ն քանկազին ու մոտ:



ԳԴԻԳՈՆ ԱՐԱՇԻՉԵ (1914-1992), բանաստեղծ, արձակագիր, դրամատուրգ, քարզմանիչ, Սոցիալիստական աշխատանքի հերոս (1974): Ծնվել է Քուրայիսի նահանգի Ծիաթուրայի մունիցիպալիտետում: 1936 թ. ավարտել է Թբիլիսիի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: Բանաստեղծություններ սկսել է տպագրել 1934 թվականից, առաջին ժողովածուն լույս է ընծայել 1938 թ.: Գրել է պատմավեպեր («Լաշարեյա» (1957), «Երկար գիշեր» (1963), «Ղորնալի» (1967) և այլն): Հեղինակ է մանկական բանաստեղծությունների և պիեսների:

Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյակի առիթով Աբաշիձեն գրել է հինգ հոդված՝ «Վրաց ժողովրդի բարեկամը» («Կոմունիստի», 1969, 1 հունիսի), «Մեծ հումանիստը» («Կոմունիստի», 1969, 20 սեպտեմբերի), «Քարոզիչը միասնության, սիրո» («Սովիտս գլոսիոբերա», 1969, 20 սեպտեմբերի), «Ժողովուրդների եղբայրության երգիչը» («Լենինյան դրոշով», 1969, 23 սեպտեմբերի), «Խոսք Հովհաննես Թումանյանի մասին» («Լիտերատուրուլի Սաքարթվելո», 1969, 3 հոկտեմբերի):

ՎՐԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԲԱՐԵԿԱՄԸ²⁸

Հայ ժողովուրդն այն փոքրաթիվ ժողովուրդներից է, որոնց պատմությունն սկիզբ է առնում գրեթե մարդկության սկզբնավորումից: Նրա շատ բարեկամներ և թշնամիներ, որոնք իրենց հզորությամբ ահ ու սարսափի մեջ էին պահում Արևելքն ու Արևմուտքը, այսօր իսպառ վերացել են երկրի երեսից:

«Արաքսը կամուրջներ չի հանդուրժում», - գրել է Հին Հռոմի խոշորագույն բանաստեղծ Վերգիլիուսը իր «Էնեականում», և մեծ բանաստեղծի այս պատկերավոր արտահայտությունը ճշգրիտ պատկերում է հայ ժողովրդի ոգու անասանությունը, ատելությունը ստրկության նկատմամբ և անհնազանդությունը կեղեքիչների դեմ:

Մեկ փոթորիկ չէ, որ անցել է Հայաստան աշխարհով, մեկ անգամ չէ, որ քաջարի հայ ժողովուրդը ենթարկվել է կործանիչ հարձակումների, բայց միշտ էլ փյունիկի նման հառնել է մոխիրներից ու ավերակներից: Նա արմաքամ է եղել, դիմակայել է միդիացիների ու պարթևների

ներխուժումներին, արիաբար կանգնել է հռոմեական անպարտելի լեգեոններին դեմ առ դեմ և անհավասար մարտերում հրաշքներ գործել:

Անցյալի այդ փառքի, անսպառ էներգիայի և սքանչելի տաղանդի տեր հայ ժողովուրդը արվեստի բազմաթիվ հուշարձաններ է ստեղծել: Այդ հուշարձաններով լի է ոչ միայն բազմաչարչար հայոց երկիրը, այլև աշխարհի շատ թանգարաններ ու գրապահոցներ: Գրականության և նյութական մշակույթի այդ հինավուրց կոթողներն ապշեցնում են նույնիսկ մեր ժամանակի մարդկանց:

Հայ և վրաց ժողովուրդներն ի սկզբանե ապրել են միասին, միմյանց հետ եղել եղբայրական մտերմության և բարիդրացիական հարաբերությունների մեջ, կիսել միմյանց վիշտն ու ուրախությունը: Համաշխարհային պատմության մեջ քիչ կգտնվեն երկու հարևան ժողովուրդների նման բարեկամության օրինակներ, բարեկամություն, որ սկիզբ է առել անհիշելի ժամանակներից և երկու ազգի համար էլ այսպիսի օգտաշատ շարունակվում է առ այսօր:

Հայոսի և Քարթլոսի եղբայրության լեգենդն արտահայտում է մեր ժողովուրդների արյան և հոգու հինավուրց հարազատությունը: Բազում տարիների ընթացքում, արտաքին թշնամիների դեմ պայքարում այդ մտերմությունն ավելի է ամրապնդվում և երկու ազգի համար դառնում օղի պես անհրաժեշտ:

Մեր ժողովուրդները հիմնականում ընդհանուր թշնամիներ ունեին: Այդ թշնամիներին նրանք առճակատում էին միացյալ ուժերով. հաղթանակի դեպքում ուրախությունն էին կիսում, պարտության դեպքում՝ վիշտն ու դառնությունը: Դրացիության և բարեկամության այս երկար ճանապարհին հայոց և վրաց պատմության ամենավառահեղ էջերը գրվում էին ճիշտ այն ժամանակ, երբ նրանք ուս ուսի պայքարում էին դաժան կեղեքիչների դեմ և մարտերում հերոսաբար կռվում մեկը մյուսին պաշտպանելու համար: Այսպիսի միաբանության և ընդհանուր թշնամու դեմ միասնական պայքարի բազմաթիվ օրինակներից առանձնապես նախընտրելի են 5-րդ և 12-րդ դարերի հերոսական պատերազմները: Առաջին շրջանում (հայ ժողովրդի ազգային հերոս Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ) հայերի և վրացիների ընդհանուր թշնամու՝ պարսիկների դեմ պայքարը նշանավորվեց մի շարք փառահեղ հաղթանակներով, իսկ երկրորդը (Դավիթ Շինարարի և նրա անվանի ժառանգորդների կողմից սկսված երկարատև կռիվներ-

րը) նշանավորվեց հայոց երկրի ազատագրումով²³:

* * *

Այս բարեկամության նշանակությունը անդրկովկասյան ժողովուրդների համար շատ ավելի լավ էին հասկանում նոր ժամանակների գործիչները:

Հայաստանի և Վրաստանի կյանքում 19-րդ դարը նոր դարաշրջանի սկիզբ էր. մեր ժողովուրդները ռուս առաջադեմ մտածողների ազդեցությամբ սկսեցին արթնանալ և աստիճանաբար պայքարի ելնել ազգային և սոցիալական կեղեքման կրկնակի լծից ազատվելու համար: Խաչատուր Աբովյանը և Իլյա Ճավճավաձեն խորապես համոզված էին, որ երկու ժողովուրդների ազատագրության առաջնային պայմաններից մեկն ազգային թշնամանքն արմատախիլ անելն է, պատմական եղբայրության առավել ամրապնդումը:

«Մենք լավ գիտենք, որ առաջվա Վրաստանի թուլությունն սկսվեց այն դժբախտ օրվանից, երբ երեսնիվայր ընկավ Հայաստանը՝ մեր առաջվա պատվարը հարավից... Քանի դեռ կար Հայաստանը, երբ թուրքերը հարձակվում էին Վրաստանի վրա, նախ հարավով պետք է անցնեին. ահա թե ինչու մեր արքաները և արքունիքի մարդիկ ոչինչ չէին խնայում Հայաստանին օգնելու համար, երբ նա դրա կարիքն ունենում էր», - գրել է նոր Վրաստանի առաջնորդ Իլյա Ճավճավաձեն:

Իլյա Ճավճավաձեն այնպես, ինչպես Հայաստանի առաջադեմ գավակները, խորապես համոզված էր, որ մեր ժողովուրդների ապագան միայն նրանց փոխադարձ հարգանքով և բարեկամությամբ կարող է կերտվել, ուստի բոլոր նրանք, ովքեր այլ կերպ են մտածում, դավաճանում են իրենց ժողովուրդների շահերին և ջուր են լցնում ընդհանուր թշնամու ջրաղացին:

Հայտնի է Ակակի Ծերեթելիի մոտիկ բարեկամությունը հայ գրողների և գործիչների, հատկապես՝ տաղանդավոր դրամատուրգ Գարրիել Սունդուկյանի հետ, որին վրացի պոետը երեք բանաստեղծություն է նվիրել: Դրանցից առանձնապես մեկը շատ է տարածված: Ակակիի այդ ներբողը բանաստեղծական հրաշալի հիմն է հայ և վրաց ժողովուրդների դարավոր մտերմության ու հարազատության:

²³ Այսպիսի համագործակցության իմաստն ու նշանակությունն այն հեռավոր դարե-

Ես՝ մի վրացի, իսկ դու հայ ես մի,
Բայց մենք երկուսով եղբայր ենք հիմի.
Երկուսս էլ՝ զավակ նույն հողի, ջրի,
Ե՛վ նույն բնության, և՛ նույն լեռների:

Հայ և վրաց ժողովուրդների բարիդրացիական հարաբերություններում իրենց լուսման ունեն երկու ազգերի լավագույն գրողները, բայց այս ամուսնով հայ նոր գրականության խոշորագույն ներկայացուցիչ՝ Հովհաննես Թումանյանի ծառայությունը անհամեմատ թանկ է ու նշանակալից:

Հովհաննես Թումանյանն իր ժողովրդի ճշմարիտ զավակն էր: Նա ապրում էր մայր ժողովրդի հոգսերով և ուրախությամբ, նրա դառն, բայց հերոսական անցյալով, տխուր ներկայով և պայծառ ապագայով: Թումանյանի հայրենասիրությունը բխում է հայ ժողովրդի հերոսական անցյալից և խոր հումանիզմով է ջերմացած: Բանաստեղծի հերոսները հասարակ ժողովրդի զավակներ են: Նրանք պայքարում են անարդարության դեմ, բայց ի սկզբանե դատապարտված են կործանման, քանի որ սոցիալական անհավասարության վրա հիմնված հասարակության մեջ մարդկանց վսեմ ձգտումներին, իսկական սիրուն և ազնվությանը հաղթանակի հնարավորություն տրված չէ:

Հովհաննես Թումանյանը խոր նայեց իր ժողովրդի հոգու մեջ, ներշնչանքով երգեց հայ ազգի հերոսությունն ու աշխատասիրությունը, հասարակ մարդկանց վեհությունն ու հոգու գեղեցկությունը: Նա հայ բանահյուսության հրաշալի գիտակ էր, և նրա պոեզիայում խորն են դաջված ժողովրդական իմաստության ու կերպարների հետքերը:

Թումանյանի պոեմները՝ «Անուշը» և «Թմկաբերդի ամուսնը» կան «Սասունցի Դավիթը», լեգենդները՝ «Ախթամարը», «Փարվանան» և շատ ուրիշներ, գրվել են ժողովրդական պոեզիայի հիման վրա: Դրանց հանրաճանաչությունը պայմանավորված է ոչ միայն այն բա-

րում լավ էին հասկանում երկու ազգերի գործիչները: Առավել ևս տարօրինակ է, որ մեր ժամանակի գրողը չի կողմնորոշվում այս հարցերում, երբ անդրադառնում է հայ-վրաց պատմական բարեկամությանը: Այս կարգի հեղինակները ոչ միայն սովեր են գցում մեր նշանավոր նախնիների օգտակար և անշահախնդիր գործունեության վրա, որ նրանք ծավալել են ի փառս երկու ժողովուրդների, այլև, խեղաթյուրված ներկայացնելով պատմական իրականությունը, դիտավորյալ թե ա կամա ձգտում են ազգային թշնամանք հրահրելու, ինչն անախրոնիզմ է մեր ժամանակի համար (ծնր.՝ հեղ.):

նով, որ հերոսները ժողովրդի ծոցից են ելել, այլև նրանով, որ դրանց հեղինակը մինչև վերջ հավատարիմ մնաց ժողովրդական պեղծիային. նրա բանաստեղծությունն էլ ժողովրդականի նման ազատ է և բնական, չափազանց բարեհունչ է և փոխաբերություններով հարուստ:

Թումանյանի պեղծիայում հրաշալի է պատկերված Հայաստանի բնությունը՝ բարձրագագաթ սարերով ու անդնդախոր կիրճերով, կանաչ հարթավայրերով ու արևախամձ բարձրավանդակներով, արագահոս գետերով ու գնդուխտյա ակների նման սարերում ընկած թափանցիկ լճակներով:

Թումանյանը զարգացրեց և բանաստեղծական նոր մակարդակի հասցրեց հայ հին գրականության հարուստ ավանդույթները: Նա իր ժամանակի եվրոպական և ռուսական պեղծիայի հիանալի գիտակն էր, սիրով թարգմանում էր ռուսական և արևմտյան քնարերգության լավագույն նմուշները, բայց դա չխանգարեց նրան, որ զույգ ոտքով ամուր կանգնած մնա ազգային հողի վրա, մինչև վերջ մնա ինքնատիպ երգիչ և Հայաստանի բարձր լեռներից հայացքն ուղղի համաշխարհային պեղծիայի գագաթներին:

Թումանյանն ատում էր սոցիալական անհավասարության վրա հիմնված բուրժուական հասարակությանը: Միայն իր երկերում չէ, որ նա պայքարում էր կեղեքիչների դեմ, կյանքում էլ ճնշվածների պաշտպանն էր և 1905 թ. հեղափոխության բախտը կապում էր հայ ժողովրդի բախտի ու ապագայի հետ:

Մեծ և բազմանիստ էր Հովհաննես Թումանյանի տաղանդը. նա միայն անմահ բանաստեղծությունների ու պոեմների հեղինակ չէ: Նրա գրչին են պատկանում սքանչելի արձակ գործեր, հրապարակախոսական և քննադատական փայլուն հոդվածներ: Նա քաղաքական գործիչ էր, իր ժողովրդի իսկական հոգևոր առաջնորդը, խելացի խորհրդատու էր և իմաստուն պատգամախոս: Դրա համար էլ նրա դերն ու ազդեցությունը չափազանց մեծ էին նոր Հայաստանի քաղաքական և գրական կյանքում:

* * *

1969 թ. սեպտեմբերին հայ ժողովուրդը նշեց իր սիրասուն զավակի՝ Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյակը: Հայ ժողովրդի մշակույթի այդ տոնը ըստ արժանվույն նշեցին Խորհրդային Միության եղ-

բայրական ժողովուրդները, այդ թվում՝ նաև վրաց ժողովուրդը:

Վրաց ժողովուրդը Հովհաննես Թումանյանի հանդեպ առանձնահատուկ վերաբերմունք, խոր հարգանք ու անչեջ սեր ունի: Նա այդ սիրուն արժանացել է ոչ միայն իր ստեղծագործություններով, այլ նաև այն սրտառույզ գործվանքի և անկեղծ սիրո համար, որ Վրաստանի նկատմամբ դրսևորել է թե՛ իր բանաստեղծություններում և թե՛ հասարակական գործունեությամբ:

Թումանյանը տասնչորսամյա պատանի էր, որ հանգրվանեց Թիֆլիսում: Վրաստանի մայրաքաղաքում նա անցկացրեց իր ողջ գիտակցական կյանքը և հենց այստեղ էլ ստեղծեց գրեթե այն ամենը, ինչով այսօր այսպես հպարտանում ենք մենք՝ նրա ստեղծագործության երկրպագուներս: Նա մեկ պթանչելի բանաստեղծություն չէ, որ նվիրել է Վրաստանին: Այդ բանաստեղծություններում պոետն անկեղծորեն երգում է բազմատանջ վրաց ժողովրդի հոգու ջերմությունն ու անկոտրում կամքը, նրա անկասելի երթը դեպի լուսավոր ապագան:

Թումանյանը մտերմություն էր անում վրաց նշանավոր գրողների և հասարակական գործիչների հետ: Դավիթաշվիլի փողոցի նրա տան դուռը միշտ բաց է եղել առաջադեմ վրացիների համար: Նրա ընտանեկան հարկի տակ հյուրերը հանդիպում էին ոչ միայն սրտաբաց տանտիրոջ, այլև վրաց կյանքը խորապես ընկալող գրուցակցի, որը եղբայրական Վրաստանի հոգսերն ու ցավերը նույնքան լավ էր ըմբռնում, որքան սեփական ժողովրդինը:


Բանաստեղծը վկա եղավ իր ժողովրդի մեծագույն ողբերգությանը՝ թուրքերի կողմից հայերի բարբարոսական կոտորածին: Նման փորձությունից ամենասառնասիրտ մարդն անգամ կկորցներ խելամտորեն դատելու ունակությունը: Բայց մինչև սրտի խորքն արեկոծված բանաստեղծն ամենավողովեցուցիչ պահերին անգամ չկորցրեց հավասարակշռությունը և հայերի ջարդի դժնդակ օրերին էլ մարդկայնություն էր փնտրում, որը և նրա ամբողջ ստեղծագործության էությունն է:

Նա լավ տեսնում էր, որ անդրկովկասյան ժողովուրդները իրար դեմ պատերազմելու ոչինչ չունեն, և եղբայրական այդ ամոթալի կռիվների ռեժիսորները այդ նույն ժողովուրդների ընդհանուր թշնամիներն են: Բանաստեղծը ոտքով շրջագայում էր հայկական և թուրքաբնակ գյուղերում և, սպիտակ դրոշը պարզած, կոչ էր անում վերջ տալու արյու-

նահեղությանը: Թումանյանը հավատում էր գրականության մեծ հեղինակությանը և անդրկովկասյան պայմաններում առանձնահատուկ նշանակություն էր տալիս նրա դերին:

Հովհաննես Թումանյանը մեծ հումանիստ էր: Նա համարյա գերմարդկային սիրով էր սիրում իր հարազատ ժողովրդին և նույնպիսի ատելությամբ էլ ատում էր նրա թշնամիներին: Բայց բանաստեղծի մարդասեր հոգում բոլոր ժողովուրդներն ունեին իրենց պատվավոր տեղը, այդ թվում՝ նաև վրաց ժողովուրդը, որի երջանկությունից դուրս Թումանյանը չէր պատկերացնում և իր ազգի երջանկությունը:

Վրաց ժողովուրդը մեծապես գնահատում է եղբայրական Հայաստանի մեծ երգչի և մտածողի այս առանձնահատուկ սերը: Նա սրբորեն պահպանում է ոչ միայն նրա պայծառ հիշատակը, այլ նաև նրա սուրբ շիրիմը, որը միշտ կհիշեցնի մեզ, թե ինչպես պետք է վերաբերվենք մեկմեկու, ինչպես պետք է գնահատենք իրար և ինչպես պետք է հպարտանանք մեր բարեկամությամբ:



ԻՐԱԿԼԻ ԱՐԱՇԻՉԵ (1909-1992), բանաստեղծ, գրական քննադատ, հասարակական գործիչ, Մոցիալիստական աշխատանքի հերոս (1979), Վրաստանի ԳԱ ակադեմիկոս (1960):

Ծնվել է 1909 թ. Քութայիսի նահանգի Ծուլուկիձեի շրջանի Խոնի գյուղաքաղաքում: 1926 թ. ավարտել է ծննդավայրի միջնակարգ դպրոցը, 1931 թ.՝ Թիֆլիսի համալսարանի բանասիրական ֆակուլտետը, 1933-1935 թթ.՝ սովորել նույն բուհի ասպիրանտուրայում: Գլխավորել է «Չվենի քաղաք», սպա՝ նաև «Մնաթրի» գրական հանդեսները: 1939-1967 թթ. եղել է ՎԳՄ վարչության պատասխանատու քարտուղար,

առաջին քարտուղար, սպա՝ վարչության նախագահ, 1966-1992 թթ.՝ վրացական հանրագիտարանի գլխավոր խմբագիր: Գրական ասպարեզ է իջել 1920-ական թվականների վերջերին: Բանաստեղծական առաջին ժողովածուն տպագրել է 1931 թ.: Տասնյակ այլ ժողովածուների հեղինակ է:

ԽՈՍՔ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ²⁹

Հովհաննես Թումանյանն այսօր մեզ հավաքել է իր գերեզմանի մոտ՝ այստեղ՝ Վրաստանի մայրաքաղաքում՝ իր սիրելի Թիֆլիսում, որտեղ նա անցկացրել է իր ողջ գիտակցական, ստեղծագործական կյանքը, որտեղ, ինչպես երևում է, գտել է ստեղծագործական աշխատանքի ցանկալի պայմաններ և որտեղ, իր կտակի համաձայն, հավերժական հանգիստ է վայելում:

Սայաթ-Նովայից հետո հայ և վրաց, նաև անդրկովկասյան ժողովուրդները իսկապես չեն ունեցել այնպիսի մի ընդհանուր բանաստեղծ, ինչպիսին Հովհաննես Թումանյանն է: Միևնույն ժամանակ, եթե Սայաթ-Նովան, ի փառս այս ժողովուրդների, չբավարարվեց մեկ լեզվով և միանգամից երգեց երեք լեզուներով, սպա Հովհաննես Թումանյանը մեկ լեզվում՝ իր մայրենի՝ հայոց լեզվում, գտավ այն ներքին կախարդական ուժը, որով կարողացավ սիրո բարձր հիմն ասել մեր ժողովուրդներին իրենց ճակատագրի, անցյալի ու ապագայի մասին:

Այո՛, Հովհաննես Թումանյանը մեր ընդհանուր բանաստեղծն է:

Այդպես էին կենդանության օրոք նրան անվանակոչում նրա վրացի բարեկամները, որին նրանք ընդունեցին ու սիրեցին: Այսօր նրան այդպես ենք անվանակոչում մաս մենք՝ նրա ստեղծագործությունը մեծաբողմներս:

Դուք կասեք, թե յուրաքանչյուր իսկական ստեղծագործող միշտ էլ ընդհանուր է, և մա ոչ թե երկու կամ երեք, այլ բոլոր ժողովուրդներին է պատկանում, թե յուրաքանչյուր իսկական ստեղծագործողի ժառանգությունը բոլոր ժողովուրդների հարստությունն է: Դա, ինչ խոսք, այդպես է, բայց Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունը, նրա քաղաքացիական գործունեությունն ու ծառայությունը առանձնահատուկ նշանակություն են ունեցել և ունեն հատկապես մեր ժողովուրդների համար:

Հովհաննես Թումանյանը, իսկապես, մեծ ավանդ ունի ոչ միայն իբրև ստեղծագործող, երգիչ, այլև իբրև քաղաքացի, և այդ ամենի համար նրան երախտապարտ է ոչ միայն իր ժողովուրդը, այլև անդրկովկասյան բոլոր ժողովուրդները և վրաց ժողովուրդը:

Այդ մասին բազմիցս խոսվել է նրա հոբելյանի օրերին, բայց եթե հազար անգամ էլ ասենք, մեզ հատկապես քաղաքացիական այն մեծ ծառայության հիշատակումն է հաճելի այսօր այստեղ՝ նրա շիրիմի մոտ, որը Հովհաննես Թումանյանը ժամանակին ներդրել է հայ և վրաց ժողովուրդների բարեկամության ու հարաբերությունների խորացման գործում:

Հովհաննես Թումանյանը հատկապես պատասխանում էր այն սիրուն, որ նրա հանդեպ տածում էր Վրաստանը: Նրան են պատկանում հետևյալ խոսքերը. «Եթե մի հայացք ձգենք հարևանների հարաբերությունների վրա ամբողջ աշխարհում, չենք կարող չխոստովանել, որ վրացին, իբրև հարևան, ամենալավերից մեկն է եղել»:

Սա ասել է մի մարդ, որը տասնյակ տարիներ զգացել է վրացու սրտի ջերմությունը:

Ռուսական կայսրության փլուզումից հետո՝ Անդրկովկասում ժամանակավոր խառնաշփոթության տարիներին, երբ իմպերիալիստական մեծ տերությունները Կովկասյան լեռներից այս կողմ իրենց ցանցն էին հյուսում և փոքրիկ Հայաստանին բարեկամական օգնություն էին խոստանում, հենց Հովհաննես Թումանյանն էր, որ ասաց, թե բոլոր տերությունները, միասին վերցրած, այնքան չեն օգնել

հայերին, որքան փոքրիկ Վրաստանը, և յուրաքանչյուր ընդհանուր դժբախտության ժամանակ, երբ հարձակումը եղել է հարավից կամ արևելքից, հայ ժողովուրդն առաջին հերթին հայացքն ուղղել է Վրաստանին և Վրաստանում է գտել հուսալի հանգրվան:

Հենց Հովհաննես Թումանյանն է ասել. «Այն հայ գործիչը, որ պաշտպան չի կանգնել Վրաստանին, չի հասկացել իր ժողովրդին ու իր պատմությունը, և այն վրացին, որ չի պաշտպանել հայերին ու Հաստանը, չի հասկացել վրաց ժողովրդին և Վրաստանի պատմական ուղիները: Նույն հայը կամ վրացին, որ լավ է իմացել ու հասկացել իր ժողովրդի ճակատագիրն ու բնավորությունը և նրա գերագույն շահերը, միշտ պաշտպանել է իր հարևանին, ինչպես ինքն իրեն»:

Դարձյալ Հովհաննես Թումանյանն է ասել. «Հայ լինի թե վրացի, եթե շեղվում է այս ճանապարհից, դավաճանում է իր ցեղի ոգուն»:

Ճշմարիտ խոսքեր...

Անկասկած, երբ հայ մեծ բանաստեղծն իր երկրին, իր ժողովրդին արդար ծառայության սուրբ զգացումներ էր ներարկում, երբ իր հարագատ ժողովրդի մեջ Անդրկովկասի մյուս ժողովուրդների նկատմամբ եղբայրության և համագործակցության հավերժական գաղափարներ էր քարոզում ու սովորեցնում, նախ և առաջ առաջնորդվում էր այնպիսի զգացումներով, ինչպիսի զգացումներով առաջնորդվում էր մեր Ակակի Ծերեթելին, երբ գրում էր.

Ես՝ մի վրացի, իսկ դու հայ ես մի,

Բայց մենք երկուսով եղբայր ենք հիմի....

Մեր իմաստուն նախնիները ժամանակ առ ժամանակ մեր ժողովուրդներին հիշեցնում էին այս մասին. եկե՛ք և ոչ մի օր չմոռանանք այս խոսքերը:

Այո՛, ինչպես զառամյալ հայրն է խոստովանում երկու պատանիների, երկու երիտասարդների, որ իրենք եղբայրներ են, ճիշտ այդպես էլ պատմությունը ժամանակին խոստովանել է մեզ՝ հայերիս ու վրացիներիս, Հայոսին ու Քարթլոսին, որ եղբայրներ ենք, որ պատմության մշուշապատ խորքերում մի ընդհանուր նախահայր ենք ունեցել:

Ահա թե ինչու դաժան փորձության ժամին Հովհաննես Թումանյանն այնպե՛ս բուռն դիմեց վրացիներին. «Վրացի եղբայրներ, մեր վաղեմի եղբայրներ, տանջված եղբայրներ, բայց միշտ ազատ ու բարձր հոգու տեր եղբայրներ»:

Մեր իմաստուն հոգևոր այրերը լավ էին հասկանում, որ սեփական հայրենիքի հանդեպ խելամիտ սերը հարևանի հետ եղբայրության ու համագործակցության լայն ուղիներ փնտրել է նշանակում, իսկ նրա հանդեպ անխոհեմ սերը հավասար է դավաճանության:

Ամեն ինչին նայել այդ բանական սիրո բարձունքից, սեր, որ վեհացնում է, սեր, որ արարում է, սեր, որ միաբանում և ջերմացնում է, միայն բանական սիրո բարձունքից նայենք ու զննենք ամեն ինչ: Ահա թե ինչ են նրանք կտակել մեզ: Հովհաննես Թումանյանի մեծությունը հենց այն է, որ նա ժամանակին խորությամբ ընկալեց ժողովուրդների իսկական եղբայրության բուն էությունը, դրա համար էլ նրա ստեղծագործությունը ոչ միայն ժողովուրդների բարեկամության սովորական հիմն է, այլ նաև իսկական պոեզիա:

Այս ամենն անցյալին, պատմությանն է պատկանում, այս ամենը բանաստեղծի շիրիմը հուշեց մեզ: Մենք՝ անդրկովկասյան ժողովուրդներս, տասնյակ տարիներ ազգային քաղաքականության գրանիտե հիմքի վրա՝ միասնական եղբայրական ընտանիքում, կառուցել ենք մեր ժողովուրդների բարեկամության փառահեղ շենքը: Մեր ընդհանուր, սքանչելի ապագան անամպ է, քանզի մեզանից յուրաքանչյուրը այդ վեհաշուք շենքի մշտաբթուն պահապանն է: Եվ եթե, այդուհանդերձ, այս ամենի մասին այսօր այստեղ հիշատակեցինք, հիշատակեցինք, որպեսզի արժանին հատուցենք մեր փառապանծ նախնիներին, որոնք այդ երանելի շենքի մասին երազել են դարերով, և իրենք էլ վաղօրոք գցել են այդ շենքի հիմքը: Փա՛ռք նրանց:

Հովհաննես Թումանյանն ազատագրված Անդրկովկասի՝ իրենց գեղեցիկ ապագան կերտող ժողովուրդների այդպիսի մեծ նախնիներից մեկն է:

Հավե՛րժ փառք նրա պայծառ անվանը:



ԼԵՎՈՆ ԱՎԱԹԻԱՆԻ (1900-1955), գրական քննադատ:

Հովհաննես Թումանյանի «Ընտիր երկերի» երկրորդ հրատարակության առիթով գրած գրախոսականում («Լիտերատուրա դա խելովներա», 11 հուլիսի 1948) Լ. Ասաթիանին անդրադառնում է բանաստեղծի առնչություններին վրաց իրականությանը, գնահատում է վրաց դասական գրողների մասին նրա հողվածները և դրանցից կատարած թարգմանությունները:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ «ԸՆՏԻՐ ԵՐԿԵՐԸ»³⁰

1893 թ. գարնանը Նիկողոզ Բարաթաշվիլիի դին Գանձակից տեղափոխում են Թիֆլիս: Սգո արարողության ժամանակ՝ Իլյա Ճավճավաձեի, Ակակի Ծերեթելիի և Գեորգի Ծերեթելիի ելույթներից հետո, չափածո խոսքով հանդես եկավ մի երիտասարդ հայ բանաստեղծ՝ այն ժամանակ դեռևս քիչ հայտնի ընթերցող լայն հասարակայնությանը:

Բանաստեղծության մեջ նա իր խորին հարգանքն արտահայտեց վրաց պոետի և նրան ծնող ժողովրդի նկատմամբ: Նրա խոսքը հագեցած էր ժողովուրդների համերաշխության գաղափարով, երկու եղբայրական ազգերի՝ Հայաստանի և Վրաստանի քաղաքական և մշակութային համագործակցության անհրաժեշտության գիտակցությամբ:

Երիտասարդ բանաստեղծը հասարակական գործունեության արշալույսին իր անունն այդպես անքակտելիորեն կապեց վրաց մշակույթի պատմության ամենանշանավոր երևույթին: Դա Հովհաննես Թումանյանն էր՝ հետագայում մեծագույն գրողներից մեկը, հայ գրականության դասականը, գրչի երախտավոր ասպետը, մեծ քաղաքացին, մարդասերը և սոցիալական արդարության համար մարտնչողը:

Հովհաննես Թումանյանը հայ գրական մտավորականության նշանավոր ներկայացուցիչներից էր: Իբրև բանաստեղծ՝ նա լավագույնս արտացոլեց ցարիզմի կրկնի տակ հեծող հայրենի երկրի ավյունը, նրա

ազգային և հասարակական իդեալները, ազատության երազանքները: Նա իր ժողովրդի հայրն էր, նրա սրտի մեծ հավատարմատարը:

Բայց Հովհաննես Թումանյանը երբեք չի պարփակվել իր ժողովրդի ազգային հետաքրքրությունների նեղ շրջանակներում: Նա լայն աշխարհայացքի և քաղաքական մտահորիզոնի տեր բանաստեղծ մտածող էր: Լինելով իր ժողովրդի պատմական անցյալի և ներկա կացության լավագույն գիտակը՝ Հովհաննես Թումանյանը խորապես համոզված էր, որ Հայաստանի հետագա զարգացման, նրա վերածննդի իսկական և ճշմարիտ գրավականը բարեկամական սերտ համագործակցությունն է եղբայրական ժողովուրդների և, առաջին հերթին, պատմության երկար քառուղիներում Հայաստանի վիշտն ու ուրախությունը կիսող վրաց ժողովրդի հետ:

Բոլորին քաջ հայտնի է Հովհաննես Թումանյանի սրտառուչ սերը Վրաստանի և վրացական մշակույթի նկատմամբ: Իր ստեղծագործական կյանքի զգալի մասը նա անցկացրել է Թիֆլիսում, որը իրավացիորեն համարում էր իր երկրորդ հայրենիքը: Հովհաննես Թումանյանը նրան էլ ձոնեց իր լավագույն բանաստեղծություններից մեկը՝ «Նվեր Վրաստանի բանաստեղծներին»-ը:

Այս ամենից հետո միանգամայն բնական է վրացի ընթերցողի ուժգնացող հետաքրքրությունը մեր ժողովրդի անկեղծ բարեկամի ստեղծագործական ժառանգության նկատմամբ: Այս առումով մեծ երախտիք ունի Իոսեթ Գրիշաշվիլին. նրա՝ Հովհաննես Թումանյանի երկերը վրացերեն թարգմանելու նվիրված աշխատանքը, տվեց իր բարի պտուղը: Այս տարի (1953 թ. – Հ. Բ.) «Սաբճոթա մծերալի»-ն երկրորդ անգամ լույս ընծայեց նրա ընտիր թարգմանությունների ժողովածուն:

Չի կարելի ասել, որ այս համեմատաբար փոքր ծավալի գիրքը լիովին պատկերացում է տալիս Հովհաննես Թումանյանի բազմակողմանի և արգասաբեր ստեղծագործության մասին, բայց և այնպես սրանով էլ մեր ընթերցողը կարող է ծանոթանալ հայ մեծ գրողի գեղարվեստական ժառանգության հիմնական տեմդեմցիկ և յուրահատուկ բնույթին: Այս առումով նա շատ է մոտենում 19-րդ դարի վրաց մեծ դասականներին, մասնավորապես՝ Ակակի Ծերեթելիին: Ժողովրդայնություն և մարդասիրություն, պայքար հանուն ժողովրդի ազգային և սոցիալական հետաքրքրությունների, ստեղծագործական սերտ կապ

հայրենի երկրի պատմության և ժամանակակից կյանքի հետ՝ այս ամենը, որ օրգանական միասնություն է հաղորդում իսկական պոետի ստեղծագործությանը, բնութագրում է նաև Հովհաննես Թումանյանին:

Ի. Գրիշաշվիլի թարգմանական ժողովածուում, բացի վոքրածավալ ոտանավորներից, գետեղված են նաև երեք լեզենո՝ «Շունն ու կատուն», «Փարվանա», «Սի կաթիլ մեղրը», «Անուշ» պոեմը, ինչպես նաև մի քանի պատմվածք և հեքիաթ:

Ժողովածուն բացվում է Հովհաննես Թումանյանի «Իմ երգը» բանաստեղծական խոստովանությամբ, որը միևնույն ժամանակ ներկայացնում է նրա քաղաքական հավատամքը՝ արտահայտված չափազանց ուշագրավ տողերում.

Ես հարուստ եմ, ես բախտավոր
Իմ ծրնրնոյան պայծառ օրեն,
Էլ աշխարհ չեմ գալու հո նոր,
Իր տըվածն եմ տալիս իրեն:

«Հայոց վիշտը» և «Հայոց լեռներում» բանաստեղծությունները հայրենասիրական խոր զգացումով են հագեցած: Նրանցում արտահայտված է հայ ժողովրդի ծանր կյանքը... Դարեր շարունակ ոգորող ու տառապող ժողովրդի հառաչանքն է լսվում այս տողերում.

Ու մեր աչքերը նայում են կարոտ
Հեռու աստղերին,
Երկրնքի ծերին,
Թե երբ կըբացվի պայծառ առավոտ
Հայոց լեռներում,
Կանաչ լեռներում:

Հայ ժողովրդի դառը ճակատագրի նկարագրությանը զուգահեռ՝ այս բանաստեղծության մեջ լսվում է նաև աներեր հավատի և ամենագոր լավատեսության ձայնը: Պոետը զգալ է տալիս այն մեծ հույսը, որով տոգորված է եղել հայ ժողովուրդը իր կյանքի ամենադժնոկ պահերին անգամ:

Քնարական խոր զգացումներով և ժողովրդական պարզ իմաստությամբ են հագեցած Հովհաննես Թումանյանի քառյակները: Արևելյան բանաստեղծական ձևի հատած տողերում պոետը հաճախ հիշեցնում է իր բարի սրտի տրոփյունը և հանգստավետ հումորի զգացումը: Ահա

մեկ օրինակ.

Երագունըս մի մաքի
Մոտըս եկավ հարցնունքի.
– Աստված պահի քո որդին,
Ո՞նց էր համը իմ ձագի...

Ժողովածուի լավագույն երկերից մեկը՝ «Նվեր Վրաստանի բանաստեղծներին»-ը, բարձր պաթոսով և անապական զգացումով ջերմացած բանաստեղծական մի նամակ է: Այս բանաստեղծությունը հենց սկզբից լայն արձագանք գտավ վրաց ընթերցող հասարակայնության շրջանում: Մրան, բնական է, նախ և առաջ նպաստեց Իոսեթ Գրիշաշվիլիի վարպետ թարգմանությունը:

Չէ՛, չի լռեել մեծ Շոթայի
Երգի ձենը կաթոգին,
Ու դարավոր ցավն ամենի
Չի խորտակել էն հոգին:

Այսպես է սկսվում այս հրաշալի բանաստեղծությունը: Պոետը եղբայրության ու անխախտ բարեկամության է կոչում հայ և վրաց ստեղծագործողներին, միանշանակ՝ նաև նրանց հարազատ ժողովուրդներին.

Հին օրերի վերջալույսին,
Արշալույսին նոր կյանքի
Երգենք սրտանց ու միասին
Երգը հանուր բերկրանքի:

Այս տողերը գրվել են այն ժամանակ, երբ, բանաստեղծի խոսքերով, դեռևս ուժեղ էր «դավադիրների ֆշշոցը թշնամական», որը տարանջատում և հեռացնում էր պատմական երկու եղբայր ժողովուրդներին: Բարեբախտաբար, խորհրդային իշխանությունը վերջ տվեց ժողովուրդների միջև գոյություն ունեցող, թշնամիների կողմից արհեստականորեն բորբոքված անվստահությանն ու թշնամական կախվածությանը... Մեր դարաշրջանում իրականություն դարձան ժողովուրդների եղբայրության մասին Հովհաննես Թումանյանի և մյուս լավագույն զավակների շահեկան երազանքները:

«Շունն ու կատուն» փոքրիկ լեգենդը, ինչպես երևում է, անմիջականորեն բխում է ժողովրդական բանահյուսության ակունքից: Այն շղարշված է թեթև հումորով:

Անհամենատ հետաքրքիր է «Փարվանա» լեգենդ-պոեմը: Ինչպես հեղինակն է հավաստում, լեգենդի ծագման վայրը Ջավախքն է: Այն մեզ պատմում է Փարվանա լճի առաջացման ժողովրդական ավանդույթի մասին: Հետաքրքիր է՝ վրաց բանահյուսության մեջ կա՞րողոյրք համանման ավանդույթի հետք:

Ժողովրդական ծագում ունի նաև «Սի կաթիլ մեղրը» լեգենդը, որտեղ արտացոլված է ժողովրդի ժխտական վերաբերմունքը ավերիչ պատերազմների նկատմամբ:

Ժողովածուի ամենանշանավոր երկը «Անուշ» պոեմն է, որը վշտալի պատմություն է հպարտ հովվի՝ Սարոյի և գեղջկուհու ողբերգական կործանման մասին: Նրանց պատմությունը հասարակ է այնպես, ինչպես բնույթը նրանց զգացմունքների և պատկերացումների:

Այս հայ Ռոմեոն և Ջուլիետը ընթերցողին գրավում են զգացմունքների անմիջականությամբ: Ռոմանտիկ պատմությունը ներկայացված է պարզունակ. վայրագ աղաթները չորացնում են սիրո քնքուշ ծաղիկը: Բայց այս պատմությունը դուրս է գալիս ազգագրական, տեղային սահմաններից: Այն մի զմայլելի երգ է սիրո մասին:

Հովհաննես Թումանյանի ընտիր երկերի ժողովածուի երկրորդ մասը հատկացված է արձակին: Այստեղ ներկայացված են փոքրածավալ պատմվածքներ և հեքիաթներ:

Իոսեֆ Գրիշաշվիլի գիրքը հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու մեծ դասականի ստեղծագործության մասին: Այս հրաշալի թարգմանությունները, որ հավասարվում են բնագրին, անպայման արժանի են բարձր գնահատականի և գովասանքի:

Հովհաննես Թումանյանի ժողովածուի հրատարակությունը օրակարգի հարց է դարձնում նաև հայ գրականության մյուս նշանավոր վարպետների երկերը վրացերեն թարգմանելու խնդիրը, միայն թե նույնպիսի գրական բարձր որակով, որի օրինակը տալիս է մեր կողմից գրախոսվող ժողովածուն:



ԱԼԵՔՍԱՆԳՐԵ ԲԱՐԱՍՏԻՉԵ (1902-1994), գրականագետ, Վրաստանի ԳԱ ակադեմիկոս (1960): Ծնվել է Լանջխութիի մունիցիպալիտետի Ջանջուաթի գյուղում: Ուսումնառությունն սկսել է Փոթիի գիմնազիայում, 1918 թվականից սովորել է Խաշուրիի գիմնազիայում, 1920-1925 թթ.՝ Թբիլիսիի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում: 1962-1970 թթ. եղել է նույն բուհի վրաց հին գրականության պատմության ամբիոնի վարիչ, 1966 թվականից մինչև մահը՝ Թբիլիսիի Շոթա Ռուսթավելու անվան վրաց հին գրականության պատմության ինստիտուտի տնօրենը:

ԺՈՂՈՎՈՒԲՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՍՈՒԹՅԱՆ ԵՐԳԻՉՁԸ³¹
(Հովհաննես Թումանյան)

Մեր դրկից, հարևան եղբայրական Հայաստանը մեծ, հինավուրց մշակույթի տեր երկիր է: Դեռևս վաղ միջնադարում հայ ժողովուրդն ստեղծել է սքանչելի գրականություն: Չնայած Հայաստանին պատմական անչափ ծանր ճակատագիր էր վիճակված, այնուամենայնիվ, հայ գրականությունը զարգանում էր հաջողությամբ: Հին և նոր գրականությունը զարդարում են բազմաթիվ նշանավոր գրողների անուններ: Այդ գրողների շարքում առաջիններից մեկն է Հովհաննես Թումանյանը: Նա Հայաստանի ամենասիրելի և ամենահեղինակավոր բանաստեղծն է: Բայց նրա անունը դուրս է եկել իր երկրի սահմաններից և հասել շատ հեռու: Թումանյանը ազգային մեծ բանաստեղծ է, դասական, որին խորթ էր նեղ ազգայնական մտայնությունը: Իր բանաստեղծություններում Թումանյանը ոգեշնչված երգում էր ժողովուրդների եղբայրության գաղափարներ:

Հովհաննես Թումանյանի կյանքն ու ստեղծագործությունը չափազանց մերձիմոտ են մեզ՝ վրացիներին: Իր գրեթե ողջ գիտակցական կյանքը նա անցկացրել է Վրաստանում, մեծ մասամբ՝ Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսում: Թիֆլիսում է ընթացել Թումանյանի գրական և հասարակական գործունեությունը: Եվ վերջապես, Թիֆլիսի

հողին է հանձնվել նրա բանաստեղծական բոցաշունչ սիրտը:

Հովհաննես Թումանյանը Լոռու Դսեղ գյուղից էր: Ծնվել է 1869 թ. փետրվարի 7-ին (հին տոմարով): Լոռու գեղեցիկ բնությունը, Լոռու սարերն ու ձորերը, Դեբեդ գետի հրաշալի հովիտները պատանի Հովհաննեսին՝ Հայաստանի ապագա մեծ բանաստեղծին, զգալ են տալիս հայրենի հողի հզոր ուժը: Լոռու փառահեղ բնությունը, Լոռու ժողովրդական գրույցները, հեքիաթներն ու լեգենդները, Լոռու բնակիչների չարքաշ կյանքի պատկերները խոր հետք են թողնում պատանի Հովհաննեսի հիշողության մեջ: «Իմ մեծ ուսուցիչը եղել է Դեբեդ գետի աղմուկը», - ասում էր արդեն մեծ հեղինակություն վայելող բանաստեղծը:

Թումանյանի բազում երկերի, դրանց թվում՝ «Մարո», «Լոռեցի Մարոն», «Անուշ» պոեմների թեմաներն առնված են Լոռու իրականությունից: Հայրենի եզերքում տեսածը, լսածը և զգացածը Թումանյանն իր բանաստեղծական հզոր տաղանդին համապատասխան ընդհանրացնում է և ստեղծում ազգային անթառամ գլուխգործոցներ:

Փոքրիկ Հովհաննեսը գրել-կարդալ սովորել է իր հորից (նրա հայրը գյուղի քահանան էր): Հետո սովորել է դպիրի մոտ և գավառական հոգևոր ուսումնարանում: Իսկ մինչ դպրոց հաճախելը հովվություն է արել: 1883 թ. օգոստոսին հայրը Հովհաննեսին բերում է Թիֆլիս և հանձնում Ներսիսյան նշանավոր դպրոցը: Լեռնցի երեխային հուզում և վախեցնում է քաղաքի արտասովոր աղմուկը: Հովհաննես Թումանյանը քաղաքը չի հավանում: Առհասարակ հետագայում էլ նա միշտ դեպի գյուղն է մղվել (թեև բնակվում էր քաղաքում):

Գյուղական թեմատիկան է Թումանյանի ստեղծագործության ատաղձը: Թիֆլիսում ստացած առաջին տպավորությունները Թումանյանը հրաշալի կերպով պատկերել է արձակի իր գլուխգործոցում՝ «Գիքորը» պատմվածքում:

Ներսիսյան դպրոցում Թումանյանը սովորում է ընդամենը երկու տարի: Բազմակողմանի կրթություն ձեռք է բերում ինքնազարգացման ճանապարհով:

1887-1892 թթ. Թումանյանը ծառայում է Թիֆլիսի հայոց հոգևոր ատյանում՝ կոնսիստորիայում, որը նա համարում էր «դժոխք»: 1893 թվականից դառնում է պրոֆեսիոնալ գրող: Հետագայում ծառայության չի մտել: Ապրուստը հոգում էր գրական աշխատանքով, միշտ

դժգոհել է աղքատությունից: Թումանյանը բարձր էր գնահատում գրական ստեղծագործական արդար աշխատանքը:

Թումանյանը բանաստեղծություններ գրել է վաղ հասակից, երբ դեռևս տասներկու տարեկան էր: Իբրև բանաստեղծ ձևավորվել է Ներսիսյան դպրոցում: 1890 թ. Մոսկվայում լույս է տեսնում նրա անդրանիկ ժողովածուն, երկրորդը՝ 1892 թ.: Այս գրքերով նա միանգամից դառնում է նշանավոր: Հովհաննես Թումանյանի առջև լայնորեն բացվում են ժամանակի հայկական պարբերական մամուլի դռները: Գրական լարված աշխատանքը խաթարում է բանաստեղծի առողջությունը: 1901-1902 թվականների ամառն ու աշունը Թումանյանն անցկացնում է Աբասթումանում: Բանաստեղծը հափշտակվում է Վրաստանի գեղատեսիլ բնությանը ու կենարար օդով:

Նրան հիացմունք են պատճառում Բորժոմի կիրճը, Բակուրիանիի ճանապարհը, Յիսրաձղարոյի լեռնանցքը: Աբասթումանում Թումանյանն ակտիվ աշխատանք է ծավալում: Այստեղ է գրում «Փարվանա» և «Թմկաբերդի առումը» պոեմները, հիմնականում այստեղ է մշակում և վերջնական տեսքի բերում «Անուշ» հանրահայտ պոեմը:

1903 թ. Ստ. Շահումյանի առաջարկությամբ Հովհաննես Թումանյանը հայերեն է թարգմանում Պուշկինի «Ազատությունը»: Այդ թարգմանության տեքստը մասսայաբար տարածվում է մայիսյան ցույցի ժամանակ:

Հովհաննես Թումանյանը սրտանց քարոզում էր ժողովուրդների եղբայրության, համերաշխության գաղափարներ: Խոսքով, գործով, բանաստեղծություններով, հրապարակախոսական հոդվածներով, հրապարակային ելույթներով նա անձնուրաց պայքարում էր սևհարյուրակային պրովոկատորների դեմ, հայ և այլազգի ժողովուրդներին կոչ էր անում և զգուշացնում, որ պահնորդական բաժանմունքի ցանցը չընկնեն, եղբայրական համագործակցության ձեռք մեկնեն մեկնելու: Հովհաննես Թումանյանը այցելում էր գյուղերը և հանդարտեցնում թշնամաբար մոլեգնող կրքերը:

Յարական ինքնակալությունը Թումանյանին չներեց 1905-1907 թթ. դեպքերի համար: 1908 թ. հայ նշանավոր բանաստեղծին կալանավորեցին և նետեցին Մետեխի բանտը: Բանտում նույնպես Թումանյանը շարունակում էր գրական աշխատանքները: Ի դեպ, հենց Մետեխի բանտում նա գրեց «Մի կաթիլ մեղրը» հրաշալի լեգենդը: Բան-

տից ազատվեց 1909 թ. հունիսին:

1907 թ., երբ ցարիզմի գործակալներն սպանեցին Իլյա Ճավճավաձեին, Հովհաննես Թումանյանն այդ առնչությամբ հայերեն թարգմանեց մեր երախտավոր գրողի ոտանավորներից երկուսը՝ «Էլեզիան» և «Գարունը»: Իսկ դրանից ավելի վաղ, Նիկողոզ Բարաթաշվիլիի դին Թիֆլիս տեղավոյսելու առիթով, Թումանյանը մի սքանչելի բանաստեղծություն է նվիրում վրացի մեծատաղանդ պոետի հիշատակին:

1911 թ. նոյեմբերի 7-ին ինքնակալության ղեկավարները կրկին կալանավորում են բանաստեղծին: Նրան նախ պահում են Մետեխի բանտում, իսկ հետո ուղարկում են Պետերբուրգ: Կալանքից ազատվում է 1912 թ. մարտին: Պետերբուրգի գրական հասարակությունը սրտառուջ հանդիպում է կազմակերպում հայ մեծանուն բանաստեղծի հետ: Ի միջի այլոց, Հովհաննես Թումանյանն այստեղ մտերմանում է ռուս նշանավոր գրող և հասարակական գործիչ Կորոլենկոյի հետ:

Հովհաննես Թումանյանը հայ մշակութային կյանքը միավորող և ոգեշնչող երախտավոր էր: Նա իր շուրջն էր համախմբում մասն աշխարհի մշակութային գործիչներին, առաջին հերթին՝ վրացիներին: Նրա տունը Թիֆլիսում՝ Ամաղեբի (այժմ՝ Դավիթաշվիլի) փողոցում, գրական հիանալի սալոն էր, որտեղ պոեզիայի, արվեստի և գիտության բոլոր գործիչներն ու երկրպագուները իրենց զգում էին, ինչպես սեփական տանը: Բոլորին հրապուրում էին ուրախ, շռայլ և առատաձեռն տանտիրոջ սրամիտ խոսքն ու պատասխանները, խելամիտ զրույցները, թեթև կատակները և նրա յուրահատուկ, գերող ժպիտը...

1912 թ. աշնանը Հովհաննես Թումանյանը հիմնադրում է Հայ գրողների կովկասյան ընկերությունը: Ընկերությունն անցկացնում էր գրական հինգշաբթիներ, որոնց հաճախում էր բավականին մեծ հասարակություն: Այստեղ դասախոսություններ և զեկուցումներ էին ընթերցվում հայ, վրաց, ռուս, արևմտաեվրոպական և արևելյան գրականության պատմության վերաբերյալ, կազմակերպվում էին գրական ցերեկույթներ ու երեկոներ:

Հովհաննես Թումանյանը հասարակական լայն գործունեություն է ծավալում առաջին իմպերիալիստական պատերազմի տարիներին: Նա անձամբ երկու անգամ լինում է ռազմաճակատում: Տեսնում է Արևմտյան Հայաստանի ամայացած շրջանները, ծանոթանում է թշվառ, անօթևան, մերկ, քաղցած ու ծարավ հայրենակիցների վիճա-

կին, ուժ ու եռանդ չի խնայում դժբախտ գաղթականների և վիրավոր մարտիկների տանջանքները թեթևացնելու համար:

Փետրվարյան հեղափոխությունից հետո խոշորագույն բանաստեղծը պարզապես ողբերգություն էր սպրում մենչևիկների և դաշնակցականների անջատողական գործողությունների պատճառով:

1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանում հաստատվեցին խորհրդային կարգեր: Հովհաննես Թումանյանը խանդավառությամբ ընդունեց հայ ժողովրդի համար բախտորոշ այդ վաստը:

...Շուտով խորհրդային կարգերի հաղթանակի դրոշը ծածանվում է նաև Թիֆլիսում: Հովհաննես Թումանյանի ղեկավարությամբ 1921 թ. Թիֆլիսում բացվում է հայ մշակույթի տուն: Նույն թվականի հուլիսի 14-ին Թումանյանին հրավիրում են վրաց պոեզիայի երեկոյին: Հիվանդության պատճառով նա չի կարողանում մասնակցել, բայց հատուկ նամակ է ուղարկում երեկոյի մասնակիցներին:

Հովհաննես Թումանյանը մաքուր, անկեղծ և բաց սրտով էր սիրում իր երկրորդ հայրենիքը՝ Վրաստանը: Նա ասում է. «Ես, իբրև բանաստեղծ մարդ, անհիմունքն սեր տածելով առհասարակ դեպի ժողովուրդները, առանձնապես ուժեղ սիրել եմ մեր եղբայրակից վրացի ժողովրդին, որի մեջ անց եմ կացրել իմ կյանքի մեծագույն մասը և որի հետ կապված եմ շատ խոր ու ամուր կապերով»:

1921 թ. աշնանը Հովհաննես Թումանյանը մեկնում է Երևան, որպեսզի իր մասնակցությունը բերի ազատ (խորհրդային) հայրենիքի նոր կյանքի կառուցման գործին: Այդ ժամանակ նա ծանր հիվանդացավ: Երկու տարի պառկեց անկողնում: 1923 թ. մարտի 23-ին վախճանվեց Մոսկվայում: Նույն թվականի ապրիլի 13-ին Հովհաննես Թումանյանի դին տեղափոխեցին Թիֆլիս, իսկ երկու օր անց՝ ապրիլի 15-ին, մեծ շուքով հուղարկվորեցին նախկին Խոջիվանքի գերեզմանոցում:

Հովհաննես Թումանյանի քնարերգությունը հայ նոր գրականության զագաթն է: Թումանյանի լուսավոր պոեզիայի հիմքն են կազմում դեմոկրատիզմն ու հումանիզմը: Երկու հավերժական թեմաներ են կազմում նրա պոեզիայի շունչն ու հոգին՝ ժողովուրդ և հայրենիք: Դեռևս իր ստեղծագործական կյանքի արշալույսին՝ անցյալ դարի 90-ական թվականներին, Թումանյանը հստակ գիտեր բանաստեղծի՝ իբրև ժողովրդի կյանքը, հոգսերն ու իղձերն արտահայտողի կոչումը:

«Բանաստեղծի ոտքը հարազատ ու իրական հողի վրա պիտի լինի»:

Եվ, իսկապես, Թումանյանը հրաշալի գիտեր և ողջ էությունը սիրեց իր բազմաշարչար հայրենիքը, սոցիալական և ազգային ծանր լծի տակ կեղեքվող բարի, աշխատասեր և պատվարժան ժողովրդին: «Ամենից առաջ ամեն մի բանաստեղծ իր ժողովրդի սիրտը պետք է լինի», - հայտարարում է Թումանյանը: Նա ճշմարիտ արտահայտեց իր ժողովրդի արդար սրտի խոսքը:

Բանաստեղծն ասում էր, որ իր սիրտը ծանրացած է հարազատ երկրի անհաշիվ տանջանք-տառապանքով: Անցյալի այն խավար դարաշրջանում, իր՝ բանաստեղծի արտահայտությամբ, համատարած գիշեր էր, խավար գիշեր: Բանաստեղծի հայրենիքը՝ Հայաստանը, բաժան-բաժան էր, վիրավոր, ծվատված: Ծանր վերքի ցավերը տանջում էին նրան: Հայաստանի վերքը մեծ ուժով առաջինը նկարագրել է Խաչատուր Աբովյանը: Հայաստանի վերքը դարձավ նախահեղափոխական հայ գրականության առաջատար թեմաներից մեկը: Այդ թեման նորովի մատուցեց Հովհաննես Թումանյանը: «Հայրենիքի վերքի» կացությունը պայմանավորեց Հովհաննես Թումանյանի բանաստեղծական խորունկ թախծի բնույթը:

Բայց Թումանյանը հայրենիքի վիշտը երգելիս երբեք հուսահատության գիրկը չի ընկնում: Բանաստեղծն սպասում էր բուժվելուն. նա հուսավառ երգում էր հայրենի լեռները.

Մեր ճամփեն խավար, մեր ճամփեն գիշեր,
Ու մենք անհատնում
Էն անլույս մըթնում
Երկա՛ր դաբերով գընում ենք դեպ վեր
Հայոց լեռներում,
Դըժար լեռներում:

.....

Ու մեր քարավանը շըփոթ, սոսկահար,
Թալանված, ջարդված
Ու հատված-հատված
Տանում է իրեն վերքերն անհամար...

Հայրենասիրական այս սքանչելի բանաստեղծությունն ավարտվում է բանաստեղծի հուզիչ բացականչությամբ.

Ու մեր աչքերը նայում են կարոտ
Հեռու աստղերին,
Երկնքի ծերին,
Թե երբ կըբացվի պայծառ առավոտ
Հայոց լեռներում,
Կանաչ լեռներում:

«Մեր ճամփեն խավար, մեր ճամփեն գիշեր»՝ բանաստեղծության մեջ նշում է Թումանյանը, իսկ մեկ այլ տեղում ասում. «Մենք միշտ անասան առաջ պիտի գնանք, ինչքան էլ մեր ճամփան լինի ահարկու»:

Հովհաննես Թումանյանը համոզված է, որ «պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հագած»:

«Զարմանալի է մեր ազգի կենսունակությունը», - գրում է Թումանյանը: Հայ ժողովրդի այդ կենսունակությունը բանաստեղծի հոգին լցնում է ապագայի հանդեպ անսահման հավատով: Հայ ժողովուրդը հատկապես մեծ արհավիրքներ տեսավ իմպերիալիստական առաջին պատերազմի ժամանակ: Բարբարոս թուրքերի կողմից հայ ազգաբնակչության զանգվածային կոտորածներին ու հոշոտմանն ակամատես բանաստեղծը, այդուհանդերձ, հույսով հայտարարում էր, որ, ճիշտ է, հայ ժողովուրդը արնածոր վիճակում է, թեև ծանր վիրավոր է և անսահման վիշտ է ապրում, բայց և ոչ մի վայրկյան չի թուլանա նրա ստեղծագործական հոգին:

Հովհաննես Թումանյանը պայծառ գույներով է նկարագրում իր հայրենիքի ապագա վերածնունդը:

Հովհաննես Թումանյանի բանաստեղծական մեծ ու լայն հոգին միայն իր հայրենիքի սիրով չէ, որ տոգորված էր: Նա ջերմորեն էր վերաբերվում ազատաբաղձ բոլոր ժողովուրդներին, բոլոր երկրներին: Բանաստեղծը գրում է.

Անհուն հանքը իմ գանձերի,
Սիրտս է առատ, լեն ու ազատ.
Ինչքան էլ որ բաշխեմ ձրրի,
Մերն անվերջ է, բարին՝ անհատ:

Ժողովուրդների եղբայրության ու համերաշխության երգիչ բանաստեղծը, ինչպես նշեցինք, վրացիների հանդեպ միշտ առանձնահատուկ համակրանք էր տաժում: «Ինձ համար որքան թանկ են Վրաստանն ու վրացական սքանչելի հոգին, այդքան էլ թանկ են այն

մարդիկ, որոնք հանդիսանում են կրողներն ու մեկնաբանները էդ հոգու»,- գրում է Հովհաննես Թումանյանը: Բանաստեղծն ընդգծում էր հայ և վրաց ժողովուրդների պատմական ճակատագրերի ընդհանրությունը, նրանց անասան եղբայրությունը ներկայում և անցյալում: Դարերի ընթացքում հայերն ու վրացիները, ըստ հեղինակի, միասին տանջվել են, միասին մարտնչել ապագայի համար, միասին ռուսներին հրավիրել իրենց երկիրը: «Ռուս մեծ ժողովրդի հետ սիրո կապը ապահովում է մեր ժողովուրդների պատմական կյանքի հաջողությունները»,- եզրակացնում է Թումանյանը: Հայ բանաստեղծը նրբին համեստությամբ հիշատակում է ռուս մեծ գրողների անունները և անկեղծ սրտով խոստովանում հայ գրականության զարգացման վրա նրանց թողած ազդեցությունը: «Միրով ու պատկառանքով խոնարհվում եմ ռուսական մեծ ազգի հոյակապ գրականության առջև՝ Պուշկինի, Լերմոնտովի, Գոգոլի, Դստոևսկու, Տուրգենևի, Չեխովի, Տոլստոյի և իրենց արժանավոր ժառանգների գրականության առջև, որի վրա կրթվել են մեր գրողներից ու մտավորականներից շատ-շատերը»,- ասել է Թումանյանը Բոլյուսովի երեկոյին՝ 1916 թ. հունվարի 13-ին:

Վրաստանին, վրաց ժողովրդին, վրաց պոեզիային Հովհաննես Թումանյանը նվիրել է սքանչելի բանաստեղծություններ, այդ թվում՝ «Նվեր Վրաստանի բանաստեղծներին» փայլուն ներբողը, որը հրաշալի թարգմանել է Իոսեփ Գրիշաշվիլին:

Ահա մի հատված այդ բանաստեղծությունից.

Չէ՛, չի լրռել մեծ Շոթայի
Երգի ձենը կաթոգին,
Ու դարավոր ցավն ամեհի
Չի խորտակել էն հոգին:

«Նվեր Վրաստանի բանաստեղծներին»-ը Հովհաննես Թումանյանը գրել է 1919 թ.՝ մենշևիկյան, դաշնակցական, շովինիստական կրքերի բողբոջման ժամանակ: Առավել ևս հատկանշական է, որ այդ ժամանակ ազգայնականության թույնով վարակված մթնոլորտում ուժգնորեն հնչեցին Հովհաննես Թումանյանի մարդասիրական երգի այս կախարհող ձայները: «Թույնը հասցնել մինչև հայ և վրացի ժողովուրդների հոգու խորքը չի հաջողվել և ոչ մեկին»,- ասում էր Հովհաննես Թումանյանը: «Կեցցե՛ գեղեցիկ Վրաստանի գրականությունը»

նը»,- գրում է Թումանյանը մի վրաց գրականագետի: «Ինքը՝ վրացին, պոետ է, իսկ վրացի պոետը՝ կրկնակի պոետ»,- նշում է նա մեկ այլ նամակում: Թումանյանը Վրաստանը կոչում էր բանաստեղծների երկիր.

Տեսնի քանի նոր ձենով է
Խոսում մուսան էս երկրում,
Պատգամներով պայծառ ու վեհ,
Հազար ու մի երգերում:

Հովհաննես Թումանյանը իբրև Հայաստանի բանաստեղծական խորհրդանիշ պատկերում է հպարտ, վեհ ու անկրկնելի Մասիս (Արարատ) սարը, իսկ Վրաստանը ներկայանում է նրան Կովկասիոնի հսկա Մոլինվար (Կազբեկ) սարով:

– Ողջո՛ւյն, ողջո՛ւյն ձեզ հին ու նոր

Արի, բարի ընկերներ...

Աժդահայի ձայնով Արարատն է ողջունում Կազբեկին:

«Ողջո՛ւյն»,- աներեր պատասխանում է Կազբեկը, և որոտալից ձայնով երկու հսկաները եղբայրության երդում են տալիս՝ հավիտյան և ընդմիշտ լինել միասին:

Արարատի և Կազբեկի եղբայրանալու խորհրդանիշով Հովհաննես Թումանյանը բանաստեղծորեն պատկերում է հայ և վրաց ժողովուրդների անխախտ բարեկամության անմահ գաղափարը:

Հայ գյուղացին Հովհաննես Թումանյանի բազմաթիվ երկերի կենտրոնական հերոսներից է: Նա հավասարը չունեցող արվեստագետ է, երբ պատկերում է գյուղացու չարքաշ կյանքը: Մոցիալական չարիք, ազգային կեղեքում, հասարակական կյանքի ցածր մակարդակ, տգիտություն՝ ահա այն երևույթներից մի քանիսը, որոնք գյուղացու դառնադետ կյանքի պատճառներն էին: Նա ստրուկն էր ոչ միայն տեղական իշխանավորների, կաշառակեր ու բյուրոկրատ չինովնիկների, չարչի վաճառականների, քահանաների և հազար ու մի ցեցերի, այլ նաև նահապետական վարք ու բարքի, հնոց աղաթների, սնահավատության և կենցաղային ուրիշ հոռի երևույթների:

Հովհաննես Թումանյանը հայ գրականության մեջ արմատավորեց կենցաղագրական քնարական պոեմի ժանրը: Նրա պոեմների հերոսները լռեցի հովիվներ են՝ առողջ, պարթևահասակ, կենսասեր, բարոյական: Բայց Թումանյանի գրեթե բոլոր պոեմների գլխավոր հերոսները ողբերգականորեն կործանվում են: Նրանք բախվում են

սոցիալական անարդարության, ժամանակավրեպ, անհարիր և կոպիտ աղաթ-ծեսերի: Այդպիսիք են Մարոն, Լոռեցի Սարոն, Անուշը, Սարոն... Հովհաննես Թումանյանի հերոսները գոհվում են, որովհետև չեն համակերպվում ֆեոդալական իրավակարգին, պահպանողական կենցաղին, խուսափում են խավարից, մղվում դեպի բարին, լույսը, ազատությունը: Փոքրիկ Մարոյին՝ ընդամենը իննամյա աղջկան, հին սովորությունների հետևորդ ծնողները ամուսնացնում են վիթխարահասակ, լողող մի հովվի՝ Կարոյի հետ: Սկզբում, երբ Կարո քեռին քաղցրավենիք էր բերում, աղջնակին դուր էր գալիս, սիրում էր նաև, բայց յուրօրինակ սիրով: Մի գեղեցիկ օր էլ այս հաղթահասակ տղամարդը փոքրիկին տանում է տուն: Մարոն սկսում է ատել այդ մարդուն, սարսափում, զգվում է նրանից: Մանկամարդ երեխայի էությունը բնագրաբար ըմբոստանում է այդ անարդար վարմունքի դեմ: Նա փախչում է ամուսնու կացարանից: Հայրը նախատում է նրան, ծեծում, գրկում օթևանից: Դժբախտ աղջիկը անձրևին, ձյանը թե փոթորկին քաղցած, մերկ ու ցրտահար դռնեղուռ է ընկնում, օթևան խնդրում: Ապարդյուն: Երեխան տենչում է տաք անկյուն, բայց չի ուզում վերադառնալ ամուսնու մոտ: Նա դիմում է հայրենի սարերին: Ի վերջո նետվում է գետը և խեղդվում: Դրանից հետո նոր միայն հիշում են նրան, իբրև թե տիրություն անում: Նրա դիմ ամփոփում են մենավոր մի ծառի տակ: Արցունքի ոչ մի կաթիլ: Սոսկ վշտահար մայրն է լաց լինում՝ ո՞վ քեզ ծեծեց, Մարո ջան: Աղաչում պաղատում է դատերը, որ վերադառնա իր հոգու հատորը, իր ծաղիկը, բայց արդեն ուշ էր: Մարոյի կյանքի ծաղիկը թառամում է առանց բացվելու:

Այսպես կործանվում են նաև չքնաղ Անուշն ու նրա սիրած տղան՝ հովիվ Սարոն: Սարոն մույնպես գոհ է գնում անսիրտ և անհոգի մարդկանց ասեկոտեներին, հնոց աղաթին: Նա ևս հեռանում է հայրենի սարերը և երգով նրանց հայտնում իրեն տանջող վիշտը.

– Բարձրը սարեր, ա՛յ սարեր,
Չեն են տալի «վա՛յ», սարե՛ր,
Դուք էլ ինձ հետ ձեն տըվեք,
Իմ դարդերի թա՛յ սարեր:

Անասիման ողբերգական է նաև գյուղացի փոքրիկ տղայի՝ Գիքորի ճակատագիրը: Դաժան, գծուծ, չարական ու գռեհիկ վաճառականը կործանում է երագկոտ, պարզամիտ ու միամիտ Գիքորին: Մարսա-

վելի է մահամերձ Գիքորի զառանցանքը, մանավանդ, երբ նա արտաբերում է անգիր արած խոսքերը՝ էստի՛ համեցեք, էստի՛ համեցեք: Հոգին ավանդող Գիքորը կրկին հաճախորդներին հրավիրում է բազազ Արտեմի անիծյալ վաճառատուն:

Ահա այսպես ողբերգականորեն կործանվում են Թումանյանի կերպարները: Բայց դա կյանքն ատող երգչի վճիռ չէ: Թումանյանը վատատես չէ: Ընդհակառակը՝ նա կյանքի երգիչ է, մարդասեր, հավատ ընծայող լավատես բանաստեղծ, մտածող: Ողբերգական իրավիճակներ և ողբերգական կերպարներ ստեղծելով՝ Հովհաննես Թումանյանը մերկացրել է հին ժամանակներից եկող սոցիալական չարիքների կործանարար էությունը: Բանաստեղծի խոր հավատով՝ սոցիալական և տնտեսական անհավասարության պայմաններում մարդիկ երջանկությամբ չեն հասնում: Նա ասում է.

....Միշտ, քանի որ կա
Շահ ու գերի, ըստրուկ ու տեր,
Չի լինելու երկրի վըրա
Ո՛չ շիտակ խոսք, ո՛չ կյանք, ո՛չ սեր:

Հովհաննես Թումանյանը պարզերես մարեց իր պարտքը ժողովրդի ու հայրենիքի առջև: Բանաստեղծն իրավունք ուներ հանգիստ սրտով ասելու.

Աշխարհով մին՝ ահա էսպես
Շաղ են տալիս իմ բարձունքից:
.....
Էլ աշխարհք հո չեն գալու նոր,
Իր տըվածն են տալիս իրեն:

*«Լիլիերայուրա դա խելովներս»
6 հունիսի 1952 թ.*

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿՈՒՄԸ
ՕՎԿԵԱՆՈՍՈՒՄ³²**

1969 թ. աշնանը նավով ճամփորդում էինք Արևմտյան Աֆրիկայի շուրջը: Երկտեղանոց խցիկում էինք ես և Իլյա Թավաձեն: Մեր հարևաններն էին Վահան Մամասախլիստվը և Բորիս Փուրցխվանի՝ ձեն: Անցել էինք Ջիբրալթարի նեղուցը և մտել Ատլանտյան օվկիանոս: Խաղաղ, հանգստավետ օր էր... Նախաճաշին Իլյա Թավաձեն, Վահան Մամասախլիստվը և ես մտանք բար: Չբաղեցրինք անկյունի սեղանը, պատվիրեցինք գարեջուր և սուրճ: Հանկարծ մեզ մոտեցավ անձանոթ մի երիտասարդ՝ մոտ քսանհինգ տարեկան, պնդակազմ, թխադեմ, նկատելիորեն շառագունամազ: Չգացվում էր, որ վրդովված է: Գլուխն անբնական բարձր էր պահում: Բավական գրգռիչ տոնով ռուսերեն հարցրեց, թե մեզանից ով է արևելագետը (Վահանն ականջիս տակ շշմջաց՝ երիտասարդը խմած է, գգո՛ւյշ եղիր):

– Արևելագետի հավակնություն չունեմ, բայց պատրաստ եմ բավարարելու ձեր հետաքրքրասիրությունը,– պատասխանեցի համեստաբար և, մատնացույց անելով ազատ աթոռը, խնդրեցի նստել: Սուրճ առաջարկեցի: Մերժեց թե՛ մեկը, թե՛ մյուսը:

– Հովհաննես Թումանյանի հոբելյանը նշեցի՞ք Վրաստանում,– կոպտորեն հարցրեց անձանոթը:

– Իհարկե՞,– պատասխանեցի,– ամբողջ Վրաստանը տոնեց Հովհաննես Թումանյանի ծննդյան հարյուրամյակը: Քիչ-միչ էլ իմ ներդրումը կար: Անցյալ ամսվա սեպտեմբերի 20-ին «Չարյա Վոստոկա» ռուսալեզու թերթում Թումանյանի մասին հոդված հրատարակեցի, իսկ ռադիոյի հայկական հաղորդումների ծրագրով եթեր հեռարձակվեց մեծ Թումանյանի կյանքին ու գործունեությանը վերաբերող հատուկ հաղորդում (սեպտեմբերի 24-ին), որին մասնակցեցի նաև ես: Իսկ Դուք գիտե՞ք,– իմ հերթին հարցրի ես,– որ Հովհաննես Թումանյանն իր ողջ կյանքն անցկացրել է Վրաստանում, եղել է Վրաստանի մեծ բարեկամը, հրաշալի բանաստեղծություն է նվիրել վրաց պոետներին, թաղված է Թիֆլիսում, նրա նախկին տան պատին փակցված է հուշա-

տախտակ, Երևանի Թումանյանի թանգարանում վերականգնված է նրա թիֆլիսյան բնակարանի կատարելապես ճշգրիտ կրկնակը՝ համապատասխան կահկարասիով:

Անձանոթը մի քանի անգամ գույն տվեց, գույն առավ:

– Ի նշանավորումն Հովհաննես Թումանյանի հիշատակի,- շարունակեցի,- Շոթա Ռուսթավելու անվան վրաց գրականության պատմության ինստիտուտում անցկացվեց գիտական նատաշրջան: Թիֆլիսում և շրջաններում կազմակերպվեցին գրական երեկույթներ: Մեր ներկայացուցիչները մասնակցեցին հորելյանական հանդիսություններին թե՛ Երևանում և թե՛ Մոսկվայում: Եվ վերջապես, հորելյանական եզրափակիչ նիստը տեղի ունեցավ Թիֆլիսում՝ Ջաքարիա Փալիաշվիլիի անվան պետական ակադեմիական թատրոնի շենքում: Այդ նիստին ներկա էին հանդիսության բոլոր մասնակիցները արտասահմանից, միութենական հանրապետություններից և Հայաստանի մայրաքաղաքից:

Անձանոթը քար էր կտրել: Պարզորոշ զգացվում էր, որ նա ոչինչ չգիտեր Հովհաննես Թումանյանի՝ Վրաստանի հետ ունեցած առնչությունների մասին:

– Դուք ո՞վ եք,- հարցրեց ցածր ձայնով:

Չերկնչեցի ու պատասխանեցի.

– Ես պրոֆեսոր եմ, Վրաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, գրականության գիտահետազոտական ինստիտուտի տնօրենը:– Ներկայացրի նաև սեղանակից գործընկերներիս,- սա պրոֆեսոր Իլյա Թավաձեն է՝ թատերական ինստիտուտի տնօրենը, իսկ մյուսը Վահան Մամասախիսովն է, հանրահայտ գիտնական է, ֆիզիկոս, պրոֆեսոր, ակադեմիկոս: Մամասախիսովը վրացի գիտնական է, բայց ծագումով հայ է:

Վերջին խոսքերն առավել ևս զարմացրին անձանոթ երիտասարդին: Առժամանակ ապշահար նայեց մեզ, ապա մրմնջաց.

– Մամասախիսովը հայկական ազգանուն չէ:

Չբույցին խառնվեց Վահանը:

– Ճիշտ է,- բացատրեց նա,- *Մամասախիսով* (Մամասախիսի) բառը ստուգաբանորեն վրացական է: Ամենայն հավանականությամբ այդ ազգանունը պահպանել է գրիգորյանական հավատքի մեր վրացի նախնին:

Վահանը մեկ-երկու նախադասություն էլ հայերեն ասաց: Հայերեն խոսեց նաև տարօրինակ հյուրը: Նա ամբողջովին կոտոր ընկավ: Ո՞ւր մնաց նրա վեհանձն կեցվածքը, ամոթահար մարդու ժպիտ դրոշմվեց շրթունքներին: Այլայլվեց, այլևս չգիտեր՝ ինչ անի կամ ինչ ասի.

– Իսկ Դո՞ւք ով եք,- ես նույնպես սկսեցի հարցեր տալ:

– Կարևոր չէ,- մի քանի վայրկյան լռելուց հետո պատասխանեց, ապա ավելացրեց,- ես առևտրի ցանցի աշխատող եմ:

Այլևս ոչինչ չխոսեցինք, ոչ էլ անունը հարցրինք:

– Ներեցե՞ք, խնդրում եմ: Ես մի բոլորով թողնում եմ ձեզ... Իսկույն կգամ:

Իրոք, երկու բոլոր չանցած, վերադարձավ բարեկամական ժպիտը դեմքին: Հայկական լավագույն մականիշի մի շիշ կոնյակ դրեց մեր սեղանին:

– Սա Հովհաննես Թումանյանի հիշատակին,- ասաց:

Մերժել չէր կարելի: Գավաթները լցրինք և անկեղծ սրտով խմեցինք հայ ազգային մեծ բանաստեղծի՝ Հովհաննես Թումանյանի կենացը:

Իսկ հեռու հորիզոնում մայր մտնող արեգակի վիթխարի կարմիր սկավառակը սուզվում էր օվկիանոսի մեջ:



ՎԱՍԻԼԻ ԲԱԴՅՈՎ (իսկական ազգանունը՝ Բարնավելի, 1856-1936), պատմավիպասան:

Ծնվել է Թեթրիձղարոյի շրջանի Կողա գյուղում: 1882 թ. ավարտել է Մոսկվայի հոգևոր ակադեմիայի պատմության բաժինը: 1880-1910-ական թթ. ակտիվ մասնակցել է վրաց ազգային-ազատագրական շարժումներին, թեև չի հարել որևէ կուսակցության: 1918-1924 թթ. մանկավարժական գործունեություն է ծավալել Սենակում, Թելավիում և Թիֆլիսում: 1921-1930 թթ. վրաց լեզու և վրաց գրականություն է դասավանդել Թիֆլիսի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում:

Վրաց պատմավեպի հիմնադիրներից է: Հատկանշական են՝ «Իսանիի արշալույսը» (1901), «Մեծ սովորով Գիորգի Սաակաձե» (1939) և այլն: Հեղինակ է բազմաթիվ բանաստեղծությունների և պատմվածքների ժողովածուների:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ³³

Հովհաննես Թումանյանին հեռվից հեռու էի ճանաչում՝ իր ստեղծագործություններից: Անձամբ հետո ծանոթացա: Հանդես էր կազմակերպել: Ներկա էին ընտրյալները: Գրողները գերազանցում էին: Խոսակցության առարկան խիստ մտահոգիչ էր՝ արվեստը:

Լսողություն դարձած հետևում էի տանտիրոջը: Ուշադիր զննում էի. նրբազգաց, խոհուն մարդ էր: Նրա թևավոր խոսքերին անբռնազբոս հետևում էր զգացմունքների հորձանքը: Ծանրութեթև էի անում նրա յուրաքանչյուր խոսքը...

Հենց սկզբից ինձ շատ դուր եկավ ճաշը...

Իսկ հետո՝...

Հիշատակում էին նրա գործունեությունը, գունագեղ գնահատանքով շոյում-փաղաքշում գրչով արտացոլած նրա իղձերը:

Դուռը բացվեց: Ներս մտան նրա դուստրերը: Յոթն էին տան մուսաները:

Ասացի. «Աշխատանքը պաշտող, անդադրում մարդ»:

Աղջիկներն իրենց շուրջը համախմբեցին պոեզիայի ասպետներին

և սկսեցին նորանոր գրույցներ:

Անապական վարք ու բարք: Յուրաքանչյուր խոսք թե շարժում՝ կիրթ, անթերի:

Եզրակացրի. «Այս մարդն ընտանիքի փառասեղ կամբջասյուն է»:
Ճաշ... Մի՞թե հաճախ է երանելի սեղան բացվում:

Խմիչք...

Նույնիսկ ամենախելացի աստվածները սեղան չէին նստում՝ ամբ-
րոս ընթողխնելու, եթե իրենց առաջ նեկտարով լիքը կուլաներ չէին
տեսնում:

Վերստին գրույցի բուն թեմա դարձան պոեզիան, բանաստեղծա-
կան արվեստը:

– Արվեստ... Ամեն ինչ ունայն է և անցողիկ: Անփոփոխ են միայն
արվեստը և նրա բարք: Այն վեհացնում, միշտ քաղցրացնում է մարդու
կյանքը: Այն ստեղծում է նորանոր աշխարհներ ու կյանք: Այն ապրում
է ստեղծագործողի վեհասքանչ պլանով. աշխարհում դեռևս ավարտ-
ված չէ նրա առաքելությունը:

Ծանր ու մութ է նյութի բուն էությունը: Այն չի կարող միաժամանակ
և ամբողջովին պարփակվել իր նախնական շրջանակներում...

Աստվածներն անկատար են և կոպիտ, նրանք ներկայացնում են
այդ անմասն գեղեցկության սկզբնական տեսքը... Եվ նա՝ անձանձիք
Արարիչը, հանգստանալով աշխարհի ստեղծումից, իր մոտ է հրավի-
րում ընտրյալներին և նրանց բաժանում ստեղծողի իր հոգին ու ազդա-
րարում՝ թող կատարյալ լինի սկսած բանն ի սկզբանե:

Եվ արվեստի քրմերն իրենց հոգու ուժով զգում են երկրի գեղե-
ցիկ, բարի ու ճշմարիտ էությունը և այն արտացոլում պատշաճ, սուրբ
պատկերներում, որպեսզի ուրախացնեն ու իմաստնացնեն անհա-
տին, ողջ ժողովրդին, մարդկությանը:

Այսօր մենք հավաքվել ենք այդ ընտրյալներից մեկի շուրջը:

Հատկապես արվեստն իր նկատմամբ մեծ սեր է պահանջում, ան-
սահման մվիրվածություն, քանզի հիմա՝ պատմական այս մեծ վերա-
փոխումներից հետո, այն դուրս է եկել մեծ ճանապարհ: Մինչև վեր-
ջերս լոկ ունևոր խավը հնարավորություն ուներ հաղորդակցվելու ար-
վեստին, հիմա ողջ ժողովուրդն է դուրս եկել այդ ուղին: Եթե ժողովրդի
մի շերտը շատ լավ տաղանդներ է տվել, ապա ժողովուրդն ավելի շատ
տաղանդներ կտա... Ընտրյալներն արդեն սպառել են իրենց հոգեհա-

րագատ նյութը, բայց չեն յուրացրել չափազանց հարուստ այն գանձը, որ ժողովուրդն է ամբարել իր ընդերքում:

Հենց ժողովրդի ծոցից ելած ստեղծագործողները պոեզիայի բնագավառ բերեցին այս նոր բովանդակությունը, և կփայլատակի նորացած արվեստը, ինչպես գարնանային արփին, և կչեղմանցնի երկիրը: Յուրաքանչյուրն այն կսփռի արվեստի երփներանգ ծաղիկներով:

Մեր տանտերը սքանչելի առաջնորդն է այս պայծառ բնագավառի: Նա իր ժողովրդի մեջ լայնորեն բացեց պոեզիայի դժվարին ուղին, և նոր սերունդը հեշտությամբ ու հաջողությամբ անցնում է այդ լուսավոր ճանապարհով: Լուսաբերն է, ջահակիրն իր ժողովրդի, ուրիշ ազգերի, համայն մարդկության:

Փա՛ռք ու պատիվ բոլորից ստեղծագործողին ընտրյալ:

Իր կենացը...

Բոլորն էին խոսում: Գեղեցկաթույր խոսքեր, թևավոր արտահայտություններ՝ հատված առ հատված... Պոեզիայի մեկնաբանություն՝ անհատ առ անհատ...

– Փնտրտուքը գեղեցիկի պոեզիա է, որն է ինքը՝ բարին, ճշմարտությունը...

– Ստվերների արարում, անհասանելի բաղձանքի կենդանի տեսիլք...

– Աշխարհում գեղեցկության մեկ Աստված գոյություն ունի, միայն մեկ՝ հասանելի և անհաս, առկա բոլոր հոգիներում, բոլոր ժողովուրդների մեջ ի տեսն յուր...

– Պոեզիան հավերժ սքանչելի Աստված է՝ մարդկությանը միավորող լուսեղեն ճառագայթներով... Պոեզիան ապագայի կրոնն է, հետագա սերունդների անփոփոխ հավատը...

– Ամբողջ աշխարհը և նրա բոլոր գոյերը արտահայտությունն են մեծ Արարչի, որ մարմնավորում է լույսն ամբողջությամբ...

– Մութը չի դանթում: Նա ցանկանում է խավարեցնել լույսը բոլոր մեծ ստեղծագործությունների մեջ... Պայքա՛ր անգիջում...

– Մենք բոլորս ասպետներ ենք խավարի դեմ պայքարում, լույսն առատ դարձնելու գործում, արևային գեղեցկության... Ճոճենք շողշողուն սուր, ցրենք խավարը,- գոչեց մեկը:

Եվ պարզեց իր սուտերն ընդդեմ խավարի...

Ափսո՛ս, որ միմյանց հնարավորություն չէին տալիս ավարտելու

խոսքը, էհ, ոչ էլ ես ժամանակ ունեի, ապշահար նայում էի, ունկնդրում:

Արծաթյա սափորը կլկլալով ձայնակցում էր սուփրայի վրա ներագրող երգին, բարձրասրունք սպասքը բազմացնում էր ձայնը: Ծաղկամաններում ժպտում էին ծաղիկները: Ծանրաբեռնված սեղանի ոտքը շարժվում էր այնպես, կարծես երաժշտական գործիքների ձայնի տակ պարելու փորձ էր անում:

Սի բան եմ միայն հիշում՝ մեր հրաշալի տանտիրոջը համբուրելով էինք հրաժեշտ տալիս:



Գ. ԲԵՏԱՆԻՇՎԻԼԻ, Վրացական ԽՍՀ վաստակավոր ինժեներ:

ՄԵՐ ԱՆՎԱՆԻ ՀԱՄԱՔԱՂԱՔԱՅԻՆ³⁴

Տարեց թիֆլիսցիներից շատերը լավ են հիշում գեղադեմ, ժպտուն Հովհաննես Թումանյանին՝ հայ տաղանդավոր բանաստեղծին, հասարակական նշանավոր գործչին, ժողովուրդների բարեկամության բոցաշունչ երգչին: Դիշտ է՝ նա Թիֆլիսում չի ծնվել, բայց իր կյանքի լավագույն տարիները մեր մայրաքաղաքում է անցկացրել: Հովհաննես Թումանյանը կրթությունն ստացել է Ներսիսյան դպրոցում, որը գտնվում էր այժմյան Կոլտնտեսականների հրապարակի մոտ: Այդտեղ 1912 թ. նա հիմնադրել է Հայ գրողների ընկերությունը, որտեղ երկու եղբայրական ժողովուրդների մտավորականներին մերձեցնելու նպատակով հայերի լսարանի առաջ վրաց գրականության մասին դասախոսություններ էին կարդում մեր գրողներն ու գրականագետները: Մինչև 1921 թ. ընկերության անփոփոխ նախագահը Հովհաննես Թումանյանն էր: Նրա բնակարանը, որ գտնվում էր ներկայիս Դավիթաշվիլի փողոցի թիվ 18 տան երրորդ հարկում, ժամանակին ուղղակի գրական սալոնի էր վերածվել:

Հովհաննես Թումանյանը բարեկամական սերտ կապեր ուներ վրաց առաջադեմ հասարակայնության, հատկապես՝ բանաստեղծների հետ: Վրաստանին նա ձոնել է մի քանի բանաստեղծություններ:

Դեռևս Թումանյանի կենդանության օրոք՝ 1922 թ., Թիֆլիսի քաղաքային խորհուրդը մայրաքաղաքի նախկին Արդության փողոցը, նրա նրբանցքն ու երեք փակուղիները կոչել է հայ մեծ բանաստեղծի անու-

նով: Այդ փողոցն սկիզբ է առնում Թոնեթի հրապարակից և, կտրելով Լեսեվիճեի փողոցը, հասնում է Սեռեխի կամրջի մատույցները: Այդ փողոցում, երկու եռահարկ շենքերից բացի, մյուսները երկհարկանի են: Դրանք քառասունհինգն են, ընդ որում, քսաներեքը կենտ են, քսաներկուսը՝ զույգ:

Փողոցի բազմաթիվ շենքեր զարդարված են միայն Թիֆլիսին հատուկ պատշգամբներով, որոնք շատ-շատերին են հրապուրում: Փողոցի երկարությունը երկու հարյուր մեկ մետր է, միջին լայնությունը՝ ութ մետր:

Հովհաննես Թումանյանի անվան փողոցի նրբանցքը և երեք փակուղիները մտնում են Կիրովի շրջանի տարածքի մեջ:

Ինչպես նշեցինք, բանաստեղծի բնակարանը (ներկայումս՝ Դավիթաշվիլի փողոց, թիվ 18, գտնվում է Կալինինի շրջանում) նաև վրաց գրականագետների ու բանաստեղծների հավաքատեղին էր: Մրտաբաց տանտիրոջ հետ գրուցում էին թե՛ գրականության և թե՛ բազմաթիվ կենսական հարցերի մասին:

Թիֆլիսի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեն այդ տան պատին հուշատախտակ է փակցրել, որի վրա հայերեն, վրացերեն և ռուսերեն գրված է. «Այս տանը ապրել է հայ մեծ գրող Հովհաննես Թումանյանը»:

1952 թվականից բանաստեղծի նախկին բնակարանում բացվել է Հովհաննես Թումանյանի անվան թիվ 16 մասսայական գրադարանը, որտեղ առատորեն ներկայացված են Հովհաննես Թումանյանի երկերը հայերենով և նրանց վրացերեն ու ռուսերեն թարգմանությունները:

Հովհաննես Թումանյանը թաղված է Թիֆլիսում՝ հայ գրողների և հասարակական գործիչների պանթեոնում: Նրա գերեզմանի մոտ հաճախ են հավաքվում բանաստեղծի տաղանդի երկրպագուները:



ԽՈՒՏԱ ԲԵՐՈՒԼՎԱԿ (1924-2004), բանաստեղծ, մանկագիր, քարգմանիչ:

Ծնվել է Ջուզղիդի քաղաքում: Սովորել է Սուխումի մանկավարժական ինստիտուտում: Բանաստեղծություններ տպագրել է 1941 թվականից: Բանաստեղծությունների առաջին ժողովածուն լույս է տեսել 1944 թ.:

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԵՃ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ³⁵

1969 թ. սեպտեմբերի 25-ին Կարմիր կամրջի մոտ՝ Հայաստանի և Վրաստանի սահմանին, հավաքվել էին Հովհաննես Թումանյանի հորեղյանական հանդիսության մասնակիցները: Հայ եղբայրների հետ եկել էին ռուս և ուկրաինացի բարեկամները, եղբայրական բոլոր հանրապետությունների ներկայացուցիչները:

Առաջինը խմեցին Հովհաննես Թումանյանի կենացը:

Թումանյանի հորեղյանը բնականաբար տեղափոխվեց Վրաստան՝ նրա մայրաքաղաք, որն այնպե՛ս ջերմորեն և ակնածանքով սիրում էր առաքինություն քարոզող բանաստեղծը:

Շարունակվում է Հովհաննես Թումանյանին նվիրված տոնահանդեսը, շարունակվում է վրաց հողում:

Հայ հանճարեղ բանաստեղծին նրա իսկ կենդանության օրոք առանձնակի սիրով էին վերաբերվում Վրաստանում: Ժամանակակիցներին քաջ հայտնի էին նրա մարդկայնությունը, բարեկրթությունն ու իմաստնությունը:

1913 թ. նրա ուղերձը վրաց ժողովրդին շատ սրտառույչ էր.

«Վրացի եղբայրներ, հնուց մեր եղբայրներ, տանջված եղբայրներ, քայք միշտ ազատ ու բարձր հոգու տեր եղբայրներ:

Եթե ժողովրդի գրականությունը նրա հոգու իսկական արտացոլումն է, և հոգու կրողը բանաստեղծն է, ապա ես հայության հոգին եմ

բերում ձեզ, որպես ամենաբարձրը, որ կարող է ունենալ ժողովուրդն ու մարդը:

Հիացմունքով վկայում եմ, որ վրացին երբեք հոգով չի ընկճվել և կովկասյան ժողովուրդների մեջ միշտ առաջինն է եղել իբրև քաղաքացի իր քաղաքական պահանջներով և հասարակական պայքարով:

Եթե մի հայացք ձգենք հարևանների փոխհարաբերության վրա ամբողջ աշխարհում, մենք չենք կարող չխոստովանել, որ վրացին, իբրև հարևան, ամենալավերից մեկն է եղել:

Եվ մեր մեջ կատեղծվի ավելի սերտ, մեծ հոգեկան ու կուլտուրական կապ: Մենք դեռ շատ գործեր ունենք միասին անելու: Մենք՝ կովկասյան ժողովուրդներս, եղբայրներ ենք հավերժ կողք կողքի, ինչպես մեր հայրենի լեռները՝ ամեն մեկն իր տեղում, իրենց շողշողուն գազաթնեքով միշտ կանգնած միմյանց թիկունքին և իրենց հիմքերով միացած:

Կեցցե՛ ժողովուրդների եղբայրությունը»:

Հովհաննես Թումանյանն ընդմիշտ մեր ժողովրդի սիրտը մտավ այն բանից հետո, երբ անմոռանալի Իոսեփ Գրիշաշվիլին վրացերեն հնչեցրեց հայ եղբոր անմահ բանաստեղծությունները, պոեմները, պատմվածքները:

Ո՞վ գիտե, թե երեխա ժամանակ քանի՛-քանի՛ անգամ ենք լաց եղել Գիքորի համար, քանի՛-քանի՛ անգամ ենք հուզվել Անուշի և Սաբրյի ճակատագրերի համար:

Հիշո՞ւմ եք՝ ինչպես է ավարտվում «Գիքորը» պատմվածքը. «Գյուղից դուրս կանգնած սպասում էին Նանը, Ջանին, Միկիչը, իսկ փոքրիկ Գալուն մոր գրկից կանչում էր. «Ալի՛, ալի՛, հե՛ Գիքոլ...»»:

Կամ էլ՝ տողեր «Անուշից».

Ա՛յ սև աչքերով,
Ա՛յ ծով աչքերով,
Ունքերդ կամար
Աղջիկ, քեզ համար:

Փա՛ռք Հովհաննես Թումանյանին:

Հայ ժողովրդի մեծ գավակը բոցաշունչ երգիչն էր ժողովուրդների եղբայրության ու բարեկամության: Աավածի վկայությունն է «Նվեր Վրաստանի բանաստեղծներին» սքանչելի բանաստեղծությունը, ասվածի վկայությունն են Հովհաննես Թումանյանի ամբողջ ստեղծագործությունն ու հասարակական գործունեությունը:

Փա՛ռք Հովհաննես Թումանյանին:



ԻՎԱՆԵ ԳՈՍՍԵՐԵՆԻ (1875-1938), բժիշկ, գրող, գրաքննադատ, հրապարակախոս, հասարակական-քաղաքական գործիչ:

Ավարտել է Թիֆլիսի 2-րդ գիմնազիան (1894), ապա՝ Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետը: 1901 թվականից մամուլում պարբերաբար հրապարակել է հոդվածներ բժշկական խնդիրների շուրջ: Գեմոկրատական հանրապետության տարիներին եղել է Վրաստանի ազգային խորհրդի, խորհրդարանի և հիմնադիր ժողովի անդամ:

«Հովհաննես Թումանյան» հոդվածը («Թատրի դա ցխովրեբա», 1924, թիվ 17, էջ 2-4) հայ բանաստեղծի «Ընտիր երկերի»՝ 1924 թ. վրացերեն լույս տեսած հրատարակության գրախոսականն է: Թարգմանել ենք առանց կրճատումների:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ³⁶

(Ի. Գրիշաշվիլիի թարգմանությունը)

Ռուսավելու պողոտայով անցնելիս երբեմն կհանդիպելիք մի ծերունու, որն ակամա գրավում էր ձեր ուշադրությունը:

Անհնար էր՝ անցնելիք կողքով և չնայելիք նրան. նրա ամբողջ արտաքինը, կոկիկ կազմվածքը, դեմքի արտահայտությունը ավելի քան հրապուրիչ էին իրենց բարեծնությամբ:

Ազնիվ, կիրթ, զուլալ, բոլորի հանդեպ սիրալիր ու անկեղծ. ասիա թե ինչ կկարդայիք նրա աչքերում, ասիա թե ինչ էր վկայում նրա դեմքի յուրաքանչյուր մկանը:

Ռուսավելու պողոտան այսօր որբացել է. նրան այլևս չի զարդարում բարի, վեհազնիվ և փառահեղ ծերունին: Մենք բոլորս զգում ենք այդ որբությունը, այդ մեծ ու անփոխարինելի կորուստը:

Ո՞վ էր այդ ծերունին:

Հովհաննես Թումանյանը:

Բանաստեղծն էր նա իր մայր ժողովրդի ցավերի, նրա հոգու արտահայտիչն էր, նրա հոգսերի երգիչը, նրա վշտերի կարեկիցը:

Նա հավասարապես սիրելի էր նաև մեզ համար, քանզի նա ինքը

Վրաստանն ընդունում ու սիրում էր որպես երկրորդ հայրենիք:

Վրաստանի արևը, գեղեցկությունն ու զգացմունքների հարստությունը հավելուորով ներկայացված են նրա քնարերգության մեջ:

Ելնե՛նք՝ տեսով ու ճանանչով,
Ընկեր, ախպեր, մեր ու քուր՝
Մեր քյանանչով, ուրախ կանչով
Գընանք դեպ կյանքն ընդհանուր:

Սա էր Հովհաննես Թումանյանի երազանքը:

Վրացիներն ու հայերը, Վրաստանն ու Հայաստանը նրա համար հավասարապես թանկ էին: Նրա ցանկությունն էր այս երկու ազգերի միջև ստեղծել եղբայրական օջախ, և հենց սրա համար էր անմնացորդ մարտնչում, անկեղծ պատգամախոսն էր եղբայրության, միասնության և ազգային համերաշխության.

Գանձեր ունեմ անտա՛կ, անծե՛ր.
Ես հարուստ եմ, ջա՛ն, ես հարուստ,
Ծով բարություն, շընորիք ու սեր
Շոխ պարզ և առել վերուստ:

Այս խոսքերը հայելին են Հովհաննես Թումանյանի էության, միևնույն ժամանակ՝ բանալին նրա ամբողջ ստեղծագործության:

Բանաստեղծը զավակն էր իր ժողովրդի՝ աշխատավոր ժողովրդի ծոցից ելած, և նա ոչ միայն երբեք չխզեց կապը ժողովրդի հետ, այլև իր ստեղծագործությամբ, իր ողջ էությամբ ու հանճարով նվիրվեց նրա բախտը կռելու գործին.

Ես հարուստ եմ, ես բախտավոր
Իմ ծննդյան պայծառ օրեն,
Էլ աշխարհ չեմ գալու հո նոր,
Իր տրվածն եմ տալիս իրեն:

Սիրով ու բարությամբ լի մարդու համար ստեղծագործության անսպառ աղբյուր և միաժամանակ ամենից ավելի հրապուրիչ կարող է լինել տանջված ժողովրդի բախտը:

Հովհաննես Թումանյանի մեծությունը հենց այն է, որ միշտ իր տառապյալ ժողովրդի հետ է, միշտ աշխատավոր մարդկանց երգիչն է, և նրա ստեղծագործությունն էլ սերտորեն կապված է աշխատավորական խավերի ստեղծագործության հետ:

Հովհաննես Թումանյանը արևածագի լրաբերն է, աշխատավոր

ժողովրդի պայծառ ցայգալույսն ավետողը: Իր ողջ էությամբ նա տենչում և երգում է այդ շողշողուն այգաբացը, քանզի գմայլված պատգամախոսն է աշխատավոր ժողովրդի ազատագրության:

Հովհաննես Թումանյանի քնարերգությունը համեմված է նուրբ, քաղցրանուշ, արցունքներով շաղախված տրտմությամբ, բայց ներսում փթթում է հույսի ու լույսի ծաղկեփունջը:

Բանաստեղծը գույգ ոտքով ամուր կանգնած է հայրենի հողի վրա, և հողը սնում է նրան իր կաթնառատ ստինքներով:

Քաղաքն իր բարդ և արագաքայլ կյանքով, իր անդադրում և անսանձահարելի ընթացքով շատ չէր հրապուրում Հովհաննես Թումանյանին:

Գյուղ, գյուղաշխարհ, գեղջուկ, գյուղական բնություն՝ ահա բանաստեղծի ճակատագիրը: Եվ հենց այս ոլորտում Հովհաննես Թումանյանն իսկապես գեղեցիկ է, հմայիչ, ակնապարար, բնական և հզոր:

Հովհաննես Թումանյանը մեծագույն գեղագետ է. գեղեցիկը՝ նախ և առաջ: Փոքրիկ մի բանաստեղծություն վերցնեք, որևէ լեզենդ, պոեմ թե պատմվածք, միևնույն է, գեղեցկությունն է թովում ու ջերմացնում ձեզ:

Հովհաննես Թումանյանը մեծ ռեալիստ է. իսկական կյանքը՝ նախ և առաջ: Նրա թեմաների գերակշիռ մասը իրական կյանքից է առնված: Գյուղացին և նրա վզից կպած տգրուկ վաշխառուն, չքավորությունն ու հարստությունը, կեղեքվողն ու կեղեքողը, բռնությունն ու անարդարությունը՝ ահա այն գույները, որ նա օգտագործում է իբրև գեղանկարիչ:

Հրաշալի են Հովհաննես Թումանյանի պատմվածքները, որոնք ներկայացնում են իրական կյանքի հայելին: Գեղարվեստական չափանիշները, կենսունակությունն ու պարզությունը, հրաշալի պատկերներն ու գույալ, ազնիվ մղումները միասին ուժեղ և անմիջական ազդեցություն են թողնում:

Հովհաննես Թումանյանի ստեղծագործության գլուխգործոցը «Անուշ» պոեմն է: Այստեղ գյուղական ողջ կյանքն ու բնությունը, նրա ուրախությունն ու տրտմությունը, վարք ու բարքը, հոգսերն ու սովորույթները պատկերված են ապշեցուցիչ գույներով և բանաստեղծական եզակի վարպետությամբ:

«Անուշը» եզակի սիմֆոնիա է, որն իր գեղեցկությամբ փառավորում է մարդու հոգին և ջերմացնում սիրտը:

Բանաստեղծ Իոսեփ Գրիշաշվիլին Հովհաննես Թումանյանի հարազատ կրկնակն է: Նրա թարգմանությունը թարգմանություն չէ. նույն բնագիրն է: Երբ դուք կարդում եք Գրիշաշվիլիի թարգմանությունը, ձեր առջև Հովհաննես Թումանյան վրացերեն երգիչն է, և համոզվում եք, որ այստեղ ոչ մի թարգմանություն չկա. ինքը՝ Հովհաննես Թումանյանն է գրում վրացերեն:

Գրիշաշվիլիի բառամթերքն ավելի քան հարուստ է, խոսքը նրան շատ հնազանդ է, և հանգավորումն էլ հրաշալի է կատարել:

Գրիշաշվիլին մեծ բանաստեղծ է, նրա «Հովհաննես Թումանյանը»՝ մեծ հաղթանակ:

ՎԱՍՈ ԳՈՐԳԱՉԵ, բանաստեղծ, քարգմանիչ, հասարակական գործիչ:

ՀԱՅՈՑ ԼԵՈՆԵՐՈՒՄ³⁷

(Հովհաննես Թումանյանի հիշատակին)

Ձիգ էր ձեր ճամփան:

Տաք անապատում

Ձեր վերքերից արյան ծով էր լերդացել:

Մահվան տեսիլքն էր ձեզ հետապնդում:

Հոգնած էր, հյուծված ձեր քարավանը ձեր,

Բայց ապագայի հույսը՝ ձեր սրտում,

Ու նախնյաց ուխտն էր սրբությունը ձեր:

Վառ արշալույսն էր ձեզ առաջնորդում

Ու հաստատ քայլքով ձեզ տանում ի վեր

Հայոց լեռներում,

Միգոտ լեռներում:

Տանջանք, տառապանք... Ձեր հող ու ջրին

Հրդեհ էր բերում անիրավ հորդան

Ու չքնադագեղ հայ աղջիկներին

Գերում տանում էր դուռն ատելության:

Ողբ էր ողջ երկրում, բայց պողպատակուռ

Սասունցիների գարնը քաջաբար

Ցասմանը առնում էր հրազեն ու թուր,

Կռվում, որ ապրի հայ ազգն արդար

Հայոց լեռներում,

Արնոտ լեռներում:

Եվ դու էլ ասես այդ քարավանում

Գուրգուրում էիր հարազատ մարդկանց.

Ընթոստ պայքարի կոչ էիր անում

Հայրենի երկրիդ վերքերով խոցված:

Իմ երկրում էլ էր քո շունչը բուրում.

Չէ՞ որ այն երկրորդ հայրենիքն էր քո:

Սիրտդ Վրաստանն այնպես էր սիրում,
Որ ճեմում էիր բիլ երազանքով
Հայոց լեռներում,
Կապույտ լեռներում:
Բանաստեղծական ամեն տողիդ մեջ
Քեզնով էր բուրում ծաղկունքը գարնան.
Սեզ Արարատից բերել էիր մեզ
Սրտի թրթիռներ բարեկամության:
Դու երգիչն էիր մեր եղբայրության
Ու ճերմակազարդ մեր Կովկասիոնի.
Անմահ երգերիդ սիրով անսահման
Մեր հոգին լի էր հանդեսով տոնի
Հայոց լեռներում,
Զմրուխտ լեռներում:



ԻՈՍԵՔ ԳՐԻՇԱՇՎԻԼԻ [իսկական ազգանունը՝ Մամուլաշվիլի (1889-1965)], բանաստեղծ, գրականագետ, պատմաբան, քարգմանիչ, բանահավաք, հուշագիր, հասարակական գործիչ, Հայկական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1945), Վրացական ԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1947), ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր (1950), Վրաստանի ժողովրդական բանաստեղծ (1959):

Իոսեք Գրիշաշվիլին ծնվել է 1889 թ. Թիֆլիսում՝ արհեստավորի ընտանիքում: Գրական ասպարեզ է իջել 1904 թ.: 1906 թ. լույս է ընծայել բանաստեղծությունների առաջին գիրքը՝ «Վարդերի փունջ», 1907 թ.՝ երկրորդը՝ «Ֆանտագիա», 1908 թ.՝ երրորդը՝ «Ջուռնալ», 1910 թ.՝ չորրորդը՝ «Երագ համբույր»: 1922 թ. տպագրել է բանաստեղծությունների ևս մեկ ժողովածու, իսկ 1939 թ.՝ «Նոր բանաստեղծություններ» խորագրով գիրքը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ³⁸

Եվրոպայի գրողներին՝ լավ թե վատ, գրեթե բոլորին գիտենք կամ ձգտում ենք իմանալու... Այս բնագավառում հետ մնալը ամոթալի ենք համարում, իսկ ահա սեփական գրականությունից անտեղյակությունը չենք պարսավում: Առավել ևս չենք ճանաչում մեր դրկից հարևաններին, որոնք թե՛ աշխարհագրական և թե՛ պատմական առումով այնքան մոտ են մեզ:

Հայ գրականությունը, ինչպես նաև արևելյան մյուս ժողովուրդների մտքի արգասիքը պակաս հետաքրքիր չեն:

Հայ մոր գրականության կոհորտայում Հովի. Թումանյանը ճերմակահեր վարպետաց վարպետներից է: Հայ ազգի ներումակ ուժը լավագույնս դրսևորվել է Հովհաննես Թումանյանի քնարերգության մեջ: Նա մի ամբողջ դարաշրջան բնորոշող բանաստեղծ է:

Նրա տաղանդը, որ ուղղակի հողից է բխում, յուրահատուկ է և գերծարհեստականությունից: Նա բոլորովին մնան չէ Կոիլովի այն գեղջուկին, որը ճանապարհին ոսկի է գտնում և այնքան շփում, որ կշիռը պակասեցնում է: Հովհաննես Թումանյանը գիտեր իր կշիռն ու արժե-

քը: Նա չէր պատկանում գրականության մեջ տարածում գտած որևէ փայլուն ուղղության և բնական ինտուիցիայի շնորհիվ լրացնում էր որոշ պակասություններ:

Հովհաննես Թումանյանը ծնվել է 1869 թ. Գսեղ գյուղում (Լոռու գավառ): Տառաճանաչ է դարձել նույն գյուղի տիրացուի մոտ, որը, ինչպես խոստովանում է բանաստեղծն ինքը, ավելի շատ «երկաթե գավազանով» էր սովորեցնում, քան խոսքերով: Այս առաջին աստիճանից նա անցնում է Ջալալօղլիի դպրոց, որտեղից էլ տեղափոխվում է Թիֆլիս՝ Ներսիսյան անունը կրող սեմինարիա: Նյութականի պատճառով բանաստեղծը շուտով ստիպված թողնում է ուսումը և սկսում գոյությունը պահպանելու համար որևէ աշխատանք փնտրել... Բայց աշխատանքը նրա սրտով չէր. հասարակ գրագրի պաշտոնը նրան չէր բավարարում: Ծնողները ցանկանում էին, որ իրենց որդին քահանա դառնա (Հովհաննեսի հայրը՝ Տեր-Թադևոսը, քահանա էր), մինչդեռ բանաստեղծը գերադասեց ազգին նվիրվել... Այդ ժամանակ նա գյուղից էր օգնություն ստանում, «մի կտոր հաց» միշտ ուներ, և դա նրան հնարավորություն էր ընձեռնում, որ լիովին նվիրվի ինքնակրթությանը: Ոտանավորներ սկսել է գրել վաղ հասակից: Դեռևս աշակերտ ժամանակ նա հայտնի էր իբրև լավ բանաստեղծ: Աստիճանաբար այնպես է վարժվում ընթերցանությանը, որ սկսում է բնագրից ռուս նշանավոր բանաստեղծների երկերը թարգմանել: Հատկապես սիրում էր Պուշկինին և Լերմոնտովին (նրա բանաստեղծությունների ժողովածուում գետեղված են Պուշկինի «Ջրահեղձը», Լերմոնտովի «Մծիրին», Բայրոնի «Շիրինի կալանավորը», Կոլցովի «Գեղջուկի մտածումները» և այլն):

Հանգուցյալի երազանքն էր. «Ապաքինվելուն պես անպայման պիտի թարգմանեն Ռուսթավելի, Ֆիրդուսի և Հոմերոս»:

Հովհաննես Թումանյանը վախճանվեց 1923 թ. մարտի 23-ին Մոսկվայում, ուր նա մեկնել էր բուժվելու (քաղցկեղ ուներ): Հանգուցյալի դին Մոսկվայից տեղափոխեցին Թիֆլիս, և հայ հասարակությունը մեծ հանդիսավորությամբ ապրիլի 15-ին հուղարկավորեց նրան Խոջիվանքի գերեզմանոցում (նա ընդամենը 54 տարեկան էր)²⁴:

²⁴ Բանաստեղծի մանրամասն կենսագրությունը հայերեն չկա, այդ պատճառով ես ստիպված եմ բավարարվելու այսչափ սահմանափակ տեղեկություններով: Արդեն հավաքվում են նրա կենսագրական տվյալները (նաև տարբեր գործիչների

Իր ստեղծագործություններում Հովհաննես Թումանյանը ժողովրդական խոհեր է արծարծում: Նա, իր ժողովրդի հեքիաթներն ու լեգենդները բանաստեղծական կադապարի մեջ դնելով, հագեցրեց խոր իմաստով և բովանդակությամբ:

Նրա լեզուն փափուկ է, ինչպես թավիշը, և կարծր է, ինչպես մարմարը:

Հայոց գրական լեզվին բնորոշ է երկու ուղղություն՝ գրաբար (հին հայերեն) և աշխարհաբար (նոր հայերեն): Հայ դպրության համակողմանի ուսումնասիրությունն այլ գիրք է պահանջում: Ասենք, սակայն, որ նրա սկզբնական շրջանի գրվածքներում կրոնական տարրերը գերակշռում էին:

Հայ ազգային գրականության պիոները, բացառությամբ աշուղների, Խաչատուր Աբովյանն է²⁵: Իր երկերում նա առաջինն արշավեց գրաբարի դեմ, որ մատչելի էր սոսկ հոգևորականներին և «մեկ տասնյակ ուսումնականների»:

«Ախր որ ազգը էն լեզվովը չի՛ խոսում,- հանդիմանում էր Աբովյանը որոշ գրագետների,- էն լեզուն չի՛ հասկանում, սաքի հենց բերնիցդ էլ ոսկի վեր ածի՛ր, ո՞ւմ պետք է ասես... Թեկուզ ուներեն, նեմեցերեն յա ֆրանցուզերեն գրած, թեկուզ գրաբար»:

Սայաթ-Նովայից հետո սա գրական երկը հանրության լեզվով տարածելու երկրորդ փորձն էր:

Հետագայում լեզուն աստիճանաբար հղկվեց... Նետված սերմն իր պտուղը տվեց: Ի հայտ եկան մի շարք գրողներ, որոնք հաճույքով ոտք դրեցին Խաչատուր Աբովյանի բացած արահետին: Պատկանյանը, Բաֆֆին, Շիրվանզադեն, Ահարոնյանը, Հովհաննիսյանը, Ծատուրյանը, Հովհաննես Թումանյանը, Դեմիրճյանը և ուրիշներ իրենց ստեղծագործությունները զիտակցաբար գրեցին նոր գրական լեզվով, լեզու, որ հասկանալի ու մատչելի էր բոլորին:

հուշերը), ուստի կաշխատեմ երբևէ բանաստեղծի կյանքի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ մատուցել նաև մեր ընթերցողներին (ծնթ.՝ հեղ.):

²⁵ Խաչատուր Աբովյանը (1804-1848) բազմահմուտ էր և խորագիտակ, տիրապետում էր եվրոպական մի քանի լեզուների, գրել է Հայաստանի վեպ-էպոպեան՝ «Վերք Հայաստանին», որի տպագրությունն իր կյանքի օրոք չհասցրեց իրականացնել: 1848 թ. մի առավոտ (ապրիլի 2-ին) դուրս է եկել տնից և մեր Մաչաբեղիի նման անհետ կորել (ծնթ.՝ հեղ.):

Պատկանյանի գրքերից մեկի վրա իբրև բնաբան գրված են Կամազիհի խոսքերը, որոնք ազդարարում են. «Գրի՛ր այնպես, ինչպես խոսում են, և խոսի՛ր այնպես, ինչպես գրում են»²⁶:

Հովհաննես Թումանյանը հայտնի էր ինչպես այստեղ, այնպես էլ Արևմտյան Հայաստանում: Նա իր ժողովրդի մեջ մեծ հեղինակություն էր վայելում. բոլորը հարգանքով էին ունկնդրում նրա կարծիքը... Նա հարևան ազգերին համերաշխություն բերող սուրբ միջնորդ էր, միաժամանակ նա սիրում էր իր ժողովրդին: Մի անգամ՝ իր գրական երեկոյի ժամանակ, ասաց. «Չկա մի այնպիսի ժողովուրդ՝ մեծ թե փոքրաթիվ, բարձր մշակույթի տեր թե առանց մշակույթի, որի հանդեպ ես բացասական վերաբերմունք ունենամ, բայց իմ հարազատ ժողովրդին ես բարձր եմ դասում, որովհետև մեծապես գնահատում եմ նրա մեջ կուտակված ստեղծագործական ուժը և բարոյական արժանիքները»:

Պակաս չէր սիրում նաև Վրաստանն ու նրա մայրաքաղաքը: Գարիբեյ Սունդուկյանի նման նա ևս կարող էր ասել. «Մենք՝ Վրաստանում դաստիարակված հայերս, վրաց հողով ենք հասակ առել»:

Հովհաննես Թումանյանը վրաց մշակույթի անկեղծ բարեկամն էր, նրա վեճամասերը ասպետը: «Հնուց հենց մի ուղի ենք ունեցել, մի մշակույթ է ծաղկել մեր մեջ, նաև մի ապագա ունենք», - հաճախ ասում էր հանգուցյալը:

Հովհաննես Թումանյանը Վրաստանի համար «անառակ» որդի չէր: Հարազատ որդին էլ այնքան բուռն չէր կարող սիրել մեր առանձնահատկությունները, ինչպես հանգուցյալն էր սիրում: Վրաստանի՝ և՛ անցյալը, և՛ ներկան, և՛ ապագան հայ բանաստեղծի հոգում լուրջ ար-

²⁶ Հատկանշական է, որ վերոհիշյալ բոլոր գրողներն անդրադարձել են իրենց ժողովրդի արյունոտ անցյալին, փառաբանում են զոհված մարտիկներին և ողբում «սաղավարտագուրկ» հայրենիքը (Պատկանյան, «Արաքսի արտասուքը»), ոմանք խորհրդանշիշներով արտացոլում են Արևմտյան Հայաստանի մոճավանջային կացությունը (Ա. Մհարոնյան), ոմանք նույնիսկ խարազանում են իրենց իսկ ժողովրդին (Բաֆֆի, «Խենթը») և այլն: Ահա այս գրողներն իրենց հայրենիքի իրականությունն այնպիսի գույներով են ներկայացնում, որ նրանց գրվածքներն այսօր էլ ծփում են համաշխարհային գրականության անդաստանում (մինչդեռ աշուղների երգերում սիրո թեման է գերիշխում): Ինչ վերաբերում է նոր գրողներին, ապա նրանց թիվը շատ փոքր է, եղածները՝ գրեթե բոլորը (Տերյանից բացի), կույր հետևորդներն են հիշատակված բանաստեղծների: Այլ ուղղություններից կարելի է նշել Հակոբ Հակոբյանին (իբրև պրոլետարական բանաստեղծ), Կարա Դարվիշին (իբրև ֆուտուրիստ), կանանցից՝ Լեյլիին, իսկ վերջին շրջանի գրողներից՝ երիտասարդ Չարենցին... (ծնթ.՝ հեղ.):

ձագանք էին գտնում... Դրա ապացույցն է նրա «Նվեր Վրաստանի բանաստեղծներին» սքանչելի բանաստեղծությունը:

Մի անգամ նա գրել է. «Հին Թիֆլիսը, Սայաթ-Նովայի նման թեև սինթեզ է արևելյան շատ ժողովուրդների կյանքի և հոգևոր հզորության, այնուամենայնիվ, գերազանցորեն կրում է վրացական ոգի... Բանաստեղծական բնավորությունն այնքան է հատկանշական վրացուն, որ ամեն մի վրացի ինձ թվում է բանաստեղծ: Սա վրացուն դարձնում է գրավիչ նույնիսկ իր թշնամիների համար»: Նրա դուստրը մեզ պատմեց բնորոշ մի դեպք: Երբ բանաստեղծը Մոսկվա է մեկնում բուժվելու, բնակարան է վարձում մի փողոցում, որը կոչվում էր «Грузинский переулок»: «Հայրիկիս ոգևորությանը սահման չկար, որ Ռուսաստանում ևս վրացական փողոցում էր բնակվում», - պատմում էր բանաստեղծի դուստրը՝ Նվարդը:

Հովհաննես Թումանյանի գրվածքները ներծծված են համամարդկային գաղափարներով. հայրենի հողի հանդեպ սեր և ժողովրդի ազատագրում՝ ահա նրա բանաստեղծության հիմնահարցը:

Հովհաննես Թումանյանը հազվագյուտ անբասիր մարդ էր, սիրո մարմնացում: Նրա սերն այն փուշը չէր, որը երկու հարազատ հոգիների բաժանում է միմյանցից:

Հովհաննես Թումանյանն ազնվորեն աշակերտեց Սայաթ-Նովային և նրա սիրով սինթեզեց համաշխարհային բարձր մշակույթը: Բայց նա իր ատելության ամբողջ պաշարն էր բացում, երբ ինչ-որ մեկի կողմից խարդավանք էր նկատում: Դատափետում էր խռովություն ու թշնամանք հրահրողներին, բոլոր այն զբոսաշրջիկներին, ովքեր գալիս էին Անդրկովկաս և ոչ ճիշտ տեղեկություններ հրապարակում եվրոպական մամուլում:

Մի անգամ, լավ չեն հիշում, ձեռքում բռնել էր Գևորգ Բրանդեսի նոր լույս տեսած «Армянский вопрос» գրքույկը, որտեղ, ի միջի այլոց, գրված էր. «...Քրիստոսի ծննդից հետո երկու հարյուր տարվա ընթացքում Հայաստանը կառավարել են պարթևական (парфянские) թագավորները, որոնք հայացան: Հավանական է, որ Բագրատունյաց տոհմի նշանավոր արքաները հայացած հրեաներ լինեին, թեև սա պատմականորեն ապացուցված չէ»:

«Տո՛ լավ մարդ, թե որ ապացուցված չէ, հանգիստ մնա տեղդ էլի», - բացականչեց Հովհաննեսը:

Չէր հավանում նաև Պլատոն Իոսելիանիի «Աներեսներն ու անհացները», «Քարերի աղաղակին» էլ անդրադարձավ «չափազանցության համար»:

Ես ոչինչ չպատասխանեցի: Ի պատասխան՝ բուխարիում կրակը ճքճքաց: Մենք սեղան նստեցինք և, պարսկական անուշահամ միրգ վայելելով, սկսեցինք մեր սովորական լեզվով խոսել հին Թիֆլիսի աշուղների մասին:

Ինձ և Հովհաննես Թումանյանին Սայաթ-Նովան բարեկամ դարձրեց: Պատահական չէր Հովհաննեսի սերը Սայաթ-Նովայի նկատմամբ: Հովհաննես Թումանյանն էլ իսկույն լծվեց պոեզիային, և երկու բանաստեղծների խառնվածքն ու ճկունությունը այսօր էլ հիացնում են գրականության բարեկամներին...

Հենց միայն ի՞նչ արժե այն, որ Հովհաննես Թումանյանը՝ իբրև Կովկասի Հայոց գրական ընկերության նախագահ, ստանձնեց Սայաթ-Նովայի հուշարձանը կանգնեցնելու գործը: Դա տեղի ունեցավ 1914 թ. (քննադրում՝ 1915 թ. – Հ. Բ.): Տոնական այդ օրը՝ իբրև հին Թիֆլիսի հարության խորհրդանիշ, ամենայն հավանականությամբ, այժմ էլ շատերն են հիշում:

Չարմանալի ֆենոմեն էր Սայաթ-Նովան... Իմ մենագրությունը գլուխ բերելու գործում քիչ չէր հանգուցյալի ծառայությունը, քանի՜-քանի՜ զիշերներ ենք լուսացրել: Մի անգամ Հովհաննեսը հիվանդ էր, բժշկին էր սպասում, բայց ես բացեցի դուռը:

Ի՞նչ կոնիմ հեքիմն, ի՞նչ կոնիմ ջարեն.

Քու տվածն ուրիշ դիդ է, ուրիշ դիդ...

Դիմավորեց Սայաթ-Նովայի հանրահայտ բանաստեղծության տողերով և իրեն հատուկ ժպիտով արոռ առաջարկեց:

Ես երբեք չեմ մոռանա այդ ժպիտը:

Հովհաննես Թումանյանի գրիչը պատկերում է գյուղական կյանքից առնված իրական դեմքեր: Խուսավում էր քաղաքային մոտիվներից: Նա մի հրաշալի պատմվածք ունի գյուղացի երեխայի կյանքից՝ «Գիքորը»: Նրանում գեղարվեստական ընձեռնված միջոցներով պատկերված է գեղջուկ պարզամիտ երեխան, որի կենսական ուժը շահագործում է քաղաքացի վաշխառու աղան: Երեխաներն այսօր էլ առանց արցունքի չեն կարողանում կարդալ այդ պատմվածքը:

Գեղեցիկ ոճով է գրված մեկ այլ պատմվածք որսորդների կյան-

քից՝ «Եղջերուն»։ Այստեղ բանաստեղծի նուրբ հոգին ըմբոստանում է մարդկային բռնադատության դեմ՝ ի պաշտպանություն անտառում ազատորեն ապրող անմեղ կենդանիների։ Պատմվածքում ընդամենը մի քանի ուրվագծերով պատկերված են բնության սքանչելի տեսարաններ։

«Ահմադը» հեղինակի անճանական հուշն է իրենց օջախի անցյալից։ Ճիշտ է այս օրագիրն ընդամենը երկու էջ է, բայց շատ բնորոշ է երկու ժողովուրդների «թշնամական» հարաբերությունների անհաճո հետևանքների պատկերման առումով։

«Քաջ Նազարը» հեքիաթ է և կառուցվածքով նման է մեր «Նացարքեքիային»։ Այս պատմվածքը պարզ ցույց է տալիս, թե ինչպես է ձևավորվում «հասարակական կարծիքը», և ինչպես կարող է ողորմելի, տգետ և թշվառ մեկը լավ համբավի շնորհիվ մեծ պաշտոնի հասնել։

Բայց Հովհաննես Թումանյանի գլուխգործոցը «Անուշն» է։ «Անուշը» քնարական պոեմ է, սիրո նրբին մի համանվագ։ Այս երկուն պատկերված են գյուղի սովորույթները, նրա հոգսն ու ուրախությունը, թշնամությունն ու բարեկամությունը, կուսական բնությունը, հանդիսությունները, հարսանիքը, կոխը... Կարճ ասած՝ այս պոեմում գյուղը պատկերված է իր ամբողջ կոլորիտով և բնական տեսքով։ Անկասկած, այլազգի ընթերցողը հայկական գյուղի էությունն այս պոեմում ավելի դյուրին կյուրացնի, քան, ասենք, հաստափոր գրքեր կարդալով²⁷։

Հովհաննես Թումանյանի թեմաները ծանրաբեռնված չեն չափազանցված զգացումներով։ Նա իր ժողովրդի անցյալին նրբանկատորեն է անդրադառնում և երբեք անտեղի չի փորփրում հայոց վերքերը, ինչպես դա անում են նրա գրչակիցներից ոմանք։ Նրա թախիծը համաշխարհային թախիծ է, որ հավասարապես առնչվում է բոլոր ճնշվածներին...

Նախորդ բանաստեղծները, գտնվելով պարտադրված գաղափարների ազդեցության տակ և լինելով փոքր-ինչ կանխակալ, պակաս ուշադրություն էին դարձնում նաև բանաստեղծության արտաքին ձևին, նրա տեխնիկական կառուցվածքին։ Ինչ խոսք, նրանց գործերում շատ գլուխգործոցների ենք հանդիպում, բայց և այնպես դրանց միա-

²⁷ «Անուշի» հիման վրա, ի դեպ, նկարահանվել է գեղ[արվեստական] ֆիլմ, գրվել է նաև օպերա (ծնթ.՝ հեղ.)։

տեսակությունը, թեկուզև մասնակի, արդյունք է հիշյալ երևույթի:

Ճիշտ է՝ Հովհաննես Թումանյանի սկզբնական շրջանի բանաստեղծություններում պակասում են ձայնավորների դիմամիկան և գեղարվեստական կոնցեպցիան, բայց նրա տաղանդն աստիճանաբար թափ առավ և դարձավ գունեղ, հայրենի եզերքի տեսարանները, մանկական հիշողությունները, հարազատ Լոռվա լեռնաշխարհը, ժողովրդական լեզենդները և այլն կրկին վերակենդանացան նրա հարուստ հիշողության մեջ և անմահության թավիշով ծածկվեցին:

Նրա բանաստեղծության ձևը հավասարազոր է բովանդակությանը: Իբրև բնորոշ օրինակ վկայեմ «Փարվանան», որտեղ հոգու հավերժական փնտրտուքը (անշեջ հուր փնտրելու գնացած ասպետները) արտացոլված է առասպելական գեղեցիկ խորհրդանիշով... Այդուհանդերձ.

Ու այրվում եմ, այրվո՛ւմ անվերջ

Կտրիճները Փարվանա:

(«Փարվանա»)

Հեքիաթը՝ ժողովրդական կոլեկտիվ ստեղծագործությունը, Հովհաննես Թումանյանն իր տաղանդի շնորհիվ վերստին հեքիաթ դարձրեց: Նա՝ իբրև ժողովրդի զավակ, իր էության մեջ պահպանում էր նույն այդ ժողովրդի ոգին. ահա թե ինչու իր բանաստեղծություններից մեկը այսպես է եզրափակում.

Ես հարուստ եմ, ես բախտավոր

Իմ ծընրնդյան պայծառ օրեն,

Էլ աշխարհ չեմ գալու հո նոր,

Իր տվածն եմ տալիս իրեն:

(«Իմ երգը»)

Վերցրե՛ք թեկուզ «Շունն ու կատուն» մանկական փոքրիկ լեզենդը, որը նրա ամենավաղ շրջանի գործերից է (գրել է 1886 թ.): Այստեղ նուրբ հուճորով և սրամտորեն պատկերում է կատվի և շան պատմական անհաշտությունը... Համարձակ կարելի է ասել, որ Հայաստանում չկա մի աշակերտ, որ անգիր չիմանա այս ոտանավորը...

Իսկապես, նրա լեզենդները դաստիարակչական մեծ նշանակություն ունեն: Այս առումով Հովհաննես Թումանյանը մեր թանկագին Ակակի Ծերեթելիին է հիշեցնում...

Ուզում եմ հիշատակել նրա հեքիաթներից մեկը՝ «Անբախտ վաճա-

ռականները», որ մանկուց գիտեմ:

Չղջիկն ու ճայր հանդիպում են և որոշում վաճառական դառնալ: Խելք խելքի են տալիս, պայման դնում, բայց՝ փո՞ղ: Ումի՞ց, որտեղի՞ց ճարեն անհրաժեշտ գումարը: Գնում են Փշի մոտ և երկար աղաչանք-պաղատանքից հետո «մուրհակով, շահով, կարգով», ինչքան պետք է, փող են վերցնում: Չղջիկը մնում է տնպահ, իսկ ճայրն անցնում է մեկնում Չինմաչինի երկրներ, լինում է Պարսկաստանում, Հնդկաստանում, Արաբստանում, մեծաքանակ ապրանք է առնում (մարգարիտ, զմրուխտ, հնդու խորմա, փստա, քիրմանի շալ), լցնում է նավը և ուրախ-ուրախ դառնում հետ՝ դեպի տուն... Սակայն ծովում ահավոր փոթորիկ է բարձրանում, որն էլ խորտակում է խեղճ «վաճառականի» բեռնավորված նավը: Փրկվում է միայն մերկ ու տկլոր ճայրը: Ի՞նչ անել: Ամոթահար նա այլևս չի վերադառնում ընկերոջ մոտ. ծովից չհեռանալով՝ նա իր ապրանքն է որոնում... Ահա պատճառը, որ այն օրվանից մինչ այսօր ճայրը ծովում է թևին տալիս, ճախրում, ճչում, իսկ Չղջիկը, որպեսզի պարտատերերից խուսափի, ցերեկները թաքնվում է և միայն գիշերներն է թռչում: Փշի թո՞փը: Սա էլ, ճանկ ու ատամ սուր պատրաստած, գայրույթով կաշում է բոլորին. ով անցնում է իր կողքով, փեշից քաշում է ու հարցնում, թե «էն անճամուս պարտապաններին ոչ մի տեղ չե՞ք տեսել»:

Այս հեքիաթը մենք չափաժոյի չենք վերածել, թեև սյուժեն մանկական գրականության համար լավ է, հետաքրքիր... Իսկ ահա համառոտել կամ վերածնել կնշանակեր վիրավորել հեղինակի հիշատակը:

Բոլորովին ուրիշ է նրա երկրորդ՝ «Մի կաթիլ մեղրը» լեգենդը: Նրանում յուրօրինակ են մեկնաբանված պատերազմների ծագումն ու հետևանքները: Պատմության համար չնչին պատճառները մեծ հետևանքներ են թողել: Այստեղ մի կաթիլ մեղրը դառնում է այնպիսի խոշորամասշտաբ պատճառ, որից մարդկությունը դեռ չի ազատվել: Երկի խոր ծալքերը պարզ տողերի ժպիտով են հարթված:

Ինչ վերաբերում է հանգուցյալի փոքրածավալ բանաստեղծություններին, որոնք այնքան էլ շատ չեն, ապա դրանք չափազանց քնարական են, հստակ և ողջամիտ:

Այս գրքում Հովհաննես Թումանյանը նուրբ է և հրապուրիչ: Առհասարակ պետք է ասել, որ հայոց լեզվով գրված երկերը վրացերենի վերածելիս շատ ավելի յուրակերպ և ջղուտ են ստացվում, քան որևէ

այլ լեզվով: Ամենայն հավանականությամբ, դա մեր լեզվի առանձնահատկության արդյունքն է: Հեղինակի որոշ տողեր առանց միջամտության էին շարվում մեր թարգմանության մեջ, թեև որոշ բառեր էլ անհնազանդ երեխայի նման շատ փաղաքշամք էին պահանջում²⁸:

Մենք ջանք էինք թափում՝ թարգմանության մեջ ամբողջովին պահպանենք բնագրի բույրը: Աշխատում էինք անխաթար պահել նաև բանաստեղծության կառուցվածքը, հանգավորումը (խաչաձև թե խառն), ոճը, պատկերավորման միջոցները և այլն:

Իմ նպատակն էր հանգուցյալի հիշատակի առաջ խոստումն ազնվորեն կատարել (մի անգամ՝ գրույցի ժամանակ, ես ու Հովհաննեսը իրար խոստացանք մեր երկերը թարգմանել), և ցանկանում էի, որ Հովհաննես Թումանյանը՝ Վրաստանի լավագույն բարեկամը, վրաց ժողովրդին ներկայանար իր իսկական դեմքով: Այս պարագայում ինձ՝ իբրև բանաստեղծի համար թարգմանությունը մի տեսակ ստեղծագործական ընդմիջում էր:

Ես սիրում էի Հովհաննես Թումանյանին, սիրում, ինչպես բանաստեղծը՝ բանաստեղծին, պարզ զգացմունքներով, խոր կերպով և նրա հոգին զգալով: Նրա վաղաժամ մահն ավելի խորացրեց այդ զգացմունքը:

Վախճանվեց մեծ զգացմունքներ կրողը, վախճանվեց մի այնպիսի մարդ, որին հավասարը դարերը սոսկ մեկ անգամ են տալիս:

Նա մարդ էր, ինչպես վայել է
իսկական մարդուն:
Արդ, նրա նմանին էլ չեմ տեսնի
ես իմ կյանքում:

Այլևս չենք կարող նրա օջախը մտնել գլուխներս բարձր, այլևս չենք կարող նրա սեղանի շուրջ գավաթ դատարկել ի փառս մեր Հովհաննեսի արևշատության: Ուրեմն այս թարգմանությունը թող լինի մնաս բարովի վերջին խոսքը թանկագին հանգուցյալին:

²⁸ Օգտվելով առիթից՝ խորին շնորհակալություն եմ հայտնում նկարիչ Գևորգ Բաշինջաղյանին՝ որոշ բառերի բացատրության և բանաստեղծուհի Մարիջանին՝ սիրահոժար համագործակցության համար (ծնթ.՝ հեղ.):

ՎՐԱՍՏԱՆԻ ԲԱՐԵԿԱՍԻՆՆԵՆ³⁹

(Հովհաննես Թումանյանի մահվան առիթով)


Եվ սիրտս՝ վշտի դաշույնով խոցված,
Թախծով է հիշում քո դեմքը պայծառ.
Բախտը՝ երգերի հրով դրոշմված,
Հաշվում է կյանքըդ չար մահին ավար:

Հերքող ճերմակ էր, հասակըդ, սակայն,
Արմավենու պես վեր ու սլացիկ.
Խլեց մեզանից մահը դժնկամ
Քո արևաշունչ կյանքը գեղեցիկ:

Արցունքն աչքերիս չի էլ ցամաքում,
Ի՞նչ խոսք ասեմ ես, սփոփեմ որի՞ն.
Արդյոք խորտակված սիրո աշխարհում
Կա՞ մարդ, որ գգա իմ ցավը խորին:

Գնում ես ահա անցյալը քեզ հետ,
Սակայն ոչ թե հին փառքը տանելով.
Երկինքն ամպերով ահա լուսավետ—
Կքաղցրանա քո լույս ժպիտներով:

Կբացվի ծոցը անդրշիրիմյան,
Կթեքվի արևն հասկից ավելի,
Եվ քեզ կողջունե փունջն երրորդության՝
Ֆիրդուսին, Հոմերն ու Ռուսթավելին:



ԼԱՂՈ ԳՈՒԳԻԱՇՎԻԼԻ (1896-1980), գեղանկարիչ, ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ (1972), Սոցիալիստական աշխատանքի հերոս (1976) Վրաստանի պետական մրցանակի դափնեկիր (1966), պրոֆեսոր:

Ծնվել է Թիֆլիսում՝ երկաթուղագործի ընտանիքում: 1910-1914 թթ. սովորել է կովկասյան գեղանկարչության և քանդակագործության դպրոցում: Նրա առաջին նկարները լույս են տեսել «Թեատրի դա ցխովրեբա» ամսագրում (1914 թ.): 1919-1926 թթ. Փարիզում ուսանել է Ռոնսոնի «Ազատ ակադեմիայում», անհատական ցուցահանդեսներով հանդես եկել Ֆրանսիայում, Բել-

գիայում, Ամերիկայում և այլ երկրներում:

ԻՄ ՀԱՆԳԻՊՈՒՄԸ ԵՎ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԱՍՏԵՂԾ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԵՏ⁴⁰

1917 թվականն էր:

Թիֆլիսի շոգ ամառն ստիպել էր ինձ և նկարիչ Բաժբեուկ-Մելիքյանին երկար ցատել Գոլովինյան պողոտայի ցատարանին՝ ցուցահանդեսի շինության դիմաց, որտեղ մեր նկարները քրտնում էին շոգից: Ցուցահանդեսի առաջին օրն էր Վերմիսածում: Մարդիկ շատ կային, նրանց թվում՝ բանաստեղծներ (առաջին այցելուներից մեկը գրող Շիրվանգաղեն էր), քննադատներ և մեկենասներ:

Հանկարծ Երևանյան հրապարակի կողմից երևաց մեկը, որ գալիս էր ցուցահանդեսի ուղղությամբ: Հովհաննես Թումանյանն էր: Ես և Մաշան աստիկ հետաքրքրված հետևեցինք, թե ուր է գնում բանաստեղծը: Դե իհարկե չսխալվեցինք. նա մտավ մեր նկարների ցուցահանդեսը: Մենք իսկույն հետևեցինք նրան:


Նա շատ ուշադիր որոնում էր նկարների հեղինակներին: Մենք առանց երկար մտածելու որոշեցինք մոտենալ և ծանոթանալ մեծ բանաստեղծի հետ: Բանաստեղծը շատ գոհ էր մեր բարեկամության և համատեղ կազմակերպած ցուցահանդեսի համար: Կարճատև զրույցից հետո բանաստեղծը խնդրեց Մաշային ընկերակցել իրեն՝ միասին

դիտելու մեր նկարները: Նա կանգ առավ Բաժբեուկ-Մելիքյանի «Տաճարի տունը» մեծ նկարի առջև, երկար նայեց այդ նկարին, որից հետո հարցրեց հեղինակին, թե ինչից է, որ փոքր նկարներում ավելի զուսպ են արված լույսի էֆեկտները, քան այս մեծ կտավի վրա, որտեղ, սակայն, ավելի ուժեղ են զգացվում լույսն ու ուրախությունը, որոնք բնորոշ են մեր երկրին: Ի միջի այլոց, բանաստեղծին դուր եկավ Բաժբեուկ-Մելիքյանի «Հայուհու գլուխը» էտյուդը, որը նա գնեց ցուցահանդեսում:

Բաժբեուկ-Մելիքյանի նկարի կողքին կախված էր իմ նկարը՝ «XII դար» անունով: Թումանյանը հետաքրքրվեց այդ նկարի բովանդակությամբ: Ես բացատրեցի, ստացա մի խիստ հաճելի քննադատություն, որում բանաստեղծը շեշտեց վրացական հնագույն մշակույթի ու կենցաղի ժամանակաշրջանը հիշեցնող սյուժեի մեկնաբանության անսահման խորությունը:

Իհարկե, ցուցահանդեսի ամենաշահագրգռված այցելուն Հովհաննես Թումանյանն էր, բայց շոգը ստիպում էր մեզ թողնել ցուցահանդեսի դահլիճը: Ցուցահանդեսի շեմին, հրաժեշտ տալով մեզ, նա շնորհակալություն հայտնեց ստացած հաճույքի համար և կրկին ընդգծեց մեր բարեկամությունը և համատեղ աշխատանքը:

Մենք հաճախ ենք հիշել նրա խորհուրդները: Ամենից ավելի ես չեմ կարողանում մոռանալ բանաստեղծի դեմքը, հմայքը և ժպիտը, որոնք սեր էին ներշնչում դեպի մեծ մարդը:



ՇԱՎԱ ԳԱԳԻԱՆԻ (1874-1959), գրող, դրամատուրգ, դերասան, քատերակյան գործիչ:

Ծնվել է Քուբայիսի նահանգի Ջեստաֆոն քաղաքում (այժմ` Ջեստաֆոնի մունիցիպալիտետ): Պատանեկան տարիներին հավիտակվել է հայրենասիրական գաղափարներով, որոնցով և հագեցած է նրա բանաստեղծությունների առաջին «Կայծ» (1892) գիրքը: 1893 թվականից «Իվերիա» լրագրում տպագրում է մանրապատումների շարք: 1908 թ. հիմնադրում է քատերակյան շրջիկ խումբ և ներկայացումներ տալիս Վրաստանի արդյունաբերական կենտրոններում: Դադիանին գրել է բազմաթիվ պատմավեպեր,

պատմվածքներ, նովելներ, պիեսներ, հրապարակախոսական հոդվածներ: Նրա անունը սերտորեն կապված է վրացական քատրոնի վերածննդի հետ:

ԱՆՎԵՀԵՐ ՀՈԳՈՒ ՏԵՐ ՊՈՏԵՏԸ⁴¹

Ես այնքան էլ մոտիկից չէի ճանաչում ժողովուրդների եղբայրության քարոզիչ և մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանին: Հազիվ երկու թե երեք անգամ գրույց եմ ունեցել նրա հետ, սակայն այդքան էլ բավական էր, որպեսզի մարդ կախարդվեր նրա հոգու անվեհերությանը:

Չուսպ, բայց քաղցր գրուցընկեր էր` թեկուզև պլեներ, սակայն կենդանի, աշխույժ աչքերով: Նա մեծ հավատ ու հոգու անսասանություն էր հանդես բերում, երբ խոսքը վերաբերում էր իրեն հետաքրքրող ու այրող հարցերին:

Որո՞նք էին այդ հարցերը:

Պոեզիան ու ժողովուրդների բարեկամությունը` ընդհանրապես, հայ-վրացական հարաբերությունները` մասնավորապես:

Որքա՞ն քնքշանք, որքա՞ն գորովալից սրտի կսկիծ կար նրա խոսքերի մեջ:

Արաքս և Քուռ գետերի` մի հարթավայրից սկիզբ առնելը, հետագայում կողք կողքի եղբայրաբար հոսելը և վերջում միանալը` ծովի մեջ թափվելու համար, նրա համար երկու ժողովուրդների պատմա-

կան ճակատագրի կենդանի խորհրդանիշ էին:

Նրա պատկերացմամբ՝ ծովն այստեղ որպես մարդկություն էր ներկայանում: Նա հավատում էր, որ Հայաստանն ու Վրաստանը, ինքնուրույն զարգանալով և հասունանալով, հարագատ ու բարձր մշակույթով զինված, վերջում իրենց լուսնան պիտի դնեն ողջ մարդկության գանձարանը:

Եվ այս մտորումներն ու տենչանքները նրա սրտին սպեղանի էին լինում այնպիսի տխուր ժամանակներում, երբ Հայաստանի բուրժուազիան և Վրաստանի թավաղազնվականությունն իրար դեմ թշնամական ժանիքներ էին սրում: Գրական մտավորականության շրջանում նրա պես քչերը կային:

Մենակ էր նա, որը էր մնացել այդ անվեհեր մարդն այն տխուր ու մռայլ օրերին ժողովուրդների եղբայրության քարոզով:

Սրտանց ցանկանում էիր, որ շատ-շատերն այդ որբի նման լինեին, բազմանային թե՛ մեզանում, թե՛ յուրայինների մեջ, բայց այդ տխուր օրերին կարելի էր միայն երագել:

Պատմությունը, սակայն, ապացուցեց, թե որքան ճիշտ էր մտածում ու զգում Հովհաննես Թումանյանը՝ այդ մեծ մարդը:

Մեր դարաշրջանը հաստատեց միություն, ժողովուրդների եղբայրություն, և Հայաստանն ու Վրաստանն էլ մտան այդ եղբայրական մեծ ընտանիքի մեջ:

Ահա թե ինչու պոեզիայի բարձունքներում էլ ավելի մեծ է երևում վախճանված, բայց միշտ անմոռաց ու անվեհեր հոգու տեր Հովհաննես Թումանյանը:



ՎԱԿԻՄԻ ԶԱՐԲԱՆԻՉԵ (1902-1974), գրականագետ:

ՍՏԵՂՏԱԳՈՐԾՈՂԻ ՈՒԺԸ⁴²

*«Գանչեր ունեն անտա՛կ, անծի՛ր,
Ծով բարություն, շրնորիք ու սեր...»,-
գրել է Հովհաննես Թումանյանը:*

Այս խոսքերը լավագույնս արտահայտում են բանաստեղծի կյանքի ու ստեղծագործության ողջ էությունը: Հովհաննես Թումանյանը ժողովրդի ծոցից ելած գրող էր և ողջ կյանքն անմնացորդ նվիրաբերեց նույն այդ ժողովրդի երջանկության պայքարին: Ահա թե ինչու իր հրաշալի բանաստեղծություններից մեկում նա ասում է.

Անհուն հանքը իմ գանձերի,
Միրոս է առատ, լեն ու ազատ.
Ինչքան էլ որ բաշխեմ ձրրի-
Սերն անվերջ է, բարին՝ անհատ:

Հովհաննես Թումանյանն այն եզակի ստեղծագործողներից էր, որին ժողովուրդը հենց էն գլխից ճանաչեց ու սիրեց:

Հովհաննես Թումանյանը ծնվել է Լոռու Դսեղ գյուղում: Գեղեցկությամբ կախարհող այդ անկյունում մանուկ Հովհաննեսը լծվում է գյուղական աշխատանքի, հովվություն է անում և ամբողջ օրն անցկացնում հասակակիցների շրջանում, որոնք հեքիաթներով ու սեփական ոտանավորներով մրցում էին իրար հետ:

Հենց այդ ժամանակից ի վեր շնորհաշատ երեխան դառնում է ժողովրդի հոգսերի ու տառապանքների ակամա վկան: Հայրենի գյուղում դպրոց է բացվում, բայց ուսման ծարավ Հովհաննեսը միջոց չունենալու պատճառով չի կարողանում ընդունվել: Այդպիսին էր ճակատագիրը թե՛ ապագա բանաստեղծի և թե՛ նույն դրությամբ մեջ գտնվող նրա աղքատ ընկերների, որոնց մասին ավելի ուշ նա պիտի գրեր. «...Առաջին անգամն էր, որ մենք գլխի էինք ընկնում, թե մինա ունևոր ենք, մյուսս՝ աղքատ: Դեռ էսօր էլ ականջումս է Նետյի լացի ձենը, որ իրենց դռանը թավալ գալով գոռում էր, թե ես էլ եմ ուզում ուսումնարան գնամ: Եվ դեռ ականջումս է նրա հոր ձենը, կանչում էր.– կա ո՛չ, կա ո՛չ, ա՛յ ոչ ու փուչ, ո՞րտեղից տամ... Երեք մանեթ ունենամ՝ կտանեմ հացի կտամ, կբերեմ կուտեք, հրես մնացել եք սոված նստած. կա ո՛չ...»:

Զարմանալի չէ, որ դրան վկա բանաստեղծը մանկուց ատեց այդ անարդար հասարակարգը, իսկ արդեն առնականացած՝ զայրույթով քացականչեց.

....Ու միշտ քանի որ կա
Շահ ու գերի, ըստրուկ ու տեր,
Չի լինելու երկրի վրա
Ո՛չ շիտակ խոսք, ո՛չ կյանք, ո՛չ սեր:

Սկզբից ի վեր բախտը չժպտաց բանաստեղծին, բայց նա չէր ընկճվում և, հզոր կամքով տոգորված, մարտնչում էր ամեն տեսակ խեղաթյուրվածության դեմ, լինելու անձնական թե հասարակական: Այն գիտելիքները, որ նա չկարողացավ ստանալ դպրոցում, հետագայում լրացրեց ինքնակրթությամբ, այդ ճանապարհով յուրացրեց հայ, ռուս, վրաց ու եվրոպական դասական գրականությունը, թեև իմաստության իսկական համալսարանը նրա համար գլխավորապես կյանքն էր: Եվ պետք է ասել, որ այդպես նա դարձավ այնպիսի ստեղծագործող, որի հիմնական նպատակակետը ժողովրդայնությունն էր:

Հովհաննես Թումանյանը ճշմարիտ ռեալիստ էր: Նա ամեն կերպ պայքարում էր հնի, անցյալի իդեալականացնելու դեմ և ջանք էր թափում ընթերցողի համար պարզ ներկայացնելու հին ժամանակների ողջ դաժանությունն ու աշխատավորական խավերի անհանդուրժելի կացությունը:

Պոետի ստեղծագործությունը հայ գրականության նոր, ավելի բարձր աստիճանն է: Նա համարձակորեն մայրենի գրականություն

բերեց նոր թեմաներ, հարստացրեց ամենափայլուն երկերով, որոնք, հազեցած լինելով ժողովրդայնությամբ, գեղարվեստական բարձրարժեք երկերի եզակի նմուշներ են:

Նրա գրչի յուրաքանչյուր արգասիք ամփոփում է հայ ժողովրդի ուրախություններն ու դառնությունները: Ահա թե ինչու իրավացի էր Վալերի Բրյուսովը, երբ ասում էր, թե Հայաստանը ճանաչելու համար հարկ չկա հաստափոր գրքեր կարդալու. դրա համար բավական է լոկ ծանոթանալ «Անուշ» պոեմին:

Չափազանց բազմերանգ և հարուստ էր բանաստեղծի գեղարվեստական երևակայությունը: Նա շատ էր գրում և հաճախ դիմում էր բանահյուսությանը: Բայց քիչ երկեր չի ստեղծել նաև ժամանակակից թեմաներով...

...Բանաստեղծի սրտում հատկապես բոցկլտում էր վրաց ժողովրդի և Վրաստանի հանդեպ տածած բարեկամական կրակը: Նա միշտ ասում էր բարձրաձայն, թե մենք՝ Վրաստանում դաստիարակված հայերս, վրացական հողով ենք մեծացել:

Մեր ժողովրդի հանդեպ սիրո և հարգանքի առաջին զգացումը բանաստեղծն ի ցույց հանեց այն ժամանակ, երբ, դեռ 24-ամյա մի երիտասարդ, Բարաթաշվիլիի դին Գանձակից Թիֆլիս տեղափոխելիս հանդես եկավ ոտանավորով, որով մեր ժողովրդին կոչ էր անում վառ պահելու հույսի ջահը, քանզի «նորա (այսինքն՝ Բարաթաշվիլիի) վառած զգացմունքներին չըկա գերեզման և ոչ էլ վախճան...»: Ինչ խոսք, այսպես կարող էր արտահայտվել նա, ում սիրտը եղբայրական սիրո զգացումով էր տոգորված առ վրաց ժողովուրդը: Հովհաննես Թումանյանն այս զգացումն արտահայտեց նաև հետագայում, երբ քնարական փայլուն բանաստեղծությամբ՝ «Նվեր Վրաստանի բանաստեղծներին», ծեր Կովկասի ազգերին համընդհանուր խրախճանքի էր հրավիրում.

Ելնե՛նք՝ տեսով ու ճանանչով,
Ընկեր, ախպեր, մեր ու քուր,
Մեր քյամանչով, ուրախ կանչով
Գընանք դեպ կյանքն ընդհանուր:

Այս խոսքերը յուրօրինակ լոգունգ էին տաղանդավոր հայ գրողի և հայրենասերի համար, որը Թիֆլիսի ռուսական «Братство» ամսագրում 1920 թ. գրում էր. «Այն հայ գործիչը, որ պաշտպան չի կանգ-

նել Վրաստանին, չի հասկացել իր ժողովրդին ու իր պատմությունը, և այն վրացին, որ չի պաշտպանել հայերին ու Հայաստանը, չի հասկացել վրաց ժողովրդին և Վրաստանի պատմական ուղիները»:

Ի՞նչ հրաշալի խոսքեր են: Դրանք ոչ ոք չպիտի մոռանա, նախ և առաջ պարտավոր ենք հիշել մենք՝ կովկասյան ժողովուրդների միասնական ընտանիքի անդամներս:

Հովհաննես Թումանյանի գաղափարները Վրաստանում ունեին իրենց նախակարապետները: Դրանք վրաց «մեծ վաթսունականները» էին՝ Իլյա Ճավճավաձեն և Ակակի Ծերեթելին, Նիկո Նիկոլաձեն և Գիորգի Ծերեթելին:

Հայտնի է, որ Իլյա Ճավճավաձեն ամբողջ «Կովկասի ազատության մասին» էր երազում իր հանճարեղ «Վրացու մորը» բանաստեղծության մեջ, և այդ նույն զգացումներն էր արտահայտում անմահ Ակակի Ծերեթելին Գաբրիել Սունդուկյանին նվիրված իր իմաստալից խոսքում.

Ես՝ մի վրացի, իսկ դու հայ ես մի,
Բայց մենք երկուսով եղբայր ենք հիմի,
Երկուսս էլ գավակ նույն հողի, ջրի,
Ե՛վ նույն բնության, և՛ նույն լեռների:

Ն. Նիկոլաձեն մեր երկրի բոլոր իսկական հայրենասերների, առաջին հերթին երիտասարդության սուրբ պարտականությունն էր համարում պայքարի իրականացման համար «համընդհանուր բարությանն ուղղված ծրագիրը, որովհետև, առանց դրա, միանգամայն անհնար է առանձին ազգի զարգացումը»:

Նույն միտքն էին քարոզում Ի. Գոգեբաշվիլին և Գ. Ծերեթելին, որը անցյալ դարի 70-ական թվականների վերջերին «Դրոբեա»-ի («Ժամանակներ») էջերում գրում էր. «Մեր դրոշների վրա պետք է գրված լինեն միմյանց հետ մտերմանալու, միմյանց հարգելու կարգախոսները: Երեք ազգերի՝ հայերի, վրացիների և թաթարների մասին հոգ տանելով, եղբայրական հարաբերությունների և միացյալ ուժերով ներքին այն վատի վերացումը, որն այսպես կանգնեցնում է բարօրության ճանապարհով մեր առաջընթացը»:

Այսպիսի ձգտումներ ունեին հայ և վրաց անվանի գործիչները, որոնց գաղափարական շրջանին էր պատկանում նաև Հովհաննես Թումանյանը:

Սքանչելի բանաստեղծը չափազանց հանրաճանաչ էր վրաց ընթերցողների շրջանում: Առանձնապես գաղափարական, հուզական մեծ ուժ ունեն նրա երկերից «Անուշը», «Սի կաթիլ մեղրը», «Գիքորը», «Նվեր Վրաստանի բանաստեղծներին»-ը: Դրանք անմոռանալի Սոսո Գրիշաշվիլին մեծ սիրով և վարպետությամբ է թարգմանել, և մտցված են վրացական դասագրքերի մեջ: Երիտասարդությունը հափշտակությամբ է կարդում և սովորում դրանք:

Հովհաննես Թումանյանը հայ մեծ բանաստեղծ էր: Միաժամանակ նաև համամարդկային էր: Քանզի ճշմարտապես ազգային է միայն այն ստեղծագործողը, որը ձգտում է համամարդկային երջանկության և սեփական սրտի զարկերի հետ լսում է նաև ժողովուրդներին միմյանց կապող ընդհանուր երակի տրոփյունը:

Այսպիսին էր Հովհաննես Թումանյանը, որի ծննդյան հարյուրամյակը առաջադեմ բոլոր ժողովուրդների հետ միասին այժմ տոնում ենք և մենք:



ՊԱՍԼՈ ԻՆՇՎԻԼԻ (1894-1937), բանաստեղծ, թարգմանիչ, էսսեիստ:

Ծնվել է Քուքայիսի նահանգի Արգվեթի (այժմ՝ Սաչխերիի մունիցիպալիտետ) գյուղում: Սովորել է Քուքայիսի դասական գիմնազիայում, այնուհետև ուսումը շարունակել է Անապայում՝ մասնավոր գիմնազիայում: 1913 թ. մեկնում է Փարիզ և ընդունվում Լուվրի արվեստի ինստիտուտ, որտեղ հրապուրվում է սիմվոլիստ գրողների ստեղծագործություններով: Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին վերադառնում է Քուքայիս և նվիրվում գրական աշխատանքներին: Մեկն էր վրաց առաջին գրողներից, որոնք

բռնադատվեցին. մեղադրվում էր «գաղափարական վնասարարության», «դավաճանական գործունեության», «դիվերսիաներ կազմակերպելու» և այլ մահացու մեղքերի մեջ: Այս ամենի համար Գրողների միությունում թե՛ մտերիմների և թե՛ հակառակորդների կողմից ենթարկվում էր հալածանքների: Անհիմն պարսավանքներից նրան պաշտպանում էր միայն Տիցիան Տաբիձեն, որը նույնպես մեղադրվեց համանման հանցանքների մեջ, և երկուսն էլ գնդակահարվեցին 1937 թ.:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ⁴³

Ո՛վ դու խնդություն՝ աչքերով մանկան,
Առավոտն է քեզ ցողել շնորհով.
Նայում էին քեզ հարգանքով կամկար,
Հաճախ՝ համբուրում ջերմությամբ, սիրով:

Մեղրամոմի պես հսկա ու հզոր,
Վառվեցիր բարձր Հայոց լեռներից,
Ու եղբայրության ջահը քո բոսոր
Պարզեցիր վրաց քո եղբայրներին:

Երգերո՛՛ գրված լույս աղավնիներ,
Բուրբ քիվերում ապրում են նրանք.
Դու առաքյալի նման անձնավեր,
Ծառացար ընդդեմ կռվի ու արյան:

Քո կյանքը եղավ ներշնչում վսեմ,
Մահը մշուշեց սրտերը հավետ,
Քեզ «սուրբ Հովհաննես» մանուկները կասեն,
Իսկ մենք կկրկենք «դու մեր սուրբ պոետ»:

Քո ոսկի կյանքը տվիր ավարի,
Ու ես նայում եմ աչքերով վշտոտ,
Թե ե՞րբ Անուշը որպես եղևնի
Կկանգնի լուսե գերեզմանիդ մոտ:

**ՎՐԱՅ-ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑՅԱԼԻՑ⁴⁴**

(Հովհաննես Թումանյանի մահվան
30-ամյա տարելիցի կապակցությամբ)

Հայ-վրացական բարեկամության պատմության մեջ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը սրանչեւի էջեր է գրել: Այս գրողի ողջ գործունեությունն ու ստեղծագործությունը ուղղված են եղել այն բանին, որ կովկասյան ժողովուրդների բարեկամությունը դառնա անխախտ:

Թումանյանը անբասիր մարդ էր, իսկական մարդասեր, ազգայնամոլության անհաշտ թշնամի, ժողովուրդների համերաշխության ջատագով: Իր ողջ կյանքի ընթացքում նա ջանք էր թափում ցրելու այն անվստահության մշուշն ու ազգամիջյան հակամարտությունը, որ հայ և վրաց ժողովուրդներին պարտադրել էին տեղական ազգայնամոլները: Երախտագիտության այս զգացումով է հագեցած նրա «Նվեր Վրաստանի բանաստեղծներին» քերթվածը:

Ամեն կողմից թող ամենին
Հըրապորի ու բերի
Բազմալեզու խրախճանին
Ծեր Կովկասի ազգերի:

Ելնե՛նք՝ տեսով ու ճանանչով,
Ընկեր, ախպեր, մեր ու բուր՝
Մեր քյամանչով, ուրախ կանչով
Գընանք դեպ կյանքն ընդհանուր:

Այս բոցավառ կոչը հայ ժողովրդի երգիչ քաղաքացու բանաստեղծական պատասխանն է այն անմոռանալի խոսքերի, որոնք իր ժամանակին մեծ Իլյան փռեց Կովկասի ժողովուրդների մեջ.

Настанет ли тот день, когда увижу снова...
Когда ручьи и племен сольются воедино,
И от последних бурь освобождая нас,
Могучая душа, достойная грузина,
С любовью осенит прославленный Кавказ?

Հովհաննեսը մեծապես նպաստեց հայ և վրաց մտավորականների լավագույն մասի փոխըմբռնման, ծանոթության և մերձեցման գործին: Նա անձնական, մտերմական հարաբերություններ ուներ մշակույթի վրաց գործիչների հետ: Հուզիչ է, օրինակ, Հովհաննես Թումանյանի հանդիպումը մեր մեծագույն բանաստեղծ Վաժա Փշավելայի հետ:

Վաժա Փշավելայի եղբայրը՝ Սանդրո Ռ-ազիկաշվիլին, պատմում է. «Քանի դեռ Վաժան հիվանդ էր (1915 թ.), Հովհաննես Թումանյանն այցի եկավ նրան»: Թումանյանը լսել էր Վաժայի հիվանդության մասին, բայց տան հասցեն չգիտեր, ուստի առաջինը հանդիպում է Սանդրոյին աշխատավայրում. «Լսել եմ, որ Վաժա Փշավելան հիվանդ է և գտնվում է Չեր տանը,- ասաց Թումանյանը,- ուզում եմ տեսնել նրան, ե՞րբ կարող եմ»:

«Ասացի իմ հասցեն,- շարունակում է Ռ-ազիկաշվիլին,- և խնդրեցի, որ գա հաջորդ օրը: Տուն դառնալով՝ այդ մասին հայտնեցի Վաժային: Նա ոգևորված պատասխանեց. «Թող գա, ծանոթանամ, տեսնեմ՝ ինչ մարդ է»:

Հաջորդ օրը Հովհաննեսն իսկապես եկավ: Վաժան նստեց անկողնում, շորը գցեց ուտերին, և երբ Հովհաննեսը ներս մտավ, ծանոթացրի մեկմեկու: Հովհաննես Թումանյանը ներողություն խնդրեց, որ, ցավոք, ինքը վրացերեն չգիտի, և սկսեցին ռուսերեն: Միմյանցից հարցուփորձ անելուց հետո խոսեցին դեռևս շարունակվող պատերազմի, նրա հետևանքների մասին, այն մասին, թե պատերազմն ինչ կբերի փոքր ժողովուրդներին՝ երջանկություն, թե՞ դժբախտություն: Այնուհետև Հովհաննես Թումանյանը խոսեց հայ-վրացական հարաբերություններից... Երկու բանաստեղծների գրույցը չավագանց անկեղծ էր», - իր պատմությունն է ավարտում Սանդրո Ռ-ազիկաշվիլին:

Շատ չանցած լսելով, որ վրաց ժողովուրդը կորցրել է իր Լեռան արծվին, Թումանյանի սրտի խորքից դուրս են հորդում հետևյալ հուզիչ խոսքերը. «Այս ողբերգական ժամանակում աշխատավոր ժողովուրդը խորապես զգաց լավագույն մարդու, ամենատաղանդավոր և հավասարը չունեցող բանաստեղծի՝ Վաժա Փշավելայի կորուստը: Սրտանց ցավակցում եմ եղբայրական վրաց ժողովրդին»:

Հովհաննես Թումանյանը խորապես հարգում էր վրաց ժողովրդին և սիրում նրա մշակույթը: Նա երագում էր վրաց հանճարեղ բանաստեղծ Շոթա Ռոսթրավելու անմահ պոեմը՝ «Ընձենավորը», քարգմա-

նել և մատչելի դարձնել հայ ժողովրդին, բայց մահվան պատճառով չկարողացավ իրականացնել այդ սքանչելի մտահղացումը:

Հովհաննես Թումանյանը ժողովուրդների բարեկամության իսկական ջատագով էր ոչ միայն իր հնչուն քնարով, այլ նաև հրապարակախոսական գործունեությամբ: Մենք նկատի ունենք նրա հրաշալի հոդվածը, որ տպագրվել է «Բրատստվո» ամսագրում 1920 թ.՝ մենշևիկների և դաշնակցականների հրահրած եղբայրասպան պատերազմի առիթով: Այդ հոդվածում Հովհաննես Թումանյանը գրում է. «Հեղափոխության ուրվականից սարսափած ռուսական բյուրոկրատիան ժողովուրդների համար մի չար խաղ հնարեց՝ ցանկանալով բաժանել նրանց և դրանով զբաղեցնել նրանց ուշադրությունը...

...Պրովոկացիոն բնույթի փորձեր առաջ էլ են արվել, բայց հենց անցյալի փորձը ցույց է տվել, որ անկարելի է իրար դեմ հանել հայերին ու վրացիներին...»: Հայ-վրացական բազմադարյան քաղաքական բարեկամության և համագործակցության մասին խոսելիս Հովհաննես Թումանյանը հիմնվում էր պատմական մի շարք տեղեկությունների վրա: Նա վկայում է հայ պատմիչներին, որոնք մեծ ոգևորությամբ խոսում են հայերի հանդեպ Դավիթ Շինարարի վարած քաղաքականության, ինչպես նաև վրաց ժողովրդի նկատմամբ հայ պատմական գործիչների իսկապես բարիդրացիական հարաբերությունների մասին:


Անվանի գրողը հավաստում է, որ բարեկամության գաղափարն ի սկզբանե կազմել է հայ և վրաց ժողովուրդների էության անբաժանելի մասը, և, ի լրումն իր խոսքի, վկայում է հայ ժողովրդական հանճարեղ էպոսի՝ «Մասունցի Դավթի» գլխավոր հերոսին և վրաց դյուցազն Գորգիսին, որոնց միջև իշխել են բարեկամական հարաբերությունները, սերը, կատարյալ վստահությունը և փոխօգնությունը:

...1918 թվականի այն դժնդակ օրերին, երբ Անդրկովկասում սկիզբ առավ շովինիստական վակխանալիան, երբ հեղվում էր եղբայրական արյուն, երբ երկու եղբայրական ժողովուրդներն իրար դեմ էլան, Հովհաննես Թումանյանն իրավացիորեն նշում էր. «...Եվ, գուցե, հենց դրա մեջ է այն մեծ ու հաստատ մխիթարանքը, որ ոչ թե ժողովուրդներն են մեղավոր այդ ահավոր աղետների համար, այլ նրանց իշխանավորները, և որ ինչքան շատ թուլանան այդ վերջինները, իսկ ժողովուրդները դառնան ավելի գիտակից ու ավելի մերձեցնան միմյանց, ինչքան ավելի բարձր հնչի նրանց ձայնը, ավելի կնվազեն այդ աղետ-

ները և ի վերջո կվերանան»:

Այսպես է ավարտում այս հրաշալի փաստաթուղթը ժողովուրդների բարեկամության պատգամախոս Հովհաննես Թումանյանը:

Հովհաննես Թումանյանի գաղափարն իրականություն դարձավ միայն հեղափոխությունից հետո, որին ականատես եղավ գրողը: Ժողովուրդների բարեկամությունը ծաղկեց ամենավառաահեղ կերպով, ստեղծվեց մի միասնական ընտանիք և դարձավ անառիկ բերդամրոց. սա հեղափոխության մեծագույն նվաճումն է, որ խորհրդային ժողովուրդները պահպանում են աչքի լույսի պես:



ԻՈՍԵՔ ԻՍԵՂԱՇՎԻԼԻ (1876-1952), գրող, հրապարակախոս, հասարակական գործիչ, հուշագիր, թարգմանիչ: Ծնվել է Սագարեջոյի մունիցիպալիտետի Խաշմի գյուղում: Գրականագիտական, քատերագիտական աշխատությունների հեղինակ է: Թարգմանություններ է կատարել հայ գրականությունից:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ⁴⁵

Իմ հուշը «Վարդի թերթերից»
(տեսածը, զգացածը, խորհածը)

Երբ մտաբերում եմ Հովհաննես Թումանյանին, անմիջապես հիշում եմ երկնամբարձ ժայռի գլխին բուսած հեքիաթային բուրումնավետ ոսկե խնձորենին, որին ամայրոպ-որոտը, կայծակ-շանթը, տապտոթը, բուք-բորանը որքան էլ հողմահարում են, ճյուղերը կտրտում, այդուհանդերձ, այն ամուր կանգնած է ժայռի կատարին, արմատներով մխրճված է ընդերքի մեջ և ամառ թե ձմեռ, զարուն թե աշուն իր անմահական պտուղներով անցնող-դարձողներին, աշխարհի որ անկյունից էլ նրանք լինեն, ջերմացնում է, կենսական նոր ուժ հաղորդում և արագացնում նրանց սլացքը դեպի արևային երկիր:

Հիշում եմ այս գեղեցիկ հեքիաթը ամենքի համար, ամեն ինչով միշտ օգտակար պտղատու ծառի մասին և մտաբերում թանկագին բարեկամիս՝ Հովհաննես Թումանյանի լուսեղեն պատկերը...

Սևեռուն նայում եմ, բայց այդուհանդերձ դժվարանում եմ գրել նրա մասին...

Հովհաննես Թումանյան...

Արևի առաջին ճառագայթ, վաղորդյան թարմաշունչ պոք, վաղ զարնանը ձնծաղկի արթնացում, մանուշակի ժպիտ՝ ահա թե ով է ինձ համար Հովհաննես Թումանյանը...

ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐՅԱՆԻ ՍԱԼՈՆՈՒՄ

Թիֆլիսում՝ Ռուսթավելու պողոտայում (նախկինում՝ Գոլովինյան պողոտա)՝ «Չարյա Վոստոկա» քերթի ներկայիս խմբագրության դեմ դիմաց, այժմ էլ վեր է հառնում եռահարկ մի շենք՝ քիվ 4, ժամանակին համընդհանուր ուշադրություն գրավող վեհաշուք մի կառույց, որի վերին հարկում բնակվում էր դարաբաղցի հայ նշանավոր գործիչներից մեկը: Նա անխոնջ, միշտ բարեկիրք, եվրոպական նիստուկացով մարդ էր, ով, գրականության բնագավառում աշխատելուց բացի, հռչակված էր նաև իր սալոնի ուրբաթօրյա երեկույթներով: Յուրաքանչյուր ուրբաթ՝ երեկոյան, այստեղ էին հավաքվում քիֆլիսաբնակ բոլոր ազգությունների, առավելապես վրաց և հայ առաջադեմ մտավորականներ, գրողներ, դերասաններ կամ այլ բնագավառի գործիչներ: Այս կամ այն անհատին նվիրված երեկոն ընթանում էր ժողովուրդների միջև համերաշխություն և սեր հաստատելու նշանաբանով: Օրինակ՝ այստեղ կազմակերպվեցին Նիկոլոզ Բարաթաշվիլիին, Կոտե Մեսխիին, ինչպես նաև ռուս և թուրք գործիչներին նվիրված երեկոներ:

Նշանակված օրը՝ երեկոյան ժամը յոթից ութը, սանդղամատին ժպտուն կանգնած, եվրոպական հագուստով, ճերմակ քթածալերով ու օձիքով, սափրված երեսով Տիգրան Նազարյանը բոլոր այցելուներին դիմավորում էր սիրալիր և ձեռքսեղմումով: Նման ամեն երեկույթի հավաքվում էին երեսուն-քառասուն տղամարդ և կին (կանայք՝ երկուերեք հոգի): Ավելի հաճախ կազմակերպվում էր գրական երեկո, որն ավարտվում էր թեյի, մրգի և քաղցրավենիքի հյուրասիրությամբ:

Առաջներում Վրաստանի հայերը, շատ աննշան բացառությամբ, միշտ վրաց ժողովրդի հավատարիմ եղբայրներն են եղել. նրանց վրացիներից չէիր տարբերի: Շատերն արյունակից ազգականներ էին: Այս միասնությունը գնահատում և հատկապես Վրաստանին երգեր էին ձոնում հայագոհ աշուղներն ու գուսանները, ինչպես՝ Սայաթ-Նովան, Հազիրը և ուրիշներ (Նաղաշ Հովնաթանը):

Աշուղ Հազիրը (նույն ինքը՝ Աբրահամ Դավթի Աբրահամյանը, հորական կողմից՝ շուլավերցի շինական, տատի կողմից՝ գարեջեցի վրացի) միշտ երգում էր.

Վեր կաց, բարձրացի՛ր,
Թագուհի՛ Թամար,
Ողջ Վրաստանն է
Ողբում քեզ համար:

Կամ՝

Արի՛, որդի՛, ինձ մոտ արի՛
Ու սիրտս մի՛ սրահարի:
Վրաստանի զավակն ես դու,
Ճանաչի՛ր քո երկիրն, արի՛:

Նույն ժամանակում արտասահմանից, հյուսիսից և հարավից որոշ ազգայնամոլներ թունավորում էին վաղուց հաստատված հայ-վրացական եղբայրություն-միասնությունը: Հենց այդպիսի ժամանակ էլ անհրաժեշտ էր համերաշխության, եղբայրության, միասնության զգացումներ բոցավառող մի քուրա...

Նման քուրաներից մեկն էլ առաջներում Տիգրան Նազարյանի սալոնն էր, այնուհետև՝ Հովհաննես Թումանյանի օջախը...

ԱՌԱՋԻՆ ՀԱՆԳԻՊՈՒՄԸ

Իննհարյուրական թվականներին Տիգրան Նազարյանի սալոնում սովորական մի երեկոյի ժամանակ համերաշխության, ավելի շուտ՝ հայ վրացական եղբայրության անհրաժեշտության մասին հակիրճ խոսք ասացի: Խոսքս ավարտելուն պես ինձ մոտեցավ վայելչակազմ, գրեթե բարձրահասակ, սևբեղ-սևմորուս, մոտավորապես երեսուն-երեսունհինգ տարեկան մի մարդ: Նա ձեռքս ամուր սեղմեց, փաթաթվեց ինձ, և մենք համբուրվեցինք:

Այդ մարդն իր յուրահատուկ արտաքինով թեև առաջ էլ գրավել էր իմ ուշադրությունը, հատկապես հրապուրել առաքինի տեսքով, բայց մեկմեկու չէինք ճանաչում: Առաջին իսկ հանդիպումից ես այնպիսի զգացում ունեցա, ասես նա իմ հարազատը լիներ, երկար տարիների բարեկամը:

– Մենք հո նույն երկրի զավակներ ենք, հնուց անտի՛՝ եղբայրներ, ի՞նչ ունենք բաժանելու, մեր երկպառակությանը ինչո՞ւ ենք ուրախացնում թշնամուն... Դուք ճիշտ ասացիք՝ կգա ժամանակ, և հայերի ու վրացիների միջև անհաճո միջադեպերն ընդմիջտ կվերանան... Ո՞ւմ է

պետք գծտությունը: Երկնքի ներքո՝ բնությանը առատորեն զարդարված այս հող ու ջրի վրա, ապրի՛ր ու աշխատի՛ր... Աշխատի՛ր ու ապրի՛ր... Նաև ապրեցրու՛: Այո՛, մենք բոլորս պարտավոր ենք մերձենալ միմյանց, պարտավոր ենք իրար հասկանալու միջոցներ ձեռնարկել...

Զրուցում էր քաղցր, հմայիչ ձայնով անկյունում կանգնածիս հետ: Վերջում բացականչեց.

– Մեծ հաճույք պատճառած կլինեք, եթե այցի գաք մեր տուն: Բնակվում են Ամաղլեբա փողոցի համար տասնութում:

Հրավերի համար շնորհակալություն հայտնեցի:

Պարզվեց, որ այդ մարդը Հովհաննես Թումանյանն է:

Այդ օրվանից նա հոգուս մեջ մնաց իբրև արեգակի ճառագայթ, թեև չէի կարողանում հաճախ այցի գնալ նրան, բայց, այդուհանդերձ, իմ սրտում կրում էի նրա լուսեղեն պատկերը:

Մի քանի անգամ գնացի նրա տուն: Նրա օջախը մի տեսակ սալոնանման հավաքատեղի էր. այստեղ հաճախ հավաքվում էին նաև վրացի գրողներ ու հասարակական գործիչներ:

Նշանակված ժամին անպայման դիմավորում էր սանդուղքի գլխին, դուռը բացում և մինչև մուտքն ուղեկցում՝ ցուցաբերելով մեծազույն հարգանք ու սրտաբացություն:

Ինձ հիացնում էին նրա աներևակայելի բարեկրթությունը, նրբանկատությունը, սրտառուչ հյուրընկալությունը: Նրա ամեն խոսքից, ամեն քայլից, ամեն հայացքից ասես Լոռվա անապական մեղր էր ծորում: Չէիք պատկերացնի, որ նա ներկայացուցիչն է այն ազգի, որի հզոր խավերից մեկին սաստկորեն այպանեցին Գաբրիել Սունդուկյանն ու Շիրվանզադեն, նաև ուրիշներ:

Այդ երկու տարբեր բանակներն իրարից հեռու էին այնքան, որքան հեռու են երկինքն ու երկիրը:

Մարդիկ կան, որոնց հետ եթե հազար անգամ ծանոթացնեն, հազար անգամ էլ կմոռանաս, բայց կան և այնպիսի մարդիկ, որոնց եթե մեկ անգամ տեսնեք, ընդմիշտ կմնան ձեր սրտում՝ իբրև սեփական միս ու արյուն: Դիշտ այդպիսի մարդ էր Հովհաննես Թումանյանը: Նա որքան մեծատաղանդ բանաստեղծ էր, նույնքան էլ մեծ քաղաքացի էր, նույնքան էլ լայն մտահորիզոնի տեր գործիչ էր:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

1910 թվականի աշունն էր:

Այն ժամանակվա գրողներն ու գործիչները հաճախ էին գալիս իմ խմբագրություն («Թեատրի դա ցխովրեբա», վրացական թատրոնի միջանցք):

Մի օր ժպտալով ներս մտավ Հովհաննեսը:

– Միրելի՛ բարեկամ²⁹, էդպես չի լինի,- ասաց կատակով,- ես Չեզ ինչո՞վ եմ նեղացրել, որ գոնե մի անգամ ինձ չեք այցելում... Դուք արդեն ամսագիր ունեք՝ արվեստի և գրականության ամսագիր: Դա շատ լավ գործ է... Խնդրում եմ՝ ժամանակ գտնեք և անցնեք ինձ մոտ, գուցե մի-սախն գրուցենք և մեր համերաշխության մասին նյութեր տպագրենք:

– Մեծագույն հաճույքով, թանկագին՝ Հովհաննես, մեծագույն հաճույքով: Կանցնեմ ձեզ մոտ, կաշխատեմ գալ:

– Ոչ թե կաշխատեմ, այլ անպայման... Ժամանակը չի սպասում...

– Ի՞նչ անեմ, բոլորովին ժամանակ չեմ ունենում: Խմբագրության ամբողջ աշխատանքն իմ ուսերին է: Ներկա պահին էլ Գաբրիել Սունդուկյանի պիեսն եմ թարգմանում:

– Ո՞րը:

– «Մեր և ազատություն»-ը:

– Օ՛, դա լավ է, բայց ինձ համար էլ պիտի ժամանակ գտնեք: Չէ՛, ոչ թե ինձ համար, այլ մեր ընդհանուր գործի համար... Իսկ ընդհանուր գործը միացյալ ուժերով է արվում, թե չէ ժողովրդի թշնամիները քնած չեն, հայրենի երկնքում սև ամպեր են կուտակվում...

– Կաշխատեմ անցնել...

ՄԵՏԵՆԻ ԲԱՆՏՈՒՄ

Հովհաննեսն ինձ հրաժեշտ տվեց և երկար ժամանակով: Այդ օրերին ինձ Մետեխի բանտ նետեցին. այնտեղ իրար գլխի էին լցրել ժամանակի հեղափոխական, հասարակական և գրական աշխարհի սերունդքին:

²⁹ «Պայծառ էջեր» հոդվածից հեղինակը մեջբերում է բավականին ընդարձակ հատված (ծնթ.՝ թարգմ.):

Վրիժառու Նիկողայ Երկրորդի կառավարությունը օր ու գիշեր տենդորեն աշխատում էր. ո՛չ կախաղանի օճառած պարանն էր կտրվում, ո՛չ էլ Սիբիրն էր ժողովրդի հավատարիմ զավակների ոսկորներով հագնում:

Մի առավոտ լուր տարածվեց, թե հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանին են բերել:

Սիրտս սկսեց արագ բարախել. կարոտել էի Հովհաննեսին...

Բանտի բակում զբոսնելիս հանկարծ մոխրագույն հագուստով մի տղամարդ փաթաթվեց ինձ: Նայեցի, տեսա՝ առաջս Հովհաննեսն է կանգնած:

– Եվ Դո՞ւք, բարեկա՛ն,- զարմացած հարցրի ես:

– Պատուհանից Ձեզ տեսա, սիրտս չհամբերեց,- ասաց նա:

Հարցուվորձ արեցի՞նք միմյանցից:

Կեսօրվա զբոսանքի ժամանակ նույնպես գրեթե միշտ վրացի կալանավորների հետ էր լինում: Թեև երկուսս էլ բանտի միևնույն քաղաքական բաժանմունքի, այսպես կոչված, «Հին շենքում» էինք նստած, բայց մնում էինք առանձին մենախցերում և հանդիպում էինք միայն լվացվելու և կեսօրվա՝ քսան թուփե տևող զբոսանքի ժամանակ...

Ով ցավի մեջ ընկած ժամանակ հոգու որբություն և բարեկամի հետ հանդիպելու տենչանք չի զգացել, նա չի կարող պատկերացնել իրար հանդեպ ցուցաբերած մեր քնքշանքը...

Մեր խոսքուզրույցի թեման միշտ նույնն էր՝ գրականություն, արվեստ, գրականության միջոցով ազգերի (հատկապես՝ հայերի ու վրացիների) միջև համերաշխության հաստատում: Նա չափազանց շատ էր հավատում գրականության և իսկական գրողի, առանձնապես՝ բանաստեղծի խոսքին...

– Ո՞ր թագավորը կամ աժդահա հերոսը կարող է համեմատվել Շոքա Ռուսթավելու, Նիկոլոզ Բարաթաշվիլիի, Ակակի Ծերեթելիի, Իլյա Ծավճավաճեի հետ...

– Այդ խմբին ավելանում է նաև Ձեր անունը...

– Ի՞նչը... Ի՞նչ եք ասում: Շոթայի հետ ո՞վ կչափվի:

– Համեմատական կարգով եմ ասում: Ձեզ նման երկրորդ բանաստեղծ հայերը ունե՞ն:

– Ունեն և ավելի լավը,- պատասխանեց ժպիտով,- Իսահակյանն ավելի մեծ բանաստեղծ է:

– Իսահակյա՞նը:

– Այո՛, խոսքարվեստի վարպետ է, մեծ հույզերի երգիչ... Բայց և այնպես վրացի բանաստեղծները վեր են կանգնած... Վրաստանը հո բանաստեղծների երկիր է...

– Առհասարակ Հայաստանը գործնական, կյանքում ավելի գործունյա երկիր է... Ճիշտ է, բազմատանջ, բայց և այնպես մեծ ազգ եք:

– Ինչո՞վ,- սևեռուն մայելով՝ հարցրեց Հովհաննեսը:

Բանտի բակում, ինչպես կալատեղում լծված եզներ (գույգ-գույգ շարք կանգնած մոտ վաթսուն կալանավոր), լռելյայն մի քանի քայլ արեցինք: Ես խորասուզվեցի մտքերիս մեջ. իսկպես՝ ինչո՞վ: Հիշեցի ինձ ծանոթ մի հայի՝ Մատինյանի հետ մախօրյակին ունեցած գրույցը. «Ոստիկանությունը որքան էլ հետապնդի մեզ, ոչինչ չի կարող անել, ոչինչ չի կարող պակասեցնել... Միայն մեր կուսակցական դրամարկղում հինգ միլիոն ոսկի ունենք...»:

– Ինչո՞վ,- վերստին հարցրեց Հովհաննեսը:

– Նրանո՞վ, որ մախ՝ հայերիդ կուսակցությունը դրամարկղում հինգ միլիոն ոսկի ունի, և դա այն ժամանակ, երբ մեր հեղափոխականները, կարծես, քոռ կոպեկ անգամ չունեն: Երկրորդ՝ մեր հեղափոխականները բաժանված են մի քանի հոսանքի, մինչդեռ հայերը, եթե չեն սխալվում, հիմնականում մեկ դրոշի տակ են համախմբված:– Հովհաննեսը մայեց ինձ:– Ես ասացի՝ հնչակյանները և մյուսները հաշվի մեջ չեն: Երրորդ՝ եթե մեր երկրի առաջավոր դասը՝ ազնվականությունը, գյուղացիների քրտինքով ողողված հայրենաժառանգ կալվածքները քեֆերում վատնում է, բանկերում գրավ դնում, քամուն տալիս, ապա հայի ունևոր հատվածը կալվածքներ, հող ու ջուր է ձեռք բերում, կառուցում է, հարստանում, ոսկի կուտակում:

– Տարօրինակ է, որ մման բան եք ասում,- հակաճառեց Հովհաննեսը,- ո՞ն է պետք ոսկու պարկը, նյութական հարստությունը: Դու ինձ հոգի՛ ցույց տուր, հոգի՛... Ի՞նչ արժի հենց այն, որ վրացիներն առ այսօր պահպանել են ասպետականությունը... ասպետի բարձր ոգին... Մինչդեռ քո ասած այդ ոսկին ստրկացրել է մարդուն, սիրտն սպանել և դարձրել չոր ծառ... Պոեզիան, նրա զգացողությունը կորել է... Ոսկի՛ ... Ի՞նչ է ոսկին վսեմ հոգու համեմատ: Ի՞նչ արժի հենց այն, որ վրացիներիդ Շոթա ունեք...

– Շոթա՞... Ո՞վ է կարդում:

– Կգա ժամանակ, և ամբողջ երկիրը, տարբեր ազգեր կջերմանան նրա պոետով, նրանով կհասկանան՝ ինչ են գեղեցկությունը, հերոսությունը, սերը, սխրանքը... Նրանով կհասկանան, թե ինչպիսին պետք է լինի ազգերի եղբայրությունը, թե հանուն ինչի պիտի պայքարի մարդը, ում դեմ... Էս ինչքա՛ն հեռու գնացինք, բարեկա՛մս՝ Հովսեփ՝³⁰:

Մեզնից ո՞վ էր ճշմարիտը, գուցե երկուսս էլ սխալվում էինք:

Այս հարցերի մեկնությունն ու գնահատականը իմ գործը չեն...

Բայց հաջորդ օրը մեր գրույցը շարունակեցինք, և, ի միջի այլոց, ասացի, որ այսուհետ կապիտալը պետք է իշխի. ով փող, դրամագլուխ ունի, նա էլ կդառնա երկրի կարգադիրը... Կապիտալը սոսկ երկրագնդի մակերևույթով չի բավարարվում: Նա մտնում է նաև երկրի ընդերքը, հանքահորեր է փորում, զարգացնում է արդյունաբերությունը... Սրա ակունքը, ինչպես գիտեք, կապիտալն է, իսկ կապիտալ մեզանում հայերն ունեն, ավելի ստույգ՝ հայ մեծահարուստները: Այ հենց սրանք են աշխատավորների մի նոր տիպ ստեղծում: Աշխատավոր մարդկանց ուղարկում են հողի սրտից ոսկի, արծաթ, ածուխ և հազար ու մի հարստություն հանելու...

– Ջարմանալի բաներ ես ասում... Մարդկանց ողջ-ողջ պիտի գերեզման իջեցնեն, իսկ դուք դրա մեջ երջանկություն եք տեսնում... Մարդկանց դեպի բնություն, դեպի արևի ճառագայթները պիտի տանեն, մաքուր օդ, անտառ և ծաղիկների մեջ պիտի տանեն, և սա է երջանկությունը: Չէ՛, մարդուն նորից բնության գիրկը տարեք, արևով ուրախացրեք, վարդ-ծաղիկներով (ջերմանան, գոսության ու խավարի մեջ մի՛ խեղդեք), ամենուր և ամեն ինչում պոետիային մերձեցրեք...

Մեր այս հանդիպումները կայացել են, եթե չեն սխալվում, 1911 թվականին: Հովհաննեսը երկար չննաց Մետեխի բանտում:

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԸ

Բանտից դուրս գալուց հետո նոր էի սկսել «Թեատրի դա ցխով-րեբա» ամսագրի հրատարակությունը (կնոջս անունով, որովհետև ես գրկված էի իրավունքից), երբ լսեցի, որ Հայ գրողների ընկերության ղեկավարությամբ տեղի է ունենալու Սայաթ-Նովայի հուշարձան

³⁰ Բնագրում այս խոսքերը նույնպես հայերեն են (ծնթ.՝ թարգմ.):

օճելու արարողություն: Օժմանը ներկա գտնվել ցանկացողները կարող էին գնալ՝ իրենց հետ ունենալով մեկական վարդ:

Հուշարձանն օճելու օր էր նշանակված 1914 թվականի մայիսի 15-ը:

Վաղ առավոտից սկսվեց ժողովրդի հոսքը դեպի Հայ բարեգործական ընկերության շենքը (Աբաս-Աբադի հրապարակ, որտեղ տեղավորված էր հայ գրողների կազմակերպությունը՝ Հովհաննես Թումանյանի նախագահությամբ):

Թիֆլիսի արհեստավորների համքարությունները դրոշներով, մտավորականության սերուցքը, գրողները, աշխատավորական ցածր խավերը Աբաս-Աբադի հրապարակից մինչև Սուրբ Գևորգ եկեղեցու բակը, որտեղ պետք է Սայաթ-Նովայի հուշարձանի օժումը տեղի ունենար, կենդանի շոթա էին կապել: Նրանցից յուրաքանչյուրը ձեռքում մի վարդ էր բռնել:

Պետք էր տեսնել այդ գեղեցիկ տեսարանը՝ մեծ ու փոքր մեկական վարդով:

Ծով ժողովուրդը, չտեղավորվելով բակում, բռնել էր նրա շրջակայքը: Հազիվ կարողացա անցնել մարդկանց խիտ պատի միջով:

Խոսքը տանք այն ժամանակվա «Թեմի» թերթին:

«Մեծաքանակ ժողովուրդ էր հավաքվել եկեղեցու բակում: Ներկա էին նաև վրացական մամուլի ներկայացուցիչները: Բազմաթիվ ելույթներ եղան: Առաջինը խոսք ասաց Հայ գրողների ընկերության նախագահ, նշանավոր բանաստեղծ Հովհաննես Թումանյանը, որը Սայաթ-Նովային հիշատակեց իբրև ժողովրդական երգչի, որը երգել է հայերեն, վրացերեն և թուրքերեն: Նա իջեցրեց հուշարձանի պաստառը. այն ծածկված էր ծաղիկներով ու դրասանգներով...»:

Այնուհետև.

«Ժողովուրդը մեծ խանդավառությամբ ընդունեց երգիչ Հազիբի հայերեն բանաստեղծությունը՝ նվիրված Սայաթ-Նովայի հիշատակին, ինչպես նաև մի վրացի երգչի (ժողովուրդը նրան Վանիչկա է ասում) ոտանավորը: Իրենց ելույթներով մեծ ազդեցություն թողեցին ժողովրդական համալսարանի ներկայացուցիչ Ն. Երմոլակը և Վրաց դրամատիկական ընկերության ներկայացուցիչ Իոսեբ Իմեդաշվիլին: Հին Թիֆլիսի մոքալաքների հագուստներով երաժիշտները կանգնեցին հուշարձանի մոտ և սկսեցին երգել Սայաթ-Նովայի երգերը»:

Եվ այլն:

Հուշարձանն օժելու արարողությունը ազգային-ժողովրդական մշակույթի իսկական տոնահանդես էր, որը փառահեղ տպավորություն թողեց իր պարզությամբ և անմիջականությամբ:

Նրա կազմակերպիչը, ոգին ու սիրտը Հովհաննես Թումանյանն էր:

Ի՞նչ պայմաններում և ի՞նչ նպատակով ես խոսք ասացի, որ, թերթի («Թեմի», 1914, թիվ 179) հավաստմամբ, «մեծ ազդեցություն թողեց»:

Հանդեսն ավարտվում էր:

Կոլյա Էրիսթավին (Վրաց դրամատիկական ընկերության նախագահը) և բանաստեղծ Կոտե Մաղաշվիլին նայեցին ինձ, թե մի բան պետք է ասես...

Ես՝ իբրև բանտից նոր դուրս եկած նախկին քաղբանտարկյալ, գրեթե ոչ լեզալ հսկողության տակ գտնվող (ինչպես հետագայում պարզվեց, օրվա մեջ երկու խուզարկու էին հետևում ինձ), դեռևս զգուշանում էի, որպեսզի կրկին ցանցի մեջ չընկնեմ, բայց այն ժամանակ հանդեսն այնպես կլանեց ինձ, որ բարձրացա արթոնի (թե՞ քարին): Բարձրացա և զինվորական արտահագուստով մի գնդապետի տեսա, որն զգաստ կանգնել էր իմ առջև: Մտքիս մեջ իսկույն «ժանդարմի» տեղ դրեցի: Մտածեցի. «Վերջ, ցանցն եմ ընկել»: Կարծեմ նույնիսկ ընկրկեցի, որպեսզի անհաճո որևէ բան տեղի չունենար: Ճիշտ այդ պահին հայացքս ընկավ Հովհաննես Թումանյանի փոքր-ինչ բաց շրթունքներին, շողարձակ աչքերին և ժպտուն դեմքին, որոնք ասես ոգևորում էին՝ սկսի՛ր: Ինչ լինում է, թող լինի՝ ասացի ինքս ինձ ու սկսեցի: Այդքան ժողովուրդը շունչն այնպես էր պահել, որ ճանճի բզզոցն անգամ լսվում էր: Խոսում էի և ժամանակ առ ժամանակ նայում թե՛ «ժանդարմին» և թե՛ Հովհաննես Թումանյանին, որովհետև որքանով «ժանդարմի» կուշտ տեսքից կաշկանդվում էի, նույնքան Հովհաննեսի բարձր, պայծառաշուք դեմքից թևեր էի առնում, ոգևորվում:

Ի՞նչ ասացի իմ ելույթում: Մոտավորապես ասա թե ինչ (մեջբերում եմ հատվածներ, ավելի ընդարձակը, թեև գրաքննության կողմից կրճատված, «Թեմի»-ի 1914 թ. թիվ 179-ում է գետեղված):

«Արեգակի պես փայլվում, ցոլարձակող, վարդի պես գեղեցիկ, բուրավետ, առավոտյան սյուքի պես նրբորեն կախարդող գուսանի (Սայաթ-Նովայի) խոսքը մեկ անգամ ևս փառավորեց մեր սրտերը և ոգեպնդեց: Ազգային թշնամանքը, մարդակերությունը, փոխադարձատելությունը, գժտությունը որևէ լավ բան չեն տա...»:

«...Նրա (Սայաթ-Նովայի) համար մեկ էին վրացի, հայ, քաթար թե ալլազգի, ուստի բոլորի համար սեր էր երգում միամման քաղցր ձայնով, ջերմացնում, վեհացնում, հաճելի, գեղեցիկ ու սիրելի էր դարձնում կյանքը...»:

Այնուհետև.

«...Մեր ժամանակներում էլ երևան կգա նման մի երգիչ, որը, թշնամանքի ու մարդակերության փոխարեն, փոխադարձ սեր կքարոզի»:

«Այսօրվա օրը վկա է, որ նման երգիչ կրկին կծնվի, և գեթ մի անգամ մարդակերության սիրահարները կզգան, որ մեր ժամանակներում միայն փոխադարձ հարգանքը, եղբայրությունն ու սերը կարող են լուսավորել մարդկանց խավարչտին սրտերը...»: Եվ այլն («Թեմի», 1914, 1915, թիվ 179, էջ 2):

Ամբիոնից իջնելուն պես զինվորականը, որին ես «ժանդարմի» տեղ էի դրել, մի քանի քայլ արեց դեպի ինձ, երկու ձեռքով ամուր սեղմեց ձեռքս և ասաց՝ շնորհակալություն: Մյուս կողմից էլ Հովհաննեսը փաթաթվեց ինձ՝ «Կեցցե՛ս, Իոսեբ ջան» ասելով, թևանցուկ արեց և բարձրացրեց այնտեղ՝ բակի ծայրի տան երրորդ հարկ: Դահլիճում երկար սեղան էր բացված, իսկական հեքիաթային սեղան: Օ՛, տեր Աստված, ինչ ասես, որ չկար այնտեղ՝ տարատեսակ քաղցրավենիքներ, խմորեղեն, խմիչք, նախաճաշի ուտեստներ...

Հովհաննեսն առաջարկեց պատվավոր մի տեղ, որտեղ նազանի, շքեղորեն զարդարված, վարդ-մանուշակների պես բացված աղջիկներ էին նստած: Նրանք, նաև իր դուստրերը շրջապատեցին ինձ, այս ու այն կողմից քաղցրավենիք հյուրասիրեցին, բայց մի՞թե կույ կզնար որևէ բան, մանավանդ որ այնպե՛ս լցված էի Հովհաննեսի փառաքշանքով ու սիրով, աղջիկների հմայիչ ժպիտներով և օրվա փառահեղ տպավորությամբ, որի մեն-միակ հեղինակը մեր թանկագին Հովհաննեսն էր...

Ինչ խոսք, որ Հովհաննեսի և նրա յուրայինների՝ իմ նկատմամբ ցուցաբերած այդպիսի ուշադրությունը ես սույլ իմ անձին չէի վերագրում. այդ ամենը, հանձին ինձ, ուղղված էր վրաց ժողովրդին...

Այն երանելի զգացողությունը, այն ջերմությունը, որ ես զգացի այդ օրը, երկար ժամանակ չեն հեռացել իմ հիշողությունից, և այժմ էլ, երբ հիշում եմ, հաճելի մի դող է անցնում ամբողջ մարմնովս:

Իսկ ո՞վ էր այն գնդապետը, որին ես «ժանդարմի» տեղ էի դրել:

Թիֆլիսի նահանգի հրամանատար Կոնստանտին Ափխազն էր՝ Իլյա ճավճավաձեի քրոջ որդին, իր ժողովրդի հայտնի գործիչը:

Հովհաննես Թումանյանի կազմակերպած տոնահանդեսն անհետևանք չմնաց: Դրանից հետո մեր սիրելի բանաստեղծ և գրականագետ Իոսեփ Գրիշաշվիլին Մայաթ-Նովայի մասին գրեց մի հրաշալի գիրք: Նմանապես հետազոտություններ գրեցին մեր նշանավոր գիտնական Լ. Մելիքսեթ-Բեկը, շքանշանակիր բանաստեղծ Գոզլա Լեոնիձեն և ուրիշներ:

Այսքանով էլ չի սպառվում այդ օրվա նախաձեռնությունը: Այդ օրը նետած սերմն այնքան խոր արմատներ ձգեց ժողովրդի սրտում և հոգում, որ նրա առատ բերքը սպասելի է թե՛ մեր ժամանակներում և թե՛ սպագայում...

Այդ առատ բերքն ի մի բերվեց Հովհաննես Թումանյանի կազմակերպած՝ Մայաթ-Նովայի հուշարձանն օժելու արարողության ժամանակ...

ԲԱՐԵԿԱՄ ԲԱՆԱՍԵՂՉ ԵՄ ՈՒՆԵՑԵԼ, ԻՍԿ ԵՄ ԱՆՏԵՂՅԱԿ

Առաջին համաշխարհային պատերազմի (1914-1918) բարդանալը ռուսական ինքնակալության միապետ Նիկոլայ Երկրորդին, նրա հետ էլ բուրժուական լիբերալ մտավորականությանն ստիպեց «գթության» աչքերով նայել այն ժողովուրդներին, որոնց մի ամբողջ դար ոչնչություն են համարել և կրոնկների տակ ճզմել:

Ինչ խոսք, հզոր Ռուսիայի նշանավոր մտավորականության շարքերում կային նաև այնպիսի անդամներ, որոնք չէին ընդունում ինքնակալության մման վերաբերմունքը, բայց նրանց ձայնը խլանում էր թագավորի կամակատարների գվիոցների և շղթաների աղմուկի մեջ:

Պատերազմի թեժանալու տարիներին անհրաժեշտություն առաջացավ այս օտարազգիներին՝ այսպես կոչված «ինորոդեցներին», հատկապես՝ հայերին և վրացիներին, որոնք սահմանակից էին Թուրքիային և Պարսկաստանին, սիրաշահելու:

Այդ նպատակով Ռուսաստանի լիբերալ գրողներն ու երեսփոխանները Վրաստան և Հայաստան էին այցելում, որպեսզի մշակութային կապերն ամրապնդեն: Ավելի շուտ՝ գլուխներս շոյեն: Օրինակ՝ Վրաս-

տան եկավ երեսփոխան Ռ-ժևակին (եթե ազգանունը չեն շփոթում), որը Ժողովրդական տանը վրացիների մասին ասաց. «Վրացիներն իրավունք ունեն պահանջելու 1864 թ. ինքնավարությունը, որը և պետք է տրվի անշուշտ»: Մյան գրաքննադատ-հրապարակախոս Կիտա Աբաշիձեն պատասխանեց. «Եթե խոսքը վերաբերում է իրավունքին ու պահանջին, ապա վրաց ժողովուրդն ավելի լավ գիտի, քե իրեն ինչ է պետք...»:

Նույն ժամանակներում եկավ նաև բանաստեղծ Բալմոնտը, որը Շոթա Ռուսթավելուն երկիրք հանեց, համեմատեց արևի հետ և հանձն առավ թարգմանել նրա երկը (և թարգմանեց)...

Թիֆլիս եկավ հայտնի գրող, բանաստեղծ Վալերի Բրյուսովը, որը Ռուսթավելու թատրոնի համերգային դահլիճում հայ քնարերգության երեկո անցկացրեց: Երեկոն բովանդակալից էր և ոչ միայն մեզ՝ այլագրիներին, այլ նաև հենց իրենց՝ հայերին էլ շատ նոր բան ասաց հայ պոեզիայի մասին:

Երեկոյից հետո հենց այնտեղ տրվեց ճոխ ճաշկերույթ: Մասնակցեցին գրեթե հարյուր իննսուն տղամարդ և կին: Ես նույնպես բախտ ունեցա ներկա գտնվելու այդ ճաշկերույթին:

Ճաշկերույթում սիրո սոխակներ էին թևածում...

Մի քանի կենացից հետո սեղանապետը նոր կենաց առաջարկեց.

– Ուշադրություն, գեղեցկագույն տիկնայք և ոչ պակաս համեստափայլ պարոնայք: Պարզվում է, որ Թիֆլիս քաղաքում, ինչպես մեծարգո Վալերի Բրյուսովն է ասում, հայերս հրաշալի պոետ ենք ունեցել: Մեղքս չեմ թաքցնում, քանզի մինչ այս պահը ես դա չէի նկատել, չգիտեի: Ոչ էլ իմացել եմ, որ այդ հրաշալի պոետը իմ բարեկամն է... Դե՛, ինչպե՞ս եք ընդունում: Հա՛, բարեկամ պոետ եմ ունեցել, բայց չեմ իմացել: Իհարկե, ոչ էլ դուք գիտեք՝ ում մասին է խոսքը...

– Հովհաննես Թումանյանի՛, Հովհաննես Թումանյանի՛, - լսվում էր այս ու այն կողմից:

– Այո՛, Հովհաննես Թումանյանի, որին մինչ այսօր չէինք տեսնում կամ չէինք ուզում տեսնել, մինչև որ պատվարժան Վալերի Բրյուսովը մատնացույց արեց...

– Խմենք Հովհաննես Թումանյանի կե...

Ոգևորված ներկաները թույլ չտվեցին՝ թամադան ավարտի իր խոսքը: Մի մարդու նման բոլորը ոտքի ելան, բոլորը զավթները պարզե-

ցին Հովհաննեսի կողմը, և «կեցցե՛», «վաշա՛», «բռավո՛» բացականչությունները փոխնիփոխ բախվեցին առաստաղին...

Բոլոր ներկաները, անկախ ազգային պատկանելությունից, այդ պահի փառահեղությունն զգում էին միանման զգացումով: Բոլորն զգում էին, որ այդ թուպեին իրենց կողքին է երկնային շնորհով օժտված մի մարդ՝ սրտի հավատարմատար մի մեծ բանաստեղծ, որը ջերմացնում է բոլորի հոգիները:

ՎԵՀԱԶՆԻՎ ՄԱՐԿԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Ռուսական մեծ հեղափոխության առաջին ամիսներն էին, այն ժամանակները, երբ ռազմաճակատից թագավորական զորքերը հանում էին, ազգային ջոկատներ էին կազմավորում: Հայոց ազգային ռազմական ասպարեզ եկավ անուն հանած Անդրանիկն իր ջոկատով...

Անդրկովկասի կառավարությունը, ըստ ազգային սկզբունքի, Հայաստանի նախկին գավառները գիջեց հայկական միավորումներին, բայց միայն դրանով չբավարարվեց. բնակչությանն անհրաժեշտ էր հասարակական ուժերի աջակցություն՝ ազգերի միջև խաղաղություն պահպանելու համար:

Նման առաքելություն իրականացնելու համար գործողվածներից մեկը, կարծեմ, Հովհաննեսն էր:

Չափազանց վտանգավոր էր այդ անիշխանության ժամանակ որևէ տեղ գնալ. դա հավասար էր բոցավառ կրակի մեջ նետվելուն:

Բայց Հովհաննեսը գնաց:

Եթե որևէ մեկին պետք է հաջողվեր ազգերի միջև վերացնել թշնամանքը և խաղաղություն հաստատել, ապա դա կրկին Թումանյանը կարող էր, իսկ նա կխուսանավե՞ր:

Բոլորս հավատում էինք, որ նա՝ իբրև ժողովուրդների միջև եղբայրության և միաբանության միջնորդ, մեծ մարդասեր, նշանավոր բանաստեղծ և հասարակական գործիչ, հայերին ու թուրքերին կհաշտեցնի...

Անցավ ժամանակ...

Մի անգամ գնում էի դեպի տոնավաճառ: Կիրակի էր: Բավականին շատ մարդիկ էին զբոսնում:

Ժողովրդի մեջ տեսա կորամեջք մեկին, որին այս ու այն կողմից

շրջապատել էին տղաներ ու աղջիկներ:

Նմանեցնելով ծանոթիս՝ հենց թիկունքից կանչեցի.

– Հովհաննէ՛ս, բարեկա՛ն, Հովհաննէ՛ս...

Տղամարդը երեսը շրջեց. իսկապես նա էր...

Երբ սոտեցա, զարմանք պատեց ինձ. ասես հոգին թունավորված լիներ, ճեփ-ճերմակ էր: Իմ առաջ ոչ թե սովորական, ժպտադեմ, առողջ, կենսուրախ Հովհաննէսն էր, այլ ասես մեկ ուրիշը:

– Ի՞նչ է պատահել, Հովհաննէ՛ս, ո՞նց եք:

– Ո՞նց պիտի լինեմ, էսպես էլ որ կամ, չե՞ս զարմանում:

– Ի՞նչ է պատահել:

– Է՛հ, ինչ չպիտի տեսնեի:

– Ի՞նչ տեսաք:

– Վերքերս... Սրտիս վերքերը մի՛ քրքրի...

Չախից փոխարինեցի ուղեկցին, բռնեցի արմունկը:

– Այնուամենայնիվ ի՞նչ է պատահել:

– Լեզվով ասելու բա՞ն է, որ... Իսկական դժոխք... Մարդիկ գազազել են, ցոփացել... Մենք միշտ համոզված ենք եղել, որ թուրքերը վայրենի են, ուխտադրուժ են, անմարդկային ինչ էլ անեն, զարմանալի չէ մեզ համար, բայց երբ վայրենություն են անում մարդիկ, այն էլ՝ ուսանողները, այդ ժամանակ... Այդ ժամանակ չգիտեմ՝ ի՛նչ ասեմ...

– Ի՞նչ է պատահել, Հովհաննէս:

– Այնտեղ էի, որտեղ հայերն ու թուրքերն ապրում են հարևանությամբ, ոմանք՝ նույնիսկ խառն... Նրանք հողի պատվավոր աշխատավոր են, նաև նախրապաններ, հովիվներ... Ի՛նչ ունեն իրար մեջ բաժանելու...

– Հետո՞:

– Սատանան բույն է դրել նաև նրանց հոգում, սև կատու է անցել նրանց արանքով... Կամրջի գլխին տեսա, թե ինչպես մի հայ ուսանող խողխողեց թուրքին և նետեց ջուրը...

– Դուք տեսա՞ք:

– Մեփական աչքերովս... Երանի քոռանայի, չտեսնեի էդ բանը...

– Ինչ արած, բարեկա՛ն, մարդ երբեմն կորցնում է գլուխը...

– Ո՞նց թե՛ ինչ արած, ոնց թե՛ կորցնում է գլուխը: Ուրեմն մարդկայնությունն էլ պիտի կորցնի...

Բռնել էի թևը, ասես կրծքիս սեղմած լինեի, զգում էի, թե ինչպես է

դողում, ասես ներսում կրակ էր վառվում:

Նա գերզգայուն մարդ էր. լավն ու վատը, ուրախությունն ու ատելությունն ընկալում էր զարմանալիորեն նրբորեն:

Իմ առաջ ասես կանգնած էր հավասարակշռությունը կորցրած մի մարդ, նկատեցի, որ փոքր-ինչ նիհարել է, նույնիսկ ուտերն ավելի կորացել էին, երեսը, վարդագույնի փոխարեն, մոխրագույն էր դարձել:

Այո՛, Հովհաննեսի սիրտը մոկտում էր ոչ միայն նրա համար, որ թուրքերը կոտորում էին հայերին, այլև այն բանի, և սրա համար գուցե ավելի շատ, որ հայ ուսանողները թուրքերին չէին ներում...

Առաջին հայացքից թվում է, թե այդպես էլ պետք է լիներ, ինչպես որ եղել է: Այն դառնադեպ ժամանակներում եթե թուրքերը կոտորում էին հայերին, ոչ էլ հայերը պետք է զիջեին, բայց Հովհաննեսը՝ իբրև մեծ մարդ, մեծ հումանիստ, դրանում վայրենություն էր տեսնում:

Նրա սիրտը ցավում էր մարդկանց վայրագության պատճառով: Գուցե կեղծ, թթու հայրենասերները, ազգայնամոլները նույնիսկ պախարակեն, ասեն՝ «երբ ուրիշը քեզ սպանում է, դու էլ պիտի սպանես», բայց բարձր իդեալների տեր մարդիկ միշտ փառքով կհիշեն Հովհաննես Թումանյանին նման հումանիզմի համար...

ԱՄՈԹԱԼԻ ԵՎ ՅԱՎԱԼԻ

Այլ անուն չես տա այն միջադեպին, որ տեղի ունեցավ 1918 թ. հայերի և վրացիների միջև: Ով ում հաղթեց, ով ինչով պիտի հաղթեր, ով էր արդար, ով՝ անարդար՝ այստեղ չեմ քննի: Միայն պետք է նշեմ ցավալի փաստը. հուրախություն թշնամու՝ հենց մեր իսկ ընդհանուր թշնամու, կեղտոտ ձեռքի գործ էր կատարվածը:

Թիֆլիսը դողերոցքով էր բռնված: Բորչալու-Սանահին, Վորոնցովկա, Եկատերինոֆելդ և ուրիշ վայրեր կրակի բոցերով էին պատված:

Պետք էր տեսնել, թե այդ օրերին Հովհաննեսը որքա՛ն էր լարված, պրկված: Ես տեսել եմ բոլոր կողմերից թշնամիներով շրջապատված փութագար, դառնացած հրամանատարի, որն անհրաժեշտ քանակի փամփուշտ չունի, որ կարողանա ազատվել թշնամուց, այդպես դառնացած, փութագար էր Հովհաննեսը, բայց ոչ թե տարված արյուն հեղելով, այլ հոգսի տակ կքած, թե ինչ ուղի գտնի, որպեսզի այս հարևան երկու ժողովրդին փրկի ամոթալի և ցավալի պատահարից...

Նա իր հարկի տակ հաճախ հավաքում էր վրացի գրողներին և հասարակական գործիչներին, ինչպես նաև հայությանը՝ այդ բոցկլտացող կրակը մարելու համար... Դրան հասնելու նպատակով նա ոչ մի բանի առաջ կանգ չէր առնում:

Ի միջի այլոց, իմ երկերից մեկի («Նորացած կյանք» վեպի) առաջին գլուխն սկսել էմ Հովհաննեսի տնից, իրեն էլ դարձրել էմ վեպիս հերոսներից մեկի նախատիպը, որը վերջում դառնում է հայ-վրացական միաբանության խորհրդանիշը:

Եղբայրների միջև արձակված գնդակը ավելի շատ Հովհաննեսի սրտին էր կաշում և ծանր վերք բացում...

Որքան հիշում եմ, այդ ժամանակ թե փոքր-ինչ ուշ նշվեց Հովհաննեսի հորեյլանը, բայց տեղի ունեցած միջադեպից սիրտն այնպես էր կոտրվել, որ հորեյլանական հանդիսությունն ընդունեց գրեթե առանց ոգևորության:

Ժամանակավորապես սուրը հաղթեց, թեև վերջնական հաղթանակը քնարը տոնեց...

ԳՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Վրացական թատրոնում (այժմ՝ Գրիբոյեդովի անվան) հայ գրողների (թե՞ բարեգործական ընկերության) երեկո էր՝ Հովհաննես Թումանյանի ղեկավարությամբ:

Ես ևս գնացի:

Ընտիր հասարակություն էր հավաքվել:

Ինձ նկատելուն պես Հովհաննեսն իսկույն հրավիրեց դահլիճի անկյունում հատուկ բացված սուփրայի մոտ: Սեղանի մոտ ոչ ոք չկար: Պարզվեց, որ այդ սեղանը հատուկ ընտրված հյուրերի համար են բացել:

– Որտե՞ղ են ձեր գրողները, ինչո՞ւ չեն երևում:– Ինձ հետ խոսելով՝ Հովհաննեսը ստեպ-ստեպ դռան կողմն էր նայում:

– Ինչ ճիշտ է, ճիշտ է, նրանց գալուն եմ սպասում:

– Հարկ է եղբայր, հարկ է մեր գրականության և արվեստի բոլոր բնագավառների վարպետների սերտ կապը, իրար հասկանալը և ընդհանուր լեզու գտնելը, որպեսզի ժողովուրդն էլ գիտակցի (ինչ եմ ասում, ժողովուրդը մեզանից ավելի շուտ գիտի), որ եղբայրներ պետք

է լինենք: Անհրաժեշտ է՝ մեր հասարակության առաջամարտիկներին ի մի բերել, այլապես մեր վերքերն անվերջ են...

Զրուցում էր և այս ու այն կողմ աչք ածում՝ համոզվելու՝ սեղանի վրա որևէ բան հո թերի չէ՞: Շուտ-շուտ նայում էր նաև դռան կողմը... Հանկարծ վեր կացավ ու շարժվեց դեպի ելքը: Տեսա՝ գրական նոր խմբակցության՝ «Երկնագույն եղջյուրների» անդամներն են գալիս:

Հովհաննեսը բարեհամբույր ժպիտով դիմավորեց նրանց և առաջնորդեց իմ կողմը: Դահլիճի կենտրոնում «Երկնագույն եղջյուրների» պարագլուխը հանկարծ կանգնեցրեց Հովհաննեսին և ինչ-որ բան ասաց: Ես ակնդետ նայում էի: Հովհաննեսը փոքր-ինչ մռայլվեց: Մտածեցի՝ հավանաբար նրանց զարմացնում է իմ այստեղ գտնվելու հանգամանքը: Նրանք դրա համար «հիմք» ունեին. նրանց իբրև թե նոր գրելաձևն ու ոմանց ամբարտավանությունն ինձ դուր չէին գալիս, իմ ամսագրում նրանց ձաղկող հոդված էի տպագրել:

Բայց և այնպես մոտեցան: Ողջունեցինք իրար:

Զրույցի ժամանակ որոշեցինք, որ անհրաժեշտ է հայ և վրաց գրականության ընտիր երկերը թարգմանել:

Ճաշկերույթն սկսվեց: Գավաթները դատարկվում էին պոեզիայի գովքով:

Քիչ անց ոտքի ելա և հրաժեշտ տվեցի: Հովհաննեսը կանգնեցրեց ինձ...

– Ո՞ր ես գնում:

– Ասելիքն ասվեց, գինու հետ էլ մտերիմ չեմ...

– Ի՞նչ մի խմողն էլ ես եմ:

– Անհետաձգելի գործ ունեն,- պատասխանեցի ու շարժվեցի դեպի ելքը:

Հովհաննեսն ուղեկցեց մինչև դուռը:

– Ինձ դուր չի գալիս, Իոսեֆ ջան, ինձ դուր չի գալիս էդպիսի վարմունքը: Գրականությունը մի ընտանիք է, գրողները, ինչ հավատամքի էլ լինեն, էդ տանը հավասար են: Մենք բոլորս մի գործ ենք կատարում, մի նպատակի ենք ծառայում՝ ժողովրդի բարօրության գործին, ի՞նչ կարիք կա իրար հետ գժտվելու...

– Մի՞թե ես գժտվել եմ որևէ մեկի հետ կամ ասե՞լ եմ նման բան:

– Չէ՛, չես ասել, բայց գիտեմ:

Հրաժեշտ տվեցի ու դուրս ելա:

Այո՛, գրականությունը նրա համար սոսկ նպատակ չէր, այլ ժողովրդին, ճշմարտությանը և սիրուն ծառայելու միջոց:

Նրա գեղարվեստական ողջ ստեղծագործությունը ծառայել և ծառայում է այդ գաղափարին՝ սիրուն, ճշմարտությանը, ժողովրդի դաստիարակությանն ու նրան դեպի լավագույն ապագա մղելուն:

Գրողից, բացի գրչով ծառայելուց, նա պահանջում էր նաև լինել գիտակից, բարձր, մեծ քաղաքացի... Հենց դրանից հետո սկսեցի Հովհաննեսի «Անուշի» թարգմանությունը, բայց քանի որ այդ գործը ձեռնարկեց Իոսեֆ Գրիշաշվիլին, ես թողեցի այն:

ԺՈՂՈՎՈՒՐԳՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ

Հովհաննես Թումանյանին ես չեմ կարող պատկերացնել այլ կերպ, եթե ոչ իբրև ժողովուրդների բարեկամության մեծագույն միջնորդ, անբասիր գործիչ: Նրա յուրաքանչյուր տողը, նրա յուրաքանչյուր երկը, «Անուշից», «Շունն ու կատուն» լեզենդից սկսած մինչև վրաց գրողներին նվիրված բանաստեղծությունը, այս գաղափարի մարմնավորումն են, այս երկնային ձգտումների խորհրդանիշը...

Սույնը հաստատելու համար վերը մի քանի օրինակ բերեցի:

Այս ամենից բացի՝ Հովհաննես Թումանյանն ինքնատիպ և յուրօրինակ մարդ էր:

Թիֆլիսը սիրում է ժամանակ առ ժամանակ ինքնատիպ խառնվածքի մարդկանց ի հայտ բերել: Օրինակ՝ այդպիսիք էին Իլյա Դավճավաձեն, Ակակի Ծերեթելին, Գաբրիել Սունդուկյանը, Վասիլի Բարնովը և այլք, առանց որոնց՝ Թիֆլիսը երկար, շա՛տ երկար նրանց կարիքն է զգում, այսինքն՝ նրանց հեռանալուց հետո քաղաքն ասես դատարկվեց: Բոլորն են զգում նրանց բացակայությունը, վաղուց չենք տեսնում փոխ նման ծանրաքայլ, հոգսերից միշտ մտասույզ Իլյային՝ գլուխը դեպի երկինք բարձր պահած, ժպտերես, արևային Ակակիին, կալմիկական ոչխարի մորթուց երկնագույն գլխարկով Գաբրիելին, որն իր տնից՝ Լեբոնոստովի փողոցի մի կողմով, ոտքով զբոսանք էր կատարում դեպի Մուշտախո, մյուս կողմով՝ դարձյալ ոտքով վերադառնում: Կամ՝ Վաստյին՝ նման քարոզչի, որմնանկարային դեմքով, որը ցերեկվա ժամը 12-ին Ռուսթավելու պողոտայի ձախից իջնում էր, իսկ աջից՝ վերադառնում տուն՝ սեփական, այլոց համար անտեսանե-

լի հերոսների սխրանքներով տարված...

Ճիշտ այդպես ինքնատիպ էր նաև Հովհաննես Թումանյանը՝ առաքինի, շարժուն, բարեսրտության տիպար, ով հաճելի լուր լսելիս ժպտում էր, ցավալի լուր լսելիս՝ մռայլվում: Երկար ժամանակ է՝ նրա բացակայությունը քրքրում է թիֆլիսցիների հոգին...

Ինքնատիպ էր նաև բանաստեղծ Կարա-Գարվիշը:

Հովհաննեսն իր ողջ էությունը սիրում էր Վրաստանը, նրա սիրտը՝ Թիֆլիսը, և առհասարակ վրացիներին: Նրա երկերը կախարդ Սոսո Գրիշաշվիլի շնորհիվ մատչելի դարձան ամեն մի վրացու... Նրա «Մի կաթիլ մեղրը», որ հենց ինքը՝ Սոսո Գրիշաշվիլին, կրակված կարդում էր բեմից, միշտ բարձր զգացմունքների խարույկ էր բոցավառում...

Հովհաննեսը սիրում էր Վրաստանը, Վրաստանն էլ՝ Հովհաննեսին, ինչպես իր մյուս հարազատ ու երախտավոր զավակներին:

Դրա համար էլ նա խաղաղ հանգչում է Վրաստան երկրի հողում՝ Թիֆլիսում:

Հանգչի՛ր խաղաղ, աշխարհի առաջ պարտքդ մարած սիրելի բանաստեղծ և քանկագին բարեկամ՝ Հովհաննես...



ԳԻՈՐԳԻ ԼԵՈՆԻԶԵ (1899-1966), բանաստեղծ, արձակագիր, պատմաբան, Վրաստանի ԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1944), Վրաստանի ժողովրդական բանաստեղծ (1959), հասարակական գործիչ: Ծնվել է Սագարեջոյի շրջանի Պատարձեուլի գյուղում՝ ուսուցչի ընտանիքում: 1913 թ. ավարտել է Թիֆլիսի հոգևոր սեմինարիան, ապա՝ ԹՊՀ բանասիրական ֆակուլտետը: Առաջին բանաստեղծությունը տպագրել է 1911 թ., բանաստեղծությունների առաջին ժողովածուն՝ 1939 թ.: 1930 թ. հրատարակել է «Ագոսանի Սայաթ-Նովա» («Գոսան Սայաթ-Նովա») աշխատությունը՝ նվիրված հանճարեղ բանաստեղծ-

աշուղի կյանքին ու գործունեությանը: Բանաստեղծական տասնյակ ժողովածուների, բազմաթիվ պատմվածքների և մենագրությունների հեղինակ է:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ⁴⁶

Երեսուն տարի առաջ վախճանվեց հայ գրականության զարդը՝ անդրկովկասյան ժողովուրդների եղբայրության երգիչ, հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը:

Մեր եղբայրական հայ ժողովուրդը, մասնավորապես՝ հայ մեծ գրականությունը, միշտ կհպարտանա այնպիսի սքանչելի վարպետով, ինչպիսին է Հովհաննես Թումանյանը՝ հայ գրականության դասականը, հայ քնարերգության իսկական սիրտը:

Ես մեկ անգամ չէ, որ տեսել եմ Հովհաննես Թումանյանին:

Ես երջանկություն եմ ունեցել 1920 թվականին, բոլորովին երիտասարդ, լինելու Հովհաննես Թումանյանի հյուրը՝ նրա իսկ հրավերով:

Երբեք չեմ մոռանա բարձրահասակ, թիկունքը փոքր-ինչ կոր, ասես եղեգ քամու դեմ, արծաթահեր, ժպտուն և առաքինի Հովհաննեսին:

Նրա խոսքը մեղրածոր էր, իսկ ինքը՝ վստահելի և արդար:

Նա խորապես և հափշտակությամբ էր սիրում իր ժողովրդին: Հայրենիքը, նրա վերքերը, նրա ծիծաղն ու լացը, ինչպես ինքն էր ասում, իրեն դարձրին բանաստեղծ և արարող: Նա ժողովրդին նվիրաբերեց ոչ միայն սեփական խոսքը, այլ նաև քաղաքացու և գործչի իր անբա-

սիր սիրտը:

Աներեր էր Հովհաննես Թումանյանի հավատը աշխատավոր ժողովրդի ստեղծագործական ուժի հանդեպ, հավատում էր իր երկրի երջանիկ գաղիքին, եղբայրական ժողովուրդների ապագային: Ժողովուրդների եղբայրական գաղափարների ասպետ բանաստեղծը երջանիկ էր նրանով, որ ականատես դարձավ ազատության դրոշի ծածանմանը դարերով տանջված Հայաստանի սար ու դաշտի վրա և ամբողջ Կովկասում:

Հիշում եմ Հովհաննես Թումանյանի հուղարկավորությունը 1923 թվականին: Նրա դագաղի շուրջ իր հայրենակիցների հետ հավաքվել էինք մաս մենք՝ վրացի գրողներս ու հանգուցյալին մեծապես հարգողներս: Թումանյանին ամբողջ Թիֆլիսն էր ողբում, ինչպես կողբար սեփական, հարագատ որդուն:

Հայ մեծ բանաստեղծը խոր սեր էր տածում բոլոր ժողովուրդների հանդեպ: Նա Անդրկովկասի եղբայրական ժողովուրդների բարեկամության անխոնջ գործիչն էր, հատկապես անչափելի և շատ նուրբ սիրով էր սիրում Վրաստանը և վրաց ժողովրդին:

Թումանյանն ասում էր, որ ինքը առանձնապես սիրում է «եղբայրական վրաց ժողովրդին»: Թե՛ «այս ժողովրդի մեջ եմ անցկացրել իմ կյանքի մեծ մասը, այս ժողովրդին եմ կապվել խոր և ամուր կապով»:

Նա սիրում էր Վրաստանը, նրա ժողովրդին, նրա մշակույթը, նրա գրողներին, նրա Ռուսթավելուն, Բարաթաշվիլին... «Սրտանց մաղթում եմ՝ դառնաք կռող-կոփողները հայրենիքի մոտեցող երջանկության», - վրաց գրողներին էր դիմում այն ժամանակ, երբ մոտենում էին մեր ժողովրդի ազատության փառապանծ օրերը:

Հովհաննես Թումանյանն ուղղակի հիացած էր Վրաստանի բնության գեղեցկությամբ ու փառահեղությամբ: «Իմ բանաստեղծությունների մեծ մասը Վրաստանի բնության ազդեցությամբ եմ գրել», - ժպտալով ասում էր Հովհաննեսը, ով համաշխարհային սիրում էր իր մանկության հայրենիքը՝ Լոռին՝ կանաչ հովիտներով, խոտհարքներով, մառախլապատ ձորերով և դաշտերի անուշաբույր ծաղիկներով: Նա դեռ լսում էր մանկության օրերի տերևների տսափյունը:

Վրաստանին մա մեկ կամ երկու բանաստեղծություն չէ, որ նվիրել է: Նրա «Նվեր Վրաստանի բանաստեղծներին»-ը մեզ համար սիրելի բանաստեղծություն է (հաճույքով պետք է նշել Հովհաննես Թումանյանի)

նյանի բանաստեղծությունների և պոեմների՝ Գրիշաշվիլիի հիանալի քարգմանությունները, որոնք նպաստում են, որ վրացի ընթերցողը ծանոթանա Հովհաննես Թումանյանի ստեղծագործությանը):

Հովհաննես Թումանյանը երկար ժամանակ ապրել է Թիֆլիսում և այստեղ էլ ստեղծագործել: 1923 թ. նրա դին հանձնվեց Թիֆլիսի հողին:

Հովհաննես Թումանյանը քարգմանել է վրաց մեծ բանաստեղծների՝ Իլյա Ճավճավաճեի և Նիկողոզ Բարաթաշվիլիի քերթվածները: Նախատեսում էր քարգմանել նաև Ռուսթավելու պոեմը:

Ն. Բարաթաշվիլիի դին Գանձակից տեղափոխելու ժամանակ՝ 1893 թ., նա՝ դեռ բողոքովին երիտասարդ մի բանաստեղծ, խոսք է ասել, իսկ 1915 թ. հուլիսին, երբ Վաժա Փշավելան ծանր հիվանդ էր, չնայած անձնական մտերմություն չունեի, այցի է գնացել և երկար գրուցել Վաժայի հետ: Հովհաննես Թումանյանի եղբայրական, սրտառուչ վերաբերմունքից Վաժա Փշավելան, ինչպես նրա եղբայրն էր պատմում, հիացած է եղել:

Հովհաննես Թումանյանի բնակարանը, որ գտնվում էր այժմյան Դավիթաշվիլի փողոցում, միշտ հրապուրում էր վրացի բանաստեղծներին: Հովհաննես Թումանյանն էլ միշտ սրտաբաց էր ընդունում իր մոտ գնացող վրացի գրողներին: Պոեզիայի շուրջ գրուցելիս նա միաժամանակ հետաքրքրվում էր նաև հարևան ժողովուրդներին հուզող կենսական հարցերով:

Եվ երբ գլուխ բարձրացրեց մենշկիկների ու դաշնակցականների մարդատյացությունն Անդրկովկասում, Հովհաննես Թումանյանը, եղբայրություն քարոզելով և իբրև պաշտպան, անվարան մտավ ժողովրդի մեջ: Այս ծառայության մեջ նա քաջարի էր:

Թումանյանի բանաստեղծական խոսքն այսօր էլ վեհորեն մասնակցում է մեր երկրի շինարարությանը: Նրա մարդասիրական խոսքը մեզ՝ վրացիներիս համար էլ սիրելի է նույնքան, որքան սիրելի է իր հարազատ ժողովրդին:

Մեծ բանաստեղծները պատկանում են բոլոր ժողովուրդներին:

Մեր պաշտելի Թիֆլիսը քաղցր սիրով է հիշում քաղցրագույն բանաստեղծին և մարդուն, ով անհաշտ թշնամին էր սոցիալական և ազգային ամեն կեղեքումի, հիշում է բանաստեղծին և մարդուն, ով ժողովուրդներին մեծ սիրո կոչ էր անում:

Ժողովուրդ և հայրենիք՝ ահա այս անմահ խոսքերն էին գրված նրա քնարի վրա:

Հովհաննես Թումանյանն անդուլ և անձնագոհ մարտնչում էր ժողովրդի, հայրենիքի և ազատության համար:

ՄԱՅԱ

ՍՈՆԵՏ⁴⁷

(Հովհաննես Թումանյանին)

Մենք ապրում ենք ծանր ու ցնծուն տարիներ՝
Գարնան սկիզբն ու ավարտը ցուրտ ձմռան:
Քո հյուրն ենք մենք, օ՛ Հովհաննես Թումանյան,
Միասին ենք մշում կանաչ տոնը մեր:

Չախորդությունն իր մեջ ունի խինդ այնքան.
Ով ձախորդ չէ, թող սաղմոսներ նվագի:
Որքա՛ն նուրբ է նախշը ծովի ալիքի,
– Եվ դու, պոե՛տ, դու արքան ես բնության:

Եթե նոճին ստվերոտի քո արփին,
Թիֆլիսն ահա թևաբաց է վերստին.
Աղոթում է սեր ու հոգու օվսանան:

Ու մենք, մեզ հետ՝ Ապոլոնը լուսարար,
Շարժենք ուրախ մեր անձկալի ամեն լար
Թումանյանի հարկի ներքո սրբազան:



ՌԵՎԱԶ ՄԱՐԳԻՆՆԻ (1916-1984), բանաստեղծ, թարգմանիչ: Ծնվել է Վրաստանի Մեստիայի շրջանի Մուլախի գյուղում: 1940 թ. ավարտել է Թբիլիսիի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: 1942 թ. կամավոր մեկնել է Հայրենական մեծ պատերազմ: Ջորաջրվելուց հետո եղել է վրացական մի շարք ամսագրերի, ապա՝ «Լիտերատուրուլի Սաքարթվելո» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր:

Առաջին բանաստեղծությունը տպագրել է 1934 թ., առաջին ժողովածուն՝ 1940 թ.:

ԻՄ ԺՈՂՈՎՐԳԻ ՄԵՃ ԲԱՐԵԿԱՍԸ⁴⁸

Վրաց ժողովուրդը մոտ ու սրտակից բարեկամներ շատ է ունեցել, բայց Հովհաննես Թումանյանը բոլորովին այլ բարեկամ էր: Միայն եղբայրական Հայաստանին չէ, որ նա պատկանում է: Նա նաև մերն է, քանի որ մեզանում՝ Վրաստանում մույնպես թևածում է նրա ջինջ ու շենշող պոեզիայի ոգին, նաև նրա համար, որ ոչ վաղ անցյալում Հովհաննեսը վրաց ժողովրդի բոլոր ցավերը և ուրախություններն էր կիսում, Վրաստանը նրա երկրորդ հայրենիքն էր, և սիրում էր այդ երկիրը՝ իմ երկիրը, ինչպես սիրում են հարազատ մորը: Այդ մասին են խոսում Վրաստանի հանդեպ մեծագույն սիրով տոգորված նրա բանաստեղծությունները, հրապարակախոսական ջերմաշունչ հողվածները, նամակները և վրացիների հետ հոգսի թե ուրախության մեջ անցկացրած նրա կյանքի մեծ մասը:

Նման մարդիկ հազվադեպ են ծնվում:

Հայ մեծ բանաստեղծ ու մտածող Հովհաննես Թումանյանն օրգանապես մտել է կովկասյան ժողովուրդների գրականության մեջ: Առավել ևս նա մոտ ու հարազատ է բոլոր վրացիներին, հարազատ է իր մարդասիրական գաղափարներով: Նրա քերթվածները գրավիչ են և կատարյալ, դյուրընկալ են և խոհածին, պարզ են և տարողունակ: Ցավոք, հայերեն չգիտեն, բայց մենք ունենք Իոսեփ Գրիշաշվի-

լի սքանչելի թարգմանությունների հատորյակը, որի շնորհիվ վրաց ժողովուրդը սիրեց Հովհաննես Թումանյանին: Այդ թարգմանության մասին շատերն են գրել և ապագայում ևս կգրեն: Մասնագետները, հայ և վրաց գրականությունների լավագույն գիտակները այդ թարգմանությունը համարում են նվաճում:

Իմ ավագ ժամանակակիցները երջանկություն են ունեցել իրենց աչքով տեսնելու նրան, բարեկամանալու այդ հիասքանչ բանաստեղծի և հասարակական վիթխարի գործչի հետ, միասին խորհելու բազմաթիվ ցավոտ ու հրատապ հարցերի, կովկասյան ժողովուրդների բարեկամության անհրաժեշտության, մասնավորապես՝ հայերի և վրացիների եղբայրական հարաբերությունների մասին: Մամուլում, հրապարակային ելույթներում, անհատական գրույցներում, ամենուր, նախահեղափոխական Հայաստանում և Վրաստանում նրանք մարտնչում էին՝ ցրելու համար ցարական կառավարության առաջացրած մշուշը և ճշմարտության լույս սփռելու ժողովուրդների ճանապարհին:

Բազմաթիվ հուշեր, որոնք տպագրվել են հայկական ու վրացական մամուլի էջերում, ամսագրերում ու գրքերում, անմոռանալի և թանկարժեք շատ բան են պահել մեզ համար: Դրանց շնորհիվ հարուստ տեղեկություններ են քաղել Հովհաննես Թումանյանի՝ իբրև եզակի անհատականության ու քաղաքացու մասին: Հիմա, երբ գրում են այս տողերը, աչքիս առաջ հառնում է հյուրապաշտ տանտիրոջ թիֆլիսյան բնակարանը Դավիթաշվիլի փողոցում, այնտեղ, որտեղ հիմա նրա անունը կրող գրադարանն է...

Ահա Հովհաննեսի տանը հյուր է բիբլիական մորուքով Վասիլի Բարնովը: Երկու ալեգարդ և պատկառազորու ծերունիների շուրջ հավաքվել են հայ և վրաց երիտասարդ գրողներ: Չրույցի թեմաներն են կովկասյան ժողովուրդների հոգսերը, մտորումները նրանց ապագայի մասին, հեղափոխությունը, եղբայրությունը, բարեկամությունը... Ընդարձակ սենյակի մթնոլորտը հագեցած է պոեզիայով, անուրջներով, սիրով, և ցավում են երկու քաղցրաբույր ծերուկների, երկու բարեպաշտ այրերի սրտերը ժողովուրդների դառը ճակատագրի համար: Նրանք խորհում են մեծ ապագայի մասին և կոչ են անում երիտասարդներին, որ գնան ժողովրդի մեջ, իրենց բոլոր կարողություններն ի սպաս դնեն թշնամանքն արմատախիլ անելու և փոխարենը սիրո

գթառատ սերմեր ցանելու համար...

Այս պատմությունը եզակի չէ. Թիֆլիսը մնան հանդիպումներ շա՛տ-շա՛տ է հիշում...

Հովհաննես Թումանյանի հետ իմ ծանոթությունն սկսվել է «Գի-բորը» պատմվածքով: Այդ ստեղծագործությունը ես կարդացի, երբ երրորդ թե չորրորդ դասարանում էի, և սկսեցի հոնգուր-հոնգուր լաց լինել Գիբորի համար: Վրաց շատ սերունդներ են ինձ մնան լաց եղել Գիբորի դառը բախտի պատճառով: Վրացերեն թարգմանելու օրվա-նից «Գիբորը» դուրս չի եկել մեր դպրոցական դասագրքերից:

Անցավ ժամանակ, և ես սիրեցի Թումանյանի մեծ պոեզիան, ծա-նոթացա նրա արձակին, հրապարակախոսական հոդվածներին, և իմ աչքի առջև հառնեց վիթխարի մի մարդ՝ հզոր և պատկառելի մի ար-վեստագետ: Վերջերս իմ հայ բարեկամների օգնությամբ փորձ արեցի և մեծ ակնածանքով թարգմանեցի Հովհաննես Թումանյանի բանաս-տեղծությունները, ինչից շատ մեծ հաճույք ստացա:

Մոտ հիսուն տարի առաջ Հովհաննես Թումանյանը ոգևորված շտապում էր մասնակցելու Վրաց պոեզիայի օրվան նվիրված ցերե-կույթին: Նաև հատուկ հոդված նվիրեց վրաց պոեզիային: Նա գրում է. «Գնանք էլ գեղեցիկ օրը մեր եղբայր ժողովրդին այցելելու և նրա պայծառ հանճարը հարգելու»:

Եվ այսօր, երբ մեր մեծ երկրի ժողովուրդները հանդիսավոր նշում են Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյակը, մենք՝ վրացի բա-նաստեղծներս, կրկնում ենք նրա խոսքերը՝ դե ուրեմն գնանք Հայաս-տանի մայրաքաղաք, որպեսզի մասնակցենք պոեզիայի մեծ տոնա-հանդեսին և երախտիքի մեր խոսքն ասենք Վրաստանի մեծ բարեկա-մին ու սիրահարին, ժողովուրդների եղբայրության իսկական երգչին, հայ ժողովրդի լուսեղեն հանճարին:

ՋԵՐՄՈՐԵՆ ԵՆՔ ՀԻՇՈՒՄ⁴⁹

Հայ գրականության նշանավոր ներկայացուցիչ Հովհաննես Թումանյանն իր բովանդակալից կյանքի երեք տասնամյակից ավելին անցկացրեց մեր մայրաքաղաք Թիֆլիսում: Նա սրտանց սիրում էր Վրաստանն ու վրացիներին: Ահա թե ինչ է գրում նա իր բարեկամներից մեկին՝ հայտնի գրող Սիկո Փաշալիշվիլիին. «...Սեղմուն եմ Ձեր ձեռքը և հավաստիացնում, որ որքան ինձ համար թանկ են Վրաստանն ու վրացական սքանչելի հողին, այդքան էլ թանկ են այն մարդիկ, որոնք հանդիսանում են կրողներն ու մեկնաբանները էլ հոգու: Ինքը՝ վրացին, պոետ է, վրացի պոետը՝ կրկնակի պոետ»:

Վրաց բանաստեղծներից Հովհաննեսի բարեկամներից էր Իոսեթ Գրիշաշվիլին: Ո՞վ կարող է հաշվել, թե քանի արժանահիշատակ օրեր են անցկացրել միասին այս փառահեղ այրերը:

Ամեն անգամ, երբ գրույց էր սկսվում հայ և վրաց գրողների գրական փոխառությունների մասին, ժողովրդական պոետ Գլորգի Լեոնիձեն առանձնահատուկ սիրով հիշատակում էր Հովհաննեսին. «Հայ տաղանդավոր բանաստեղծ Հովհաննես Թումանյանին ես շատ անգամ եմ հանդիպել ու գրուցել նրա հետ: Սիրում էի այդ բարեսիրտ մարդուն: Մեզ ջերմացնում էր նրա մեղրածոր խոսքը...»

Հիշում եմ՝ հազար ինը հարյուր քսան թվականին Թիֆլիսում՝ Հովհաննեսի օջախում, կարդացի իմ ոտանավորներից մի քանիսը, որոնք Հովհաննեսը հավանեց: Իր հերթին նա ինձ ցույց տվեց հայերեն գրած իր մի քանի բանաստեղծությունները, որոնք նույն պահին բառ առ բառ թարգմանեց ռուսերեն:

Իր պաշտելի հայ ազգի հետ միասին Հովհաննեսը միշտ ջերմորեն էր արտահայտվում նաև վրացիների մասին: Ճիշտ էր, երբ ասում էր, թե «ին բանաստեղծությունների զգալի մասը Վրաստանի բնության ազդեցությամբ եմ գրել»:

1923 թ. վախճանվեց Հովհաննեսը: Նրա հուղարկավորությանը ես էլ մասնակցեցի: Սիրելի մարդու սգո արարողությանը, իր հայրենա-

կիցներից բացի, ներկա էինք նաև մենք՝ վրացի գրողներս, և նրա տա-
ղանդի երկրպագուները: Թիֆլիսը սգում էր, ինչպես հարազատ որդու
մահը կազար, և մեր գթառատ հողը նրան իր գիրկն առավ...»:

Գրող և մանկավարժ Իպոլիտե Վարթազավան Հովհաննես Թու-
մանյանին իր բարեկամն էր համարում: «Մեր Հովհաննեսը,- ասում էր
Վարթազավան,- առաջնակարգ գրողներից մեկն էր, ուրախությամբ
ընդունեց հեղափոխությունը, իսկ հետագայում՝ նաև Հայաստանում և
Վրաստանում խորհրդային կարգերի հաստատումը»:

«Հիմա էնպիսի ժամանակներ կգան,- ասում էր Թումանյանը,- երբ
աշխատավորներն առնիշտ կնետեն տառապանքի լուծը և կապրեն
երջանիկ»:

Հայ գրականությունից բացի՝ Հովհաննեսը լավ գիտեր նաև ռուս
և վրաց գրականությունները: Այդ լեզուներից նա բազմաթիվ երկեր է
թարգմանել իր մայրենի լեզվով:

Թիֆլիսցի մանկավարժ Մ. Կակաբաձեն հիշում էր. «Մի անգամ,
կարծեմ 1920 թ., Հովհաննեսի ընտանիքին այցի գնացի: Այդ ժամա-
նակ նա երևանցի չորս թե հինգ հյուր ուներ: Նրանք նույնպես գրող-
ներ էին: Հովհաննեսն անմիջապես ինձ ներկայացրեց հյուրերին և
մինչ այդ հայերեն սկսած գրույցը շարունակեց ռուսերեն: Խոսքը վե-
րաբերում էր Իլյա Ճավճավաձեին և Նիկոլոզ Բարաթաշվիլիին: Հով-
հաննեսը սիրով էր հիշատակում վրաց ականավոր բանաստեղծների
անունները և հյուրերին խնդրում է ձեռնամուխ լինել նրանց երկերի
թարգմանությանը, որպեսզի հայերն ավելի լավ իմանան երախտա-
վոր գործիչների ստեղծագործությունները:

Նրանց գրույցն ինձ վրա մեծ տպավորություն թողեց»:

Հովհաննես Թումանյանին սիրով և պատկառանքով է հիշում
մցխեթցի հանրահայտ ծաղկաբույծ-դեկորատոր Մ. Մամուլաշվիլին:
«Հովհաննես Թումանյանին ես գիտեի իմ երիտասարդական տարի-
ներից: Նա չափազանց անբասիր, առաքինի, բարեսիրտ մարդ էր: Նա
հատկապես շատ էր սիրում իմ թանկագին ուսուցչին՝ Ժողովրդական
կրթության բարերար Իլյա Ծինամձղվրիշվիլուն: Թումանյանը մոտիկ
ծանոթություն ուներ Իլյայի հետ և բարձր էր գնահատում այդ աշխա-
տասեր մարդուն:

– Շատ մեծ գործեր է կատարում Իլյա Ծինամձղվրիշվիլին,- մի ան-
գամ ասաց նա,- հայրենի գյուղում գյուղատնտեսական դպրոց բացեց,

իր ամբողջ կարողությունը ներդրեց և պատրաստ է կյանքն էլ նվիրաբերելու:

Հայ մեծ բանաստեղծը շահագրգռված էր, որ երկու հարևան ազգերը՝ հայերն ու վրացիները, միշտ ապրեն եղբայրաբար և բարեկամաբար: Նա իր ստեղծագործություններով նույնպես այդ էր քարոզում:

Հովհաննեսը դեռ երիտասարդ էր, երբ կույր մահը նրան զրկեց կյանքից: Սիրտս կսկծաց նրա մահն իմանալով: Ի դեմս նրա՝ մենք ընդմիշտ կորցրինք մեր հավատարիմ բարեկամին, մեր մայրաքաղաքի արժանավոր քաղաքացուն»:

ՍՏԵՓԱՆԵ ՄԽԱՐԳՐՉԵԼԻ (մահացել է 2016 թ.), բանաստեղծ:



ՀՈՎՀԱՆՆԵՄ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ⁵⁰

Ինչի՞ նման կլինեիր իմ կյանքը,
Եթե հանկարծ աշխարհում չլինեիր
Քո Անուշի սիրո տանջանքը,
Քո Անուշը՝ ճկուն ու թխահեր:

Տեսնել Հայաստանը և իմ հոգին
Մեկնել արեգակին նրա բոսոր,
Թումանյան, հանճար մեր թանկագին,
Եղբայրության կաղնի դու մեր հզոր:

Սիրում էիր մեղեդին մեր վրաց
Դու Միերի հոգում ծնված հրե,
Հայաստանի վիշտը դեռ չամոքված՝
Քեզ վիճակվեց մեր կսկիծն էլ տանել:

Դու հյուր չէիր մեզ մոտ եկել բնավ,
Դու մեր բնիկն էիր, եղբայրն անգին.
Ե՛վ ոչ մի փորձություն, և՛ ոչ մի դավ
Չբաժանեց հայոց, վրաց հոգին:

Ուզում եմ ես անցնել Հայաստանով
Եվ սփռել երգս այնտեղ իբրև ողջույն՝
Հպարտ քո շխամբող հիշատակով
Եվ քո ոգով՝ անմահ ու մշտաբերուն:

ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ՑԽՐԱԾՂԱՐՈՅՈՒՄ⁵¹

*Հովհաննես Թումանյանը Բորժոմիի լեռնանցքով ու
Բակուրիանիով բարձրացել է Ցխրածղարոյի գագաթը:*

«Այնտեղ կլինեմ արևածագին,
Կտեսնեմ՝ ինչպես լույս օրը ծնվեց», -
Կիպ մոտենալով սարի գագաթին՝
Ինքն իրեն խոսեց բանաստեղծը մեծ:
Տեղ հասավ:
Շնչեց օրը լեռնային,
Կանգ առավ հոգնած:
Տեսավ, թե ինչպես
Անշտապ ելավ շողն արևային
Ու ճեղքեց մութի քողը կաթնեբեռ...

Բայց շրջակայքը կրկին մշուշվեց.
Ծածկվեց երկնքի ճեղքը կիսաբաց,
Շողերի փունջը վերստին ջնջվեց,
Ու դարձյալ տիրեց մութը մթամած:

Եվ սակայն սարին նորից լույս իջավ.
Լազուրին նայեց բանաստեղծը լուռ,
Ասես ձեռնափին բռնել էր մի ջահ,
Որ լույս տա անցվոր աշխարհին հանուր:

Ու երբ մեզ ու մութ մեկեն ցնդեցին,
Լույսը ողողեց ճակատը նրա...
Թվաց՝ նայում է սեզ Արարատին,
Որ լուռ թախծում էր իր գահի վրա:

Արփու շիթերը շատրվանեցին,
Լույսերում շողաց Կովկասը համակ,
Ճառագայթների հեղեղով կրկին
Ցխրածղարոյում արև էր տաք...



ԱԼԵԿՈ ՇԵՆՊԵԼԻԱ (1901-1975), բանաստեղծ:

Ծնվել է Քուբայիսի նահանգի Չխորձողուի շրջանի Խաբումե գյուղում: Բանաստեղծությունների առաջին ժողովածուն հրատարակել է 1940 թ., որին հաջորդել են այլ ժողովածուներ: Նրա բազմաթիվ բանաստեղծություններ վերածվել են երգերի և լայն տարածում գտել ժողովրդի մեջ:

ԿԱՊՐԻ ՀԱՎԵՐԺ⁵²

Հովհաննես Թումանյա՛ն...

Այս անունը հավասարապես սիրելի է և հոգեհարազատ թե՛ հային, թե՛ վրացուն և թե՛ բոլոր պատվարժան մարդկանց:

Նա բարեկամության անշեշտ հուր է, անմար լույս է ժողովուրդների եղբայրության ճանապարհին:

Հզոր մարդասիրության մեծագույն երգ է նա: Նրա կյանքն ի սկզբանե կոչված է անմահության, քանզի անմահ է ժողովուրդը, անմահ են բարեկամության ու եղբայրության զգացումները, որոնց նա նվիրեց իր գեղեցիկ կյանքը, իր լավագույն երգը.

Ելնե՛նք՝ տեսով ու ճանանչով,
Ընկեր, ախպեր, մեր ու բուր՝
Մեր քյամանչով, ուրախ կանչով
Գընանք դեպ կյանքն ընդհանուր:

Այսպես էր ուսուցանում մեզ մեծ Հովհաննեսը:

Եվ այդ խոսքը՝ իբրև կտակ, սերունդները որպես դրոշ կծածանեն մեծ գաղափարների համար պայքարի լուսավոր ճանապարհին:

Ի սկզբանե հայ և վրաց ժողովուրդները ամրակուռ և անհաղթահարելի մի պատնեշ են եղել թշնամիների դեմ պայքարում և հաղթանակների ճակատամարտերում: Երկու ժողովուրդների ազգային բոլոր ու-

Ժերը միշտ ուղղված են եղել մեկ նպատակի...

Այս երկու ժողովուրդների տաղանդը լուսավորել է Հին Արևելքը փառահեղ ապագայի կերտման ճանապարհին:

Մեր երկու ժողովուրդները ավանգարդն են Մերձավոր Արևելքի մշակութային վերածննդի:

Սա շատ լավ էր հասկանում Հովհաննես Թումանյանը: Սա շատ լավ էին հասկանում հայ և վրաց մեծ գրողները, հասարակական գործիչները, ուստի պատահական չէին նրանց սերտ համագործակցությունն ու անձնական բարեկամությունը:

Չէ՛, չի լռել մեծ Շոթայի
Երգի ձենը կաթոգին,
Ու դարավոր ցավն ամեհի
Չի խորտակել էն հոգին:

Այսպես է դիմում Թումանյանը վրաց բանաստեղծներին...

Հովհաննես Թումանյանի խոսքի ուժը դարերի սեփականությունն է:

Դարերի ընթացքում ստեղծված արվեստի ու գրականության փառահեղ հուշարձանները, եթե կարելի է, պայմանականորեն վերագրենք միայն անցյալին: Իսկական ստեղծագործությունը՝ մարդու բանականության և հոգու ճշմարիտ ստեղծածը, տարեթիվ չունի: Այն պատկանում է մարդկային ցեղի բոլոր սերունդներին, ինչպես իրենց ժամանակակիցը:

Թումանյանի բոցավառ խոսքը՝ ժողովուրդների բարեկամության մեծ երգը, մեր ուղեկիցն է, մեր պայքարի ու աշխատանքի ուղեցույցը: Այն հայ և վրաց ժողովուրդների բարեկամության հետ կապի՛ հավերժ...



ՎԱՆՈ (ԻՎԱՆԵ) ՇԻԼԱԿԱՉԵ (1910-1978),
լեզվաբան, հայագետ, բանասիրական գիտու-
թյունների դոկտոր, պրոֆեսոր:

Ծնվել է Վրաստանի Շենոքմեդլի գյուղում
(Մախարաձեի շրջան):

ԺՈՂՈՎՈՒՐԳՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԵՐԳԻՉ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ⁵³

Հայ ժողովրդի մեծ գավակի՝ Հովհաննես Թումանյանի կյանքի ու-
ղին քե՛ս արտաքուստ շատ պարզունակ է, ներքուստ չափազանց լար-
ված է: Նրա առաջին ուսուցիչները եղել են սարերը, ձորերը, անտառ-
ներն ու իր շրջապատում եղած հասարակ մարդիկ, հոգևոր դաստիա-
րակները՝ ժողովրդական հեքիաթները, լեզենդներն ու ավանդագրույց-
ները: Նրա հայրը՝ Թադևոսը, գյուղական քահանա էր՝ զարգացած մի
մարդ, պերճախոս և խնջույքասեր...

Հովհաննես Թումանյանն իր ստեղծագործություններում հիմնա-
կանում գյուղական կյանքն է պատկերել, որի համար նույնիսկ նա-
խատում էին նրան, թե ամբողջ կյանքդ քաղաքում անցկացրիր, բայց
քաղաքը չտեսար: Սակայն ամեն ինչ պարզ կդառնա, եթե նկատի առ-
նենք, որ Թումանյանը ոչ միայն գրող էր, այլև մեծ հումանիստ և իս-
կական հայրենասեր: Նա կենդանի պատկերներով ցույց է տվել, թե
աշխատավոր հայն իր հայրենիքում ինչպես էր տառապում տգիտու-
թյան, հետամնացության, նահապետական վարք ու բարքի պատճա-
ռով: Նա ցույց է տվել օտարության մեջ գտնվող հայի հոգեկան դրա-
ման, նկարագրել է հայրենի երկրի հրապուրիչ բնությունը և մարդ-
կային հոգին խաղաղեցնելու միջոցները:

Ահա Թումանյանի գեղջուկը, որը, գութանի մաճը բռնած, քշում է

եզները և տխրորեն «Հորովել» դնդում.

Քաշի՛, եզր, ուսիդ մատա՛ղ,

Քաշի՛, քաշենք վար անենք.

Ճիպտին արա՛, քշի՛, հոտաղ,

Մեր սև օրին ճար անենք:

(«Գութանի երգը»)

Իսկ ինչո՞ւ է նրա օրը սև: Պարտատերը գանգատ անելու է գնացել, ուր որ է քյոխվեն կգա ու կծեծի, տերտերն օրհնել, անվարձ է մնացել, կբարկանա, կանիծի, տերության հարկն են ուզում, չունի, որ տա... Չեռը պակաս է, ուժը՝ հատած, բայց էլի ինքն է մերկ ու սոված մի տուն լիքը մանուկների հույսը:

Ահա հայ գյուղացու հոգեվիճակը, որին ականատես է եղել բանաստեղծը:

Հովհաննես Թումանյանի մտահոգության առարկաներից մեկն էլ հայրենիքն էր, որն այն ժամանակ բաժանված էր երկու մեծ կայսրությունների՝ Թուրքիայի և Ռուսաստանի միջև: Չնայած ցարիզմի գաղութատիրական քաղաքականությանը՝ նա Արևելյան Հայաստանը համարում էր ազատագրված: Նրա երազանքն էր Արևմտյան Հայաստանը նույնպես տեսնել Ռուսաստանին միավորված: Նա հույսեր էր փայփայում, որ Ռուսաստանն ամբողջովին կազատագրի իր հայրենիքը, և շուտով Հայաստանը կթոթափի թուրքական լուծը:

Հովհաննես Թումանյանի գործունեությունը համընկավ այնպիսի ժամանակաշրջանի, երբ պատմաքաղաքական զարգացման հետևանքով հայ ժողովրդի ճակատագիրը մեծապես կախված էր հարևան ժողովուրդների հետ ունեցած հարաբերություններից: Իրադրությունը հաճախ այնքան էր լարվում, որ շտապ միջոցներ ձեռնարկելու պահանջ էր զգացվում: Գրողն այլևս ժամանակ չէր ունենում այդ թեմային գեղարվեստական հնչողություն տալու. ահա թե ինչու նա հաճախ հանդես էր գալիս հրապարակախոսական հոդվածներով կամ ուղղակի միջամտում էր անձնապես:

Հիշատակենք դրան առնչվող մի դեպք:

1905 թ. հեղափոխության սավերից վախեցած ցարիզմը փորձեց շեղել ոտքի ելած ժողովրդական զանգվածների ուշադրությունը: Դրա համար Կովկասում ևս ձեռնարկեց համապատասխան միջոցառումներ. միմյանց դեմ դուրս բերեց հայ ժողովրդին և Կովկասի թուրքերին,

որին հետևեց սուկայի կոտորածը: Դա սկիզբ առավ Բաքվում և աստիճանաբար ընդունեց լայն մասշտաբներ: Հովհ. Թումանյանն անհապաղ մեկնեց հայրենի կողմերը (Լոռի): Այնտեղ հրավիրվեց ընդհանուր համագումար, որտեղ ընդունվեց այսպիսի որոշում. «Մենք՝ լռեցիկներս, չենք հարձակվում ու չենք կռվում մեր հարևան թուրքերի դեմ և ոչ մի կողմի վրա, որովհետև եթե ուժեղ ենք, անիրավություն է, եթե թույլ ենք, հիմարություն է:

Իսկ եթե նրանք մեզ չեն լսիլ և կհարձակվեն մեր գյուղերի վրա, կաշխատենք պետական ուժով դրա առաջն առնել, և եթե դա անկարելի եղավ, մենք ինքներս դուրս կգանք նրանց դեմ...»:

Դրանից հետո նա կազմում է մի փոքրիկ ջոկատ և այդ ծայրաստիճան լարված վիճակում, սպիտակ դրոշ պարզած, շրջագայում է գյուղից գյուղ և ամենուր խաղաղեցնում բոլորին: Ինքն էլ բարձր էր գնահատում այս ուղղությամբ ծավալած իր գործունեությունը. «Եվ այսօր ես էնքան գոհ չեմ, որ գրականության մեջ մի որևէ բան եմ արել, որքան գոհ եմ, որ ակներև կարողացա իրար դեմ կանգնած ժողովուրդների սրերը պատյան դնել տալ և շատ ու շատ անմեղների ազատել այս գազանական կոտորածից...»:

Հովհաննես Թումանյանի կյանքը լի է նման պահերով:

Գործնական նման աշխատանքների պատճառով նա հնարավորություն չէր ունենում այս նույն թեմայով գեղարվեստական մեծակտավ երկեր ստեղծելու: Ինքն էլ դժգոհում էր, որ առհասարակ ստեղծագործելու համար քիչ ժամանակ է ունենում, իր գրվածքների մեծ մասը հիվանդ ժամանակ է գրել, և երբ հիվանդության պատճառով որևէ տեղ են ուղարկել երկու-երեք ամսով, հատկապես՝ առողջարան:

Բայց այդ գործնական աշխատանքներն այնքան նշանակալից էին, որ Հովհ. Թումանյանը շուտով ամբողջ Այսրկովկասում հռչակվեց իբրև ժողովուրդների բարեկամության համար մարտնչող անձնագոհ մարտիկ: Բոլորը պատկառանքով և սիրով էին տալիս նրա անունը, և որքան ժամանակ է անցնում, այնքան ավելի է մեծանում նրա փառքը: Այսպես աստիճանաբար նա դարձավ ժողովուրդների բարեկամության խորհրդանիշ:

Հովհաննես Թումանյանն առանձնակի ուշադրություն էր դարձնում հայ և վրաց ժողովուրդների բարեկամության ամրապնդմանը: Վրացու և Վրաստանի մասին նա արտահայտվել է ոչ այլ կերպ, քան

բանաստեղծությամբ: Իսկ ավելի վաղ՝ երիտասարդ ժամանակ՝ 1893 թ., գրել է «Ն. Բարաթաշվիլու դամբանի վերա» ոտանավորը, որը կարդացել է վաղամեռիկ բանաստեղծի դին Գանձակից Թիֆլիս տեղափոխելու առիթով:

Այն, ինչ Հովհաննես Թումանյանը չհասցրեց ասել բանաստեղծություններում և պատմվածքներում, լրացրեց հրապարակախոսական հոդվածներում: Նրա հիմնադրած Հայոց գրական ընկերությունն իր առջև նպատակ էր դրել ուսումնասիրելու ինչպես Հայաստանի, այնպես էլ ուրիշ ժողովուրդների և, առաջին հերթին, հարևան ժողովուրդների պատմությունն ու մշակույթը: Նա նույնը խորհուրդ էր տալիս նաև իր զավակներին, որպեսզի նրանք ևս ձեռնամուխ լինեն հատկապես Կովկասի և Հին Արևելքի ժողովուրդների պատմության ուսումնասիրությանը: Ինքն էլ առանձնապես հետաքրքրվում էր Վրաստանի պատմությամբ և մշակույթով: Նրա պաշտոնական ելույթներից հիշատակենք միայն մեկը:

1913 թ. Հայոց գրական ընկերությունն առաջին անգամ կազմակերպում է վրաց գրականությանը նվիրված երեկո: Երեկոն բացում է ընկերության անփոփոխ նախագահ Հովհաննես Թումանյանը: Նա ասում է. «Վրացի եղբայրներ, հնուց մեր եղբայրներ, տանջված եղբայրներ, բայց միշտ ազատ ու բարձր հոգու տեր եղբայրներ:

Եթե ժողովրդի գրականությունը նրա հոգու իսկական արտացոլումն է, և հոգու կրողը բանաստեղծն է, ապա ես հայության հոգին եմ բերում ձեզ, որպես ամենաբարձրը, որ կարող է ունենալ ժողովուրդն ու մարդը:

Հիացմունքով վկայում եմ, որ վրացին երբեք հոգով չի ընկճվել և կովկասյան ժողովուրդների մեջ միշտ առաջինն է եղել իբրև քաղաքացի իր քաղաքական պահանջներով և հասարակական պայքարով:

Եթե մի հայացք ձգենք հարևանների հարաբերությունների վրա ամբողջ աշխարհում, մենք չենք կարող չխոստովանել, որ վրացին, իբրև հարևան, ամենալավերից մեկն է եղել:

Եվ մեր մեջ կստեղծվի ավելի սերտ, մեծ հոգեկան ու կուլտուրական կապ: Մենք դեռ շատ գործեր ունենք միասին անելու: Մենք՝ կովկասյան ժողովուրդներս, եղբայրներ ենք հավերժ կողք կողքի, ինչպես մեր հայրենի լեռները՝ ամեն մեկն իր տեղում, իրենց շողշողուն գազաթներով միշտ կանգնած միմյանց թիկունքին և իրենց հիմքերով

միացած:

Կեցցե՛ կովկասյան ժողովուրդների եղբայրությունը»:

Հովհաննես Թումանյանն այդպես է ասել ու մինչև վերջ հավատարիմ է մնացել այդ ոգուն:

Իր բանաստեղծություններից մեկում պոետը դժգոհում է, որ մարդն իր կյանքն անիմաստ է անցկացնում՝ տանջանքով ու տառապանքով: Միշտ անկատար իղձերն իրականացնելու պայքարի մեջ է վատնում այն, իր գոյության ընթացքում, իր անցած ճանապարհին միշտ արյուն է թափում, չի տեսնում, որ գուր է վատնում իր օրերը, և երբ, ուժերն սպառած, հասնում է գերեզմանի շեմին, դառնացած կանգ է առնում, ավստասանքով լաց լինում, հետ է մայում և նկատում, որ ամեն ինչ կորած է, և ինքն էլ կործանվում է, ինչպես իր վերջին շնչառությունը...

Բանաստեղծը մեզ ոգեշնչում է... Կյանքի նպատակն այն է, որ մարդիկ այս աշխարհում ապրեն քաղցրությամբ, փոխադարձ սիրով, որ ի վերջո չզղջան այս աշխարհում անցկացրած անպտուղ օրերի համար:

Ժողովուրդների բարեկամության մեծ երգչից կյանքի իմաստի ճիշտ այսպիսի մեկնություն էր սպասելի:

Ապրենք քաղցրությամբ, մարդիկ և ժողովուրդներ: Ահա՛ այս է կտակել մեզ հայ ժողովրդի մեծ գավակը:



ԳԻՈՐԳԻ ԶԻՐԱԶԵ (1913-1989), գեղագետ, բանասեր, գրական քննադատ, ՎԽՄՀ (1960) և ԽՍՀՄ (1966) ԳԱ ակադեմիկոս: Ծնվել է Քուրայիսում: Ավարտել է ԹՊՀ բանասիրական ֆակուլտետը (1933):

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ⁵⁴

Հայաստանի ողիսականին ոչ քիչ թվով գրողներ են անդրադարձել: Նրանց մեջ քիչ չեն երկրով մեկ հռչակված պատմաբանները, բանաստեղծները, արվեստագետները: Բայց դժվար թե գտնվի ավելի փայլուն դեմք, քան Հովհաննես Թումանյանն է:

Մեծ Գյոթեն մի անգամ էքերմանին ասել է. «Ոչ մի բանաստեղծություն ես չեմ գրել առանց պատճառի»:

Թումանյանը նույնպես առանց պատճառի ոչինչ չի գրել: Բայց, ի տարբերություն Գյոթեի, Թումանյանի համար այդ պատճառը հիմնականում մեկն էր՝ Հայաստանը: Միայն իր ժողովրդի իսկական մեծ զավակը կարող էր գրել «Հայոց լեռներում»-ը, «Հայոց վիշտը», «Մեր նախորդներին»-ը, «Անուշը», «Գիքորը», այն ամենը, որ հայրենիքի մասին ստեղծել է Թումանյանի զարմանալիորեն արդար ձեռքը: Այս երկերի յուրաքանչյուր տողը խոր վերքի արտահայտություն է, և յուրաքանչյուր վերքից արյունը հոսում է կրկնակի հորձանքով:

Աբովյանի «Վերք Հայաստանին» և Թումանյանի «Հայոց վիշտը» միևնույն ցավի գեղարվեստական վերարտադրություններն են: Թումանյանի ստեղծագործությունը համագոր ուժով արտացոլում է մայր ժողովրդի անցյալը, ներկան և ապագան: Բանաստեղծի մուսային ասես մեծ լիցք է տվել Մաշտոցի, Կորյունի, Խորենացու և Դավիթ Ան-

հաղթի տաղանդը, ասպետական շունչ են հաղորդել աստուծոցիններն ու Մամիկոնյանները, մտահորիզոնը լայնացրել են Գեղամա լեռները, Արագածն ու Չանգեզուրը, գեղեցկություն և հմայք են հաղորդել Հրազդանի կիրճը, Արարատյան դաշտը, Լոռին ու Սևանա լիճը:

Թումանյանի ստեղծագործություններից մեզ է նայում Հայաստանը, և Հայաստանում ապրում է Թումանյանի հոգին: Միայն մեծ գավակը կարող է այդպես ձուլվել իր ազգի էությանը, և ազգը նրան կճանաչի որպես իր ամենամեծ, ամենասիրելի գավակի:

Թումանյանը հայ ժողովրդի մեծ գավակն է, նրա քաջ ասպետը և բանաստեղծական շեփոքահարը: Որպես ստեղծագործող և մտածող՝ նա առաջադիմական է, խորապես ազգային, բայց հենց այդ մեծ ազգայնության մեջ է նրա համամարդկայնությունը:

Հայաստանի անցյալի ողիսականի հենքի վրա ով գեթ մեկ անգամ խորհել է սուլթան Աբդուլ Համիդի՝ 19-րդ դարի վերջին տասնամյակներին կատարած գազանությունների մասին, նա լավ կհասկանա, թե ինչ ցավ են ունեցել Հայաստանի մեծ գավակները, նրանց թվում՝ և Հովհաննես Թումանյանը, երբ խոցված սրտի երակներով գրում էին բազմատանջ հայրենիքի ճակատագրի մասին:

Դրանով նրանք միշտ նկատի են ունեցել հումանիզմը, ժողովուրդների և նրանց մեծ գավակների համամարդկային պարտականությունը:

Իսկ ինչպե՞ս էր ասվում այս ամենը ողջ էությանը, խորությամբ, առաքինությամբ...

Բոլոր երկերում Թումանյանը զարմանալիորեն անմիջական է, պարզ և անկեղծ: Ոչինչ մետաֆիզիկայի բնագավառ չի մտցրել, ամեն ինչ բխեցրել է կենսական երևույթներից, ամեն ինչ մարդկային է՝ ուրախությունը, տառապանքը, ապրումը, մտածողությունը: Այսպիսի մարդկային՝ Մարդ գրողներ հազվադեպ են ծնվում: Նրա համար ոչինչ այնքան ատելի չէ ստեղծագործության մեջ, որքան փախուստը մարդկային կյանքից, իրականության պասիվ արտացոլումը, մետաֆիզիկան: Երազանքն ու ֆանտաստիկան մարդկային ստորոգումների սահմաններից են սկսում գործողությունը և դրանցով էլ ավարտվում են:

Հովհաննես Թումանյանը դասական քննադատական ռեալիզմի մեծ ներկայացուցիչներից մեկն է ոչ միայն հայ գրականության մեջ,

այլև եվրոպական մասշտաբով, և անկասկած կանգնած է այն արվեստագետների կողքին, որոնք 19-րդ դարի երկրորդ կեսից այս հոսանքը տրամաբանական վախճանին հասցրին: Ես չէի ասի, թե Թումանյանի գեղարվեստական ձևը «ռաֆինացված է»: Կարծում եմ՝ ոչինչ այնքան սխալ չի բնութագրի Թումանյանի գեղարվեստական ձևը, որքան «ռաֆինացված» բառը: Թումանյանի գեղարվեստական ձևը ռեալիստական մեծ պարզությամբ անցնում է զարմանալիորեն բնական հղկվածության սահմաններից և հասնում անբասիրության:

Միանգամայն արդարացի են ժամանակակից հայ քննադատները, նրանց թվում՝ Կամսար Գրիգորյանը և Լևոն Հախվերդյանը, երբ Հովհաննես Թումանյանին համարում են Խաչատուր Աբովյանի լուսավորչական-դեմոկրատական ավանդույթների շարունակողը Նալբանդյանից, Պռոշյանից և Աղայանից հետո:

Հովհաննես Թումանյանը 1899 թ. Պերճ Պռոշյանին պատահաբար չձոնեց մի ամբողջ բանաստեղծություն՝ գրված նրա գրական գործունեության 40-ամյակի առթիվ, մի հրաշալի բանաստեղծություն, որտեղ ի ցույց հանեց ժողովրդական գրողի բերած ստեղծագործական նորույթը: Այդ նորույթը միայն գաղափարական սկզբունքներով կամ ազգային հայրենասիրական զգացմունքներով չէր պայմանավորված, այլ նաև ձևով, որն այդպես ամրորեն արմատավորեցին 19-րդ դարի հայ նշանավոր ռեալիստները:

Եթե ցանկանում եք անմիջականորեն հասկանալ Թումանյանի հումանիզմը, պատկերացում կազմել նրա գրական զգացումների ու խոհերի մասին, դրա համար շատ բան հարկավոր չէ: Կարդացե՛ք նրա արձակ ստեղծագործություններից թեկուզ մեկը՝ «Եղջերուն», և դուք ամեն ինչ կհասկանաք: Դիշտ է, Հովակիմ բիժու կարճ խելքով «աշխարհքի երեսին մարդիցն էլ վերը անիրավ շնչավոր չկա», ճիշտ է, պատմվածքում հեղինակ հերոսն ասում է՝ «Էնպե՛ս տգեղ էր թվում ինձ կյանքը», բայց այս բացասումն անգամ ներծծված է կյանքի, ապրելու, մարդու հանդեպ մեծագույն սիրով և հնչում է իբրև սիրով ներշնչված մի հիմն, ինչպես Գերցենի արձակը:

Եթե դուք ցանկանում եք անմիջականորեն հասկանալ Թումանյանի կենսական գիտելիքները, կամ թե անխիղճ մարդկանց մի խումբ ինչպես է կեղեքում պատվարժան աշխատավորին, շատ բան հարկավոր չէ: Կարդացե՛ք «Աղբատի պատիվը», ծանոթացե՛ք այդ փոք-

րիկ պատմվածքի հերոսների՝ խեղճուկրակ Սիմոնի, նրա գեղեցկուհի կնոջ, Մարուշ աղջնակի, դարդիման, լոթի Սանդրոյի, վաշխառու աղա Պետրոսի, տանուտերի հետ և կիսականաք աշխատավոր մարդու ողբերգությունը:

Եթե ցանկանում եք անմիջականորեն զգալ Թումանյանի ինտերնացիոնալիստական խոհերի խորությունը, դրա համար շատ բան հարկավոր չէ: Կարդացե՛ք հին օրագրից առնված նրա «Անմադ» փոքրիկ հուշագրությունը և կիսականաք, թե որքա՛ն նրբորեն էր անդրադառնում Թումանյանը ժողովուրդների բարեկամության գաղափարին:

Եթե ցանկանում եք Թումանյանի ստեղծագործության մեջ անմիջականորեն տեսնել ճնշված ժողովրդի ողբերգությունը, դրա համար էլ շատ բան հարկավոր չէ: Կարդացե՛ք «Նետալի քարաբաղնիսը» և ամեն ինչ կիսականաք:

Եթե ցանկանում եք անմիջականորեն զգալ Թումանյանի քնարերգական զգացումները կամ մտածողության ուղղությունը, շատ բան հարկավոր չէ: Կարդացե՛ք նրա հիսունից ավելի քառյակները և կկարողանաք միանգամից հաղորդակից դառնալ Թումանյանի քնարերգության ջերմությանը, պարզությանը, բանաստեղծական նրբությանն ու փիլիսոփայական հավատամքին:

Ամենուր և ամեն ինչում կյանքի շունչն ենք զգում:

Ժողովրդական հեքիաթներում նույնպես («Անբախտ վաճառականները», «Տերն ու ծառան», «Քաջ Նազարը») կյանքի ճշմարիտ պատկերներն ենք տեսնում: Սրանցից յուրաքանչյուրի ճանաչողական արժեքը շատ մեծ է: Հայ բանահյուսության Նազարը և վրաց բանահյուսության Նացարքեքիան նույն կյանքի ճյուղերն են, որ այնպե՛ս լավ արտահայտում են մարդկային կյանքում հանդիպող պատահականությունները, թուլությունը, հաճախ էլ՝ ծիծաղելի երևույթները:

Այս պատմվածքներում որքա՛ն խորն է միտքը, որքա՛ն խորն է զգացմունքը: Սրանք ցուցանում են, թե ինչպիսի՞ն պետք է լինի մարդը, և ինչպես պետք է կազմավորվի հասարակական կյանքը:

Ոչինչ չենք ասում Թումանյանի երկերի բանաստեղծական բարձր արժանիքների մասին: Այսքան հրապուրիչ, այսքան հասկանալի, այսքան պարզ, այսքան արդար գրողին ընթերցողը միշտ էլ սիրել է, և

զարմանալի չէ, որ Թումանյանն սկզբից ի վեր արժանացավ համընդ-
հանուր ճանաչման:

Մեծապես առաքինի՝ ուրիշներին էլ առաքինության կոչ էր անում:
Նրա ստեղծագործությունն էլ առաքինության մարմնացում է: Դժվար
է սահման գծել Թումանյանի առաքինության և հումանիզմի միջև:
Դրանք մեկմեկու այնպես են լրացնում, ինչպես մարգարիտն ու սու-
տակը՝ ուրիշ թանկարժեք քարերի մեջ:

Եթե արտաքին տեսքը կարող է փոքր-ինչ արտահայտել անհատի
ներքին էությունը, ապա դա լավագույնս կարող էր անել Թումանյանի
հմայիչ դեմքը: Նա մարդկային մարդու դեմք ուներ, որը բարի սրտի
հետ կատարյալ համաձայնության մեջ էր: Ֆիզիկապես թույլ էր, բայց
ասպետական հոգի ուներ, իսկ բանաստեղծական բանականությունն
իր արդարացումն էր գտնում պատմականորեն հավաստված ճշմար-
տությունները խոստովանելու և պաշտպանելու մեջ: Նման փառահեղ
մարդիկ հազվադեպ են ծնվում, և Թումանյանը ճիշտ այսպիսի երջա-
նիկ մարդկանցից էր: Այլ կերպ չէր կարող ծնվել բարեկամության այն
մեծ զգացումը, որ հուրհրում էր նրա սրտում, և որով նա եղբայրաբար
կապված էր ինչպես կովկասյան ժողովուրդների, այնպես էլ ռուսների
հետ: Նա ամեն ինչ հասցրել էր բարեկամության օրհնանքի աստիճա-
նի և ամեն ինչ կապում էր մարդկության առողջ բանականության հետ:

14-ամյա պատանի՝ նա եկավ Թիֆլիս և 24-ամյա երիտասարդ
բանաստեղծ էր, երբ համայն վրաց ժողովրդի բարեկամը դարձավ:
Բարաթաշվիլիի դին տեղափոխելիս՝ 1893 թ. ապրիլին, նրա ունեցած
ելույթը համընդհանուր հավանության արժանացավ:

Թումանյանի բանաստեղծությունը ջերմացած էր ինչպես վրաց
ժողովրդի հանդեպ սիրո, այնպես էլ Բարաթաշվիլիի հանճարի նկատ-
մամբ անսահման հարգանքի բարձր զգացումով: Հենց այս բարձր
զգացումն էլ նրան թելադրեց գրել բանաստեղծական երկու գլուխ-
գործոց՝ «Վրաստանին» և «Նվեր Վրաստանի բանաստեղծներին»:
Կարդացե՛ք այս անգուգական երգերը և իսկույն կհասկանաք, թե ինչ
բարի, իսկական եղբայրական սեր էր Հովհաննես Թումանյանին կա-
պում ինչպես Վրաստանի, այնպես էլ վրաց գրողների, վրաց ժողովրդի
հետ, որի ծոցում մեծ բանաստեղծը անցկացրեց իր կյանքի մեծ մասը՝
30 տարի:

Միայն նա կարողացավ ճակատագրական պահին սպիտակ դրո-

շը ձեռքին դուրս գալ և եղբայրասպան կռվի ելած ժողովուրդներին կրկին բարեկամացնել: Չէ՞ որ ազգերի բարեկամությունը նրա կյանքի և ստեղծագործության տարերքն էր: Այս գործին նա ծառայում էր իր ողջ մարդկային անմիջականությամբ:

Ահա թե ինչու այլևս չենք զարմանում, որ յուրաքանչյուր երկում Թումանյանը զարմանալիորեն անկեղծ է, անմիջական և անբասիր: Նա մեզ հմայում է նաև մաքուր, մանկական արդարամտությամբ: Իր բանաստեղծություններից մեկում նա պատահաբար չի ասում.

Երեխի նրման մըտա ես աշխարհ,
Անվերջ միամիտ, անխելք, անձնըվեր.
Սըրտումըս ինչ կար, ձեռքիս ինչ որ կար,
Բաժանեցի մարդկանց անսեր, անտարբեր:

Բանաստեղծական խոսքեր են, բայց մեծ ճշմարտություն են արտահայտում: Գրանք բանաստեղծին ավելի լավ են պատկերում, որը նույն այդ բանաստեղծության մեջ իր դիմանկարը կերտում է ուղղակի գեղանկարչական կտավի վրա: Երագուն ու խենթ երեխային խաբել են, սերն ու հավատը խաթարել, վրդովել են նրա նուրբ հոգին, բիրտ ուժերը տանջել են, ու թեև նա ճաշակել է վիշտ ու դառնություն, բայց անմնացորդ նվիրված է մնացել երկու սկզբունքի՝ բարուն և գեղեցիկին: Ահա միայն մնան աներեր հոգու տեր անհատը կարող էր մարդկությանը մեծարող այսպիսի խոսքեր ասել.

Գանձեր ունեմ անտակ, անծե՛ր,
Ես հարուստ եմ, ջա՛ն, ես հարուստ.
Ծով բարություն, շընորհք ու սեր
Ճոխ պարզև եմ առել վերուստ:

Անհուն հանքը իմ զանձերի
Միրտս է առատ, լեն ու ազատ.
Ինչքան էլ որ բաշխեմ ձըրի՝
Սերն անվերջ է, բարին՝ անհատ:

Երկյուղ չունեմ, ահ չունեմ ես
Գողից, չարից, չար փորձանքից,
Աշխարհքով մին ահա էսպես
Շաղ եմ տալիս իմ բարձունքից:
Ես հարուստ եմ, ես բախտավոր

Իմ ծընընդյան պայծառ օրեն,
Էլ աշխարհի չեմ գալու հո նոր,
Իր տըվածն եմ տալիս իրեն:

Եվ Թումանյանը ամեն ինչ տվեց իր բազմաչարչար հայրենիքին, վերադարձրեց այն, ինչ նրանից ստացել էր, միայն թե հարյուրապատիկ, բազմապատկված:

Յուրաքանչյուր բանաստեղծ ունի իր համար շատ սիրելի երկեր: Թումանյանը բացառություն չէ: Ինչպես սսում են, նա շատ է սիրել իր քառյակները, որոնք այժմ, եթե ոչ ամբողջությամբ, գոնե կեսը՝ 25-ը, գետեղված են «Ընտիր երկերի» ռուսերեն հրատարակության հոբելյանական հատորյակում: Այն ամենը, ինչ Գրիշաշվիլին վաղ թարգմանել էր, ինչ գրեթե ամբողջությամբ նորերս լույս տեսավ Նաում Գրեբնևի թարգմանությամբ, ընդամենը 53 քառյակ, բանաստեղծական արտասովոր, ինքնատիպ մանրաքանդակներ են՝ հագեցած խոր զգացումներով և նույնքան խոր մտքերով: Ինչի ասեք՝ չեք հանդիպի այնտեղ՝ ցավ անցավոր աշխարհի համար, կորցրածի փնտրտուք, վշտի օվկիան, անցած գեղեցիկ օրերի վերադարձի կարոտ, անկատար հույսեր, չարը՝ բարու դիմակով, հոգու անսահման կսկիծ, երկու գերեզման, ունայնություն, մարդկային ընչաքաղցություն, տիեզերքի խորհրդավոր գաղտնիքները իմանալու ցանկություն... Բոլորը չենք էլ կարող բնութագրել: Բայց ամենուր մի բան անփոփոխ է՝ Թումանյանի առաքինությունը, հումանիզմով լեցուն հստակ միտքը: Մեկ-երկու օրինակ այդ քառյակներից, և բավական է ասվածում համոզվելու համար: Ճիշտ է, դրանք չեն չափվի, ինչպես վաղօրոք նշել է Գրիշաշվիլին, պարսկական (Օմար Խայամի) քառյակների հետ, բայց ունեն բանաստեղծական ներքին մեծ ջերմություն և նրբություն: Ահա սրանք.

Մի հավք զարկի ես մի օր.
Թըռա՛վ, գընաց վիրավոր:
Թըռչում է միշտ իմ սըտքում
Թևը արնոտ ու մոլոր:

Կամ՝

Երագումբս մի մաքի
Մոտըս եկավ հարցմունքի.–
Աստված պահի քո որդին,
Ո՞նց էր համը իմ ձագի...

Անհնար է, որ մարդ կարդա զարմանալիորեն ճշմարիտ այս տողե-

րը և սրտի ցավ չզգա, կյանքի անարդարության հանդեպ անհանդուր-
ժողականության միտք չծնվի նրա մեջ, ժողովրդին օգնելու զգացումով
չվառվի:

Թումանյանը մաս մարդասիրությամբ և ժողովրդավարական ոգով
է աչքի ընկնում բանահյուսական թեմաներով գրած երկերում:

Պատմականորեն բոլոր խոշոր արվեստագետներն օրգանական
կապի մեջ են ժողովրդական ստեղծագործության հետ: Թումանյանի
ժառանգության մեջ ևս բանահյուսությունը պատվավոր տեղ է գրա-
վում: Նրա լեզուներն ու հեքիաթները հայ բանահյուսության ընձյուղ-
ներն են, բայց պրոֆեսիոնալ նկարչի վրձնով վրձնված: Նա, ով կար-
դացել է «Շունն ու կատուն», «Ախթամարը», «Արծիվն ու կաղնին»,
«Փարվանան», «Էսպես չի մնա»-ն, «Սի կաթիլ մեղրը», կհամաձայնի
մեզ հետ, որ Թումանյանը դրանց բոլորին նոր շունչ է տվել, իսկ այդ
շունչը հումանիզմը և դեմոկրատիզմն են: Եթե բանահյուսության մեջ
բարու և չարի պայքարը հիմնականում բովանդակություն է, Թումա-
նյանը անփոփոխ է թողնում այդ գիծը, բայց ամենուր ներկայացնում
է այնպես, որ ընթերցողի մեջ վեհ ու վսեմ զգացումներ արթնանան,
տրամադրվի չարի դեմ և վառվի բարու համար պայքարի ոգով:

Պոեմները գրելիս ևս, որոնց մի մասը բանահյուսական նյութի
ստեղծագործական վերամշակում է, բանաստեղծն առաջնորդվում է
համանման ելակետով: Բավական է հիշատակել Մարոյի և Կարոյի
ողբերգությունը «Մարո» պոեմում: Չնայած հետազոտողները պնդում
են, թե պոեմի հիմքում իրական դեպք է ընկած, բայց Թումանյանը
նրան տալիս է ավանդության, ասքի տեսք, որով մեկ անգամ ևս հա-
վաստում է, որ ձգտում է իրական փաստերին հաղորդելու բանահյու-
սական հնչեղություն: Այլևս չենք խոսում «Սասունցի Դավիթ» պոեմի
մասին, որտեղ բանաստեղծը գնում է հակառակ ճանապարհով: Այս
բոլորը հայտնի կամ շարադրված ֆաբուլաների ստեղծագործական
վերամշակումներ են՝ հասցված բանաստեղծական բարձրության:

Ինչ վերաբերում է «Անուշին», որի վրացերեն հրաշալի թարգմա-
նությունը վաղուց ունենք, այն պատկանում է դասական պոեմների
թվին, և Թումանյանի բանաստեղծական վարպետությունն այստեղ
իր փառքի գագաթին է հասել: Միայն «Անուշով» էլ Թումանյանը կա-
րող էր մեծ բանաստեղծի համբավ ունենալ, քանզի իբրև վարպետ՝
նա այնքա՛ն կատարյալ է չափազանց խոր տպավորություն թողնող

այս երկում:

«Անուշ» պոեմը պարզապես «որբ մարգարիտ» է ողբերգական սիրո թեմայով Թումանյանի գրած բանաստեղծական երկերի մեջ, և նրան պետք է պատվավոր տեղ հատկացվի համաշխարհային պոեզիայի անդաստանում: Գեղարվեստական այսպիսի հզոր պոեմներ՝ հոգեբանորեն արդարացված, ռեալիստորեն քանդակված և քնարականությամբ հագեցած, շատ հազվադեպ են ծնվում և հեղինակներին էլ հազվագյուտ անուն-համբավ են բերում: Բանաստեղծական շատ երկեր չէ, որ կարող են այնպիսի գեղագիտական հաճույք պատճառել մեզ, ինչպիսին պատճառում է «Անուշը»:

Ձևի կատարելությամբ, հակիրճությամբ և նրբությամբ «Անուշը» իսկապես բանաստեղծական գլուխգործոց է: Կողորհտով և ազգային ձևով ուղղակի գեղանկարչական կտավ է: Հին Հայաստանն է իր սարերով, ժայռերով ու դաշտերով, ժողովրդական ավանդություններով, սիրով, աշխատանքով ու տառապանքով:

Հովհաննես Թումանյանը պատանեկան հափշտակությամբ է գրել կամ խոսել հայրենի Լոռու մասին, և բնական է, որ բանաստեղծական այս սյուժեն նույնպես ներկայացրել է Լոռու համայնապատկերում: Տաղաչափական մի համակարգում չի տեղավորվել, դիմել է բազում ձևերի, բայց ձևի բազմատարրությամբ, ասես աններդաշնակությամբ ճարտարապետական հին վարպետաց վարպետների նման հասել է քարձրագույն ներդաշնակության:

Ամփջականությամբ, անբասիրությամբ և մեծ սիրով են գրված նաև Թումանյանի մանկական երկերը: Թարգմանությամբ նրանցից միայն տասին են ծանոթ, և տասն էլ դյուրեղ են ինձ: Բայց ամենալավերը, իմ կարծիքով, «Առաջին ձյունը», «Կույր աշուղը», «Ծիտիկի օրորքը», «Առվակը» և «Փխիկի գանգատն» են: Պատկերացնում եմ, թե սրանք ինչպիսին կլինեն բնագրում հայերեն, երբ գիտեմ, որ մեծ բանաստեղծի թարգմանությունը հազիվ թե հավասարվի բնագրին:

Կարողում ես Թումանյան, և խոր զգացմունքներին զուգահեռ ծնվում են մտքեր, որոնք համահունչ են ոչ միայն անցյալին, այլ նաև մերօրյա ժամանակներին: Մեծ գրողները հենց նրա համար են միշտ ժամանակակից, որ համարձակորեն ձեռք են մեկնում ապագա ժամանակներին և հնչում նոր ուժով:

Խոսելով Հովհաննես Թումանյանի ստեղծագործության մասին՝ ու-

գում են մի բան ևս ասել ընթերցողին: Յուրաքանչյուր վրացի պետք է իմանա, որ հայերը հնուց անտի մեր եղբայրներն են, և բոլոր նրանք, ովքեր չեն հասկացել այս ճշմարտությունը, մոռացել են սիրել հարազատ եղբորը: Յուրաքանչյուր հայ պետք է իմանա, որ վրացիները հնուց անտի իր եղբայրներն են, և բոլոր նրանք, ովքեր չեն հասկացել այս ճշմարտությունը, մոռացել են սիրել հարազատ եղբորը: Ով մեր միջև պղտորում է ջուրը, միայն թշնամու ջրադացն է բանեցնում: Նայե՛ք Թումանյանին և կհասկանաք, թե ինչ են նշանակում հայ և վրաց ժողովուրդների բարեկամությունն ու հարազատ եղբայրությունը: Եթե նույնիսկ մնացած ամեն ինչ այժմ դնենք մի կողմ, ապա Հովհաննես Թումանյանն այս մեծ ծառայությանը էլ կմնա անմահ հայ և վրաց ժողովուրդների պատմության մեջ: Բայց այնպիսի մեծ ստեղծագործող, ինչպիսին Թումանյանն է, առհասարակ մնում է անմոռաց...

Հովհ. Թումանյանը անմոռաց կմնա նաև վրաց ժողովրդի պատմության մեջ:

Երբ, դեռ բոլորովին պատանի, կարդացի «Գիքորը», արցունքներս չկարողացա զսպել: Ինչքա՛ն ժամանակ է անցել դրանից հետո, բայց ցայսօր չի ջնջվել այն հուզիչ տպավորությունը, որ իմ հոգում թողել է այդ փոքրիկ պատմվածքը՝ լի տանջանքով, արցունքներով, պատվելի մարդկանց դժբախտությամբ: Այժմ էլ աչքիս առաջ կենդանի կանգնած են աղքատ ու անբասիր Համբոն, փոքրիկ Գիքորը բազազ Արտեմի տանը և խանութում: Գրեթե բերանացի հիշում եմ պատմվածքի վերջին գլուխը, որտեղ պատկերված է Թիֆլիսից մահացած Գիքորի վերջին իրերով Համբոյի՝ տուն վերադառնալու իրողությունը, վերջին գլուխը, որ բաղկացած է ընդամենը մի քանի տողից, բայց մի ամբողջ սոցիալական վեպ արժե: Ո՞ւմ չի ցնցի, կյանքի անարդարության մասին ո՞ւմ դառը խոհերի տեղիք չի տա կամ ո՞ւմ աչքերից արցունք չի հոսեցնի այդ զարմանահրաշ վերջին գլուխը. «Մի երկու օրից ետը Համբոն գնում էր իրենց գյուղը:

Նա թաղել էր Գիքորին ու գնում էր: Կռան տակին տանում էր շորերը, որ մերը լաց լինի վրեն: Շորերի գրպաններում մի բուռը փայլուն կոճակներ, նախշուն թղթեր, չթի կտորներ ու մի քանի քորոց գտան: Էն էլ, երևի, քորջ՝ Չանիի համար էր հավաքել ու պահել...

Գնում էր Համբոն ու մտածում: Շատ ժամանակ չէր անցել, որ էդ միևնույն ճամփով քաղաք եկավ իր Գիքորի հետ:

Ահա էնտեղ էր, որ ասավ.

– Ապի, ո՞տներս ցավում են...

Եվ ահա էն ծառը, որի տակ նստեցին հանգստանալու...

Ահա էնտեղ էր, որ ասավ.

– Ապի, ծարավ եմ...

Ահա էն աղբյուրն էլ, որ ջուր խմեցին...

Ամենը, ամենը կան, մենակ նա չկա...

Մյուս օրը, երբ Համբոն անցնում էր լեռները, հեռվո՞ւմ երևաց իրենց գյուղը:

Գյուղից դուրս կանգնած սպասում էին նանը, Ջանին, Միկիչը, Մոսին, իսկ փոքրիկ Գալոն մոր գրկից կանչում էր.

– Ալի՛, ալի՛, հե՛ Գիքոլ...»:

Ապշեցուցիչ է, թե ինչքան շատ բան է ասված փոքրիկ Գալոյի այս «Ալի՛, ալի՛, հե՛ Գիքոլ»-ում: Ինչքա՛ն տանջանք, վիշտ, բախտի ծաղր են ի մի բերված: Մա մի ամբողջ տառապյալ կյանք է, և, կարծում եմ, ավելի հակիրճ, ավելի ուժգին արտացոլել պարզապես անհնար է:

Հայ գրողներից՝ Աբովյանից, Նալբանդյանից և Մունդուկյանից հետո ինձ համար ոչ ոք այնքան սրտամոտ և սիրելի չի եղել, որքան Հովհաննես Թումանյանը: Այս սերը կապված է բանաստեղծ Իոսեբ Գրիշաշվիլիի հետ, որի հրաշալի թարգմանություններով էլ դեռ շատ վաղ՝ պատանեկան տարիներին, ծանոթացա «Անուշի» հեղինակին: Պատանյակի իմ արթուն հիշողության մեջ անգիր պահպանվել են Թումանյանի մի քանի բանաստեղծություններ վրաց լեզվով, և այսօր էլ դրանք կարողանում եմ մեջբերել առանց գրքի օգնությանը դիմելու: Հետագայում՝ հասուն շրջանում, երբ մտերմացա Գրիշաշվիլիի հետ, իմ թանկագին բարեկամը հաճախ էր հիշում Թումանյանի հետ իր հանդիպումները, զովում էր նրա մարդկայնությունը, առաքինությունը, հմայքը, արդարամտությունը և հոգու շռայլությունը:

Մոտավորապես այնպես էի պատկերացրել Թումանյանի կերպարը, ինչպես նրան ներկայացնում է Տիցիան Տաբիձեն իր հուշերում: Եվ ես հավատում էի Գրիշաշվիլիի՝ Թումանյանին նվիրված բանաստեղծության անկեղծությանը, որտեղ ասված է.

Եվ սիրտս՝ դաշույնով խոցված,

Թախծով է հիշում քո դեմքը պայծառ...

Բոլորը, ովքեր շփվել են Թումանյանի հետ, սկսած Վալերի Բրյու-

սովից ու վերջացրած Սերգեյ Գորոդեցկիով, միաձայն վկայում են, թե ինչ հրաշալի անձնավորություն է եղել, ինչպիսի բանաստեղծ և ոչ պակաս հրապուրիչ իբրև մարդ:

Այս ամենն ինձ հիմք էր տալիս ակտիվորեն ձեռնամուխ լինելու Թիֆլիսում Հովհաննես Թումանյանի տուն-բանգարանի և նրա անու-
նը կրող գրադարանի բացմանը: Այնպիսի անհատ, ինչպիսին Թու-
մանյանն է, ոչ միայն բանաստեղծական ստեղծագործություններով է թանկագին և անմոռաց ժողովրդի համար, այլև առաքելությամբ և առաքինությամբ:

Ազգերի միջև բարեկամության քարոզիչները՝ մնան Հովհաննես Թումանյանին, անցնջելի հետք են թողնում հարազատ և հարևան ժողովուրդների պատմության մեջ: Մեփական ժողովրդի սիրողը ու-
րիչ ժողովրդի ցավին էլ պետք է հաղորդակից դառնա: Այս բանը շատ լավ գիտեր Հովհաննես Թումանյան մեծ հայրենասերը, դեմոկրատը և մարդասերը:

Հովհաննես Թումանյանն անմահ է որպես մեծ արվեստագետ: Անմահությունը նրա ստեղծագործության և կյանքի փառապասկն է, որից նույնիսկ ժամանակի անկանգ հոսքը ոչինչ չի կարող պակասեց-
նել: Անկասկած, այս անմահությունը նկատի ունեն հոսեր Գրիշաշ-
վիլին, երբ Թումանյանին ձոնված բանաստեղծության մեջ գրում էր.

Կբացվի ծոցը անդրշիրմյան,
Կթեքվի արևն հասկից ավելի,
Եվ քեզ կողջունե փունջն երրորդության՝
Ֆիրդոսին, Հոմերն ու Ռուսթավելին:

Գրիշաշվիլին ցանկացել է շեշտել այն ճշմարտությունը, որ պոե-
զիայի քրմերի պանթեոնում՝ հանճարների կողքին, կան նաև մեծ բա-
նաստեղծներ, որոնք նույնպես անմահ են: Իսկ անմահությամբ մեծ
բանաստեղծներն ու հանճարները միասին են ապրում: Դա տեղի է
ունենում, որպեսզի մենք կարողանանք ավելի լավ տեսնել թե՛ մեկին և
թե՛ մյուսին, թե՛ մեծին և թե՛ հանճարին:



ՍԵՐԳՈ ՋՈՐԲԵՆԱՉԵ (1926-1998), իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ԹԻՖԼԻՍԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ⁵⁵

Հովհաննես Թումանյանը վրացիների սիրելի գրողն է: Չկա վրացի թեկուզ և մեկ աշակերտ, որ արցունք թափած չլինի Գիքորի բալատի համար, հրճված չլինի Քաջ Նազարի արկածներով, սքանչացած չլինի Անուշի անապական սիրով: Այս ամենին, իհարկե, նպաստել է Ի. Գրիշաշվիլիի թարգմանությունը: Իվանե Գոմարթելին գրում է. «Երբ կարդում ենք Գրիշաշվիլիի թարգմանությունը, համոզվում ենք, որ այդտեղ ոչ մի թարգմանություն էլ չկա. ինքը՝ Հովհաննես Թումանյանն է գրում վրացերեն»:

Նշենք, որ բնագրի և թարգմանության այդ հարազատությունը սոսկ Գրիշաշվիլիի բանաստեղծական-թարգմանչական տաղանդի արդյունք չէ: Կարևորն այն է, որ Հովհաննես Թումանյանը հայ ժողովրդի իղձերի և բաղձանքների ճշմարիտ երգիչն է: Իսկ հայ և վրաց ժողովուրդները եղբայրներ են: Ահա թե ինչու վրացու սրտին մոտ ու հարազատ է Հայաստանի այդ մեծ քնարերգուի գրական ժառանգությունը:

Վրաստանն անկեղծորեն սիրում էր Հովհաննես Թումանյանին: Նա էլ իր հերթին հավատարիմ և քնքուշ սեր էր տաժում Վրաստանի նկատմամբ: Եվ դա հաստատվում է ոչ միայն գեղարվեստական երկերով...

Անդրադառնանք լոկ մեկ փաստի, որը հավաստում է, թե որքան մեծ է եղել Հովհաննես Թումանյանի՝ Վրաստանի հանդեպ տածած սերը:

1917 թվականի Փետրվարյան հեղափոխությունից հետո Իվանե Ջավախիշվիլին կազմակերպչական լայն գործունեություն է ծավալում Թիֆլիսում վրացական համալսարան հիմնելու համար: Շուրջ միստորեն տրամադրված ժամանակավոր կառավարությունն ընդդիմանում էր: Իվանե Ջավախիշվիլին չընկրկեց անհաջողության մատնվելու վտանգի առաջ և պայքարը տեղափոխեց ժողովրդի մեջ: Եվ արդյունավետ: 1917 թ. աշնանից ժողովրդին համակեց ազգային համալսարան ունենալու բուռն ցանկությունը:

Վրաստանից դուրս ապրող վրացիները նույնպես անմասն չմնացին այդ հանրաշահ գործի հաջողությանը, բայց միայն վրացիները չէ, որ ուրախ ու հպարտ էին ազգային համալսարան բացելու համար: Հիմնադրելու հնարավորությունները որքան մեծանում էին, այնքան ոգևորվում էին նաև մեր բարին ցանկացողներն ու բարեկամները: Բոլորից շուտ և բոլորից ավելի անկեղծորեն այդ սերն արտահայտեց հայ մեծ գրող և վրաց ժողովրդի ճշմարիտ բարեկամ Հովհաննես Թումանյանը: Այդ ժամանակ վրացական համալսարան բացելու դժվարությունները դեռ առջևում էին, քանզի հայտնի չէր, թե հայրենասեր գիտնականների փոքրիկ ջոկատը կկարողանա՞ արդյոք հասնել իր նվիրական բաղձանքին: Դա ավելի քան մեծացնում է վրաց ժողովրդի ազգային հետաքրքրությունների հանդեպ Հովհաննես Թումանյանի սկզբունքային վերաբերմունքի նշանակությունը:

1917 թ. հոկտեմբերի 25-ին Հովհաննես Թումանյանը վրացական համալսարանի ընկերության վարչությանն է նվիրում հարյուր ռուբլի (ոսկով) և ընկերության վարչության ակտիվ անդամներից մեկի՝ Գ. Ն. Դիասամիձեի անունով ուղարկում է չափազանց ջերմաշունչ մի նամակ.

«Միայն գիտությունը, գրականությունն ու արվեստն են լցնում ժողովուրդներին բաժանող անդունդը, և միայն դրանք կարեղծեն զալիք լավագույն կյանքն ու ճշմարիտ մարդուն:

Ուսրի և Դուք կհասկանաք այն ուրախությունը, որ զգացի ես, երբ իմացա վրացական համալսարան բացելու լուրը:

Ես հիացմունքով եմ պարկեռացնում մայրենի լեզվով բարձրա-

գույն կրթությունն սրացող ուրախ և ազնիվ վրացու կյանքը:

Իսկ մենք ե՞րբ պիտի շնորհավորենք Կովկասի մյուս ժողովուրդների բարձրագույն կրթական հասարակությունների բացումը, որպեսզի գիտության և արվեստի հողի վրա իրար հանդիպենք և փոխադարձ րմբռնում ու հարգանք հասարարենք:

Խնդրում եմ Ձեզ ընդունել և հաղորդել, ում հարկն է, իմ ջերմ ողջույնը այդ առթիվ, ինչպես նաև իմ համեստ լուսնան, որը թերևս դառնա վրաց ծաղկող կուլտուրայի մեծ շենքի աղյուսներից մեկը:

Խորապես Ձեզ հարգող

Ձեր Հովհաննես Թումանյան»:

Հովհաննես Թումանյանին անչափ ուրախություն է պատճառում վրացական համալսարանի հիմնադրումը: Թիֆլիսում՝ Կովկասի այն ժամանակվա վարչական և մշակութային կենտրոնում, շատերն էին հակադրվում ազգային համալսարանի հիմնադրմանը, եթե անգամ ոչինչ չասենք հավատները կորցրածների մասին, որոնք ազգային համալսարանի հիմնումը համարում էին ռոմանտիկ գիտնականների օրապակաս ձեռնարկում, իսկ ազգայնամոլական ուժերն առհասարակ չէին ուզում Թիֆլիսում ազգային համալսարան ունենալ: Նրանց ձայնակցում էր հայկական պլուտոկրատիան: Այս ուժերը Կովկասում մեկ համալսարանի կողմնակից էին, բայց միայն ռուսական պետական համալսարանի: Նրանք իրենց կարծիքը հիմնավորում էին գիտության ունիվերսալիզմի անհրաժեշտությամբ և իբր դրանով մերժում էին ազգային սահմանափակությունը: Նրանք չէին պատկերացնում, որ Կովկասի յուրաքանչյուր ժողովուրդ առանձին կարող է իր ազգային համալսարանն ունենալ:

Հովհաննես Թումանյանը շրջանցեց հետադիմական և շովինիստական այդ ուժերին և ակտիվորեն, անթաքույց ու աներեր կանգնեց վրացական համալսարանի ջատագովների կողքին: Աջակցությունը շատ նշանակալից էր և ճիշտ ժամանակին:

Վրացական համալսարանի հիմնադրումը, Հովհաննես Թումանյանի կարծիքով, պետք է արագացնեք Անդրկովկասի մյուս ժողովուրդների համար ևս բարձրագույն ուսումնական հաստատությունների հիմնադրման գործը: Նրա համոզմամբ՝ եղբոր և բարի հարևանի օրինակը ոչ թե պիտի դատապարտվի, ոչ թե պիտի դառնա գիտամշա-

կութային սեպարատիզմի պատճառ, այլ ընդօրինակվի: Չենք կարող չնշել նաև, որ Հովհաննես Թումանյանը ամխորտակելի էր համարում և ճիշտ գնահատում հայ-վրացական բարեկամական և բարիդրացիական հզոր ուժը:

Այսօր այնքան էլ դժվար չէ պատկերացնել, թե 1917 թ. որքան գնահատելի էր Հովհաննես Թումանյանի դիրքորոշումը, որը հրաշալի կերպով մտահայեց վրաց ազգային համալսարանի ստեղծման բարերար ազդեցությունը Կովկասի մյուս ժողովուրդների համար բարձրագույն ուսումնական հաստատություններ հիմնադրելու և, առաջին հերթին, հայոց համալսարան բացելու գործում:

Վրացական համալսարանի հիմնադրումը Հովհաննես Թումանյանը միայն իր անունից չողջունեց. դա հայկական համալսարանի հիմնադրման անմիջական նախաձեռնողի ողջույն էր:

1917 թ. մայիսի 31-ին Հովհաննես Թումանյանի գլխավորությամբ Թիֆլիսում կայացավ Հայկազյան ընկերության հիմնադիր ժողովը, որը հայկական համալսարան ստեղծելու որոշակի պլան մշակեց (այս մասին մանրամասն տես Ա. Ինճիկյան, Հովհաննես Թումանյանը և հայկական համալսարանը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1967, թիվ 2, էջ 185-197): Հովհաննես Թումանյանի համար պարզ էր, թե նպատակին հասնելու համար վրացական համալսարանին օժանդակող ընկերությունը ինչ դժվարություններ պիտի հաղթահարեր: Ահա թե ինչու վրացական համալսարանի հիմնադիրները առանձնապես բարձր էին գնահատում Հովհաննես Թումանյանի աջակցությունը:

Վրացական համալսարանի հիմնադրող ընկերությունը Հովհաննես Թումանյանի գործողության մեջ ոչ միայն մեծ գրողի սերն ու օգնությունը տեսավ, այլև արդարացիորեն նշեց, որ գրողի բերանով ամբողջ Հայաստանն է ողջունում վրաց ժողովրդին:

1917 թ. նոյեմբերի 7-ին վրացական համալսարանի հիմնադիր ընկերությունը Կ. Ափխազի ստորագրությամբ պատասխան խոսք է հղում Հովհաննես Թումանյանին.

«Մեծապարիպ Կեր, պարոն Հովհաննես Թադևոսի

Վրացական համալսարանի ընկերության վարչությունը մեծ բավականությամբ ունկնդրեց վրացական համալսարանի հիմնադրման առիթով Գրիգոլ Նիկոլոզի Դիասամիչեհին ուղարկած Ձեր նամակի ընթերցումը:

Վրաց ժողովրդի և Վրաստանում ազգային բարձրագույն կրթության նորից ծնվող տնկարանի առթիվ արտահայտած Ձեր համակրանքի խոսքերը աշխույժ արձագանք գրան ընկերության վարչության անդամների սրտերում:

Ձեր՝ որպես իր հայրենիքի լավագույն զավակի ու նրա խոհերի տաղանդավոր արտահայտչի խորապես սրտաբուխ խոսքերում մենք տեսնում ենք հազարամյակների ընթացքում բարի դրացու նման վրաց ժողովրդի հեյր կողք կողքի ապրող և նրա հեյր մշակութային զարգացման ու հոգևոր կայարանազորման մշտական և փոխադարձ հողի վրա գրկվող հայ ժողովրդի քնքշանքն ու ողջույնը:

Վերապրելով Ձեր ողջույնի առաջացրած սքանչելի զգացումները՝ մենք չենք կարող չհրկնել Ձեր խորապես նշանակալից խոսքերը. «Միայն գիտությունը, գրականությունն ու արվեստն են լցնում ժողովուրդներին բաժանող անդունդը, և միայն դրանք կարող են գալիք լավագույն կյանքն ու ճշմարիտ մարդուն»:

Ընդունեք վրացական համալսարանի ընկերության վարչության ողջ կազմի և անչամբ իմ անկեղծ երախտագիտությունը Ձեր սրտառույ մաղթանքների և վրացական համալսարանի օգրին կատարած նվիրատվության համար:

Իշխ. Կոնսյու. Ափիսագ»:

Հովհաննես Թումանյանին չէին դավաճանում հավատն ու ինտուիցիան, երբ սրտանց ողջունում էր վրացական համալսարանի ստեղծումը: Ընդամենը հինգ տարի ապրեց նա Թիֆլիսի համալսարանի հիմնադրումից հետո: Այդ տարիները հաստատում են նրա խոր հավատի անսխալականությունը:

Իվանե Ջավախիշվիլիի հրապարակային հայտարարության համաձայն՝ վրացական համալսարանը երբեք պահանջ կամ ցանկություն չի ունեցել վերածվելու համակրվկասյան համալսարանի, բայց նրա առաջնահերթ խնդիրներից մեկը եղել է եղբայրական ժողովուրդների մշակույթի և պատմության ուսումնասիրությունը, առանց որի անհնար կլինեք հետազոտել նաև Վրաստանի պատմությունը: Իհարկե, ասվածը նախ և առաջ վերաբերում է հայոց պատմական հարուստ գրականությանը ինչպես բազմաթիվ պատմիչների առումով, այնպես էլ տեղեկությունների առատությամբ: Համալսարանի հիմնադիր Իվանե Ջավախիշվիլին ամենից ավելի խորն էր գիտակցում այդ չափա-

զանց հարուստ պատմական գրականության հասարակական նշանակությունն առանձնապես Վրաստանի պատմության համար:

Դեռ ուսանողական շրջանից, հետագայում մասնաճյուղավարական տարիներին Իվանե Ջավախիշվիլին զուգահեռ ուսումնասիրել է հայ և վրաց պատմական գրականությունը «հայ պատմական գրականության յուրահատկության և Վրաստանի պատմության համար ունեցած առանձնահատուկ նշանակության պատճառով»:

Հիմնադրման առաջին իսկ օրվանից Թիֆլիսի համալսարանը դարձավ հայագիտական հետազոտությունների կենտրոն:

Ուսումնական առաջին դասացուցակով նախատեսված էր, և համալսարանի հիմնադրման առաջին կիսամյակում Ակակի Շանիձեն կարդում էր հին հայերեն՝ գրաբար: Հենց նրա ղեկավարությամբ հետագայում մի շարք նշանավոր գիտնականներ ուսումնասիրեցին հին հայերենը:

1918 թ. հունիսի 11-ին համալսարանի պրոֆեսորական խորհուրդը հայ պատմագրության բնագավառում աշխատելու համար երաշխավորում է Ն. Մառի տաղանդավոր աշակերտ Գ. Գիվշիձեին, որը, ցավոք, մեկ տարի անց վախճանվում է բոլորովին երիտասարդ հասակում: «Հայ պատմական գրականություն» առարկայի առաջին դասախոսությունը կարդում է Իվանե Ջավախիշվիլին:

Նոր-նոր ոտքի կանգնող վրացական համալսարանի ուսումնական պլաններում մեծ տեղ էր հատկացվում Հայաստանի պատմության ու մշակույթի ուսումնասիրությանը: Իսկական կոչ է հնչում Իվանե Ջավախիշվիլի խոսքը. «Յուրաքանչյուր լուսավորյալ վրացի պարտավոր է իր հարևան եղբայրական ժողովրդի՝ հայերի բազմատանջ, բայց չափազանց հետաքրքիր կյանքն իմանալ: Իսկ դրա համար մախ և առաջ պետք է ուսումնասիրել այն սկզբնաղբյուրները, որոնց հիման վրա հնարավոր է վերականգնել Հայաստանի պատմությունը»:

Իվանե Ջավախիշվիլին գործով ապացուցում էր հայ ժողովրդի և նրա հիմնավոր մշակույթի հանդեպ ցուցաբերած հարգանքն ու սերը: Երբ հայ հայրենասիրական ուժերը որոշեցին Թիֆլիսից տեղափոխել ազգագրական ընկերության հայկական թանկարժեք հավաքածուները և նյութերը, վրացիներից ոմանք փորձեցին տիրանալ այդ հավաքածուներին: Իվանե Ջավախիշվիլին՝ իբրև համալսարանի ներկայացուցիչ, սաստկորեն հարձակվեց եղբայրական ժո-

ղովրդի շահերն անտեսելու դեմ, բազմակողմանիորեն ապացուցեց հայ ժողովրդի իրավունքները, որպեսզի նա տեր դառնա իր ազգային հարստությանը, և նույնիսկ կարողացավ հասնել դրա իրականացմանը: Նման փաստերն ավելի էին մերձեցնում երկու եղբայրական ժողովուրդներին, և կասկած լինել չի կարող, որ ուրախությամբ էր լցվում նաև Հովհաննես Թումանյանի սիրտը: Թիֆլիսի համալսարանն ուրախությամբ էր արձագանքում հայ ժողովրդի յուրաքանչյուր հաջողության:

Վրաստանում մեծ ուրախությամբ ընդունեցին Գյումրիում համալսարանի բացելու լուրը: «Սախալխո սաքմե» թերթը 1920 թ. հունվարի 13-ի համարում գրում է, որ հունվարի 25-ին հանդիսավորապես բացվելու է Հայաստանի պետական համալսարանը: Նույն թերթի հունվարի 1-ի համարում կարդում ենք. «Երեկ՝ կեսօրվա ժամը 1-ին, խմբագրությունում հյուրընկալվեց Հայաստանի նշանավոր բանաստեղծ Հովհաննես Թումանյանը: Խմբագրության անդամները շնորհակալություն հայտնեցին հարգարժան հյուրին և Հայաստանին մաղթեցին ամենայն լավն ու բարին»:

1920 թ. հունվարի 22-ին ռեկտոր Իվանե Ջավախիշվիլին համալսարանի վարչությանը հայտնում է, որ հունվարի 25-ին Գյումրիում նախատեսվում է բացել համալսարանի իմաստասիրական ֆակուլտետ: Վարչությունը խնդրում է պրոֆ. Ակակի Շանիձենին կազմել ողջույնի տեքստ: Հունվարի 24-ին պրոֆեսորական խորհուրդը հավանություն է տալիս հեռագրի տեքստին, և այն գրքերի հետ ուղարկում են Գյումրիի համալսարան:

Հայկական առաջին համալսարանի բացման առիթով վրացիների ուրախությունը սրանով չի ավարտվում: «Սախալխո սաքմե» լրագրի 1920 թ. հունվարի 25-ի համարում Ակակի Շանիձեն տպագրում է մի հրաշալի հոդված՝ «Ողջո՛ւյն հայկական համալսարանին» վերնագրով: Հոդվածում արտահայտված է այն ուրախությունը, որ պատճառել էր եղբայրական ժողովրդի համալսարանի բացումը:

«Այսօր Գյումրիում,- գրում է Ակակի Շանիձեն,- հիմնադրվում է հայկական նոր տիպի առաջին համալսարանը, որով այսուհետ լայն հնարավորություններ են ընձեռվում հայկական միտքը զարգացնելու, գիտական աշխատանքներն աշխուժացնելու և հայկական գիտությունը բարգավաճ դարձնելու համար:

Սկզբի համար ճիշտ է միայն իմաստասիրական/պատմաբանասիրական ֆակուլտետ բացելը,- շարունակում է Ա. Շանիձեն,- քանզի բազում դժվարությունների կհանդիպի նոր-նոր ոտքի ելնող համալսարանը, բայց գործի նկատմամբ ունեցած սիրով և իրենց ակտիվ աշխատանքով համալսարանի ղեկավարները, որոնց մեջ կան հռչակավոր շատ անձինք, աստիճանաբար կհաղթահարեն բոլոր դժվարությունները: Ծանր պայմաններում է սկսում հայկական համալսարանն իր կյանքը, բայց համոզված ենք, որ համալսարանի նախաձեռնողները անձնագոհ և տքնաջան աշխատանքով հրաշալի կձեռնարկեն ազգաշահ այդ մեծ գործը և փառահեղորեն կպսակեն այն:

Օտար երկրների համալսարաններում աշխատող մասնագետները, ինչ խոսք, շուտով կհամախմբվեն ազգային գիտության տաճարի շուրջը, և բոլորը միասին կբաշեն ծանր, բայց չափազանց պատվելի լուծը, որին նրանց արժանացրել են պատմությունն ու հայրենիքի ապագան:

Մեր հարևանների մշակույթի տոնահանդեսի օրը մեր սրտերը լցվել են անսահման ուրախությամբ, ուստի ասում ենք.

– Կեցցե՛ հայկական լուսավորության օջախը:

– Կեցցե՛ հայկական համալսարանը»:

Ճիշտ է, համալսարանի կյանքը շատ կարճ տևեց, բայց դա չի խոչընդոտում, որ նշենք համալսարանի պրոֆեսորայի առաջին կոլեգիայի հիմնական մասի անսահման հայրենասիրությունն ու գիտության համար անձնագոհությունը:

Ակակի Շանիձեի խոսքերն արտահայտում էին ողջ վրաց ժողովրդի ձգտումներն ու ոգևորությունը:

Դեռևս Հովհաննես Թումանյանի կենդանության օրոք եղբայրական համալսարանները ակտիվ պայքարում էին ժողովուրդների միջև եղած ճեղքերը վերացնելու համար: Ներկայումս Երևանի և Թիֆլիսի պետական համալսարաններն ամեն կերպ ուժեղացնում են երկու ժողովուրդների եղբայրական հարաբերությունները: Նրանք համակողմանիորեն ուսումնասիրում են նաև Հովհաննես Թումանյանի գրական հարուստ ժառանգությունը:



ԳՐԻԳՈՆ ԱՌԲԱՔԻՉԵ (1880-1962), բանաստեղծ, արձակագիր, փիլիսոփա, էսսեիստ, հրապարակախոս, հասարակական գործիչ, XX դարի վրաց հոգեբանական վեպի հիմնադիրներից:

Ծնվել է Քութայիսի նահանգի Սվիրի գյուղում: Քութայիսի գիմնազիան ավարտելուց հետո սովորել է Տարտուի (Էստոնիա) կայսերական համալսարանում, այնուհետև՝ Լայպցիգի (Գերմանիա) համալսարանում, որն ավարտել է փիլիսոփայական գիտությունների դոկտորի գիտական աստիճանով: 1908 թ. վերադարձել է Թիֆլիս: «Երկնագույն եղջյուրներ» սիմվոլիստական խմբակի (1915 թ.) հիմնադիրներից է: 1917 թ.

հիմնել է Վրաստանի գրողների միությունը:

Ավելի քան կես դար բացակայել է հայրենիքից: 1931 թվականից մինչև մահը եղել է քաղաքական վտարանդի: 1931-1946 թթ. բնակվել է Գերմանիայում, 1946-1962 թթ.՝ Շվեյցարիայում: Վախճանվել է Ժնևում:

Արգելված հեղինակ էր՝ իբրև թե «սոցիալիստական համակարգի դավաճան», «ժողովրդի թշնամի»: Հեղինակ է բազմաթիվ վեպերի, դրամատիկական երկերի, բանաստեղծությունների և պատմվածքների ժողովածուների, որոնցից հատկանշական են՝ «Օձի շապիկը» (1926), «Կտորված սիրտ» (1931), «Սեգի վրացուհին» (1932), «Դիցուհու կանչը» (1934), «Կովկասյան նովելներ» (1934), «Իմամ Շամիլ», «Սուրբ եզան սպանությունը» և այլն:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԼՈՒՍԵՂԵՆ⁵⁶

Բանաստեղծի մահը բանաստեղծի համար իր մահն է, առավել ևս Հովհաննես Թումանյանի մահը: Շա՛տ մեծ է մեր վիշտը, որովհետև Հովհաննեսը բանաստեղծ էր: Հովհաննեսը Մարդ էր, Հովհաննեսը բարեկամ էր: Եվ ամեն ինչում կատարելապես լուսեղեն: Չոր չեն նրան չորրորդ ավետարանիչի անունով կնքել:

Նման անհատ հարյուր տարին մեկ է շողարձակում, և Հովհաննեսը նախ և առաջ անհատ էր: Դեռ որ արտաքինը՝ բարձրահասակ, փոքրասիական պրոֆիլ, ինչպես մեղալիոն վեհապանձ ռասայի՝ միշտ լուսեղեն ժպիտով: Միշտ «ճերմակ», իսկապես կենսաբանական ապացույցը պոետի: Հոգին՝ ամենատես, նուրբ, բարի, Ամենաբարձրյալի

պես միշտ խանդավառ: Սիրտը՝ պարզ, բաց, կրակված, մանկական, անապական: Վերջապես, իսկական զավակ Հայաստանի:

Հովհաննեսն ազատ էր ներքին այն անեծքից, որ բնորոշ էր նրա շատ հայրենակիցների: Այդ անեծքն առկա է նաև Վրաստանում: Հիմա փակագծերը բացելու ժամանակը չէ, բայց և այնպես հատկանշական է, որ նա, ով ճգնել-քամելով հանում է այդ անեծքը, անպայման մեծ մարդ է: Այդպիսին էր Հովհաննեսը:

Հովհաննեսը սիրո մարմնացում էր: Որևէ առարկայի կամ երևույթի նկատմամբ նրա մոտեցումը միշտ անցնում էր սիրո պրիզմայի միջով:

Ավելորդ է խոսել այն մասին, թե նա ինչպես էր սիրում իր Հայաստանը, իր մայր ժողովրդին՝ Հայաստանի ժողովրդին: Հայրենիքը նրա համար նախ և առաջ «մայր հող» էր՝ իր կրծքով ու ստինքներով: Հողի պաշտամունքը նրա համար ամենակարևորն էր:

Հայրենիքի պատմությունը Հովհաննեսի հոգին չափազանց սրվածությամբ էր ընկալում և ընկալում էր իբրև կենսաբանական ու հոգեկան հոգս...

Ամբողջ հայ քնարերգության մեջ իմ հոգուն շատ ավելի համահունչ են Վանա լճի ափերին լսած մի երկու երգ: Դրանցում լսվում էր Հայաստանի թարմ շնչառությունը, որոնցում շնչում է ինքը՝ ինքնատիպ և անկրկնելի հողը հայոց: Այդ երգերում ես նախ և առաջ տեսնում եմ Հովհաննեսին, և նրա ուրվականն իմ աչքին պատկերանում է Սևանի փեշերին վեր խոյացած լույսով ու տրտմությամբ:

Հովհաննեսը խորապես զգում էր նաև Վրաստանը: Ես չեմ ճանաչում մի երկրորդ այլազգու, որ նրա պես սիրեր Վրաստանը:

Այն ձևակերպումը, որ վրացիներն ու հայերը եղբայրներ են Փոքր Ասիայում, վերածվել է միջազգային ակտրուիզմի: Հովհաննեսի համար դա սեր էր ու արյուն: Նա միշտ սպրում էր Հայաստանի նախաստեղծ առասպելներով, բայց չափազանց դժվար կլիների պնդել, թե պակաս չափով էր զգում վրացական խոսքը, կենցաղը, պատկերն ու նկարագիրը:

Ես Վրաստանի ծնունդ ու վրացու հազվադեպ եմ հանդիպել, որ նրա չափ ճանաչեր ու ընկալեր Վրաստանի էությունը:

Բոլորին քաջ հայտնի է, թե նրա համար ինչպիսի ողբերգություն էին հայ-վրացական գժտությունն ու երկու դրկից ժողովուրդների միջև ծագած նախնին պատերազմը: Դրա լուսեղեն ապացույցն են Տիցիան

Տարիձեռի՝ Հովհաննեսային հղած նամակը և նրա պատմական սքանչելի պատասխանը:

Անվերապահորեն կարելի է ասել, որ հայերին ու վրացիներին հաշտեցնողը, բառիս ամենալայն իմաստով, միայն Հովհաննեսն էր՝ քաղցր ու ասպետական:

Մեզ՝ բանաստեղծներին համար նա միս էր ու արյուն, ոմանց համար հայր էր, ոմանց համար՝ ավագ եղբայր: Հազվադեպ էին կազմակերպվում այնպիսի երեկույթներ, որոնց Հովհաննեսը ներկա չլիներ և չլուսավորեր իր անձով: Իսկ երբ հիվանդ էր լինում, սիրով լի և լույսով ողողված նամակ էր գրում (հիշենք թեկուզ Իակոբ Նիկողաձեի հոբելյանը): Նրա տունը մահապետական առատածեռնությամբ միշտ բաց էր մեր առջև:

Նա կրակը սիրում էր ինչպես կրակապաշտ և այն միշտ վառ էր պահում բուխարու մեջ:

Նա մեզ օջախի մոտ էր հրավիրում, որի կողքին սեղանն էր՝ լի թխվածքով, մրգերով, նաև գինիով, միայն թե կարմիր, որն ինքը շատ էր սիրում: Հետն էլ՝ գրույց պոեզիայի և առիասարակ արվեստի մասին: Նրա տանն անցկացրած ժամանակը անմոռաց կմնա մեզ համար:

Ինչպիսի՜ նրբագագություն և ինչպիսի՜ ուշիմություն, հազվագյուտ բնագրի տեր էր:

Ժամանակ առ ժամանակ ճոխ սուփրա էր գցում: Բոլորն են հիշում նրա տված ճաշկերույթը Ստամբուլ մեկնելուց առաջ: Այնտեղ էին գրեթե բոլորը՝ հայ թե վրացի, բանաստեղծ թե արձակագիր, դերասան թե նկարիչ, հրապարակախոս թե լրագրող: Այդ ճաշկերույթը ինձ հետ միասին, հավանաբար, այսօր շատերն են հիշում:

Մե՛ր, սե՛ր. ահա Հովհաննեսն ամբողջովին: Չարմանալի չէ, որ նա կանխատեսում էր ապագան, կանխատեսում էր ինչպես իսկական պոետ: Հովհաննեսը, անկասկած, նախագագացող էր և մարգարե: Շատերն են հիշում նրա կանխագուշակումը համաշխարհային պատերազմի մասին: Վերհիշենք «Слово» թերթում տպագրված այն հողվածը, որտեղ արված գուշակությունը սրանից չորս տարի առաջ իրականություն դարձավ: Ընդ որում, նա իսկական երազահան էր նաև: Նրա ընտանիքի անդամները շատ լավ հիշում են մի փաստ, երբ նա իր տանն իսկույն գգում է, թե այդ պահին ինչ է կատարվում տարա-

ծությամբ բավականին հեռու իր մի ծանոթի հետ: Հանձինս նրա այդ հատկանիշների՝ ես տեսնում եմ վերջին լցվելն ու վերջին պարպվելը, ասել է թե՛ նրա կարողությունների անսահմանափակությունը: Նման պահերին դժվար չէ ժամանակը դնել «մի կողմ» և անցնել: Ահա թե ինչու զարմանալի չէ, որ ամեն մի նոր երևույթ հասկանալու կամ մի նոր բան իմանալու համար սովորաբար նրան էին դիմում:

Սրանով է բացատրվում այն հանգամանքը, որ Հովհաննեսին սիրում էին բոլորը: Ավելին՝ նրան այդպես տեսնողն ինքն էր սիրահարվում կյանքին:

Ես լիովին համոզված եմ, որ ինքնասպանության վճիռ կայացրած անձը, հանդիպելով Հովհաննեսին, անպայման կհրաժարվեր իր սուկալի մտադրությունից: Իսկ դրանով արդեն արդարանում էր ինքը՝ կյանքը:

Ես հաճախ էի այցելում հիվանդ Հովհաննեսին: Գնում էի նաև այն ժամանակ, երբ բժիշկներն արգելում էին որևէ մեկին ընդունել: Հիվանդությունը Հովհաննեսին բոլորովին չէր փոխել. նա այնպիսին էր, ինչպիսին էր առողջ ժամանակ:

Նա հարցուփորձ էր անում իմ ընկերների՝ Տիցիան Տաբիձեի, Պաուլո Իաշվիլիի, Վալերիան Գափրիճյանի, Նիկո Սիծիշվիլիի, Լևի Ջափարիձեի մասին: Հաճախ էր հետաքրքրվում Տիցիանի կնոջով՝ Նինոյով, և նրանց երեխայով՝ Տանիստով: Շատ էր հարցնում Կոտե Մաղաշվիլիի, Ա. Աբաշելիի, Ի. Գրիշաշվիլիի, Սանդրո Ղանչելիի, Իսկոբ Նիկոլաձեի, Գիգո Դիասամիձեի և ուրիշների մասին, միշտ՝ բարի սրտով և հոգածությամբ: Հավանաբար, երբևէ կտպագրվեն նրա հետ ունեցած իմ գրույցները:

Հովհաննեսը եվրոպականորեն կրթված չէր, բայց նրանում «հողի» իմաստություն կար. նա ամեն ինչ հասկանում էր և ամեն ինչ յուրովի մեկնաբանում:

Ինձ համար ահավոր էր նրա հիվանդությունը: Երբ Լոռի վերադառնալու ցանկություն հայտնեց, ես ու իմ ընկերներն իսկույն զգացինք, որ «հողը» կանչում է նրան: Հիվանդին փրկելը դժվարացավ:

Մի անգամ՝ աշխատանքի ժամանակ՝ ցերեկվա ժամը երկուսին, նրան որևէ խոսք ասելու անհաղթահարելի ցանկություն առաջացավ իմ մեջ, գրեթե հրաժեշտի կամ վերջին խոսքի պես մի բան: Իսկույն նամակ գրեցի ու շտապ ուղարկեցի:

Հաջորդ օրը հանդիպեցի բանաստեղծ Կարա Դարվիշին: Երբ հայտնեցի զգացածս, ասաց՝ Հովհաննեսին երեկ երեկոյան Մոսկվա տարան:

Արդյոք մեկնելու պահին նամակս հանձնե՞լ են, իսկ գուցե չի՞ ստացել: Անչափ ցավալի կլինի ինձ համար, եթե ստացած չլինի:

Կյանքը հանդիպում է, մահը՝ բաժանում: Հովհաննեսն ինձ համար «հանդիպում» էր՝ հզորության վերջին բռնկումով:

«Հովհաննես Լուսեղեն»՝ այսպես կհիշեմ ես նրան հավիտյանս հավիտենից:

*Թիֆլիս
Մարտի 27, 1923*

ԳՐԻԳՈՒ ՌՈՔԱՔԻՉԵՒ ՆԱՄԱԿԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ՝⁵⁷

Սիրելի՛ Հովհաննես

Քո նամակը Նիկոլաձեի հորեյանին բոլորի վրա վիթխարի տպավորություն թողեց: Իսկ ինձ վրա՝ բացառիկ: Քո խոսքերում ես շոշափելիորեն զգացի սերը Վրաստանի նկատմամբ: Մեր, որ կարող է վերապրել միայն մեծ մարդը: Երևի երբեք ես այնպես չեմ զգացել քեզ մոտիկ լինելու պահանջ, ինչպես այժմ: Ես ամբողջովին պարփակվեցի ինքս իմ մեջ, բայց միևնույն ժամանակ ստեղծագործելու պահին բոլորովին հեռացա «անձնականից, չափազանց անձնականից»: Ինձ այժմ զարմացնում է միայն ծայրաստիճան պարզությունը, որը դրոշմված է բնության բեկորների վրա: Սա հոգնությունից չէ: Ավելի շուտ իմաստությունից է: Իմ «Սուրբ Նիկոյի խաչը» միստերիայում ես հենց այդ հոսանքն եմ ներկայացնում: Քո մեջ ես զգում եմ այդ ապրումների գծով իմ եղբորը (թեև ավագ եղբորը): Այն, որ դու գամված ես անկողնում, ինձ համար դժբախտություն է: Հաճախ պատահում է, որ իմ աղոթքներում հանկարծ հնչում է քո անունը: Միայն սեր, մնացյալը հիմարություններ են: Իսկ սերը սխրանք է՝ սարսափելի, դժվարին: Կարծում եմ, որ եթե սերը հասցվի իր վերջին, վերջնական սահմանին, ապա մահը կչքանա...

Ես քեզ սիրում եմ, Մարդ, մինչև վերջ հավերժական հանգստի թա-

գավորության մեջ կտեսնենք քեզ... Քանի որ դա այդպես է, ուրեմն մահ չկա:

Սիրելի՛ Հովհաննես, մի՛ կարծիր, թե ես մոռացել եմ քեզ կամ ինչ-որ բան: Հիշի՛ր, որ քեզ հիշում են սիրո մեջ, մանկական զգացումներում, որդիական նվիրվածությամբ:

Հոգեպես քո՝

ԳՐԻԳՈՆ ՌՈՐԱՔԻՉԵ

Թիֆլիս
22.12.1922

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆՆԵՍ⁵⁸

Քաղցր Հովհաննես,
Անեծք է դարի.
Կյանքից պոկվեցիր որպես ողկույզ լի:
Այսօր կշչա շչակը Վանի,
Ու լուրթ Սևանը թանձր կարտասավի...

Մրտով այրել ես անհամար ավեր
Ու եղել ճերմակ, սուրբ կարապի պես:
Խաչված երկիրդ կարենաս եթե
Արիմաթելու ձեռքով ցած բերես...

Գիտեիր՝ Աստված չի լինում մենակ.
Յանկացար բոլոր հոգիներին օրհնել.
Երևի երկիրդ արել ես կտակ
Հավիտյան հիշել վրաց երկիրն էլ...
Կգանք հետքերով փոքրիկ Տանիտի³¹,
Խորհրդանիշով քո ծաղկազարդված,
Կբերենք իբրև արցունք մեր սրտի
Ոսկեզեղմ խոյեր՝ դանակով մորթված:

³¹ **Տանիտ** – Ասորաբաբելական աստվածուհի (ծնթ.՝ քարգմ.):

Գիտեմ՝ կողրվես փոսի մոտ շիրմիդ,
Ո՛վ հովանավոր բյուրավոր մարդկանց:
Քահօցր Հովհաննես,
Պինդ սեղմի՛ր կրծքիդ
Իմ լավ Ալկային³², Կարմելուն³³ իմ լավ:

³² **Ալկա** – Ալի՝ վրաց բանաստեղծ Ալեքսանդր Արսենիշվիլին (ծնթ.՝ թարգմ.):

³³ **Կարմելի** – վրաց բանաստեղծ Շալվա Գոգիաշվիլին (ծնթ.՝ թարգմ.):



ԳԻՈՐԳԻ ՍԱՄԵԱՐԱԶԵ

ՄԵՐ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻՆ⁵⁹

(Հովհաննես Թումանյանի հորեյլանի առիթով)

Ո՛վ խոսքի մարդիկ ու մարդիկ գրչի,
Ձեզ եղբայրական ողջույններ հազար.
Մեր ժպտուն աչքի խիմոլը չի կորչի.
Մեր դրոշներն են ծածանվում ազատ:

Երբ էլ ցանկանամ ձեզ մոտ այցի գալ,
Գիտեմ ուղեկցի կարիք չեմ գգա.
Ինձ կընդառաջի Սևանը գուլալ,
Ու Ջանգեգուրն ընդառաջ կգա:

Մեր երգն անմահ է եղել դարեդար
Ու իր հանգով է հնչում վերստին.
Թեկուզ մի բուպե ինչպե՞ս մոռանալ
Հանդարտ Հակոբին, քաղցր Հովհաննեսին...

Կյանքը մի անբաց կակաչ է կոկոն,
Նայեք, թե ինչ է պակաս աշխարհին,
Ու կհիշեք Դուք բորբոքուն հոգով
Բարության երգիչ Իսահակյանին:

Մենք համատեղ ենք ու արիարար
Կրել մեր կյանքի զրկանքները բյուր.
Բարեկամության ակունքը պայծառ
Չէ՞ Շահումյանն է ցեմենտել ամուր:

Հոկտեմբերն է մեզ մի կյանքի բերել.
Եղբայրությունն է իջել մեր տանը:
Ողջո՛ւյն Չեզ, ողջո՛ւյն, մեր բարեկամներ.
Կեցցե՛ք վարդասույզ վարդ Հայաստանը:



ՆՆՆՈ ՏԱՐՏԵ (1900-1965), էստեիստ, հուշագիր, գրականագետ:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ⁶⁰

Գյուղում կարճ ժամանակ մնալուց հետո վերադարձանք Թիֆլիս: Հանգրվանեցինք մեր նոր բնակարանում: Երբեք մենակ չէինք մնում. առավտից երեկո ինձ մոտ էին հավաքվում մեր ընկերները, իսկ Պատլոն հաճախ գիշերում էր մեր տանը:

Պատլոն որոշեց տան պատերը զարդարել դիմանկարներով: Տիցիանին, իրեն, Վալերիան Գափրինդաշվիլիին «կենդանացրեց» ինքը, իսկ Լադո Գուդիաշվիլին ինձ մվիրեց իր նկարները, դրանց թվում՝ «Խնջույք քաղաքից դուրս» կտավը և Տիցիանի շատ պայմանական դիմանկարը: Նվեր ստացա նաև սբ. Նինոյի, Քեթևանի և Թամարի նկարները, Մոսե Թոխձեի աշխատանքը՝ «Քուլաջայով»³⁴ զգեստավորված իմ եղբայր Իլոն դիտում է Ալազանի դաշտը»:

Երեկոները, երբ շատ մարդիկ էին հավաքվում, նստոտում էինք կլոր սեղանի շուրջը, իսկ երբ հյուրեր քիչ էի ունենում, տեղավորվում էինք բովսարու մոտ և գլինտովեյն պատրաստում:

Մեր հաճախակի հյուրերից էր ինժեներ Ավդենը, որին Պատլոն բերեց մեզ մոտ: Նա շատ հետաքրքիր մարդ էր և պոեզիայի մեծ սիրահար: Նրա գրչին է պատկանում «Ես գնում եմ» գիրքը: Կարծեմ ճիաթուրայում էր աշխատում՝ երկաթուղում: Հանճարեղ պլան էր մշակել,

³⁴ Քուլաջա – տղամարդու վրացական ազգային կոստյում (ծնր.՝ քարգմ.):

ըստ որի՝ Վուգայի հոսանքը պետք է փոխեր. նախատեսում էր հողերն ավելի բերրի դարձնել: Այս թեմայով գրույցները չէին ընդհատվում: Շուտով Ավդեևը մեկնեց Մոսկվա: Խորհրդային կառավարությունը նրան մի մեծ տուն հատկացրեց, որտեղ աշխուժացան այս պլանները կենսագործելու աշխատանքները, բայց 1937 թ. ոչ էլ Ավդեևը կարողացավ խուսափել ճակատագրի դաժան հարվածից:

Հիշում եմ՝ մի անգամ՝ առավոտյան (դա 1920 թվականին էր), աչքս ընկավ թերթում տպագրված հայտարարությունը. «Տիցիան Տաբիձեի բնակարանում Սերգեյ Գորոդեցկին զեկուցում է կարողալու պոեզիայի մասին»:

Ես սարսափի մեջ ընկա: Ես և Տիցիանը նոր էինք ամուսնացել, սենյակը դեռ բոլորովին դատարկ էր, իսկ մեր գրպաններում նույնիսկ բոռ կոպեկ չէր զնգում:

Սերգեյ Միտրոֆանովիչի ներս մտնելուն պես հարձակվեցի վրան.

– Հիմի ի՞նչ պիտի անենք: Մենք ընդամենը չորս աթոռ ունենք, ուրիշ ոչինչ... Փողի մասին էլ չեմ ասում:

Նա շատ հանգիստ պատասխանեց.

– Փող ոչ էլ ես ունեմ, իսկ աթոռներ հարևաններից կբերենք:

Այդուհանդերձ ես չհանգստացա.

– Ոմանք կարող են ցրվել գնալ, իսկ ովքեր մնան, նրանց ի՞նչ պիտի անենք:

Ճար չունեի, հարևաններից աթոռներ խնդրեցի: Փա՛ռք Աստծո, սենյակն ընդարձակ էր: Երեկոյան մարդիկ հավաքվեցին:

Ահա և վերջացավ զեկուցումը:

Մեր ընկերներից բացի՝ մյուսները գնացին: Մնացին Թումանյանը, նկարիչ Սուդեյկինը կնոջ հետ, Պատյո Իաշվիլին, Նիկոլո Միծիշվիլին, Լադո Գուլիաշվիլին, ֆուտուրիստ Իլյա Չղանկիչը:

Ահուդողով նայում եմ հյուրերին: Խմբվել էին սեղանի շուրջը:

Հանկարծ Հովհաննես Թումանյանը վեր կացավ ու դուրս գնաց: Նրան հետևեցին ևս մի քանիսը:

Միջանցքում շոյեց գլուխս ու ասաց՝ շուտով կվերադառնամ:

Մի ժամ էլ չէր անցել, երբ մեկը թակեց ննջասենյակիս դուռը: Գուռը բացեցի. իմ առջև կանգնած էր Հովհաննեսը՝ դեմքը ողորված բարի ժպիտով: Նրանից փոքր-ինչ հեռու մի մշակ էր կանգնած՝ վիթխարի զամբյուղը ձեռքին:

– Աղջիկս, մի՛ անհանգստացիր, ամեն ինչ բերել եմ:

Նայեցի զամբյուղի մեջ. այն լի էր ուտելիքով, գինիներով և սպասքով:

Ինձ անձամբ օգնեց սեղան զցել: Լուսացրինք արթմնի, քանզի Հովհաննես Թումանյանն էր խոսում ժողովուրդների բարեկամության մասին:

Հաճախ, ծաղիկներով բեռնված, այցի էր գալիս մեզ:

1920 թ. վրաց բանաստեղծները որոշեցին մայիսի 7-ը Պոեզիայի օր հայտարարել: Հովհաննես Թումանյանը մանրամասն քննության էր առնում տոնահանդեսի ծրագրերը: Ուրախ էր, որ Պոեզիայի օրը ժողովրդական տոնահանդեսի բնույթ էր ստանում: Տիցիանը հիշում է, թե Հովհաննես Թումանյանն ինչպես էր երագում, որ տոնահանդեսին մասնակից դառնար նաև հայ երիտասարդությունը: Դա նրա անճակարկան տոնն էր դառնում: Առավոտյան նախ ծաղիկներ ու նամակներ ուղարկեց մեզ, հետո ինքը եկավ, որ մեզ հետ անցկացնի տոնակատարությունը:

Հաճախ առավոտ կանուխ այցելում էր ինձ: Երբեմն Տիցիանը տանը չէր լինում: Աթոռը քաշում էր մահճակալիս մոտ, թուղթ ու գրիչը պարզում ինձ և ռուսերեն թելադրում իր բանաստեղծությունները, իսկ ես թարգմանում էի վրացերեն:

Նրա «Վրաստանի ոգին» (բնագրում՝ «Վազի խաչը» – Հ. Բ.) բանաստեղծության տող առ տող թարգմանությունը մինչև հիմա ինձ մոտ է:

Նստում էր ինչպես սիրո պատրիարք և հանգիստ գրուցում ինձ հետ:

Վերջին անգամ, երբ տեսա, արդեն հիվանդ էր: Պատրաստվում էր մեկնելու բուժվելու, բայց բուժումներն արդյունք չտվեցին: Պառկեցրին Ռ-տիչևսկու փողոցում գտնվող Շահպարտյանի հիվանդանոցում: Գնալ-գալով մաշել էինք հիվանդանոցի շենք: Ծաղիկներ, երկտողեր էինք ուղարկում, բայց հիվանդասենյակ չէինք մտնում. զգուշանում էինք, որ չանհանգստացնեինք նրան:

Հովհաննես Թումանյանը պետք է կնքեր իմ աղջկան, բայց հիվանդությունը խանգարեց, և աղջկաս կնքեց նրա դուստրը՝ Նվարդը: Ես երջանիկ եմ, որ այդպես հարազատացանք:

Հովհաննես Թումանյանի մահից հետո նրա մասին գրած իր հող-

վածում Տիցիանը նշում է, որ նա մեր ժամանակների համար բացառիկ երևույթ էր³⁵...

Չմռանը գեղարվեստական թատրոնը հյուրախաղերի եկավ Թիֆլիս: Մերոնք շատ մտերմացան Կաչալովի հետ, հաճախակի հանդիպում էին Օ. Լ. Կնիպեր-Չեխովային, Գերմանովին և ուրիշ դերասանների: Այդ երեկո, երբ թատրոնի դերասանների համար ճաշկերույթ էին կազմակերպել նոր ակումբում, շտապ ինձ մոտ եկավ Մերգեյ Գորոդեցկին և մանրամասն պատմեց, թե ինչ է կատարվել ճաշկերույթի ժամանակ, թե որքան հրաշալի են երգել մոսկվացիները...

Նրա գնալուց անմիջապես հետո վատ զգացի: Տիցիանի եղբայրը՝ Սիմոնը, իսկույն վազում է ակումբ և Տիցիանին հայտնում, որ Նիկոլին հարկավոր է հիվանդանոց տանել, բայց նա չի հավատում: Երբ երկրորդ անգամ են հայտնում, հուզվում է և, շատ չանցած, սնարիս մոտ կանգնած էր Հովհաննես Թումանյանի, նրա դստեր, Պատլոլի, Կաչալովի հետ միասին: Ինձ տարան հիվանդանոց:

Երկար ժամանակ ոչ ոք չէր համարձակվում Տիցիանին հաղորդել, որ աղջիկ են ունեցել: Ես փարատեցի նրանց կասկածները՝ ասելով՝ մի՛ անհանգստացեք, աղջիկ ունենալը նրա երազանքն էր:

Հիվանդասենյակ բերեցին Հովհաննես Թումանյանի ուղարկած յասամանի մի հսկայական ճյուղ, այնուհետև բոլորը միասին հավաքվեցին մահճակալիս շուրջը, ինձ աչքալուսանք արեցին, իսկ Տիցիանին փախցրին, որպեսզի խմեն նորածնի և նրա մոր կենացը:

Նիտան ծնվեց մեր հարսանիքի օրը՝ հունվարի 14-ին:

* * *

Հովհաննես Թումանյանը հիվանդ ժամանակ էլ իր ժողովրդի մասին էր մտածում: Իր ողջ կյանքի ընթացքում սեր էր քարոզում և արցունքն աչքերին խնդրում կովկասյան ժողովուրդներին սիրել մեկմեկու:

Մեծ բանաստեղծի հուղարկավորությունը վերածվեց Անդրկովկասի ժողովուրդների եղբայրության հսկայական ցույցի:

Ես չեմ հիշում՝ որևէ այլազգի բանաստեղծի այդպիսի կսկիծով վեր-

³⁵Նիկո Տաբիձեճեանը մեջբերում է ամուսնու՝ Տիցիան Տաբիձեճի հուշի գերակշիռ մասը (ծմբ.՝ քարզն.):

ջին հանգրվան ուղեկցեին:

Նրա ցանկությունն էր թաղվել Թիֆլիսում՝ Վրաստանի մայրաքաղաքում՝ իր այնքա՛ն սիրած քաղաքում, և նրա իղձը մեզ ընդմիշտ կապեց բանաստեղծի հետ, բանաստեղծ, որն իր ողջ կյանքը նվիրաբերեց ժողովրդին և իր այդ մեծագույն սիրով հիմք դրեց ժողովուրդների բարեկամությանն ու եղբայրությանը:



ՏԻՑԻԱՆ ՏԱՐԳՅԱՆ (1895-1937), բանաստեղծ, գրականագետ, թարգմանիչ, հասարակական գործիչ, «Երկնագույն եղջյուրներ» սիմվոլիստական խմբի հիմնադիրներից:

Ծնվել է 1895 թ. Իմերեթի (Արևմտյան Վրաստան) Ղոփիշի գյուղում: 1901 թ. ծնողները ապագա բանաստեղծին տարել են Քութայիսի հոգևոր սեմինարիա: 1906 թվականից ուսումը շարունակել է Քութայիսի արական գիմնազիայում, 1913-1917 թթ.՝ սովորել Մոսկվայի համալսարանի բանասիրական ֆակուլտետում: Վերադառնալուց հետո աշխատել է «Սաքարթվելո» թերթի խմբագրությունում: Այդ ընթացքում հրապարակել

է քաղաքական, ազգային և սոցիալական թեմաներով բազմաթիվ գիտական և հրապարակախոսական վերլուծական հոդվածներ՝ նվիրված ժամանակի բարդ ու հրատապ խնդիրներին:

1937 թ. անհիմն մեղադրվել է հակախորհրդային գործունեության մեջ, բանտարկվել և գնդակահարվել: Մեկ այլ տարբերակով՝ դեպի Սիբիր արտոյի ճանապարհին գնացքից իջեցրել են և թողել ձնաբքի մեջ: Թումանյանի հետ ծանոթացել է 1917 թ.: Հետագայում բարեկամացել են ընտանիքներով (Թումանյանի դուստրը՝ Նվարդը, եղել է Տաբիձեի դստեր՝ Տանիտի կնքամայրը):

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

«Սաքարթվելո» թերթի խմբագրությունը ողջունում է Ձեզ՝ Ձեր 50-ամյա հոբելյանի առթիվ: Ձեր տոնը կովկասյան արվեստի տոնն է և ժողովուրդների համերաշխության գաղափարի ամրակայումը:

Թող Ձեր ստեղծագործական ոգին առավել երկար լուսավորի Ձեր հայրենիքը՝ հուրախություն հայ ժողովրդի: Վրացիները սովոր են տեսնելու Ձեր վեհանձնությունը և դեռ երկար կիիշեն Ձեզ:

20 փետրվարի 1919 թ.

ԲԱՅ ՆԱՄԱԿ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ⁶¹

Քաղաքականությունն արյունոտ սրին հանձնեց Վրաստանի և Հայաստանի բախտի վճիռը: Մինչ այդ դեմոկրատիան սպառեց հաշ-

տուրքյան բոլոր միջոցները, սակայն դեմոկրատական սրից այն կողմ էլ պոեզիան է խոսում:

Վրաց հասարակությունը Ձեզ ճանաչում է իբրև բանաստեղծի և հայրենասերի: Ոչ ոք այնքան իրավունք չունի Հայաստանի ժողովրդի անունից խոսելու, որքան Դուք, և ոչ ոքի ձայնը չի լինի այնպես ճշմարիտ ու հասկանալի, ինչպես լուսավորյալ բանաստեղծինն ու հայրենասերինը: Դուք՝ իբրև պոետ, այս իրավունքը ձեռք եք բերել Ձեր ոգեշունչ բանաստեղծություններով, իսկ իբրև հայրենասեր, երբ թուրքական ճակատ մեկնեցին Ձեր յոթ զավակները, որոնցից մեկի դին երկու շաբաթ առաջ բերեցին Թիֆլիս: Դուք դեռ այն ժամանակ հավատում էիք պատերազմի մտքին և գիտեիք, որ յուրաքանչյուր պատերազմից հաղթանակով պետք է դուրս գան արդարությունն ու մշակույթը, բայց դեռ չէր հանդարտվել պատերազմը Թուրքիայի դեմ, դեռ չէիք ողբացել Ձեր հանգուցյալ որդուն, երբ սկսվեց նոր պատերազմ, հիմա էլ՝ վրացիների դեմ:

Մենք հավատում ենք, որ չի գտնվի մեկ ուրիշ հայ, որին այնպես վշտացներ այս պատերազմը, ինչպես Ձեզ:

Բացի նրանից, որ Ձեր մեջ խոսում է պոետի բարեծնությունը, Դուք առաջինը վճիռ կայացրիք Կովկասի ապագայի համար: Սա հեղափոխության Ձեր գնահատականն է: Դրանով Դուք հաստատում էիք, որ Վրաստանը Կովկասի Ֆրանսիան է՝ ի դեմս Ֆրանսիայի նկատի ունենալով հեղափոխության պաթոնն ու բարեծնության պոեզիան:

Մի քանի օր առաջ, մինչ պատերազմը կսկսվեր, Դուք ինքներդ առաջինը հաշտության խոսք գրեցիք Վրաստանի սահմանների մասին:

Եվ Վրաստանի մասին:

Ազգային արժեքների զգացում բանաստեղծն ավելի շատ ունի. ահա թե ինչու միայն Դուք պետք է ասեք այդ խոսքը:

Հիմա, երբ ընթանում են մարտերը, և Մակեդոնիայի ուրվականը վախ է ներշնչում ապագային, անհնար է անաչառ խոսելը: Գոնե Դուք համարձակություն կցուցաբերեք և կասեք հասարակ ճշմարտությունը:

Դարերի ընթացքում Վրաստանն ապացուցել է իր բարեծնությունը: Եթե նույնիսկ ինքը եղել է ստրկության մեջ, մշտատև ավանդապահությամբ, հարգանքով է վերաբերվել այն ժողովրդին, որը ճնշվել

է ու հալածվել:

Վրաստանի դեմոկրատիայի պարագլուխներն էլ ծերացան ինտերնացիոնալի մաքրության մեջ, և այսօր էլ դեմոկրատիան արդարանում է սոսկ ինքնապաշտպանական պատերազմով:

Բայց եթե սա էլ փոխվի, և եկեղեցիներում էլ ճգովք լսվի, վրացական պոեզիան, ինքն իրեն պաշտպանելով, բարձր կլինի և, ազգային արժեքների գիտակցությամբ, մեղապարտների գործը չի խառնի ժողովրդի հավերժական սրբությամբ:

Վկայելու համար այն, որ բարեծնությունը հանապազ պետք է գնահատվի, հարկավոր է մտաբերել Ձեզ հետ զրույցները և Ձեր գրածները:

Ես և վրաց այն բանաստեղծները, որոնց Դուք ճանաչում եք, միաբանված Ձեզ պատվելու մեջ, մտածում ենք, որ կհատվի պատերազմն սկսող աջը, Ադաֆերի ճանապարհից կփրկվի նաև հայ ժողովուրդը, և Ձեր ու Ձեզ նման պատվելի հայրենասերներով լուսավորված ճանապարհը կմնա իր խաղաղ սահմաններում:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ⁶²

Հովհաննես Թումանյանը մերօրյա իրականության մեջ փայլուն անձնավորություն էր: Ով Հովհաննեսին անձամբ չի ճանաչել, նրան կարող է չափազանցություն թվալ այն ամենը, ինչ ասվում է նրա մասին: Այդ անձնավորության մեջ մարդկային մեծ հմայք կար, որով հրապուրվում և հավերժ նրա բարեկամն էր դառնում յուրաքանչյուր ոք, ում հետ նա զրուցում էր:

1917 թվականի ամառն էր: Մոսկվայից նոր էի վերադարձել Թիֆլիս: Ինձ հետ ժամանել էր նաև Կոնստանդին Բալմոնտը:

Հույսերի ու հեղաբեկումների ժամանակն էր...

Հովհաննես Թումանյանին առաջին անգամ տեսա վրացական սկումբի այգում ընթրիքի ժամանակ, որ Բալմոնտի պատվին կազմակերպել էր Սանդրո Ղանչելին:

Նա միանգամայն ազատ էր պահում իրեն, այնքան, որ նույնիսկ ռուսերեն էքսպրոմտներ էր ասում Բալմոնտի հետ: Էքսպրոմտների առարկան Փացա Ամիրեջիբին էր՝ «Երկնագույն հովվազը»:

Մեկ ամիս անց «Кавказское слово» (բնագրում՝ «Русское слово» –

Հ. Բ.) թերթում տպագրվեց Բալմոնտի բանաստեղծությունը՝ «Ованесу Туманяну» (բնագրում՝ «Гебе, Ованес Туманян!» – Հ. Բ.):

Առաջին մարդը, որին ավելի շատ էր մտատանջում Հայաստանի և Վրաստանի եղբայրության հարցը, Հովհաննես Թումանյանն էր: Վրաստանում բոլորը հավատում էին նրա անկեղծությանը: Դա հավաստեց Թիֆլիսը նրա հիսնամյա (բնագրում՝ քսանհինգամյա – Հ. Բ.) հոբելյանի ժամանակ:

Մեծ հայրենասիրությունը չէր խանգարում Հովհաննես Թումանյանին, որ վրացիների հանդեպ նույնպես սիրո զգացում ունենար:

Բոլորին հայտնի է, որ Թուրքիայի դեմ պատերազմի ժամանակ, որտեղ զոհվեց նրա ավագ որդին, Հովհաննես Թումանյանը յոթ աղջիկ ուղարկեց ռազմաճակատ՝ իբրև գթության քույրեր, իսկ երբ հայ-վրացական պատերազմն սկսվեց, և նրա զավակներից ոմանք հայտնվեցին Երևանում, մի նամակով (այդ նամակը նրանց են հանձնել Կառավարության անդամները) կարգադրեց չմասնակցել պատերազմին, այլապես ինքը կանիծի նրանց: Սա մեծ սիրո ակտ էր:

Երբ ես հայ-վրացական կռիվների թեժ պահին «Սաքարթվելո» թերթում Հովհաննեսին ուղղված բաց նամակ տպագրեցի, հետևեց նրա ընդարձակ և անկեղծ պատասխանը... Այդ նամակներն այն ժամանակ շրջեցին Կովկասի ամբողջ մամուլով մեկ՝ բոլոր լեզուներով...

Հարկ է նշել, որ Հովհաննես Թումանյանն իսկական հին պատրիարքի ազդեցություն ուներ հայ ժողովրդի վրա: Նրան լսում էր ոչ միայն ժողովուրդը, նրան լսում էին նաև ժողովրդի առաջնորդները, որոնք գրեթե միշտ համոզված էին իրենց սիրո մեջ:

Հայ ժողովրդի վրա Հովհաննես Թումանյանի ունեցած ազդեցությունն ինձ հիշեցնում էր Իլյա Դավճապաճեի հեղինակությունը, որին մեր սերունդը միայն զրույցներից գիտի:

Հազվագյուտ էր նաև Հովհաննեսի հարաբերությունը մեր բանաստեղծների հետ: Չի եղել մեր կողմից կազմակերպված որևէ միջոցառում, որին չմասնակցեր նա և հանդես չզար իր խոսքով:

Հիշում եմ՝ իմ երեկոյին՝ 1919 թ. ապրիլի 2-ին, նա մի պոեմ կարդաց, որն ամբողջությամբ նվիրված էր Վրաստանին և վրաց բանաստեղծներին: Եթե վրաց որևէ գրողի հոբելյան էր նշվում, ոչ ոք չէր կարողանում գերազանցել Հովհաննեսին: Նա գալիս էր բոլորից շուտ և անպայման բերում էր իր արդեն իսկ գրած ուղերձը:

1920 թ. Վրաստանի գրողների միությունը որոշեց մայիսի 7-ին անցկացնել Պոեզիայի օր:

Նախատեսված էր այդ օրվան մեծ տոնահանդեսի բնույթ տալ: Հիշում եմ՝ այն ժամանակ Հովհաննեսն ամեն օր գալիս էր մեզ մոտ, հարցնում նույնիսկ ամենաաննշան մանրուքների մասին, և ի վերջո պարզվեց, որ այդ գործի հաջողության համար նա ավելի շատ բան է արել, քան վրաց բոլոր գրողները՝ միասին վերցրած:

Այդ օրը համբարները դրոշմներով եկան: Հայկական բոլոր զինագիւղների աշակերտները հավաքվել էին նախկին Ալեքսանդրյան զբոսայգում: Պետք է գային նաև բոլոր գրողներն ու դերասանները, միայն թե անձրևը խանգարեց մեզ, և հանդիսությունը տեղի չունեցավ:

Այն ժամանակվա «Պոեզիա դղե» թերթում տպագրվեց Վրաստանի մասին Հովհաննեսի հոդվածը, որ դարձյալ սիրո և հարգանքի վավերաթուղթ է: Ավելի վաղ Հովհաննեսը Կովկասի մասին «Սլովո» թերթում⁶³ հրատարակել էր մի հոդված, որտեղ Վրաստանը կոչել էր «Կովկասի Ֆրանսիա», վրաց ժողովրդին՝ երախտավոր հեղափոխականներ և բանաստեղծներ ծնող: Բոլոր տեսակետներով այդ հոդվածը պատմական է:

Այսպիսին էր Հովհաննեսը պաշտոնական ելույթներում, իսկ ընտանեկան հարկի տակ առավել ևս նրա սիրալիրությունը սահման չունեիր: Նրա ընդարձակ բնակարանը, մեծ բուխարին և դրանցում իշխող արևելյան բուրմունքն ստեղծում էին մտերմական մթնոլորտ և մղում բանաստեղծական անվերջանալի իմպրովիզացիայի:

Գրիգոլ Ռոբաքիձեն «Բարիկադի»-ի առաջին համարներում տպագրելու նպատակով հոդված էր նախապատրաստում Թումանյանի և Ահարոնյանի մասին: Հոդվածում Հովհաննեսը ներկայացված էր իբրև ժողովրդի պաշտպան հանճար, սիրո և վեհագնվության մարմնացում, իսկ Ահարոնյանը՝ հայկական պատվիրակության այն ժամանակվա և ներկայիս նախագահը Փարիզում՝ իբրև ուղղափառ դաշնակցական, ուխտադրուժ և վրացատյաց: Բայց հետագայում Ռոբաքիձեն նպատակահարմար չգտավ հրատարակել այդ հոդվածը:

Ամեն անգամ Հովհաննեսին այցելելու ժամանակ նրա տանը տեսնում էինք հայ գրեթե բոլոր գրողներին: Ի դեպ, ես միշտ զարմանում էի, թե ինչու այնտեղ չէի հանդիպում երիտասարդների, քանզի ամեն ինչից երևում էր, որ Հովհաննեսը հատկապես պետք է սիրեր նոր պոե-

զիան, առավել ևս, որ նա մտավախություն երբեք չի ունեցել: Միայն հետագայում ես իմացա, որ Թիֆլիսում առհասարակ քիչ կային երիտասարդ գրողներ:

Հատկապես հիշում եմ Հովհաննես Թումանյանի հոբելյանական հանդեսը, որն անցկացվեց «Տարտո» քատրոնի դահլիճում: Հանդիսասարահը լեփ-լեցուն էր: Խոսք ասաց Պառլո Իաշվիլին: Նրա խոսքն այնպիսի պաթոսով էր հագեցած, որ ավարտելուց հետո դահլիճը երկար ժամանակ դրդում էր ծափահարություններից:

Պառլո Իաշվիլիից հետո հոբելյարի օթյակից խոսք ասաց Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդի այն ժամանակվա նախագահը՝ Հովհաննես Քաջազնունին: Վարչապետն արտահայտեց իր ոգևորությունն ու երախտիքը, որ Հովհաննես Թումանյանի և վրաց բանաստեղծների միջև կար մեծ բարեկամություն:

Հոբելյանից հետո կազմակերպվեց բանկետ՝ հրավառություն ոգևորության, սիրո և պոեզիայի: Այդ առիթով Սերգեյ Գորոդեցկին հողված գրեց «Слово» թերթում:

Հովհաննեսը ցանկանում էր, որ հարևան ազգերի միջև հոգեկան անխախտ կապ լինի: Նրա բնակարանում հաճախ կհանդիպեիք նաև մուսուլման բանաստեղծների. սրանք առանձնակի սիրով էին սիրում Հովհաննեսին:

Ձեռնարկումներ շատ են եղել, որոնք, սակայն, ավարտին չեն հասել: Պատճառն այն է, որ մեր հայրենիքը հաճախ վերածվել է քաղաքական հեղափոխումների ասպարեզի, իսկ դրանք հանգեցրել են արվածի տարրալուծմանը և նոր կազմակերպությունների ստեղծմանը:

Իսկական «Խորհրդավոր ընթրիք»: Երբ Վրաստանի կառավարությունը վրաց գրողների պահանջով Հովհաննես Թումանյանին թոշակ նշանակեց, իսկ Հովհաննեսի համար դա սոսկ բարոյական նշանակություն ուներ, բանաստեղծն այդ կապակցությամբ իր բնակարանում ճաշկերույթ կազմակերպեց, որին մասնակցեցին հայ և վրաց բոլոր գրողները:

Ես երբեք չեմ մոռանա այդ երեկոն և հատկապես այն ելույթները, որ ունեցան Վասիլի Բարնովը, Շիո Արազվիսայիրեյին, Գրիգոր Ռոբաքիձեն, Կոտե Մաղաշվիլին, Վալերիան Գափրիինդաշվիլին, Պառլո Իաշվիլին և Մամիկոն Գևորգյանը:

Դա իսկապես «Խորհրդավոր ընթրիք» էր և Հովհաննեսի վերջին

հրապարակային ելույթը, որ ունեցավ այդ գիշեր:

Ես չեմ կարող պատկերացնել Հովհաննեսի կյանքի վերջին րոպեները, միայն համոզված եմ, որ նա՝ բարձրահասակ, ճերմակահեր, լուսեղեն դեմքով, ով իր ողջ կյանքն անցկացրեց սիրո քարոզով, վերջին պահին էլ արցունքն աչքերին, ինչպես աստվածային պատգամախոս, կյանքն ավարտել է սիրո հավերժ հավատարմության մասին խոսքերով, ինչպես Հովհաննես առաքյալը, որին աշակերտները դուրս բերեցին ժողովրդի առաջ, և նա արցունքն աչքերին ասաց. «Միրեցէ՛ք զմիմեանս...»:

Ես ոչինչ չեմ ասում Հովհաննեսի մասին՝ իբրև բանաստեղծի, ոչ էլ այն հանդիպումների, որ ես ունեցել եմ նրա հետ: Թող դա լինի նյութը ապագա հուշերի, երբ մահն ավելի ուժգնորեն զգացնել կտա ինձ, որ Հովհաննեսն այլևս չկա, և երբ ես կհեռանամ նրա դագաղից...

ՊՈՆՏՆԵՐԻ ԵՐԱԶԱՆՔԸ ՄԱՐՄՆԱՅԱԾ⁶⁴

(Հովհ. Թումանյանին)

Թեկուզ միտքդ չեն օրերն անցյալի,
Սակայն հատնում են մի վայրկյան հանկարծ
Եվ ահա դեմդ են ելնում պանծալի
Հզոր սավերներ սիրելի մարդկանց:

Ահա գլուխդ եմ տեսնում ալեհեր,
Հովհաննէ՛ս, օրվա մայրամուտի մեջ,
Սրտիդ խռովքը, ժպիտներիդ անմեռ
Սևանի հուզված ալիքներում պերճ:

Անհետ կորել է գժտությունը հին,
Եվ մեր երազն է արդեն իրական...
Ով երեկ հովիվ էր սոսկ լեռնային,
Այսօր աշխարհն է վարում տիրական:

Կովկասյան եղբայր ազգերը այսօր
Ուրիշ մի երգ են համերաշխ երգում,
Աշխատանքն ազատ տերն է գերիզոր,
Եվ քո Անուշը էլ չի հեկեկում:

Եղբայրներիս հետ եկել եմ ես էլ՝
Այս եղբայրությանն ասելու նոր երգ,
Այն երգը, որ դու էիր սկսել,
Կշարունակենք այսօր ահա մենք:

Քո Լռվա մեղրի քաղցրությամբ համակ
Ներծծված է քո խոսքն անկրկնելի,
Ով որ չէր տեսնում այդ մի ժամանակ,
Թող մի անգամ էլ կուրանա էլի:

Բարեկամության մեծ դրոշակակիր,
Մեր հայրենիքում՝ ազատ, վեհապանծ,

Դու կենդանացար այսօր կրկնակի,
Թեպետև երբեք չես եղել մեռած:

Ժամանակի ժանգոն էլ չի հատի
Բարեկամության կապերը ոսկի.
Անտեսանելի տեր Հայաստանի,
Ընդունի՛ր տուրքը մեր սիրո խոսքի:



ՄԻԿՈ ՓԱՇԱԼԻՇՎԻԼԻ (1894-1970), բանաստեղծ, արձակագիր, դրամատուրգ, լրագրող, թարգմանիչ:

Ծնվել է Մաչխաանի գյուղում (ներկայումս՝ Սիդնադի մունիցիպալիտետ): Ինքնակրթության շնորհիվ ընդունվել է և սովորել Թիֆլիսի նորաբաց համալսարանի իմաստասիրական ֆակուլտետում: Առաջին բանաստեղծությունը տպագրել է 1909 թ. «Իվերիա» թերթում:

ԺՈՂՈՎՈՒՐՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԵՐԳԻՉՐԵՑ⁶⁵

*Մեր քյանանչուլ, ուրախ կանչով
Գրնանք դեպ կյանքն ընդհանուր:
ՀՈՎՀԱՆՆԵՄ ԹՈՒՄԱՆՅԱՆ*

Պատանեկան տարիներին բնակվում էի Չուղուրեթում: Մեր դրկից հարևանը մի հայ լրագրող էր՝ Արտեմ Չիղյանը: Նա բավականին պնդակազմ էր, համոզ-հոտոզ գրույց անող, հրաշալի գիտեր վրացերեն: Երկար տարիներ Չիղյանն աշխատակցում էր հայկական «Մշակ» թերթին: Գրում էր լավ և շատ, թարգմանություններ էր անում, առհասարակ գործունյա և անդադրում մարդ էր: Շատ հետաքրքիր հուշեր էր պատմում, նաև հիշարժան դեպքեր ու իրադարձություններ իր կյանքից: Բայց նա ավելի աշխույժ գրույցներ էր անում հայ-թաթարական կոտորածների մասին: Այդ ողբերգության սարսեցնող միջադեպերից պատմում էր հատկապես իմ հորեղբորորդի Շաքրո Փաշալիշվիլիին՝ իր հասակակից հարևան վաճառականին, որը հենց Թիֆլիսում քիչ չէր ականատես եղել արյունահեղ դեպքերի:

Մի անգամ՝ նարդու սովորական խաղի և դրան ուղեկցող գրույցի ժամանակ, Շաքրոն հարցրեց.

– Վարպե՛տ Չիղյան, է՛ն ո՞ւմ ես ուղեկցել Լոռի, որտեղ պարզապես գնդակոծության տարափի տակ եք ընկել:

– Դուշեշ և մարս... Հովհաննեսի^օ մասին ես հարցնում: Հովհաննես Թումանյանն էր: Գրող է, գրքեր է գրել, բանաստեղծություններ, պատմվածքներ, շա՛տ-շա՛տ ուրիշ բաներ: Մեծ ձիրքի տեր մարդ է:

– Հիշեցի, հիշեցի: Հովհաննես, չէ՞:

– Սպասի՛ր, գրեմ, տեսնում եմ՝ հիշողությունից լավ չես:

«Հովհաննես Թումանյան, գրող»... Փաշալիշվիլների տան պատից կախված օրացույցի կազմի վրա մատիտով գրեց Չիղյանը:

– Միասին էիք չէ՞:

– Իհարկե՛, որպես թղթակից ես ուղեկցում էի նրան:

– Բախտներիդ բերել է, վարպե՛տ Չիղյան: Ուրեմն կովի թեժ ժամանա՞կ գնացիք:

– Անշո՛ւշտ, կասեիր Մագուրի³⁶ ճակատամարտն է. մեկմեկու չէին զիջում, հարևանը հարևանի վրա էր կրակում: Եղբայրաբար մեծացած՝ հիմա կոտորում էին իրար, ինչ է թե տարբեր ազգության են պատկանում: Լավա՞ծ բան է... Պարզապես ոսկի խոսքեր տեղաց Հովհաննեսը. «Եղբայրներ եք,- ասաց,- Կայենը հարազատ եղբորն սպանեց: Չեր մե՞ջ ով կայեություն գցեց, ո՞վ է ձեզ կործանողը»: Այսպես էր խոսում նրանց պարագլուխների հետ: Իսկ գավառապետին, հետո էլ էստեղ փոխարքա Վորոնցովին մեծ պետիցիա ուղարկեց: Ոչինչ չզիջեց: Տեսնո՞ւմ ես՝ ինչ է ստացվում: Էն, ինչ չկարողացավ անել կառավարությունը, արեց մեն մի մարդ: Հետո ինչե՛ր եղան, ինչե՛ր...

Չիղյանը նկարագրում էր սահմռկեցուցիչ դրվագներ, մանրամասն խոսում այն սխրանքների մասին, որ այդ պատերազմի ժամանակ կատարեց հայ խոշորագույն դասականը, մեծահռչակ քաղաքացին ու գրողը՝ Հովհաննես Թումանյանը:

Չզիտեմ, թե օրացույցի կարմիր կազմի վրա Չիղյանի գրածը որքան ժամանակ պահպանվեց, բայց իմ հիշողության մեջ այն մնաց այլևս անջնջելի: Այդ հեռավոր պատմությանը հետագայում ավելացան մի քանի երջանիկ իրադարձություններ, որոնք ինձ մտերմացրին Հովհաննես Թումանյանի հետ, և նա ինձ համար դարձավ հավերժ անմոռաց և սիրելի անձնավորություն:

³⁶ Մագուր – գերմանալեռական սահման, որտեղ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ արյունահեղ մարտեր են տեղի ունեցել (ծնթ.՝ հեղ.):

Որոշ ժամանակ Թիֆլիսում լույս տեսնող «Սախալխտ սաքմե» քերթի թղթակիցն էի: Դա այնպիսի աշխատանք էր, որի շնորհիվ Թիֆլիսում բոլոր լեզուներով տպագրվող քերթերի աշխատակիցներս գրեթե ամեն օր հանդիպում էինք իրար: Այն ժամանակվա իմ գործընկերներից ճանաչում էի հայկական լրագրի (որքան հիշում եմ «Բանվորի ձայն») աշխատակից մի երիտասարդ գրողի՝ Միսաք անունով (ազգանունը, կարծեմ, Քալաշյան էր): Երբ Միսաքն իմացավ, որ, թղթակցություններից բացի, ուժերս փորձում եմ նաև գեղարվեստական գրականության մեջ, ավելի մտերմացավ ինձ հետ: Նա շատ հաճախ և բավական երկար էր խոսում ժամանակակից հայ գրականության մասին: Ինքը Հովհաննես Թումանյանի ամենաջերմեռանդ երկրպագուներից էր և հնարավորության սահմաններում ինձ հաղորդակից էր դարձնում մեծ գրողի գործերին: Միսաքի անմիջական ղեկավարությամբ ինչ-որ հրատարակչություն հայերեն լույս էր ընծայել Հովհաննեսի քառյակների մի գեղեցիկ ժողովածու, որը նա նվիրեց ինձ ինքնատիպ մակագրությամբ. «Կարդա՛, իմ բարեկամ և հարևան: Մենք պետք է գիտենանք միմյանց մշակույթը: Հովհաննես Թումանյանը մեզ համար նույնն է, ինչ ձեզ համար՝ Ակակի Ծերեթելին»:

Այս ջերմ մակագրությունը և գրքում զետեղված բանաստեղծություններին ծանոթությունը (իհարկե Միսաքի շնորհիվ) ինձ այնպես հետաքրքրեցին, որ նպատակադրվեցի Թումանյանի բանաստեղծություններից մի քանիսը թարգմանել վրացերեն և օգնության համար դիմեցի հանրահռչակ գեղանկարիչ, պեյզաժիստ Գևորգ Բաշինջաղյանին:

Բաշինջաղյանը շատ մեծ հեղինակություն էր ինչպես մեզանում, այնպես էլ Կովկասում ու Ռուսաստանում: Ծնունդով սիդնաղցի էր: Հրաշալի գիտեր վրացերեն և նույնիսկ պատմվածքներ էր գրում այդ լեզվով: Յուրօրինակ ռուսալեզու լիագետ էր: Դճգրտորեն, բերանացի գիտեր «Ընձենավորը» պոեմը և գրույցների ժամանակ տեղին ու ճաշակով մեջբերում էր Շոթայի աֆորիզմները:

«Ա՞յդ բանաստեղծությունները,- ժպտալով ասաց Գևորգը,- այդ բանաստեղծությունները և առհասարակ Հովհաննեսի գործերը ներկա պահին թարգմանում է մեր Հոսերը: Օրերս ինձ հետ խոսեց: Դուք՝ բանաստեղծներդ, բարի նպատակներ եք հետամտում, քեզ էլ չեմ

վշտացնի: Ինչ վերաբերում է ինձ, հաճույքով կօգնեմ քեզ թարգմանության գործում»:

«Մեր Հոսերը» բանաստեղծ Իոսեբ Գրիշաշվիլին էր, որը հետագայում իսկապես հրաշալի կատարեց Թումանյանի ընտիր երկերի (արձակ և չափածո) թարգմանությունը և տպագրեց պատկառազորու մի ժողովածու:

Գևորգ Բաշինջաղյանի բացատրությունից հետո, հավանաբար դուք էլ կհամաձայնեք, որ իմ մտադրությունն իրականացնելու մասին մտածելն անգամ կլինեի անտեղի հանդգնություն:

* * *

Գրողների մեջ կան բախտի ընտրյալներ, որոնց անունն ու խոսքը դուրս են գալիս ազգային շրջանակներից և լայն արձագանք գտնում նաև իրենց հայրենիքից շատ հեռու: Այդպիսի ռեզոնանս ունեւր նաև Հովհաննես Թումանյանի անունը: Նա հիմնականում ապրում էր Թիֆլիսում և մեզանում հայտնի էր իբրև նշանավոր հասարակական գործիչ նույնիսկ այն ժամանակ, երբ վրացի ընթերցողը դեռ քիչ էր ծանոթ նրա ստեղծագործություններին: Դա պայմանավորված էր նրանով, որ Հովհաննեսի անհատականության մեջ ստեղծագործական տաղանդին զուգակցված էր մարդկային վեհագույն էությունը: Մեր ժողովուրդների սերը, նրանց միջև մշակութային կապեր հաստատելու և ամրապնդելու համար մղվող պայքարի փառապսակը դարձան նրա հասարակական գործունեությունն ու անձնական կյանքը: Վրաց ժողովուրդը չէր կարող ըստ արժանվույն չգնահատել նրա այդ մեծագույն արժանիքը: Ահա թե ինչու միանգամայն բնական է, որ նրա երկերի թարգմանությունն այնպես ընդունեց վրացի ընթերցողը, ինչպես ընդունում է իր սիրելի գրողների երկերը:

Իմ նպատակը Թումանյանի ստեղծագործության մասնագիտական վերլուծությունը չէ բնավ: Ես միայն ուզում եմ ընդհանուր գծերով անդրադառնալ նրա գրելաոճին ու եղանակին: Ասես յուրաքանչյուր տողում, յուրաքանչյուր նախադասության մեջ և գեղարվեստական ուրվագծում հեղինակի զգայուն սիրտն է տրոփում, գուլալ մարդկային ջերմություն է ներարկում և առաջին հերթին հենց դրանով է կախարդում նրա ստեղծագործությունը:

Բայց, ինչպես արդեն նշեցինք, Թումանյանը միայն իր երկերում չէ,

որ մարդասիրական մտքեր է քարոզում, միայն բանաստեղծություններում չէ, որ սիրո գաղափարներ է սերմանում ժողովուրդների մեջ: Նա մեծ հումանիստ էր նաև անձնական կյանքում, իր ամենօրյա գործունեությամբ, և այս առումով հենց միայն Չիդյանի պատմածներն ինչն էր արժեն...

Ո՞ր մեկը թվարկեն:

Չափազանց մեծ է նրա ծառայությունը ոչ միայն հայ ժողովրդի ֆիզիկական պաշտպանությունն ապահովելու, այլ նաև հայ և վրաց ազգաբնակչությանն ու հատկապես հայ և վրաց գրողներին մերձեցնելու գործում: Այդ գաղափարներով տոգորված՝ նա առանձնահատուկ ուշադրությամբ և հետաքրքրությամբ էր ձեռնամուխ լինում ռուս գրականության թարգմանությանը, մեծապես նպաստում Կովկասի փոքրաթիվ ժողովուրդների գրականության ընտիր նմուշները ռուսերեն թարգմանելու աշխատանքներին:

Ուզում եմ վկայել մի բնորոշ փաստ:

Առաջին համաշխարհային պատերազմն ավարտվում էր, երբ ռուս նշանավոր բանաստեղծ Կ. Բալմոնտը եկավ Վրաստան՝ իր հետ բերելով «Ընձենավորի» թարգմանությունը: Գրական այդ երևույթը մեզանում մեծ արձագանք գտավ: Հատկապես գրողների շրջանում այն դարձավ խոսք ու գրույցի թեմա: Թարգմանության շուրջ արվում էին մեկնաբանություններ, ի պատիվ Բալմոնտի՝ կազմակերպվում էին գրական երեկոներ, հանդիպումներ, ասուլիսներ, որոնց սիրով մասնակցում էին ինչպես հասարակայնության ներկայացուցիչներ, այնպես էլ տարբեր ազգության թիֆլիսաբնակ առաջադեմ մտավորականներ:

Հենց այդ ժամանակ ես բախտ ունեցա ծանոթանալու Հովհաննես Թումանյանի հետ:

«Արտիստական ընկերության» զբոսայգում (այժմյան ֆիլիարմոնիայի այգին) տեղի ունեցավ բարեգործական երեկո-զբոսանք: Կաբարեում ներկա էին գրողներ և դերասաններ: Հովհաննեսն էլ էր այնտեղ: Գրողների ու հասարակական գործիչների միջև հանգիստ ու հմայիչ կանգնած՝ գրուցում էր: Չյունաճերմակ մազերն ու բարի, շողարձակ ժպիտը զարդարում էին նրա առանց այն էլ ազնվական դեմքը:

Մեզ ներկայացրին մեկմեկու:

Նա ինձ հայտնեց իր ով լինելը, բարեկրթորեն սեղմեց ձեռքս, մի քանի խոսք փոխանակեց ինձ հետ և նորից շարունակեց վրաց գրողների հետ ընդհատված գրույցը (խոսում էր Բալմոնտի թարգմանության նշանակության մասին):

«Սա մե՛ծ գործ է,- ասում էր իրեն հատուկ հանգիստ տոնով,- շա՛տ մեծ գործ է: Այլ լեզուներով «Ընձենավորը» թարգմանելը լայն ճանապարհ կբացի այդ գլուխգործոցի առաջ, մեծ աշխարհ կտանի: «Ընձենավորը» համաշխարհային գրականության մեծագույն գանձերից է: Նրանում վրաց ժողովրդի ազնվագույն հոգին է արտացոլված: Ասպետություն է, հերոսություն է, սխրանք է, սեր է ու բարեկամություն: Հենց այս բարեկամության կարիքն ենք զգում մենք: Մեծ գործ է նման թարգմանությունը: Դա մենք էլ պետք է անենք, բայց լավ գրականության թարգմանությունը պատահական բնույթ չպետք է կրի: Այս գործն այնպիսի բարձրության պետք է հասցնենք, որ թարգմանության միջոցով հարևան ժողովուրդները ճանաչեն միմյանց մշակութային հարստությունը, գրականությունն ու արվեստը: Դրանով մենք կբարձրացնենք միմյանց, դրանով մենք կհասկանանք միմյանց ցավն ու ուրախությունը»:

– Մի՞թե այդպես չէ, Կոնստանտին Դմիտրիևիչ,- դարձավ նա վրաց նշանավոր դերասան Կոտե Ղիփիանիին՝ Դմիտրի Ղիփիանիի որդուն:

– Մենք՝ անդրկովկասյան ժողովուրդներս,- պատասխանեց Կոտե Ղիփիանիին,- այս տեսանկյունից շատ բան ունենք անելու:

– Միայն թե շա՛տ, անչափ շատ, և դա մենք պիտի սկսենք,- ավելացրեց Հովհաննեսը:

Այսպիսի բովանդակություն ուներ նրանց սրտառույզ գրույցը: Գրավիչ էին Հովհաննեսի մտքերը, գրավիչ էր ինքը, վեհաշուք, լուսեղեն, կենսուրախ:

Առաջին իսկ հանդիպումից իմ հիշողության մեջ դաջվեցին նրա խոսքերը. «Միայն թե շա՛տ, անչափ շատ գործ ունենք անելու հանուն մեր մե՛ծ բարեկամության»:

Հովհաննեսն իսկույն ձեռնամուխ եղավ այդ խոսքերը գործի վերածելուն: Նրա ղեկավարությամբ, որքան հիշում եմ, 1917 թվականին հայ երիտասարդ գրողների մի խումբ սկսեց թարգմանել վրաց բանաստեղծների երկերը: Նյութերի հավաքումը գլխավորում էր ինքը՝

Հովհաննեսը, և զարմանք հարուցող ջանադրությամբ այնպիսի երկեր էր ընտրում, որոնք մարդասիրական, բարեկամական գաղափարներով էին տոգորված: Նույն սկզբունքով էր ընտրում նաև թարգմանիչներին: Այդ թարգմանություններից որոշ մնուշներ տպագրվեցին ժամանակի հայկական գրական հանդեսներում:

Ցավոք, գրողների մերձեցման գործին մեծապես խանգարում էին դաշնակցական Հայաստանում և մենշևիկյան Վրաստանում գոյություն ունեցող հեղափոխական ուժերի կողմից հրահրվող շովինիզմն ու թշնամանքը:

* * *

Վրաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո, երբ ժողովուրդների միջև ծագած ընդհարումները կարգավորվեցին, և մշակույթի բարգավաճման համար իրական հնարավորություններն ընդարձակվեցին, այս ուղղությամբ Հովհաննեսի համար նույնպես աշխատանքի լայն ասպարեզ բացվեց: Նա հայ և վրաց գրողների մերձեցման գործի գլուխ կանգնեց: Ո՞վ չի հիշում Հայարտան մեջ նրա դեկավարությամբ անցկացված գեղարվեստական երեկոները, որոնց մասնակցում էին նաև վրացի գրողներ: Ո՞վ չի հիշում իր սեփական տանը՝ Ամաղբերի փողոցում (այժմ՝ Դավիթաշվիլի փողոց), նրա կազմակերպած «հրավերքները», որոնց հրավիրում էր նաև վրաց բանաստեղծներին, արվեստի աշխատողներին, ընթացք էր տալիս գրույցներին, կազմակերպում գրական ընթերցումներ և նոր երկերի, այսպես կոչված, ընտանեկան քննարկումներ. դրանց բազմիցս ներկա է եղել տողերիս հեղինակը: Նույն կերպ էին վարվում նաև վրաց գրողները:

Անձամբ ես նույնպես Հովհաննես Թումանյանին հնարավորություն եմ ընձեռել բարեկամության ևս մեկ օրինակ տալու: Այդ իրողությունը մի անմոռաց հիշատակ է ինձ համար, որի մասին այժմ շատ լավ գիտեն թե՛ հայ, թե՛ վրաց գրողները և թե՛ ողջ խորհրդային գրական հասարակայնությունը: Դա նրա փոքրիկ, բայց ավելի քան մեծ նշանակություն ունեցող նամակն է, որ ճշմարտացի բնորոշում է Հովհաննես Թումանյանին՝ իբրև ժողովուրդների բարեկամության պատգամախոսի և հոգատար գործչի:

1923 թ. (պետք է լինի՝ 1921 թ. – Հ. Բ.) հուլիսին Թիֆլիսում կազմակերպվեց իմ գրական երեկոն, որին մասնակցում էին մեր հայտնի

գրողները, բանաստեղծները և արվեստի նշանավոր ներկայացուցիչները:

Հրավիրեցի նաև Հովհաննես Թումանյանին:

Նա հաճույքով համաձայնեց և նույնիսկ ցանկություն հայտնեց բանաստեղծություն կարդալու: Թույլտվությունից հետո Հովհաննես Թումանյանի անուն-ազգանունը նույնպես հրապարակեցի իմ երեկոյի գովազդի վրա: Առանձնապես պետք է նշեմ այն մեծ հետաքրքրությունը և նրա լուսեղեն անձի հանդեպ ցուցաբերված խոր հարգանքը, որ երեկոյին Թումանյանի ներկա գտնվելու հանգամանքի շնորհիվ առաջացել էին ինչպես հասարակության, այնպես էլ մասնակիցների մեջ: Նշանավոր երգիչ Վանո Սարաջիշվիլին, ի պատիվ Հովհաննեսի, նեապոլիտանական երգերից մեկի երաժշտությունը հարմարեցրեց Հովհաննեսի ռուսերեն քարգմանված բանաստեղծություններից մեկի տեքստին և պատրաստեց հատուկ համար, որը պիտի կատարեր Թումանյանի՝ բեմ բարձրանալու պահին:

Բայց, ցավոք, Թումանյանը չկարողացավ գալ երեկոյին: Նախօրեին հիվանդացել էր և, իբրև խոսքի տեր մարդ, կանխավ ինձ հայտնեց մի արտառուչ նամակով, որն արտացոլում է նրա ողջ անկեղծությունն ու վրաց ժողովրդի, վրացական պոեզիայի, ամհասարակ հայ և վրաց ժողովուրդների հանդեպ ունեցած քաղաքացիական պարտքի խոր գիտակցությունը:

Ահա այդ նամակն ամբողջությամբ.

«Թանկագին ընկեր

Ս. Փաշայիշվիլի

Շատ եմ ցավում, որ ինչնից անկախ պատճառներով էսօր չեմ կարող ներկա լինել Ձեր երեկոյթին:

Սեղմում եմ ձեռքդ և հավաստիացնում, որ որքան ինչ համար թանկ եմ Վրաստանն ու վրացական սքանչելի հոգին, այդքան էլ թանկ եմ այն մարդիկ, որոնք հանդիսանում են կրողներն ու մեկնաբանները եդ հոգու:

Ինքը՝ վրացին, պոետը է, վրացի պոետը՝ կրկնակի պոետ:

Ամբողջ հոգով ցանկանում եմ, որ ողջ լինեք՝ ճիշդ երգելու համար Վրաստանի երջանկությունն ու նրա լուսապայծառ օրերը:

Ձեր Հովհաննես Թումանյան»

Այս հիասքանչ նամակը գրված է ռուսերեն: Այն հասարակայնությանը ներկայացրեց Վրաստանի խորհրդային գրողների միության այն ժամանակվա նախագահ, բանաստեղծ Կոտե Մաղաշվիլին, որը և վարում էր իմ երեկոն:

Հայ մեծ բանաստեղծի այս տողերը լեփ-լեցուն հանդիսարահն ընդունեց բուռն և երկարատև ծափահարություններով: Այդ ծափողջույնով վրաց հանրությունն արտահայտում էր իր սերն ու բարեկամական ջերմաջերմ գգացմունքները:

Այդ օրվանից մեր հասարակության սրտում անջնջելի մնացին այս համառոտ, բայց հոգու խորքերը թափանցող նամակի տողերը: Այսօր այն թարգմանված է եղբայրական գրեթե բոլոր ժողովուրդների լեզուներով և զարդարում է հենց իր՝ Հովհ. Թումանյանի «Ընտիր երկերի» հատորներից մեկը: Նամակի բնագիրը պահվում է Վրաստանի գրականության պետական թանգարանում, իսկ լուսապատճենը՝ Երևանի Հովհ. Թումանյանի անվան թանգարանում:

Վերոհիշյալին կարող եմ հավելել, որ այս նամակը բանալի է Թումանյանի հիանալի բանաստեղծության համար, որ նա հետագայում ձոնեց Վրաստանի բանաստեղծներին, և որտեղ նրա հավատամքն է.

Ամեն կողմից թող ամենին
Հըրապուրի ու բերի
Բազմալեզու խրախճանին
Ծեր Կովկասի ազգերի:

Մենք՝ հատկապես վրացի բանաստեղծներս, ստեղծագործական պարտք ունենք հայ մեծ դասականին: Տողերիս հեղինակն անձամբ փորձել է գոնե փոքր-ինչ մարել իր պարտքը՝ Թումանյանին ձոնելով քնարական մի բանաստեղծություն:

Հովհաննեսի հետ շատ հանդիպումներ եմ ունեցել, հիշում եմ դրանք, նրա գրույցներից լավ բաներ շատ եմ հիշում և այդ թեմաներով քիչ չեմ գրել, որոնք տպագրվել են ինչպես վրացերեն, այնպես էլ հայերեն, ուստի ասածս այլևս չեմ ցանկանում կրկնել:

Այսօր, երբ հայրենասիրությունն ու եղբայրական ժողովուրդների կապն իրականություն են դարձել, հայ մեծ քաղաքացու և ժողովուրդների եղբայրության երգիչ բանաստեղծի խոսքն ու գործը, ինչպես անմար փարոս, լուսավորում են հայ և վրաց ժողովուրդների սրտերը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆՆԵՐ⁶⁶

*«Սեղմում են Ձեր ջեռքը և հավաստիացնում,
որ որքան ինչ համար քանկ են Վրաստանն ու
վրացական սքանչելի հոգին, այդքան էլ քանկ են
այն մարդիկ, որոնք հանդիսանում են կրողներն ու
մեկնաքանները էդ հոգու:*

*Ինքը՝ վրացին, պոետ է, իսկ վրացի պոետը՝
կրկնակի պոետ»:*

(Հովհաննես Թումանյանի՝ ինչ հղած նամակից)

Պարտական եմ քեզ, ո՛վ իմ Հովհաննես,
Այսօր էլ հեռվից դու ժպտում ես մեզ,
Երգդ իմ սրտում ձայն ու բառերով
Հնչում է տրտում սրտիդ լարերով:

Անբաժան էինք ժամ ու տարածքով,
Ճակատագիրը գատելու էր մեզ,
Բայց մեր սրտերը խիճողով ու լացով
Հույս են փայփայել ճամփեքին մեր կեզ:

Հույս են փայփայել: Ապրել ենք հույսով...
Քո մեջ տնքում էր հայոց վիշտը խոր.
Դու տենչում էիր արևի լույսով
Ողողված երկիր՝ անվիշտ ու անդորր:

Ու ժամանակի հողմը չգորեց
Ճկել քո հոգին՝ անհունորեն բաց:
Մեկտեղ էր կանչում լույս ապագան մեզ,
Ու կռվում էինք այդ լույսի համար:
«Դու՛ մի վրացի, ու մի հայ եմ ես,
Ի՞նչը կմարի
Անաղարտ սիրո մեր կրակն անմար...»,-
Այսպես ասացիր: Մենք այդ խոսքերի
Ճշմարիտ-արդար գինը գիտեինք:

Ու երկուսով էլ
Մեծ եղբայրության թեժ կրակների
Բոցն էինք վառում մինչև լուրթ երկինք:

Չէ՞ Ակակին էլ մեծ Գաբրիելին
Նույն խոսքն է ասել:
Ու այդ ձայնը սուրբ,
Մեր օջախներում երբ սեղան բացենք,
Ղողանջելու է բարձրագույն ու սուր:

Այդպես կհնչեն: Չեն լռի երբեք
Չոնգուր քնարի լարերը խոսում,
Քանի փառահեղ Մասիս ու Կազբեկ
Լեռները դեռ կան
Ու մեկմեկու հետ սրտանց են խոսում:



ՍՏԱՄՈՆ ՓԻՅԵԱԼԱՎԱ (1872-1952),

գրող, քաղաքական գործիչ, հրապարակախոս: Հեղինակել է պատմական մի շարք երկեր, որոնցից են՝ «Թամար թագուհի», «Հին Մեսխեթ» և այլ վեպեր ու վիպակներ: Ծնվել է Քութայիսի նահանգի Մարխոջի գյուղում (այժմ՝ Խոնի մունիցիպալիտետ): 1893 թ. ավարտել է Քութայիսի գիմնազիան, 1898 թ.՝ Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Գրական աշխատանքներն սկսել է 1890-ական թվականների սկզբից: Աշխատակցել է «Իվերիա» թերթին: 1910 թ. ցարական կառավարությունը նրան արտրել է Տվեր քաղաքը: 1913 թ. վերադարձել

է և հիմնադրել «Սախալխո սաքմե» թերթը (1917-1921): Հանդես է եկել կեղծանուններով: 1922-1946 թթ. եղել է քաղաքական վտարանդի: Ֆրանսիայում ծավալել է քաղաքական և հրապարակախոսական ակտիվ գործունեություն: 1946 թ. վերադարձել է հայրենիք, կալանավորվել որպես խորհրդային համակարգի «վնասարար տարր», արքտրվել Միջին Ասիա, որտեղ վախճանվել է 1952 թ.:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ⁶⁷

Հովհաննես Թումանյանը մեր ժամանակի նշանավոր բանաստեղծներից է, հայ ժողովրդի երդվյալ հավատարմատարը, նրա հոգևոր հարստության, նվիրական զգացումների և ձգտումների լավագույն արտահայտիչը:

Հայ ժողովուրդն անսահման շատ է սիրում Հովհաննես Թումանյանին, ինչպես ամեն մի ժողովուրդ սիրում է իր ազգային կերպարը, իր անհատականությունը, իր ազնվությունը:

Հովհաննես Թումանյանը հզոր արվեստագետ է, և նրա հզորությունը դրսևորվում է ժողովրդի հանդեպ տաժամ սիրո, ուրախության և վշտի արտահայտության մեջ: Նրա ամեն մի բանաստեղծության մեջ Հայաստանի բնությունն է, պատմությունը, այսօրվա ողբը և ապագայի հույսը:

Հովհաննես Թումանյանի գեղարվեստական ստեղծագործությունը շատ քիչ է ծանոթ մեր հասարակությանը: Մի երկու բանաստեղ-

ծությունից բացի՝ գրեթե չունենք նրա երկերի վրացերեն թարգմանությունները: Լավ կլինի, որ մեր երիտասարդ պոետները գոնե հիմա մեզ հրամցեն հայերի քնարերգության նմուշները և շխուսափեն թարգմանություններից, քանզի դրանով նրանք մեծ ծառայություն մատուցած կլինեն վրաց գրականության վերածննդին և այն բազմերանգ դարձնելու գործին:

Անհրաժեշտ էր, որ քննադատներից որևէ մեկը հանդես գար Հովհաննես Թումանյանի գործունեության քառասունամյակի առիթով: Հուսանք, որ գոնե մոտ ապագայում դա անպայման կիրականացվի:

Իմ այս փոքրիկ հոդվածում ցանկանում եմ անդրադառնալ Հովհաննես Թումանյանի՝ իբրև մարդու, իբրև քաղաքացու կերպարին:

Հայ և վրաց ժողովուրդների հարաբերությունների հարցը հավասարապես շատ մեծ նշանակության ունի երկու ժողովուրդների համար: Այս խնդրի լուծումն անհնար է առանց սրտացավության, առանց նրա էության մեջ խորամուխ լինելու, առանց Հայաստանի ու Վրաստանի քաղաքական, աշխարհագրական կացությունը բազմակողմանիորեն ծանրութեթև անելու: Միանգամայն կասկածից դուրս է այն, որ մեր և հայերի վեճը չի կարգավորվի ատելությամբ, թշնամանքով, մի տեսակ թուլացումով կամ պարտությամբ: Երկու ամիս էլ չկա, ինչ ավարտվել է հայերի դեմ պատերազմը, և հայազգի որոշ խմբեր այսօր չեն ցանկանում համակերպվել այն փաստի հետ, որ մեր երկիրն անկախություն է ձեռք բերել, և դիմում են ամեն միջոցի, որպեսզի մեզ գրկեն ազատությունից: Բայց նա, ով հանգում է հետևության, թե հայ և վրաց ժողովուրդների միջև գոյություն ունի հիմնավոր անհաշտություն, և լոկ կռիվը կկարգավորի նրանց անկախությունը, շատ մեծ վտանգի առաջ է կանգնեցնում նախ և առաջ իր ժողովրդին: Նա չի տեսնում վաղվա օրը, նաև այն, թե ինչ ուղղությամբ է ընթանում զարգացումը:

Հենց այս առումով էլ չափազանց հետաքրքիր է Հովի. Թումանյան անհատը:

Ես առիթ եմ ունեցել մի քանի անգամ գրուցելու նրա հետ: Եղել են նաև նրա բնակարանում և նույնիսկ փոքր-ինչ հետևել եմ ընտանեկան միջավայրում նրա անցկացրած կյանքին:

Նա իր ժողովրդի արժանավոր գավակն է, որը երջանկությունը չի պատկերացնում առանց իր ազգի վերածննդի: Նա մտավորական է,

որի սիրտը խորապես մղվում է դեպի բնական հետաքրքրությունները, և որն ուսումնասիրել է հասարակական կացությունը: Հայ է, բայց շատ լավ գիտի մեր կյանքը: Ես միշտ այն տպավորությունն եմ ստացել, որ այս մարդը՝ իր ժողովրդի վեհանձնագույն գավակը, վրաց ժողովրդի անկեղծ բարեկամն է և հոգով ու սրտով նվիրված է երկու եղբայրական ժողովուրդների համերաշխությանն ու համաձայնությանը: Նրա մեջ չկա այն կույր ազգամոլությունը, որն այնպես խանգարում է մեր կարևորագույն խնդրի լուծմանը:

Երբ սրվել են մեր և հայերի հարաբերությունները, երբ մատնացույց են արել վրացացույց հայերին (մի՞թե քիչ են հայացույց վրացիները) և ասել, թե միայն զենքը վերջ կդնի տարածայնություններին, իմ աչքի առաջ հառնել է Հովհաննես Թումանյանի կերպարը, և ես կասեմ՝ ինչ էլ լինի, ինչ էլ պատահի, այդուհանդերձ հնարավոր է մեր հաշտությունը, հայերը սրտանց ցանկանում են դա, նրանք անկեղծ կողմնակիցն են այն բանի, որ հայերի և վրացիների միջև միակ լեզուն բոլորովին էլ ատելությունը չէ...

Անզնահատելի է Հովհաննես Թումանյանի գործունեությունը պոեզիայի անդաստանում, բայց նրա կյանքի կեսդարյա սահմանագծին երախտիքի առանձնահատուկ զգացումով և հաճույքով պետք է նշենք քաղաքացիական այս արժանիքը, որ պակաս արժեքավոր չէ և հիշատակելի: Թող, ինչպես անցյալում էր, ապագայում էլ Հովհաննես Թումանյանի անձը լինի հայ և վրաց ժողովուրդների եղբայրական արդար փոխկապվածության արդար հենքը: Թող այսուհետ էլ հիշենք, որ հայ և վրաց ժողովուրդների մերձեցումն ու կապը լավագույն միջոցն են երկու ժողովուրդների վերածննդի՝ ոչ միայն քաղաքական, այլ նաև մշակութային: Սա առավել երանելի է այսօր, երբ թե՛ Հայաստանը և թե՛ Վրաստանն սկսում են անկախ կյանք, բայց շրջապատված են հազարավոր հակառակորդներով ու թշնամիներով. ոմանք՝ բացահայտ, ոմանք՝ պարտակված բարեկամի քողի տակ, իսկ ոմանք էլ ամեն ջանք գործադրում են, որպեսզի մեզ զրկեն ձեռք բերած ազատությունից: Իրար խառնված աշխարհը դեռևս չի խաղաղվել, ավելին՝ սպասվում են նորանոր խժոժություններ և բարոյություններ, ուստի այսպիսի ժամանակ մեկնեկու ձեռք մեկնելը հույժ կարևոր է:



ԵՐԵՄԻԱ ՔԱՐԵԼԻՇՎԻԼԻ [ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ, (1908-1986)], գրականագետ, լրագրող: Երկար ժամանակ ուսումնասիրել է Թումանյանի կյանքն ու գործունեությունը և վրացական գրական ու գիտական հանդեսներում տպագրել բազմաթիվ հոդվածներ, իսկ բանաստեղծի ծննդյան 100-ամյակի առիթով այդ ամենը զետեղել է մեկ գրքում³⁷:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ⁶⁸

Հեղինակը հետևել է հայ բազմադարյան գրականության «ամենամեծ և հոյակապ երևույթներից մեկի կյանքի ու գործունեության ընթացքին» և վրացի ընթերցողին փոխանցել, թե «ազգային հանճարեղ բանաստեղծն ու հասարակական մեծ գործիչը» ինչ է կատարել հայոց պոեզիայի նորացման ու զարգացման գործում և ինչպիսի շողշողուն բարձունքի է հասցրել այն, ապա խորաթափանց կերպով ասել է. «Վաղնջական ժամանակներից սկիզբ առած հայոց պոեզիան տասնիններորդ դարի վերջին և քսաներորդ դարի տասական թվականներին նվաճեց զարգացման նոր բարձունքներ: Ժողովրդի իմտելեկտուալ էներգիան, նրա բանաստեղծական քանքարը առանձնահատուկ ուժով դրսևորվեցին երկու հանճարեղ հսկաների՝ Հովհաննես Թումանյանի և Ավետիք Իսահակյանի ստեղծագործություններում: Նրանք բացեցին մաս անձիր մարդասիրության, արդարության և բարության լայնահուն ճանապարհ: Հայ գրականության մարտնչող հայրենասիրությունը նրանք սերտորեն կապեցին համամարդկային իդեալների հետ, հայ գրականությունը դարձրին հուժկու գետակ և միացրին համաշխարհային առաջադիմական գրականության հոսքին: ...Հովհ. Թումանյան պոետը երկու ոտքով կանգնած է մայր հողի վրա: Հայ ժողովուրդն իր բազմադարյան բանաստեղծական հանճար

³⁷ Տես յերեմիա յարելոմշիլո, օջանես տլմանան, տծիլոսի, 1969, 72 ճջ:

րի անմիջական շարունակությունը և զարգացումը գտավ Թումանյանի ստեղծագործություններում: Նա իր պոեզիայում առաջին հերթին պատկերեց ազգի խնաստնությունը, հոգեկան հարստությունը, գեղեցկությունը, ալեծուփ նկրտումները և սրբազան իդեալները, այդ ամենի հետ ցույց տվեց հայոց լեզվի հարստությունը, նրբերանգները, ուժն ու հմայքը:

Հովհ. Թումանյանը հսկայական դեր կատարեց հայրենիքի հասարակական կյանքը և գեղարվեստական մտածողությունը զարգացնելու, ժողովրդական մասսաներին առաջադիմական ձգտումներով դաստիարակելու, նոր աստիճանի բարձրացնելու գործում:

Հովհ. Թումանյանը, որ կյանքի ոչ այնքան երկար, բայց բավականին բովանդակալից ստեղծագործական ճանապարհ անցավ, բախտ ունեցավ, բացի բանաստեղծ լինելուց, դառնալու ազգի առաջնորդը և հայրը: Նա ուշադիր հետևում էր ժողովրդի կյանքում տեղի ունեցող գործընթացներին, ունկնդրում, և՛ երկերում, և՛ գործնականում անդրադառնում ու անհասպաղ արձագանքում դրանց: Ամբողջովին նվիրվել էր իր երկրին, իր ժողովրդին, ամբողջ սրտով արարում էր կյանքի, բարու, սիրո և եղբայրության օրհներգեր»³⁸: Հեղինակը դիտարկում է նրա պոեզիայի հիմնական մոտիվները, սոցիալական և հումանիստական իդեալները... «Հովհաննես Թումանյանը,- գրում է Եր. Քարելիշվիլին,- որպես գեղարվեստական խոսքի վարպետ, հրաշալի ճանաչում էր մայր ժողովրդի ապրումներն ու հոգեկան ոլորտները, լավ գիտեր իր խոսքի արժեքն ու ազդեցության նշանակությունը և դրանով մեծ դեր կատարեց ազգային գեղարվեստական մտքի զարգացման պատմության մեջ: Թերևս նրանից առաջ ոչ մի ստեղծագործող նման մեծագույն վարպետությամբ և բանաստեղծական հզոր կարողությամբ չի նկարագրել մայր ժողովրդի բախտը... Հումանիզմը մեծ բանաստեղծի գեղարվեստական մտածողության ներքին կառավարող ուժն է: Եվ ոչ միայն դա,- շարունակում է Եր. Քարելիշվիլին,- հայ բանաստեղծի ստեղծագործության մեջ մարդն ամեն ինչ է, մարդու շուրջն է ամփոփվում ամեն ինչ»:

Հովհ. Թումանյանը հայ և վրաց ժողովուրդների բարեկամության երախտավորն է և, որպես այդ բարեկամության համար մարտնչող,

³⁸ Նույն տեղում, էջ 7:

անճնուրաց մարտիկ, հասել է շատ մեծ հաջողությունների: Գրքի հեղինակը կանգ է առնում նաև այս թեմայի վրա, լուսաբանում հատկապես Վրաստանի և վրաց ժողովրդի հանդեպ այն անկեղծ և գորովալից սերը, որ բանաստեղծը վառ պահեց իր ստեղծագործական կյանքի առաջին քայլերից մինչև վերջ:

ՆԱՄԱԿՆԵՐ, ՀԵՌԱԳՐԵՐ, ԵՐԿՏՈՂԵՐ



Մեծապատիվ տեր, պարոն Հովհաննես Թադևոսի

Վրացական համալսարանի ընկերության վարչությունը մեծ բավականությամբ ունկնդրեց վրացական համալսարանի հիմնադրման առթիվ Գրիգոր Նիկողոզի Դիասամիձեին ուղարկած Ձեր նամակի ընթերցումը:

Վրաց ժողովրդի և Վրաստանում ազգային բարձրագույն կրթության նորից ծնվող տնկարանի առթիվ արտահայտած Ձեր համակրանքի խոսքերը աշխույժ արձագանք գտան ընկերության վարչության անդամների սրտերում:

Ձեր՝ որպես իր հայրենիքի լավագույն զավակի ու նրա խոհերի տաղանդավոր արտահայտչի խորապես սրտաբուխ խոսքերում մենք տեսնում ենք հազարամյակների ընթացքում բարի դրացու նման վրաց ժողովրդի հետ կողք կողքի ապրող և նրա հետ մշակութային զարգացման ու հոգևոր կատարելագործման մշտական և փոխադարձ հողի վրա գտնվող հայ ժողովրդի քնքշանքն ու ողջույնը:

Վերապրելով Ձեր ողջույնի առաջացրած սքանչելի զգացումները՝ մենք չենք կարող չկրկնել Ձեր խորապես նշանակալից խոսքերը. «Միայն գիտությունը, գրականությունն ու արվեստն են լցնում ժողովուրդներին բաժանող անդունդը, և միայն դրանք կստեղծեն գալիք լավագույն կյանքն ու ճշմարիտ մարդուն»:

Ընդունեք վրացական համալսարանի ընկերության վարչության ամբողջ կազմի և անձամբ իմ անկեղծ երախտագիտությունը Ձեր սրտառուչ նախաձեռնների և վրացական համալսարանի օգտին կատարած նվիրատվության համար:

Իշխ. Կոնսար. Ափիսազ

7 նոյեմբերի 1917 թ.

Ը. Թիֆլիս

Թանկագին եղբայր և բարեկամ Հովհաննես

Շնորհավորում եմ քո, քո թանկագին հայրենիքի և քո սիրելի հայրենի գրականության Նոր տարին, ցանկանում եմ համակողմանի հաջողություն և երջանկություն: Համոզված եմ՝ գրականությունն է նոր, ազատ կյանքի այն ամուր, աներեր անկյունաքարը, որը հիմք դրեց մեր ժողովուրդների վերածննդին: Հայերի և վրացիների այսօրվա տոնահանդեսը նախ և առաջ մեր գրականությունների գործունեության արդյունքն է:

Ահա թե ինչու ողջունում եմ հայ գրողների միությանը՝ քո տաղանդավոր և ազնվաբարո ղեկավարությամբ: Մտադրում եմ երկար կյանք և արգասավոր գործունեություն: Հավատում եմ նրա փառահեղ ապագային:

Իմ՝ իբրև վրացի համախոհի կողմից խնդրում եմ՝ գործող գումարը ավելացնելու համար միությանը փոխանցես այս փոքրիկ լուման. հնարավորություն ունեմ այդքանը նվիրելու:

Միշտ քեզ սիրող ու հարգող Գրիգոր Դիասամիճե
Հ. Գ. Կցված է հինգ հարյուր ռուբլի (500 ռուբ.):

Գր. Դիաս.

Մեծարգո և թանկագին Հովհաննես

Վրաց գրողների խորհուրդը խորապես ցավում է, որ ստիպված ենք վրաց պոեզիայի տոնահանդեսը հետաձգել: Գլխավոր պատճառն այն է, որ այսօր վրաց ողջ հասարակությունը վշտացած է ութ հերոսների հուղարկավորությամբ, որոնք զոհվել են Փոյլիմի և Արտահանի ռազմաճակատներում:

Հայրենի սուգը բնականաբար խանգարում է մեզ ըստ արժանվույն տոնել Պոեզիայի օրը:

Գրողների երեկվա միատում մենք որոշել ենք անցկացնել հայ-վրացական մշակութային միության երեկո, որի ժամանակ, հուսով ենք, կհորդեն սիրո և բարեկամության այն զգացումները, որոնցով այնպե՛ս լցվել են մեր սրտերը:

Խնդրում ենք՝ եղբայրական ողջույն հաղորդեք բոլոր հավաքված-

ներին և հավաստիացնէք, որ վրաց գրողներն անսահման նվիրված են Ձեզ:

Խորապէս Ձեզ սիրող վրաց գրողների խորհրդի անդամներ՝

Պատլո Իաշվիլի, Տիցիան Տաքիձե

Մայիս, 1920 թ.



Թանկագի՛ն եղբայր, սիրելի՛ Հովհաննես

Քո ընկերների հետ հավաքվելով Պատլո Իաշվիլիի բնակարանում, որը գտնվում է այն հիվանդանոցի մոտ, որտեղ պառկած ես դու, սիրով և ուրախությամբ իմացանք, որ վիրահատությունը հաջող է անցել: Մենք մեծագույն ուշադրությամբ հետևում էինք քո հիվանդության ընթացքին և շատ էինք ավստսում, որ քեզ այցելելու հնարավորություն չունեինք: Վստահ ենք, որ շուտով կհանդիպենք:

Համբուրում ենք և սպասում այն երանելի օրվան, երբ մեզ վերջապէս կբույլատրվի քեզ տեսակցության գալ:

Եղբայրական սիրով՝

Վ. Գալիբիանդաշվիլի

Տիցիան Տաքիձե

Ն. Միծիշվիլի

Գրիգոր Ռոբաքիձե



Ես և դուստրս սպասում ենք այն երջանիկ օրվան, երբ Դուք կառնէք նրան Ձեր սուրբ ձեռքերին և կտանէք օծելու ու մեռոն ընդունելու:

ՆԻՆՈ



Ձեր առջև խոնարհվում է դեռևս Ձեզ անձանոթ բարեկամ

Թամար (Մերեբրյակովա) Իաշվիլին:

◆
Թիֆլիս, Վոզնեսենսկայա 18

Հովհաննես Թումանյանի ընտանիքին

Վրաստանի լուսավորության կոմիսարիատը, խորապես ապրելով աշխատավորական զանգվածների և ազատ լեռների մեծավաստակ երգիչ, ժողովրդական բանաստեղծ Հովհաննես Թումանյանի վաղաժամ մահը, այս տխուր պահին Ձեզ է հղում անկեղծ ցավակցություններ՝ Ձեզ հասած վշտի կապակցությամբ: Թող մեզ մխիթարի բոլորիս կողմից ընդունելի այն միտքը, որ հարգարժան բանաստեղծի համամարդկային մոտիվները, կովկասյան ժողովուրդների համերաշխության այդ պատվարժան քարոզչի քերթվածները դեռ երկա՛ր ու երկա՛ր պիտի ջերմացնեն իր երգած աշխատավոր դասակարգի սրտերը:

*Վրաստանի ժողովրդական լուսավորության կոմիսար
Դ. Կանդելակի
9 մարտի 1923 թ.*

◆
*Թիֆլիս, Պետրոս Մեծի փ., թիվ 6
Հայասրբուն*

Խորապես ցնցված ենք մեծ բանաստեղծի, մարդու և իդեալիստի՝ Հովհաննես Թումանյանի մահով: Թիֆլիսի թիվ 20 տեխնիկումի նախկին երրորդ իգական գիմնազիայի ուսանողներն ու ուսանողուհիները սրտի կակիծով սգում են հայ ժողովրդի վշտերի և ուրախությունների անփոխարինելի երգչի կորուստը:

*Տեխնիկումի վարիչ Չոգոշվիլի
9 ապրիլի 1923 թ.*

◆
*Հովհաննես Թումանյանի այրուն
Ամաղղեքի փ., թիվ 18
Պարմենը՝ Արբուն
Տրոցկու փ., թիվ 6*

Հովհաննես Թումանյանի մահը մենք սգում ենք իբրև ավագ եղբոր կորուստ, որի հետ մեզ կապում էր ստեղծագործության ողբերգական

սանդուղքը:

Բանաստեղծի հետ վախճանվեց նաև համաշխարհային մարդը, որը սիրում էր իր հարազատ հայ ժողովրդին, միևնույն ժամանակ սիրահարված էր իր հոգուն այնքան հարազատ Վրաստանին:

Մենք սգում ենք վրաց նոր պոեզիայի ամենահավատարիմ բարեկամի կորուստը:

Այսուհետ նրա անունը մեր սրտերում կմնա իբրև Հովհաննես Լուսեղեն:

*Խմբագրություններ՝ «Ռուբիկոնի», «Յիսիերի դանձերի», «Մեղցներև
նիսանորերի», «Բարիկադի»*

*Համավրացական նոր գրականության միության խորհրդի
նախագահ Գրիգոր Ռոբարթյան
8 ապրիլի 1923 թ.*



Համայն Վրաստանի արվեստագետների միության գլխավոր կոմիտեն, որը միավորում է վրաց գրականության, քատրոնի, երաժշտության և գեղանկարչության, առհասարակ միության բոլոր գործիչներին, իր մեծագույն վիշտն է հայտնում բանաստեղծ Հովհաննես Թումանյանի մահվան կապակցությամբ:

Գլխավոր կոմիտեն հիշում է, որ բանաստեղծի կենդանության օրոք մենք հաճախ ենք արտահայտել նրան մեր սերն ու հիացմունքը վրաց ժողովրդի հանդեպ տաժած այն անկաշառ սիրո և եղբայրության համար, որի առաքյալն էր Հովհաննես Թումանյանը:

Հայրենիքի սերը և իսկական հայրենասիրությունը, որոնք չեն խանգարում մեկ ուրիշ ազգի ազատությանը, հենքն են մարդկային իդեալի:

Հովհաննես Թումանյանն այս դեպքում ուսանելի օրինակ էր երկու բարեկամ ազգերի համար: Նրա հիշատակը թող մեր երկու եղբայրական ազգերի դաշինքի խորհրդանիշը լինի ապագայում:

Հովհաննես Թումանյանի նման երախտավոր մարդն ու բանաստեղծը արդարացնում է ազգությունը: Ցավում ենք, որ նա չկարողացավ շատ բան անել իր ստեղծագործությամբ ու պատվելի սրտով:

*Գլխավոր կոմիտեի նախագահ Կուրե Մադաշվիլի
8 ապրիլի 1923 թ., «Ռուբիկոնի»*



Հովհաննես Թումանյանին

Իմ փառապա՛նձ բարեկամ

Վերջին անգամ մենք միմյանց տեսանք այն ժամանակ, երբ դու տկար էիր, բայց հոգով ամուր էիր և գեղեցիկ: Մենք զրուցեցինք հայրենի գրականության մասին, և դու հայտնեցիր մի անմահ կարծիք. *«Հայ և վրաց ժողովուրդները պարբրասարվում են դիմախորելու հանճարի գալուստը: Մեսիան պիտի գա, իսկ մենք բոլորս նախավկաներն ենք»:*

Թանկագի՛ն Հովհաննես

Դու այժմ գնացիր մեզնից հեռու, բայց ես հավատում եմ, և սա իմ համոզմունքն է աներեր, որ երգչի և հայրենիքի զավակի քո վսեմ հոգին սավառնում է ոչ միայն քո հարազատ ազգի, այլ նաև վրաց ազգի գլխավերևում, որին դու նվիրեցիր քո գեղեցիկ ժպիտը, քո մեծ սերը:

Եվ երբ այս երկու եղբայրները՝ հայն ու վրացին, ունենան շնորհաշատ մի զավակ, որի ձայնը կանցնի սահմանները և կիշխի ժամանակի վրա, քո հրճվանքը խի՞նդ կպատճառի դրախտին անգամ, որտեղ, համոզված եմ, կանաչագեղ վայրում դու հանգիստ ես առնում ֆիզիկական խոնջանքից, սակայն բարեկամներիդ համար պահպանում ես արյունամած սիրտդ...

Ողջո՛ւյն քեզ, իմ թանկագի՛ն բարեկամ:

Ողջ լե՛ր և երջանիկ:

Սանդրո Ղանչեղի

8 ապրիլի 1923 թ., «Ռուբիկոնի»

Ծ Ա Ն Ո Թ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

1. Գրվել է 1892 թ.: Առաջին անգամ հրատարակվել է Հովհ. Թումանյանի «Գեղարվեստական երկերում» (Երևան, 1934, էջ 114), այնուհետև՝ «Երկերի լիակատար ժողովածուի» (այսուհետև՝ ԵԼԺ) 1-ին հատորում (Երևան, 1988, էջ 132), որտեղից և արտատպվում է:

2. Գրվել է 1893 թ. ապրիլի 25-ին վրաց վաղամեռիկ բանաստեղծ Նիկոլոզ Բարաթաշվիլիի աճյունը Գանձակից Թիֆլիս տեղափոխելու առիթով: Թումանյանն այն կարդացել է սգո արարողության ժամանակ: Ձուգահեռ վրացերեն թարգմանել է լրագրող Արտեմ Հախնազարովը: Առաջին անգամ տպագրվել է «Մուրճ»-ում (1893, թիվ 4, էջ 520), այնուհետև՝ Հովհ. Թումանյանի «Երկերի ժողովածուի» (գիտական հրատարակություն 6 հատորով, Երևան, 1940-1959. այսուհետև՝ ԵԺ) 1-ին հատորում (էջ 105), ապա՝ ԵԼԺ-1-ում (էջ 136): Արտատպվում է ԵԼԺ-ից:

3. Գրվել է 1916 թ. (թվագրվում է ըստ առաջին հրատարակության): Տպագրվել է «Հորիզոն» պարբերականում, (1916, 18 սեպտեմբերի), ապա՝ ԵԼԺ-1-ում (էջ 286): Արտատպվում է ԵԼԺ-ից:

4. Գրվել է 1918 թ.: Հայտնի է նաև «Վրաստանի ոգին» վերնագրով: Առաջին անգամ տպագրվել է «Նոր աշխատավոր» պարբերականում (1920, 7 մայիսի), ապա՝ ԵԼԺ-1-ում (էջ 302): Արտատպվում է ԵԼԺ-ից:

5. Գրվել է 1919 թ. ապրիլի առաջին օրերին (տե՛ս Տիցիան Տաբիձեի հուշերը սույն ժողովածուում): Առաջին անգամ տպագրվել է «Պրոլետար» պարբերականում (1929, 15 հուլիսի), ապա՝ ԵԼԺ-1-ում (էջ 313): Արտատպվում է ԵԼԺ-ից:

6. Գրվել է 1922 թ. (թվագրվում է ենթադրաբար): Նվիրված է գրող, գեղագետ, փիլիսոփա Գրիգոլ Ռոբաքիձեին՝ Թումանյանի վրացի մտերիմներից մեկին (տե՛ս Ռոբաքիձեի նամակը, հուշերը և բանաստեղծությունը սույն ժողովածուում): Առաջին անգամ հրատարակվել է ԵԼԺ-2-ում (Երևան, 1990, էջ 15), որտեղից և արտատպվում է:

7. Գրվել է 1913 թ.: Առաջին անգամ հրատարակվել է «Հորիզոնում» (1913, 4 դեկտեմբերի), այնուհետև՝ ԵԺ-6-ում (էջ 199-201), ապա՝ ԵԼԺ-7-ում (Երևան, 1995, էջ 108-110): Արտատպվում է ԵԼԺ-ից:

8. Գրվել է 1915 թ. հուլիսի 29-ին կամ 30-ին: Առաջին անգամ

տպագրվել է վրացական «Կոմունիստի» օրաթերթում՝ Վալերիան Իմեդաձեի «Վրաց-հայկական մշակութային առնչությունների անցյալից» հոդվածում (1939, 15 ապրիլի), այնուհետև՝ նույն հեղինակի «Վրաց և հայ ժողովուրդների բարեկամության երզիչը» ակնարկում («Մնաթրբի», 1953, թիվ 4, էջ 57), ապա՝ «Վրաց և հայ ժողովուրդների բարեկամությունը և Հովհաննես Թումանյանը» գրքում (Թբիլիսի, 1953, էջ 12). բոլորը վրացերեն են: Արտատպվում է Վ. Իմեդաձեի գրքից: ԵԼԺ, Երևան, 1999, էջ 226-րդ էջի ծանոթագրության թարգմանությունը զավեշտ է, իսկ «հուլիսի կեսերին»-ը՝ անտրամաբանական, որովհետև Վաժա Փշավելան վախճանվել է 1915 թ. հուլիսի 27-ին:

9. Ասվել է 1916 թ. դեկտեմբերի 16-ին՝ Իլյա Նակաշիձեի՝ Հայ գրողների ընկերությունում վրաց գրականության վերաբերյալ կարդացած դասախոսության առիթով: Առաջին անգամ տպագրվել է «Հորիզոնում» (1916, 18 դեկտեմբերի), ապա՝ ԵԺ-4-ում (էջ 466), այնուհետև՝ ԵԼԺ-7-ում (էջ 299): Արտատպվում է ԵԼԺ-ից:

10. Հայերեն, համառոտագրություններով տպագրվել է ԵԺ-4-ում (էջ 448), ապա ամբողջությամբ՝ ԵԼԺ-7-ում (էջ 642): Արտատպվում է ԵԼԺ-ից:

11. Ռուսերեն տպագրվել է «Республика» թերթում (1918, 11 մարտի), ապա թարգմանաբար՝ ԵԼԺ-7-ում (էջ 644-647), որտեղից և արտատպվում է:

12. Առաջին անգամ հրատարակվել է «Ժողովրդի ձայն» օրաթերթում (1918, 14 նոյեմբերի), ապա՝ ԵԼԺ-7-ում (էջ 358-365), որտեղից և արտատպվում է:

13. Գրվել է 1918 թ. դեկտեմբերին՝ հայ-վրացական պատերազմի վերջին օրերին: Տպագրվել է ԵԺ-5-ում (էջ 435), ապա՝ ԵԼԺ-10-ում (էջ 654), որտեղից և արտատպվում է:

14. Գրվել է 1919 թ. հունվարի վերջերին: Առաջին անգամ համառոտագրություններով տպագրվել է «Սովետական գրականություն» ամսագրում (Երևան, 1962, թիվ 3, էջ 110-113), այնուհետև՝ Թումանյանի «Ուսումնասիրություններ և հրապարակումներ»-ի 2-րդ հատորում, (Երևան, 1969, էջ 397-402), ապա՝ ԵԼԺ-7-ում (էջ 370-377): Արտատպվում է ԵԼԺ-ից:

15. Բանաստեղծի պատասխան խոսքն է իր ծննդյան 50-ամյակի առիթով խմբագրության անունից Տիգրան Տաբիձեի՝ 1919 թ.

փետրվարի 20-ին հղած հեռագրի: Տպագրվել է 1919 թ. մարտի 11-ին Թիֆլիսի հայկական թերթերից մի քանիսում միաժամանակ («Հառաչ», «Մշակ» և այլն), ապա՝ ԵԼԺ-7-ում (էջ 387-388): Արտատպվում է ԵԼԺ-ից:

16. Գրվել է 1920 թ. հունվարի 12-ին: Տպագրվել է ԵԺ-5-ում (էջ 443-444), ապա՝ ԵԼԺ-10-ում (էջ 677), որտեղից և արտատպվում է:

17. Թարգմանաբար տպագրվել է «Кавказское слово» թերթում (1919, 10 ապրիլի): Հայերեն առաջին անգամ հրատարակվել է «Խորհրդային գրականություն» ամսագրում (Երևան, 1935, թիվ 4, էջ 75-77), այնուհետև՝ ԵԺ-4-ում (էջ 414-418), ապա՝ ԵԼԺ-7-ում (էջ 389-393), որտեղից և արտատպվում է:

18. Գրվել է 1920 թ. փետրվարի 15-ին: Տպագրվել է ԵԺ-5-ում, (էջ 445-446), ապա՝ ԵԼԺ-10-ում (էջ 345): Արտատպվում է ԵԼԺ-ից:

19. Գրվել է Վրաց պոեզիայի օրվա առիթով, որը նախատեսված էր անցկացնել 1920 թ. մայիսի 7-ին: Տպագրվել է «Նոր աշխատավորում» (1920, 6 մայիսի), այնուհետև՝ ԵԺ-4-ում (էջ 425), ապա՝ ԵԼԺ-7-ում (էջ 398-399): Արտատպվում է ԵԼԺ-ից:

20. Հայերեն տպագրվել է ԵԺ-4-ում (էջ 424), ապա՝ ԵԼԺ-7-ում (էջ 400): Արտատպվում է ԵԼԺ-ից:

21. Գրվել է 1920 թ.: Հայերեն առաջին անգամ հրատարակվել է «Խորհրդային Հայաստան» օրաթերթում (1938, 23 մարտի), ապա՝ «Խորհրդային գրականություն» ամսագրում (1938, թիվ 3-4, էջ 133-135), նաև՝ ԵԺ-4-ում (էջ 421-424), ԵԼԺ-7-ում (էջ 659-663): Արտատպվում է ԵԼԺ-ից:

22. Գրվել է 1920 թ. դեկտեմբերին: Առաջին անգամ հապավումներով տպագրվել է «Սովետական գրականություն» ամսագրում (1943, թիվ 3, էջ 89), այնուհետև՝ Թումանյանի «Ուսումնասիրություններ և հրապարակումներ»-ի 2-րդ հատորում (էջ 403-404), ապա՝ ԵԼԺ-7-ում (էջ 505-506): Արտատպվում է ԵԼԺ-ից:

23. Գրվել է 1921 թ. հոկտեմբերի վերջերին: Տպագրվել է ԵԺ-5-ում (էջ 463), ապա՝ ԵԼԺ-10-ում (էջ 404): Արտատպվում է ԵԼԺ-ից:

24. Գրվել է 1921 թ. մայիսին: Առաջին անգամ տպագրվել է «Գրական թերթում» (1932, 10 սեպտեմբերի), ապա՝ ԵԼԺ-7-ում (էջ 518-522): Արտատպվում է ԵԼԺ-ից:

25. Գրվել է 1921 թ. հուլիսի 14-ին: Տպագրվել է մի քանի անգամ,

ման՝ ԵԺ-5-ում (էջ 48), ապա՝ ԵԼԺ-10-ում (էջ 700-701) (մանրամասն տե՛ս Փաշայիշվիլի հուշերը սույն ժողովածուում): Արտատպվում է ԵԼԺ-ից:

26. Գրվել է 1921 թ. դեկտեմբերի 11-ին՝ քանդակագործ Նիկոլաճեի գործունեության 25-ամյա հոբելյանի առիթով: Տպագրվել է ԵԺ-5-ում (էջ 479), ապա՝ ԵԼԺ-10-ում (էջ 723): Արտատպվում է ԵԼԺ-ից:

27. Վրացերեն առաջին անգամ լույս է տեսել «Լիտերատուրա դա խելովներա»-ում (1948, 26 մարտի): Վրաց գրականության անթրոլոգիաներում և ժողովածուներում տպագրվել է մաս «Հովհաննես Թումանյանին», «Քաղցր Հովհաննես» վերնագրերով: Հրատարակվում է Մ. Քարամյանի թարգմանությամբ:

28. «Վրաց ժողովրդի բարեկամը» «Գովք Հովհաննես Թումանյանին» դիմանկար-ակնարկի տարբերակն է: Թարգմանել ենք գրողի երկերի ժողովածուից (Թբիլիսի, 1984, էջ 182-188): Ներկայացվում է ամբողջությամբ:

29. Տպագրվել է «Լիտերատուրուլի Սաքարթվելո» շաբաթաթերթում (1969, 3 հոկտեմբերի): Մեր թարգմանությամբ հրատարակվել է «Հանդես Երևանի համալսարանի» գիտախնդրմացիոն լրատուում (1997, թիվ 1, էջ 71-73), որտեղից և արտատպվում է:

30. Գրախոսությունը գրվել է Հովհաննես Թումանյանի «Երկերի ժողովածուի» երկրորդ հրատարակության (Թբիլիսի, 1948) առիթով: Տպագրվել է «Լիտերատուրա դա խելովներա»-ում (1948, 11 հուլիսի), որտեղից և կատարել ենք թարգմանությունը:

31. Գրի է առնվել «Լիտերատուրա դա խելովներա» հանդեսում (1952, 6 հուլիսի):

32. Գրի է առնվել 1979 թ.: Տպագրվել է գիտնականի «Մոտիկ անցյալից» գրքում (Թբիլիսի, 1987, էջ 387-388): Մեր թարգմանությամբ և ներածականով հրատարակվել է «Գարուն» ամսագրում (1997, թիվ 5, էջ 86-88): Արտատպվում է «Գարունից»:

33. Հովհաննես Թումանյանի մասին այս հուշը տպագրվել է Վասիլի Բարնովի «Երկերի ժողովածուի» 10-րդ հատորում (Թբիլիսի, 1964, էջ 417-420): Մեր թարգմանությամբ և նախաբանով հրատարակվել է «Հանդես Երևանի համալսարանի» գիտախնդրմացիոն լրատուում (1992, թիվ 2, էջ 49-51), որտեղից և արտատպվում է:

34. Գրվել է Թումանյանի ծննդյան 100-ամյակի առիթով: Տպագրվել

է «Թբիլիսի» թերթում (1969, 27 սեպտեմբերի), որտեղից և կատարել ենք թարգմանությունը:

35. Գրվել է Թումանյանի ծննդյան 100-ամյակի առիթով: Խուտա Բերուլավա, Հայ ժողովրդի մեծ բանաստղծը, էջ 103: Տպագրվել է «Սովիլիս ցխովրեբա» թերթում (1969, 26 սեպտեմբերի), որտեղից էլ կատարվել է թարգմանությունը:

36. «Հովհաննես Թումանյան» հոդվածը Հովհաննես Թումանյանի «Ընտիր երկերի» 1924 թ. վրացերեն հրատարակության գրախոսականն է: Տպագրվել է «Թեատրի դա ցխովրեբա» ամսագրում (1924, թիվ 17, էջ 2-4): Թարգմանել ենք առանց կրճատումների:

37. Վրացերեն առաջին անգամ տպագրվել է «Լիտերատուրովի գազեթի» շաբաթաթերթում (1953, 27 մարտի): Կա այս բանաստեղծության՝ Հովհաննես Կարայանի թարգմանությունը ևս՝ տպագրված «Սրտի ձայն» (վրաց բանաստեղծները Հայաստանին և հայերին) ժողովածուում (Թբիլիսի, 1978, էջ 47-48), որտեղ վերջին հատվածը այլ բովանդակություն ունի: Ահա այն Մ. Քարամյանի թարգմանությամբ.

Երնե՛կ տեսնեիր՝ ի՛նչ խինդով են արդ արտերը լցվել,
Ինչպե՛ս է ըմպում հողն Հոկտեմբերի լույսը կենարար,
Տե՛ն՝ եղբայրության երթին ենք ահա խանդավառ լծվել,
Արևում է մեզ դրոշն Իլլիչի հավիտյան անմար:
Գիտենք՝ չի հանգչի այդ լույսը երբեք, լույսն ազատության,
Որ բազմաչարչար ազգերի համար դարձավ բախտի դուռ,
Ալ դրոշ դարձած՝ կծփա նա միշտ, հար ու հավիտյան
Աստղերին հասած անպարտ Կոմկոսի ձեռքով ամրակուռ՝
Հայոց լեռներում.

Զմրուխտ լեռներում...

38. Վրացերեն առաջին անգամ լույս է տեսել Հովհաննես Թումանյանի «Ընտիր երկերի»՝ Իոսեբ Գրիշաշվիլիի թարգմանությամբ հատորյակում (Թիֆլիս, 1924, էջ 13-21): Հետագայում առանձին հատվածներ արտատպվել են հայկական և վրացական մամուլի էջերում: Մեր թարգմանությամբ և ներածականով ամբողջությամբ հրատարակվել է «Հանդես Երևանի համալսարանի» գիտաինֆորմացիոն լրատուում (1997, թիվ 1, էջ 63-71), որտեղից և արտատպվում է:

39. «Վրաստանի բարեկամին» (բնագրում՝ «Հովհաննես Թումանյան»)

նյանին» - Հ. Բ.) բանաստեղծությունը գրվել է Թումանյանի մահվան կապակցությամբ և տպագրվել վերոհիշյալ «Ընտիր երկերում» (էջ 2): Հրատարակվում է Սողոմոն Տարոնցու թարգմանությամբ:

40. Գրի է առնվել 1936 թ.: Հայերեն առաջին անգամ հրատարակվել է «Թումանյանը ժամանակակիցների հուշերում» գրքում (Երևան, 1969), որտեղից և արտատպվում է: Բնագիրը հայտնի չէ:

41. Գրի է առնվել 1936 թ. մարտի 3-ին: Հայերեն առաջին անգամ տպագրվել է «Գրական թերթում» (Երևան, 1939, 15 ապրիլի), որտեղից և արտատպվում է: Վրացերեն թե ռուսերեն բնագիրը մեզ հայտնի չէ:

42. Վլադիմիր Չամբախիձե, Ստեղծագործողի ուժը: Տպագրվել է «Սախալխո գանաթլեբա» թերթում (1969, 26 սեպտեմբերի):

43. Գրվել է 1923 թ. ապրիլի 6-ին՝ բանաստեղծի մահվան կապակցությամբ: Առաջին անգամ տպագրվել է «Ռուբիկոնի» շաբաթաթերթում (1923, 6 ապրիլի), ապա՝ հեղինակի երկերի հետագա հրատարակություններում: Գուրգեն Մահարու թարգմանությամբ հրատարակվել է անթրոլոգիաներում, այլևայլ ժողովածուներում:

44. Ակնարկը տպագրվել է վրացական «Կոմունիստի» օրաթերթում (1939, 15 ապրիլի): Թարգմանել և հրատարակում ենք առանց կրճատումների:

45. «Վարդի թերթեր» հուշապատումի՝ 25 մեքենագիր էջից բաղկացած պատճենահան բնագիրը տրամադրել է հեղինակի որդին: Այն գրի է առնվել Թբիլիսիում 1941 թ. հունիսի 16-ին: Առանձին հատվածներ «Իմ հուշերը» վերտառությամբ հրատարակվել են «Թումանյանը ժամանակակիցների հուշերում» գրքում (էջ 586-591): Մեր թարգմանությամբ և ներածականով ամբողջությամբ առաջին անգամ տպագրվել է «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսում (1994, թիվ 1, էջ 101-110), որտեղից և արտատպվում է:

46. «Հովհաննես Թումանյան» հուշ-ակնարկը նվիրված է հայ մեծ բանաստեղծի մահվան տարելիցին: Տպագրվել է «Լիտերատուրովի գազեթի» շաբաթաթերթում (1953, 27 մարտի), ապա՝ Իոսեփ Գրիշաշվիլի, Գլորգի Լեոնիձեի «Հայաստանի և հայ կուլտուրայի մասին» գրքում (Երևան, 1983, էջ 163-164): Հայերեն ամբողջությամբ տպագրվում է առաջին անգամ:

47. Սոնետը գրվել է 1919 թ. մարտի 12-ին, որի թարգմանությունը

մեզ է տրամադրել Մ. Քարամյանը: Վրաց լեզվով չի հրատարակվել: Մեզ չհաջողվեց պարզել հեղինակի ինքնությունը: Հայերեն տպագրվում է առաջին անգամ:

48. Տպագրվել է «Լիտերատուրույի Սաքարթվելո» շաբաթաթերթում (1969, 19 սեպտեմբերի): Մեր թարգմանությամբ հրատարակվել է «Գարուն» ամսագրում (1997, թիվ 5, էջ 89), որտեղից և արտատպվում է:

49. Տպագրվել է «Սախալխո գանաթլերա» թերթում (1969, 26 սեպտեմբերի), որտեղից և կատարվել ենք թարգմանությունը:

50. Գրվել է 1969 թ.: Արտատպվում է հեղինակի «Կենաց եղբայրության» ժողովածուից (Երևան, 1980)՝ Շմավոն Թորոսյանի թարգմանությամբ:

51. Նույն հեղինակի երկրորդ բանաստեղծությունը մեզ է տրամադրել Մ. Քարամյանը:

52. Տպագրվել է «Լիտերատուրույի Սաքարթվելո» շաբաթաթերթում (1969, 19 սեպտեմբերի), որտեղից և թարգմանել ենք:

53. Գրվել է Թումանյանի ծննդյան 100-ամյակի առիթով: Խոտա Բերուլավա, Հայ ժողովրդի մեծ բանաստղծը, էջ 103: Տպագրվել է «Սովիլիս ցխովերա» թերթում (1969, 26 սեպտեմբերի), որտեղից էլ կատարվել է թարգմանությունը:

54. Տպագրվել է գիտնականի «Արվեստի վարպետները» գրքում (Թբիլիսի, 1969, էջ 268-278 (վրացերեն)): Մեր թարգմանությամբ ամբողջությամբ հրատարակվել է «Հանդես Երևանի համալսարանի» գիտաինֆորմացիոն լրատուում (1994, թիվ 1-2, էջ 200-208), որտեղից և արտատպվում է:

55. Տպագրվել է «Մնաթրի»-ում (1969, թիվ 9, էջ 118-121): Նույնը կրճատումներով հրատարակվել է «Հանդես Երևանի համալսարանի» գիտաինֆորմացիոն լրատուում (1969, թիվ 5): Տպագրում ենք մեր նոր թարգմանությամբ և առանց կրճատումների:

56. Վրացերեն առաջին անգամ տպագրվել է «Ռուբիկոնի» շաբաթաթերթում (1923, 8 ապրիլի): Մեր թարգմանությամբ հայերեն հրատարակվել է «Նորք» հանդեսում (1989, թիվ 5, էջ 150-151), ապա՝ «Հանդես Երևանի համալսարանի» գիտաինֆորմացիոն լրատուում (1992, թիվ 2, էջ 51-53), որտեղից և արտատպվում է:

57. Նամակի ռուսերեն բնագիրը և հայերեն թարգմանությունն

առաջին անգամ հրատարակել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Էդվարդ Ջրբաշյանը («Գրական թերթ», 1990, 7 դեկտեմբերի, «Մի նամակի հետքերով»): Արտատպվում է «Գրական թերթից»:

58. Տպագրվել է «Ռուբիկոնի» շաբաթաթերթի հիշատակված համարում: Հայերեն տպագրվում է առաջին անգամ Մարտին Քարամյանի թարգմանությամբ:

59. Գրվել է Թումանյանի ծննդյան 100-ամյակի առիթով: Տպագրվել է «Թբիլիսի» թերթում (1969, 26 սեպտեմբերի): Թարգմանել է Մ. Քարամյանը:

60. Գրի է առնվել 1936 թ.: Տպագրվել է «Տիցիանը և իր ընկերները» գրքում (Թբիլիսի, 1975, էջ 29-37): Հայերեն թարգմանությամբ և նասնակի փոփոխություններով տպագրվել է «Կամուրջ» արձանախում (Թբիլիսի, 1961), ապա՝ «Թումանյանը ժամանակակիցների հուշերում» գրքում (էջ 731-733): Թարգմանել ենք Ն. Տաբիձեի «Տիցիանը և իր ընկերները» գրքից Թումանյանին շանչվող մի քանի պարբերությունների կրճատումներով:

61. Առաջին անգամ տպագրվել է «Սաքարթվելո» թերթում վրացերեն (1919, թիվ 1), ապա՝ «Ժողովրդի ձայն» օրաթերթում հայերեն (1919, 10 հունվարի): Մեր թարգմանությամբ և ներածական խոսքով հրատարակվել է «Հանդես Երևանի համալսարանի» գիտաինֆորմացիոն լրատուում (1992, թիվ 2, էջ 46-47), ապա՝ Թումանյանի «Երկերի լիակատար ժողովածուի» 10-րդ հատորում (էջ 370-377), որտեղից և արտատպվում է:

62. Վրացերեն առաջին անգամ տպագրվել է «Ռուբիկոնի» շաբաթաթերթում (1923, 8 ապրիլի. այս համարի զգալի մասը նվիրված է հայ մեծ բանաստեղծի հիշատակին), ապա որոշակի փոփոխություններով լույս է տեսել «Քարթուլի մծերլոբա» ամսագրում (1927, թիվ 1), այնուհետև՝ հեղինակի երկերի հրատարակություններում: Հուշերի ռուսերեն տարբերակի թարգմանությունները տպագրվել են «Թումանյանը ժամանակակիցների հուշերում» գրքում (էջ 728-729), ապա՝ «Նորք» հանդեսում (1989, թիվ 5, էջ 148-150): Մույն թարգմանությունը կատարել ենք «Ռուբիկոնի» շաբաթաթերթից: Հայերեն ամբողջությամբ տպագրվում է առաջին անգամ:

63. Տ. Տաբիձեն շփոթում է. Թումանյանը Վրաստանը «Կովկասի Ֆրանսիա» է կոչել «Ի՞նչ կարող է անել Վրաստանը» հոդվածում, որը

լույս է տեսել ոչ թե «Слово», այլ «Республика» օրաթերթում:

64. Տպագրվել է Տ. Տաբիձեի «Բանաստեղծություններ, պոեմներ» գրքում (Թիֆլիս, 1933, էջ 26-27), ապա՝ հեղինակի երկերի հետագա հրատարակություններում (1955, 1959, 1966 և այլն):

65. «Ժողովուրդների բարեկամության երգիչը» հոդվածի ընդարձակ տարբերակը տպագրվել է հեղինակի «Հանդիպումներ անմոռանալի մարդկանց հետ» ժողովածուում (Թբիլիսի, 1961, էջ 113-121): «Հատվածներ հուշերից» վերտառությամբ առաջին անգամ վրացերեն հրատարակվել է «Կոմունիստի» օրաթերթում (1939, 15 ապրիլի), ապա՝ նաև այլ թերթերում ու պարբերականներում: Հայերեն մի հատված տպագրվել է «Արշավ»-ում (1938, թիվ 2): Մեր թարգմանությամբ ամբողջությամբ լույս է տեսել «Հանդես Երևանի համալսարանի» գիտաինֆորմացիոն լրատուում (1997, թիվ 1, էջ 74-80), որտեղից և արտատպվում է:

66. Գրվել է 1923 թ.: Տպագրվել է Ս. Փաշայիշվիլի երկերի հատորյակում (Թբիլիսի, 1959, էջ 204-205): Հայերեն հրատարակվում է առաջին անգամ Մ. Քարամյանի թարգմանությամբ:

67. Տպագրվել է «Ժողովրդական գործ» թերթում (Թիֆլիս, 1919, թիվ 467):

68. Տպագրվել է Հովհ. Թումանյանիչ գրքում, Թբիլիսի, «Մերանի» հրատ., 1969, էջ 17:

ԲՈՎԱՆՎԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան (Հրաչիկ Բայրամյան)3

ՀՈՎՀԱՆՆԵՄ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՎՐԱՅԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հաշտություն	19
Ն. Բարաթաշվիլու դամբանի վերա	20
Վրաստանի համար	21
Ս. Նունեի պատկերի առաջ	23
Նվեր Վրաստանի բանաստեղծներին	24
Ինչ դալուկ ես... ..	26
Անգիտակից թշնամիներ	27
Հեռագիր Վաթա Փշավելայի մահվան առթիվ	29
Ի. Պ. Նակաշիձեին	29
Ողջույնի խոսք վրաց ժողովրդին.....	29
Ի՞նչ կարող է անել Վրաստանը.....	30
Վերջին տեղատվությունը	34
Եվգենի Գեգեճկորուն	39
Տիցիան Տաբիձեին.....	39
Պատասխան Տիցիան Տաբիձեին	40
«Սաքարթվելոյի» խմբագրությանը	45
Գրիգոլ Դիասամիձեին.....	46
Իմ պատասխանը Լևան Դիփիանուն	46
Դավիթ Կոլիաշվիլուն	49
Գնանք.....	50
Վրաց բանաստեղծությունը	51
Պայծառ էջեր.....	53
Մոտիկ հարևանը և հեռու բարեկամը.....	56
Վրաստանի գրողների միությանը	58
Ճշմարտությունը վերականգնելու համար	58
Սիկո Փաշալիշվիլուն	62
Իսկոբ Նիկոլաձեին.....	62

**ՎՐԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԸ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ**

ԱԵԶՍԱՆԴՐԵ ԱԲԱՇԵԼԻ

Հովհաննես Թումանյանի հիշատակին	65
ԳՐԻԳՈՒ ԱԲԱՇԻՉԵ	
Վրաց ժողովրդի բարեկամը	67
ԻՐԱԿԼԻ ԱԲԱՇԻՉԵ	
Խոսք Հովհաննես Թումանյանի մասին	74
ԼԵՎԱՆ ԱՍԱԹԻԱՆԻ	
Հովհաննես Թումանյանի «Ընտիր երկերը»	78
ԱԼԵԶՍԱՆԴՐԵ ԲԱՐԱՍԻՉԵ	
Ժողովուրդների բարեկամության երգիչը	83
Հովհաննես Թումանյանի հիշատակումը օվկիանոսում... ..	94
ՎԱՍԻԼԻ ԲԱՐՆՈՎ	
Հովհաննես Թումանյան	97
Գ. ԲԵԺԱՆԻՇՎԻԼԻ	
Մեր անվանի համաքաղաքացին	101
ԽՈՒՏԱ ԲԵՐՈՒԼԱՎԱ	
Հայ ժողովրդի մեծ բանաստեղծը	103
ԻՎԱՆԵ ԳՈՍԱՐԹԵԼԻ	
Հովհաննես Թումանյան	105
ՎԱՍՈ ԳՈՐԳԱՉԵ	
Հայոց լեռներում	109
ԻՈՍԵԲ ԳՐԻՇԱՇՎԻԼԻ	
Հովհաննես Թումանյան	111
Վրաստանի բարեկամին	121
ԼԱԴՈ ԳՈՒԴԻԱՇՎԻԼԻ	
Իմ հանդիպումը և ծանոթությունը բանաստեղծ Հովհաննես Թումանյանի հետ	122
ՇԱԼՎԱ ԴԱԴԻԱՆԻ	
Անվեհեր հոգու տեր պոետը	124
ՎԼԱԴԻՄԻՐ ՉԱՍԲԱԽԻՉԵ	
Ստեղծագործողի ուժը	126
ՊԱՈԼՈ ԻԱՇՎԻԼԻ	
Հովհաննես Թումանյանին	131

ՎԱԼԵՐԻԱՆ ԻՍԵՂԱԶԵ	
Վրաց-հայկական մշակութային առնչությունների անցյալից	133
ԻՈՍԵԲ ԻՍԵՂԱՇՎԻԼԻ	
Հովհաննես Թումանյան	137
ԳԻՈՐԳԻ ԼԵՈՆԻԶԵ	
Հովհաննես Թումանյան	157
ՄԱՅԱ	
Մոնետ	161
ՌԵՎԱԶ ՄԱՐԳԻԱՆԻ	
Իմ ժողովրդի մեծ բարեկամը	162
ՇԱԼՎԱ ՄԱՐԿՈՋԱՇՎԻԼԻ	
Ջերմորեն ենք հիշում	165
ՍՏԵՓԱՆԵ ՄԽԱՐԳՐԶԵԼԻ	
Հովհաննես Թումանյանին	168
Թումանյանը Յիսրաձղարոյում	170
ԱԼԵԿՈ ՇԵՆԳԵԼԻԱ	
Կապրի հավերժ	171
ՎԱՆՈ (ԻՎԱՆԵ) ՇԻԼԱԿԱԶԵ	
Ժողովուրդների բարեկամության երգիչ	
Հովհաննես Թումանյանը	173
ԳԻՈՐԳԻ ՋԻԲԼԱԶԵ	
Հովհաննես Թումանյան	178
ՍԵՐԳՈ ՋՈՐԲԵՆԱԶԵ	
Հովհաննես Թումանյանը և Թբիլիսիի համալսարանը	190
ԳՐԻԳՈԼ ՌՈԲԱՔԻԶԵ	
Հովհաննես Լուսեղեն	198
Գրիգոլ Ռոբաքիձեի նամակը Հովհաննես Թումանյանին	202
Հովհաննես Թումանյանին	203
ԳԻՈՐԳԻ ՍԱՄԽԱՐԱԶԵ	
Մեր բարեկամներին	205
ՆԻՆՈ ՏԱԲԻԶԵ	
Հովհաննես Թումանյան	207
ՏԻՅԻԱՆ ՏԱԲԻԶԵ	
Հովհաննես Թումանյանին	212
Բաց նամակ Հովհաննես Թումանյանին	212

Հովհաննես Թումանյան	214
Պոետների երազանքը մարմնացած	219
ՍԻԿՈ ՓԱՇԱԼԻՇՎԻԼԻ	
Ժողովուրդների բարեկամության երգիչը	221
Հովհաննես Թումանյանին	230
ՍԱՄՍՈՆ ՓԻՐՅԻՆԱԼԱՎԱ	
Հովհաննես Թումանյան	232
ԵՐԵՄԻԱ ԶԱՐԵԼԻՇՎԻԼԻ [ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ]	
Հովհաննես Թումանյան	235
ՆԱՍԱԿՆԵՐ, ՀԵՌԱԳՐԵՐ, ԵՐԿՏՈՂԵՐ	
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	244

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԸ

(Նյութերի ժողովածու)

**Կազմեց, վրացերենից թարգմանեց և ծանոթագրեց
Հրաչիկ ԲԱՅՐԱՄՅԱՆԸ**

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալարյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. սրբագրումը՝ Մ. Կետյանի

Ստորագրված է տպագրության՝ 22.10.2019:
Չափսը՝ 60x84 $\frac{1}{16}$; Տպ. մամուլը՝ 16,125:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.y-su.am